Արեւմտյան Հայաստանի Հանրապետություն
(Հայաստան)

Արեւմտյան Հայաստանի հայերի եւ Արեւմտյան Հայաստանի իրավունքների պաշտպանության իրավական–քաղաքական միասնական փաթեթ

(Փաստաթղթերի ժողովածու)

6–րդ լրամշակված հրատարակություն

2019 թ.

Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան)
Դրոշը

ՀՏԴ 941(479.25):32.001
ԳՄԴ 63.3(2Հ)+66.01
ISBN 978–9939–9105–6–7
(c) ՆՏ Հոլդինգ, 2019
Նոյյան Տապան

Հրատարակվել է
Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Կառավարության եւ
Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի)
համատեղ որոշմամբ:

(6–րդ լրամշակված հրատարակություն)

Արեւմտյան Հայաստանի հայերի եւ Արեւմտյան Հայաստանի իրավունքների պաշտպանության իրավական–քաղաքական միասնական փաթեթ. Երեւան, ՆՏ Հոլդինգ, 11 օգոստոսի, 2019 թ.:

Ժողովածուն ներկայացնում է Հայկական Հարցի վերջնական կարգավորման, Արեւմտյան Հայաստանի հայերի իրավունքների պաշտպանության, ինչպես նաեւ Հայաստանի նկատմամբ հայության իրավունքների պաշտպանության իրավական–քաղաքական փաթեթը, դրան մաս կազմող հռչակագրերն ու հրամանագրերը, որոշումներն ու հայտարարությունները: 6–րդ լրամշակված հրատարակությունը պարունակում է նոր կարեւոր փաստաթղթեր, որոնք զետեղված են ժողովածուի բոլոր գլուխներում:

Ժողովածուն հրատարակվում է հայերեն (նաեւ արեւմտահայերեն), ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, թուրքերեն լեզուներով: Բոլոր այլ լեզուներով հրատարակությունների դեպքում բնագիր է համարվում հայերենը:

Ստորեւ ներկայացնում ենք Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան) պաշտոնական կայքեջերը, որտեղ կարող եք գտնել վերոհիշյալ բոլոր նյութերը, այդ թվում՝ ժողովածուի հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն, անգլերեն, թուրքերեն լեզուներով օրինակները «Իրավական փաթեթ» բաժնում. www.western-armenia.info, www.parliament-wa.info, www.gov-wa.info, www.government-western-armenia.info, www.citizenship-western-armenia.info, www.elections-western-armenia.info, www.hamshenian.info:
Կառավարութեան եւ խորհրդարանի էլ. հասցէներն են. gov-westernarmenia@mail.ru, parliamentwesternarmenia@gmail.com, citizenshipwesternarmenia@gmail.com:

Շնորհակալություն ենք հայտնում Հայրենակցական Միությունների Խորհրդի «Բնօրրան» հանդեսի ղեկավար – խմբագիր Ժոզեֆ Ավետիսյանին, ում նախաձեռնությամբ, ելնելով ժամանակի հրամայականից, սույն ժողովածուի մի շարք կարեւոր փաստաթղթեր եւ նյութեր հրատարակվեցին հանդեսում 2013 թ. (թիվ 1–6 (21–26), էջ 208–235):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	10
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ	12
ԳԼՈՒԽ I ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵԻ ԱՐԵՒՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԵՒՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ՓԱԹԵԹԸ	
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ կարգավորման իրավական-քաղաքական հիմքերը	13
ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՆՔ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության ձեւավորման իրավական - քաղաքական հիմքերի մասին	16
ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄԸ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի կողմից, 24 մայիս 1915 թ.	17
ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ (1919-1920)	18
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴԵԿՐԵՏԸ «Թուրքահայաստանի մասին» (Արեւմտեան Հայաստանի մասին), 11 հունվար 1918 թ.	20
ՌՍՖՍՀ-ի Առաջին Սահմանադրությունը, 10 հուլիս 1918, 6-րդ հոդված	21
ՍԵՎՐԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ	21
ԱՄՆ 28-ՐԴ ՆԱԽԱԳԱՀ ՎՈՒԴՐՈ ՎԻԼՍՈՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ սահմանի, Հայաստանի դեպի ծով ելքի եւ հայկական սահմանին հարակից թուրքական տարածքների ապառազմականացման վերաբերյալ, 22 նոյեմբեր 1920 թ.	23
ԿԻԼԻԿԻՈՅ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ԱՔՏԸ	30
ԳԼՈՒԽ II ԱՐԵՒՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԻ ՊԵՏԱԿԱՆԱՍՏԵՂԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ԱՐԵՒՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՁԵՒԱՎՈՐՈՒՄԸ (հիմնարար փաստաթղթեր 2004-2014 թթ.)	
ԱՐԵՒՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԻ պետականաստեղծ 10-ամյա գործունեությունը	33
ՈՐՈՇՈՒՄ Արեւմտեան Հայաստանի Հայերի Ազգային Խորհրդի Հիմնադիր ժողովի, 17 դեկտեմբեր 2004 թ.	34
ՀՌՉԱԿԱԳԻՐ Արեւմտեան Հայաստանի Հայոց Ինքնորոշման Իրաւունքի, 17 դեկտեմբեր 2004 թ.	35
ՀՌՉԱԿԱԳԻՐ Արեւմտեան Հայաստանի վտարանդի կառավարութեան կազմելու վերաբերեալ, 4 փետրվար 2011 թ.	37
ՈՐՈՇՈՒՄ Արեւմտյան Հայաստանի հայերի եւ Արեւմտյան Հայաստանի մշտական, զինված, դրական չեզոքության վերաբերյալ	40
ՀՐԱՄԱՆԱԳԻՐ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Դրոշի Մասին	46
ՀՐԱՄԱՆԱԳԻՐ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Զինանշանի Մասին	47
ՕՐԵՆՔ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Լեզվի Մասին	47

ՀՐԱՄԱՆԱԳԻՐ Արեւմտյան Հայաստանի հայերի ինքնապաշտպանության ուժերի ստեղծման մասին, հիմնական նպատակ ունենալով պաշտպանելու հայությունն ու Հայաստանը	49
ՀՐԱՄԱՆԱԳԻՐ Արեւմտյան Հայաստանի Հանրապետությունը որպես շարունակող պետություն	50
ՀՐԱՄԱՆԱԳԻՐ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագիծը մշակելու վերաբերյալ	52
ԳԼՈՒԽ III ԱՐԵՒՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՈՒՂԵՐՁՆԵՐԸ ՄԱԿ-ԻՆ ԵՒ ՄԱԿ-Ի ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ (2011-2015)	
ՈՒՂԵՐՁ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի անդամներին, Սեւրի Խաղաղության դաշնագիրը ստորագրած պետություններին, միջազգային ընկերակցության անդամ պետություններին Արեւմտյան Հայաստանի հայերի իրավունքների վերաբերյալ	54
ԴԻՄՈՒՄ Պրն. Ապտիւլլահ Կիւլին, Թուրքիոյ Հանրապետության Նախագահին	55
ՈՒՂԵՐՁ ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդին, ՄԱԿ-ի անդամ պետություններին, Սեւրի Խաղաղության դաշնագիրը ստորագրած պետություններին, 24 ապրիլ 2015 թ.	57
ՈՒՂԵՐՁ համայն հայությանը, Արեւմտյան Հայաստանի հայերին ու քաղաքացիներին, հայ անհատին ու հայկական կառույցներին , 24 ապրիլ 2015 թ.	58
ՈՒՂԵՐՁ ՄԱԿ-ի անդամ երկրների խորհրդարաններին, 25 ապրիլ 2015 թ.	59
ՈՒՂԵՐՁ ՄԱԿ-ի անդամ երկրների կառավարություններին, 26 ապրիլ 2015 թ.	60
ԳԼՈՒԽ IV ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԵՒ ՆՅՈՒԹԵՐ ԱՐԵՒՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ (ԽՈՐՀՐԴԱՐԱՆ) ՁԵՒԱՎՈՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	
ՀՌՉԱԿԱԳԻՐ Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) ձեւավորման մասին, 24 մայիս 2013 թ.	62
ՈՐՈՇՈՒՄ Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողով (Խորհրդարան) ձեւավորող Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովի	65
ՔԱՂՎԱԾՔ № 1 Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 1-ին գումարման 1-ին նստաշրջանի 1-ին նիստի արձանագրությունից	68
ՔԱՂՎԱԾՔ № 2 Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 1-ին գումարման 1-ին նստաշրջանի 2-րդ նիստի արձանագրությունից	72
ՈՐՈՇՈՒՄ Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովի Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման պատգամավորների ընտրությունների մասին, 14 սեպտեմբեր 2018 թ.	75
ՀԱՍՏԱՏՎԵՑԻՆ	79

Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման պատգամավորների լիազորությունները	
ՔԱՂՎԱԾՔ № 1 Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման 1-ին նստաշրջանի 1-ին նիստի արձանագրությունից	82
ՔԱՂՎԱԾՔ № 2 Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման 1-ին նստաշրջանի 2-րդ նիստի արձանագրությունից	85
ՔԱՂՎԱԾՔ № 3 Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման 1-ին նստաշրջանի 3-րդ նիստի արձանագրությունից	88
ՔԱՂՎԱԾՔ № 4 Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման 1-ին նստաշրջանի 4-րդ նիստի արձանագրությունից	90
ԳԼՈՒԽ V ԱՐԵՒՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (11 հունիս 2017 թ.)	
Քաղվածք № 1 Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 1-ին գումարման 5-րդ նստաշրջանի 1-ին նիստի արձանագրությունից, 11-ը հունիսի, 2017 թ., Երեւան	92
Արեւմտյան Հայաստանի Հանրապետության պետական համակարգում կատարված փոփոխությունների վերաբերյալ, 19 հունիս 2017 թ.	99
Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) նախագահ Արմեն Տեր-Սարգսյանի ուղերձը պատգամավորներին ու պաշտոնյաներին	100
Արեւմտյան Հայաստանի Հանրապետության վարչապետ Տիգրան Փաշաբեզյանի ուղերձը պաշտոնյաներին ու պատգամավորներին	105
Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նորընտիր նախագահ Ռադիկ Խամոյանի ուղերձը պաշտոնյաներին ու պատգամավորներին	111
Արեւմտյան Հայաստանի Հանրապետության վարչապետ Տիգրան Փաշաբեզյանի 2-րդ ուղերձը պաշտոնյաներին ու պատգամավորներին՝ Արեւմտյան Հայաստանի, այսպես կոչված, կառավարությունների մասին	116
ԳԼՈՒԽ VI ԱՐԵՒՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԵՒ ՆՅՈՒԹԵՐ	
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ Հայերի ցեղասպանության ճանաչման, դատապարտման եւ հատուցման հարցերի շուրջ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության ռազմավարության մասին	120
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) ասորիների եւ հույների ցեղասպանությունը դատապարտելու մասին	128
ՈՒՂԵՐՁ Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի անդամ պետությունների խորհրդարաններին (Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ ուղղված Ադրբեջանի	128

Հանրապետության ագրեսիայի վերաբերյալ)	
Օ Ր Ե Ն Ք «Սեւրի խաղաղության պայմանագիրը վավերացնելու մասին, ստորագրված 10 օգոստոս 1920 թ., Սեւրում»	129
Օ Ր Ե Ն Ք «Ծովային Իրաւունքի մասին» ՄԱԿ-ի Կոնվենցիան վավերացնելու մասին, ստորագրված 10 դեկտեմբերի 1982 թ.՝ Մոնտեգո-Բեյ քաղաքում, եւ 29 հուլիսի 1994 թ. համաձայնության «Ծովային Իրաւունքի մասին» ՄԱԿ-ի Կոնվենցիայի XI մասի իրականացման վերաբերյալ»	130
Օ Ր Ե Ն Ք «Պետությունների իրաւունքների եւ պարտականությունների մասին» Կոնվենցիան (ստորագրված 26 դեկտեմբեր 1933 թ., համաամերիկյան պետությունների 7-րդ միջազգային համաժողովում (Մոնտեվիդեոյի Կոնվենցիա), որպես պետությունների իրաւունքներ եւ պարտականություններ ճանաչելու մասին	132
ՈՐՈՇՈՒՄ «Ազգային ինքնությունից հեռացած հայերն աշխարհի տարածքին» թեմայով 2-րդ միջազգային համաժողովի մասնակիցների, 18 մարտ 2017 թ.	134
ԿՈՉ Ադրբեջանում Հայոց ցեղասպանության իրավական գնահատման վերաբերյալ Երեւանյան խմբի	135
ՈՐՈՇՈՒՄ «Արեւմտյան Հայաստանի հայերի պաշտպանության ուժեր կազմավորելու վերաբերյալ» Ընդունված Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) նիստում, 10 հունվար 2018 թ.	136
ԳԼՈՒԽ VII ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ ԵՒ ԵԼՈՒՅԹՆԵՐ	
Ո՞րն է Թուրքիայի Հանրապետության արեւելյան սահմանը հարեւանների հետ	139
Հայկական Հարցը եւ Թուրքիո նոր-օսմանական քաղաքականությունը, մարտահրավերներ եւ սպառնալիքներ	141
Հայ ժողովուրդի մշակութային ու հոգեւոր արժեքների յուրացումն ու ոչնչացումը՝ եւ Թուրքիո նոր-օսմանական քաղաքականությունը, մարտահրավերներ եւ սպառնալիքներ	144
Պետք է օգտագործենք բոլոր միջոցները՝ օգնելու համշենահայերին՝ վերադառնալու իրենց հայկական արմատներին	148
Հայկական Հարցի լուծման վերաբերյալ Եվրամիութեան, ԱՄՆ-ի, Ռուսաստանի Դաշնության դիրքորոշումը	150, 153, 156
Աֆրինում Թուրքիայի Հանրապետութեան զինուած ուժերի կողմից իրականացուող ռազմական գործողութեան վերաբերեալ	159
Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման մի քանի ուղիների մասին	161
Մեծ Մերձավոր Արեւելք ծրագրի նոր զարգացումները. քրդերի հանրաքվեն Իրաքում եւ Հայկական Հարցը	164
Ռուսաստանի Կառավարության «Թուրքահայաստանի մասին» («Արեւմտյան Հայաստանի մասին») դեկրետի 100-րդ տարեդարձի կապակցությամբ	166

2016 թ. ապրիլի եւ 2018 թ. ապրիլի մասին, (հայության համաշխարհային համախմբման նոր ճանապարհի մասին)	168
1988-ի շարժման եւ 2018-ի շարժման մասին, (եթե 1988-ի շարժումը ազատագրեց Արցախը, ապա 2018-ի շարժումը ազատագրելու է հայությունն ու Հայաստանը)	169
2018-ի շարժման մասին, (հայության հանդուրժողականությունը պետք չէ շփոթել հնազանդության հետ)	170
Հայաստան - Արցախ - Սփյուռք եռամիասնության պակասող չորրորդ բաղադիրչը	171
Կասպից Արեւմուտքում խաղաղության հաստատման հիմքերն ու ռեսուրսները	175
ԳԼՈՒԽ VIII ԱՐԵՒՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄՆԵՐԸ ՈՒՂՂՎԱԾ ՄԱԿ-ԻՆ ԵՒ ՄԱԿ-Ի ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՄՇՏԱԿԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ (2018 – 2019 թթ.)	
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ առավել կարեւոր այն Պայմանագրերի, Կոնվենցիաների, Հռչակագրերի եւ Կանոնադրությունների ցանկը, որոնք ճանաչել, որոնց միացել եւ որոնք վավերացրել է Արեւմտյան Հայաստանի Հանրապետությունը (Հայաստան)	177
ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ Արեւմտյան Հայաստանի Հանրապետութունը (Հայաստան) դիմումը ՄԱԿ-ին կյանքի կոչելու եւ իրականացնելու Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան) հաստատումը ԱՄՆ 28-րդ Նախագահ Վուդրո Վիլսոնի Իրավարար վճռով սահմանազատված տարածքի վրա, 4 հունիս 2018 թ.	180
ԴԻՄՈՒՄ ՄԱԿ-ին Վուդրո Վիլսոնի Իրավարար վճռի իրականացման վերաբերյալ, 29 մայիս 2018 թ.	181
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ Առաջին համաշխարհային պատերազմի ավարտի 100-ամյակի կապակցությամբ՝ ուղղված Սեւրի Խաղաղության պայմանագիրը ստորագրած պետություններին, 10.11.2018 թ.	185
ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության դիմումը ՄԱԿ-ին Արեւմտյան Հայաստանի եւ Կիլիկիայի տարածքների ապառազմականացման, այնտեղից Թուրքիայի Հանրապետության բռնազավթիչ ուժերը դուրս բերելու վերաբերյալ, 22 նոյեմբեր 2018 թ.	186
ԴԻՄՈՒՄ ՄԱԿ-ին Արեւմտյան Հայաստանի եւ Կիլիկիայի տարածքների ապառազմականացման, այնտեղից Թուրքիայի Հանրապետության բռնազավթիչ ուժերը դուրս բերելու վերաբերյալ, 20 նոյեմբեր 2018 թ.	187
ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ Արեւմտյան Հայաստանի Հանրապետութունը (Հայաստան) դիմել է ՄԱԿ՝ Հայաստան պետության եւ Ադրբեջանի Հանրապետության միջեւ սահմանազատումն իրականացնելու վերաբերյալ առաջարկով	192
Դ Ի Մ Ո Ի Մ ՄԱԿ-ին Հայաստան պետության եւ Ադրբեջանի Հանրապետության միջեւ	194

սահմանի (սահմանազատման) վերաբերյալ	
ԲԱՑ ՆԱՄԱԿ ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլխավոր տնօրենին, տիկին Օդրէ Ազուլէ-ին	207
ԴԻՄՈՒՄ Միացյալ Ազգերի Կազմակերպության Անվտանգության Խորհրդի անդամ-պետություններին, Եվրոպական Խորհրդարանին, Եվրոպայի Խորհրդի անդամ-պետություններին, հույն, հայ եւ ասորի ժողովրդներին, նրանց հոգեւոր ու ազգային առաջնորդներին, ինչպես նաեւ Մեծ Մերձավոր Արեւելքի եւ Բալկանների ժողովրդներին, ում պատմական իրավունքները ոտնահարված էին Թուրքիայի պետության եւ կառավարությունների կողմից (Կիպրոսի Հանրապետության հյուսիսային մասի՝ Թուրքիայի Հանրապետության կողմից բռնազավթման 45-ամյակի առթիվ)	209
ՀԱՎԵԼՎԱԾ	
Արեւմտյան Հայաստանի Հանրապետության ինքնության եւ քաղաքացիության դիմում	214
Ինչպես ստանալ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն	215
ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ ԵՎ ՔԱՐՏԵԶՆԵՐ	217-223

ՆԱԽԱԲԱՆ

Հայկական Հարցի սկզբնավորումից (1878 թ.) եւ Հայերի ցեղասպությունից (1894–1923 թթ.) հետո ընկած ժամանակահատվածում Հայկական Հարցի վերջնական կարգավորման նոր օրակարգ (համազգային ծրագիր) չի ձեւավորվել, բացառությամբ 1973–1985 թթ. Նորագույն զինյալ–ազատագրական պայքարի գործունեության ու ծրագրի: Փոխարենը՝ Արտերկրի հայության օրակարգում տեղական համայնքների կազմավորման, Հայապահպանության, Հայերի ցեղասպանության ճանաչման եւ Խորհրդային Հայաստանի ապագայի հետ կապված խնդիրներն էին: Խորհրդային Հայաստանի Հանրապետության օրակարգում Խորհրդային Հայաստանի Հանրապետության վերածննդի ու զարգացման, Հայրենադարձության խնդիրներն էին: Հայաստանի Հանրապետության օրակարգում Արցախի հայության, Արցախի եւ Հայաստանի Հանրապետության անվտանգության, ագրեսիայի ու շրջափակման հաղթահարման, ինքնորոշման իրավունքի, ազատության եւ անկախության հաստատման ու պահպանման խնդիրներն են:

Եվ ինչպես 1980–ի վերջերին եւ 1990–ի սկզբներին հայ հասարակական–քաղաքական միտքը, մեծ հաշվով, պատրաստ չէր Հայաստանի Հանրապետության անկախության վերահաս իրողությանը, այնպես էլ այսօր նա պատրաստ չէ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (այդ թվում՝ Կիլիկիայի) անկախության անկասելի վերահաս իրողությանը:

Այսօր հակված ենք այն մտքին, որ Հայկական Հարցի վերջնական կարգավորման նոր օրակարգ (ազգային–պետական ծրագիր) ձեւավորվում է 2004–2014 թթ. ընթացքում, երբ 2004 թ. դեկտեմբերի 17–ին՝ Շուշիում, հիմնադրվում է Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհուրդը: Նույն օրը ընդունվում է հռչակագիր Արեւմտյան Հայաստանի հայերի ինքնորոշման իրավունքի վերաբերյալ, իսկ 2007 թ. հռչակագիր Արեւմտյան Հայաստանի հայերի իրավունքների վերաբերյալ որպես Հայկական լեռնաշխարհի բնիկներ: 2011 թ. փետրվարի 4–ին հայտարարվում է Արեւմտյան Հայաստանի Կառավարության կազմավորման գործընթացի սկիզբը: 2014 թ. հունվարին նախօրոք կայացած ընտրությունների միջոցով ձեւավորվում է Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովը (Խորհրդարանը), որն էլ ընտրում է Արեւմտյան Հայաստանի նախագահ:

Այստեղ պետք է հատուկ նշել Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհրդի կողմից ՄԱԿ–ի Բնիկ ժողովուրդների փորձագիտական հանձնաժողովի շրջանակներում 2006–ից ի վեր իրականացված աշխատանքները եւ դրա հիման վրա ստեղծված Արեւմտյան Հայաստանի հայերի ինքնության եւ քաղաքացիության կառույցը: Այս իրավական քաղաքական հիմքի վրա է ձեւավորվում Արեւմտյան Հայաստանի պետական համակարգը, որի միջոցով էլ իրականացվում է Արեւմտյան Հայաստանի հայերի իրավունքների պաշտպանության ողջ գործընթացը:

Այսպիսով տեսանելի է, որ Հայկական Հարցի կարգավորման եւ Արեւմտյան Հայաստանի հայերի իրավունքների պաշտպանության նոր օրակարգի ձեւավորումը սերտորեն

կապվում է երկու հիմնական հարցադրումների հետ.
ա/ Արեւմտյան Հայաստանի նկատմամբ Արեւմտյան Հայաստանի հայերի իրավունքների պաշտպանության, ավելի ստույգ՝ Հայաստանի նկատմամբ հայության իրավունքների պաշտպանության, եւ
բ/ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան) պետական համակարգի ձեւավորման:

Այս ժողովածուն ներկայացնում է Հայկական Հարցի վերջնական կարգավորման, Արեւմտյան Հայաստանի հայերի իրավունքների պաշտպանության, ինչպես նաեւ Հայաստանի նկատմամբ հայության իրավունքների պաշտպանության իրավական – քաղաքական փաթեթը, դրան մաս կազմող հռչակագրերն ու հրամանագրերը, որոշումներն ու հայտարարությունները:

Տիգրան Փաշաբեզյան
Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Վարչապետ
01.09.2015 թ.

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Շատերի համար Արեւմտյան Հայաստանը համարվում է կորսված տարածք եւ քչերը գիտեն, որ Հայաստան պետությունը որպես Հայկական պետություն ճանաչվել է Փարիզի վեհաժողովի կողմից դեռեւս 1920 թ.–ի հունվարի 19–ին: Շատերը չեն կարեւորում 1920–ին կայացված այն կարեւոր որոշումները, ըստ որի՝ Հայաստան պետության սահմանը Թուրքիայի հետ սահմանազծվել է ԱՄՆ 28–րդ նախագահ Վուդրո Վիլսոնի կողմից կայացված Իրավարար վճռով եւ որ այդ որոշումները առկա են Սեւրի Խաղաղության պայմանագրի Հայաստանին վերաբերող հոդվածներում:

Ըստ էության, առ այսօր, նույն միջազգային իրավա–քաղաքական դաշտում կայացված եւ գործող այդ որոշումները բավարար են, որպեսզի արդեն իսկ գոյություն ունենա Արեւմտյան Հայաստանի Հանրապետությունը (Հայաստան պետությունը):

Գոյություն ունեցող հակափաստարկն այն է, որ եթե ցեղասպանության հետեւանքով հայերն այդ տարածքներում չեն ապրում, ուրեմն Հայաստան պետության վերաբերյալ կայացված որոշումները կորցրել են իրենց այժմեականությունը: Սակայն, այնտեղ ապրող իսլամացած հայերը վերադառնում եմ իրենց ինքնությանը եւ հայերից բացի այնտեղ ապրում են այլ ժողովուրդներ եւս, որոնց իրավունքները նույնպես ոտնահարվում են առ այսօր: Հետեւաբար Արեւմտյան Հայաստանի Հանրապետության հաստատումը Վիլսոնյան իրավարար վճռով որոշված սահմաններում նորից դառնում է այժմեական եւ կարող է որպես բանալի ծառայել տարածաշրջանում համընդհանուր խաղաղության եւ խաղաղ համագործակցության հաստատման:

Այդ իմաստով այս ժողովածուն կարեւոր է, քանի որ այստեղ ամփոփված են ոչ միայն քիչ հայտնի փաստաթղթեր, այլեւ մեր օրերում այդ իրավունքի պաշտպանության գործը շարունակողների կողմից ձեւակերպված իրավական–քաղաքական ակտեր, որոնք Արեւմտյան Հայաստան պետության գոյությունը դարձնում են եւ պատճառաբանված, եւ իրավական–քաղաքական տեսակետից լիովին արդարացված:

Խնդրին ոչ շատ ծանոթ մարդկանց մոտ մի փոքր անհավատալի կարող է թվալ Արեւմտյան Հայաստանի պետական կառույցների այժմյան գոյությունը, որոնք իբրեւ ճանաչված չեն այլ պետությունների, այդ թվում՝ ՀՀ–ի կողմից: Սակայն մեր կարծիքով սա հենց այն պահանջված ձեւաչափն է, որը մինչ այժմ որեւէ կերպ չի գործածվել եւ դատելով մի շարք կարեւոր պետությունների կողմից այս կառույցի նկատմամբ դրսեւորվող անթաքույց հետաքրքրությունից, պարզ է որ հենց այս ձեւաչափն է միակ իրականն ու գործունը Հայկական Հարցի վերջնական եւ ամբողջական կարգավորման համար:

Տիգրան Հարությունյան
Փիլիսոփայական գիտությունների թեկնածու,
«Նոյյան Տապան» լրատվական–վերլուծական կենտրոնի հիմնադիր տնօրեն,
Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) պատգամավոր
31.07.2015 թ.

ԳԼՈՒԽ I

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ–ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵԻ ԱՐԵՒՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԵՒՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ–ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ՓԱԹԵԹԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ–ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Հայկական Հարցի սկզբնավորումից՝ 1878–ից ի վեր, ճիշտ է այն արդարացի լուծման տակավին չի հանգել, սակայն նույն այդ գործընթացի արդյունքում ձեւավորվել է Հայկական Հարցի արդարացի լուծման եւ հայ–թուրքական հարաբերությունների խաղաղ, քաղաքակիրթ, արդյունավետ եւ վերջնական կարգավորման իրավական–քաղաքական պատկառելի փաթեթ:

Նշենք դրանք.

–1878 թ. փետրվարի 19–ին (մարտի 3–ին) Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ ստորագրված Սան Ստեֆանոյի պայմանագրի 16–րդ հոդվածում նշված էր: «Նկատի ունենալով այն, որ ռուսական զորքերի դուրս բերումը նրանց կողմից գրավված Հայաստանի՝ Թուրքիային վերադարձվելիք վայրերից կարող է առիթ տալ բախումների եւ բարդությունների, որոնք երկու պետությունների բարի հարաբերությունների վրա կունենան վնասակար ազդեցություն, Բարձր դուռը պարտավորվում էր անհապաղ կենսագործել հայաբնակ մարզերի տեղական կարիքներից հարուցվող բարելավումներ ու բարենորոգություններ, եւ ապահովել հայերի անվտանգությունը քրդերից ու չերքեզներից»:
Բարեփոխումների ընթացքը վերահսկելու էր Ռուսաստանը:

–1878 թ. հուլիսի 4–6–ը Բեռլինի կոնգրեսի (հունիսի 13 – հուլիսի 13) 61–րդ հոդվածով՝ «Բարձր դուռը, հանձն էր առնում հայաբնակ վայրերում անհապաղ իրագործել տեղական պահանջներից բխող բարեփոխումներ ու բարենորոգումներ եւ ապահովել հայերի անվտանգությունը քրդերից ու չերքեզներից: Այդ նպատակով ձեռնարկված միջոցառումների մասին նա պարտավոր էր պարբերաբար հաղորդել պետություններին, որոնք պետք է հսկեն դրանց գործադրությունը»:
61–րդ հոդվածը Սան Ստեֆանոյի պայմանագրի 16–րդ հոդվածի հակադարձումն էր, բովանդակությամբ ամբողջովին շրջված տարբերակը, որով ժամանակի բրիտանական քաղաքական վերնախավը, լորդ Շերբրուկի պատկերավոր արտահայտությամբ, Թուրքիայի քրիստոնյաների համար «փակում էր դժոխքից դուրս գալու ելքը»:

–1895 թ. մայիսին Կ. Պոլսում Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի եւ Ֆրանսիայի դեսպանները թուրքական կառավարությանը ներկայացրին «Մայիսյան բարենորոգումների» ծրագիրը, որով նախատեսվում էր դատական եւ այլ բարեփոխումներ իրականացնել Արեւմտյան Հայաստանի վեց վիլայեթներում՝ Էրզրում, Բիթլիս, Վան, Սեբաստիա, Մամուրեթ ուլ Ազիզ, Դիարբեքիր: Բարենորոգումների

ենթակա էին նաեւ Օսմանյան կայսրության մյուս հայաբնակ վայրերը, օրինակ՝ Հաճընը Ադանայի վիլայեթում, Զեյթունը՝ Հալեպի:

–1913–ի հուլիսի 3–ից 24–ը Ռուսաստանի կառավարությունը տերություններին ներկայացրեց հայկական բարենորոգումների իր նախագիծը, որը քննարկվեց Կ. Պոլսի դեսպանների ժողովում: Նախագիծը, որ կազմել էր ռուսական դեսպանության առաջին թարգման Ա. Մանդելշտամը 1895–ի Մայիսյան բարենորոգումների ծրագրի եւ Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի կազմած նախագծի հիման վրա, առաջարկում էր հայկական վեց վիլայեթներից (Էրզրում, Վան, Բիթլիս, Դիարբեքիր, Խարբերդ, Սվազ) ստեղծել մի նահանգ: Ընդհանուր նահանգապետը պետք է լիներ քրիստոնյա օսմանյան հպատակ կամ, որ ավելի գերադասելի էր՝ եվրոպացի, որը նշանակվում էր 5 տարի ժամկետով, մեծ տերությունների համաձայնությամբ: Պետությունների հանձնարարությամբ Ընդհանուր տեսուչներ նշանակվեցին Վեստենենկը (Հոլանդիա) եւ Հոֆը (Նորվեգիա):

–1915 թ. հոկտեմբեր 27–ին Հայկական Կիլիկիայի ինքնավարության վերաբերյալ համաձայնություն կայացավ Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհրդի ներկայացուցիչ Պողոս Նուբար Փաշայի եւ Ֆրանսիայի Արտաքին գործերի նախարարության արեւելյան բաժնի պետ Ֆրանսուա ժորժ Փիկոտի միջեւ:

–1918 թ. հոկտեմբերի 30–ին Դաշնակիցների եւ Թուրքիայի միջեւ Լեմնոս կղզու Մուդրոս նավահանգստում կնքված զինադադարի փաստաթղթում նշված է.
16–րդ հոդված. «Հեջասի, Ասիրի եւ Եմենի, Սիրիայի եւ Միջագետքի բոլոր կայազորների հանձնումը դաշնակցային հրամանատարությանը... Թուրքական զորքերի դուրս բերումը Կիլիկիայից»:
24–րդ հոդված. «Հայկական վիլայեթներից (որեւէ) մեկում անկարգություններ ծագելու դեպքում, դաշնակիցները իրենց վերապահում են նրա մի մասը գրավելու իրավունքը»:

–1918 թ. հունվարի 11–ին ընդունվեց դեկրետ «Թուրքահայաստանի» (Արեւմտյան Հայաստան–հրտ.) մասին, որտեղ «Ռուսաստանը հռչակում է Հայաստանի ինքնավարությունը. Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը հայտնում է հայ ժողովրդին, որ Ռուսաստանի բանվորագյուղացիական կառավարությունը Ռուսաստանի կողմից պաշտպանում է՝ բռնազավթված «Թուրքահայաստանի» հայերի իրավունքը ազատորեն ինքնորոշվելու, ներառյալ նույնիսկ նրանց անկախության իրավունքը»:
Հետագայում այս դրույթը զետեղվեց 1918 թ. հուլիսի 10–ի ԽՍՀՄ Սահմանադրության 6–րդ հոդվածում:

–1919–ի սկզբին Փարիզում հրավիրվեց Հայ ազգային համագումար: Համագումարի կարեւոր ձեռնարկներից մեկը եղավ «Ամբողջական Հայաստանի պատվիրակության» ընտրությունը Պողոս Նուբարի ու Ավետիս Ահարոնյանի համանախագահությամբ եւ նախապես պատրաստված ու 1919–ի փետրվարի 12–ին Փարիզի հաշտության կոնֆերանսին ներկայացված հայկական պահանջների համատեղ հուշագրի վավերացումը, որը հիմնավորում էր հայկական անկախ պետության ստեղծման անհրաժեշտությունը եւ ճշտում նրա տարածքը Արեւմտյան Հայաստանի յոթ

վիլայեթների (ներառյալ Տրապիզոնը), Հայաստանի Հանրապետության եւ Կիլիկիայի միացմամբ:
Միացյալ պատվիրակությունը փետրվարի 26–ին ներկայացավ Տասի խորհրդի նիստին՝ կրկնելով հուշագրի հիմնական պահանջները: Պատվիրակությանն ընդունեց (1919–ի ապրիլի 17–ին) նաեւ ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնը եւ հավաստիացրեց, որ հնարավոր ամեն ինչ կանի հայերի տարածքային պահանջները պաշտպանելու համար: 1920–ի հունվարի 19–ին Փարիզի կոնֆերանսը դե ֆակտո ճանաչեց Հայաստան պետության անկախությունը:

-1920 թ. հունվարի 19-ին, Փարիզի Վեհաժողովի ժամանակ, Դաշնակից Տերությունների Գերագույն Խորհուրդը դե ֆակտո (de facto) ճանաչեց Հայաստան պետության անկախությունը,
-1920 թ. մայիս 11-ին Դաշնակից Տերությունների Գերագույն Խորհուրդը դե յուրե (de jure) ճամաչեց Հայաստան պետության անկախությունը:

–1919 թ. Կոստանդնուպոլսի ռազմական ատյանում տեղի ունեցավ Օսմանյան Թուրքիայի իշխող վերնախավի՝ երիտթուրք պարագլուխների դատավարությունը հետեւյալ մեղադրանքներով.
ա) Օսմանյան կայսրությունը Առաջին համաշխարհային պատերազմի մեջ ներքաշելու,
բ) Օսմանյան կայսրության հայազգի հպատակների համապարփակ կոտորածներն ու բռնագաղթը կազմակերպելու եւ իրականացնելու համար:
Երիտթուրք պարագլուխներից շատերին դատարանը հեռակա կարգով մահվան դատապարտեց:

–1920 թ. օգոստոսի 4–ին հայտարարվեց Հայկական Կիլիկիայի անկախության հռչակման մասին:

–1920 թ. օգոստոսի 10–ին կնքվեց Սեւրի Խաղաղության պայմանագիրը, որի 88–93 վերաբերում է Հայաստան պետությանը:

–1920 թ. նոյեմբերի 22–ին ԱՄՆ 28–րդ նախագահ Վուդրո Վիլսոնը կայացրեց Իրավարար վճիռ, որի ամբողջական անվանումն է՝ «Ամերիկայի Միացեալ Նահանգների նախագահի որոշումը Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ սահմանի, Հայաստանի դեպի ծով ելքի եւ հայկական սահմանին հարակից թուրքական տարածքի ապառազմականացման վերաբերյալ»:

Բերված օրինակները բավարար են եւ դրանցից արդեն իսկ պարզ է հայության եւ Հայաստանի բնական իրավունքների փաթեթի իրական ծանրակշռությունը:

Ըստ էության կարելի է ընդգծել, որ Հայկական Հարցի լուծման նպատակով հիմնական որոշումները կայացվել են, սակայն առ այսօր չեն իրականացվել: Կարելի է ընդգծել, որ դրանց իրականացման ժամանակը հասունացել է: Եվ ներկայի համառ իրականությունն այն է, որ Մերձավոր Արեւելքում եւ ոչ մի պետություն եւ ժողովուրդ անմասն չի մնալու ներկայի ու ապագայի սպառնալիքներից, եթե նրանցից ամեն մեկն իր կարգին չընտրի

գոյություն ունեցող խնդիրների ու հակամարտությունների խաղաղ կարգավորման իրավական–քաղաքական ճանապարհը:

Բոլոր ոչ իրավական, այսինքն՝ կամային քաղաքական որոշումները պատանդի կարգավիճակում են պահելու հակամարտող կողմերին, նրանց երկրներն ու սերունդները եւ հիսուն տարին մեկ նոր ուժով է բորբոքվելու հակամարտությունն ու դիմակայությունը, պատերազմն ու քաոսը՝ Բալկաններում, Մերձավոր Արեւելքում, Կովկասում, Աֆղանստանում: Հենց այն տարածքում, որտեղ թուրքական քաղաքական վերնախավին հրավիրում են պատասխանատու դերակատարություն ստանձնել: Վտանգավոր հանձնարարական, ինչը սպառնալիքներ է պարունակում տարածաշրջանի բոլոր պետությունների եւ ժողովուրդների համար, ներառյալ՝ Թուրքիայի Հանրապետության եւ թուրքերի:

Տիգրան Փաշաբեզյան
Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Վարչապետ
20.08.2015 թ.

ԱՐԵՒՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁԵՒԱՎՈՐՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ - ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ՄԱՍԻՆ

(Համառոտ տեղեկանք)

Արեւմտյան Հայաստանի վերածննդի իրականության գաղափարը, որպես պետություն, առաջացավ 1990-ականների սկզբին, Արցախի պաշտպանների շարքերում: Վերածննդի եւ վերականգման գաղափարի գլխավոր ոգեշնչողներից էր Ազատագրական բանակի հիմնադիր Լեոնիդ Ազգալդյանը (23.11.1942 Թիֆլիս - 21.06.1992 Մարտակերտ): Գաղափարն արձագանք գտավ մարտիկների եւ մտավորականների շարքերում, որոնք պատերազմից առաջ Արեւմտյան Հայաստանի տարբեր հայրենակցական եւ անկուսակցական միությունների անդամներ էին:

Արեւմտյան Հայաստանի Հանրապետության որպես պետության վերականգման հիմք հանդիսացավ այն փաստը, որ նա անխզելի շարունակող պետությունն է Հայաստան պետության՝ 1920-ական թվականներին ճանաչված մի շարք միջազգային փաստաթղթերի հիման վրա.

- Ռուսաստանի Կառավարության «Թուրքահայաստանի մասին» («Արեւմտյան Հայաստանի մասին») Դեկրետի, (Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդ), 11 հունվար 1918 թ.,
- Դաշնակից Տերությունների Գերագույն Խորհրդի կողմից դե ֆակտո (de facto) Հայաստան պետության անկախության ճանաչման, Փարիզի Վեհաժողովի ժամանակ, 19 հունվար 1920 թ.,
- Դաշնակից Տերությունների Գերագույն Խորհրդի կողմից *դե յուրե* (de jure) Հայաստան պետության անկախության ճանաչման, Փարիզ, 11 մայիս 1920 թ.,

- Կիլիկիայի հայերի ընդունած «Կիլիկիայի անկախության մասին» Հռչակագրի, 4 օգոստոս 1920 թ.,
- Սեւրի խաղաղության պայմանագրի, 10 օգոստոս 1920 թ.,
- ԱՄՆ 28-րդ Նախագահ Վուդրո Վիլսոնի կայացրած Իրավարար վճռի, որի ամբողջական անվանումն է՝ «Ամերիկայի Միացեալ Նահանգների նախագահի որոշումը Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ սահմանի, Հայաստանի դեպի ծով ելքի եւ հայկական սահմանին հարակից թուրքական տարածքի ապառազմականացման վերաբերյալ», 22 նոյեմբեր 1920 թ.:

2004 թ. դեկտեմբերի 17-ին ընդունվեց «Արեւմտյան Հայաստանի հայերի ինքնորոշման իրավունքի մասին» Հռչակագիրը: 2011 թ. փետրվարի 4-ին՝ Արեւմտյան Հայաստանի կառավարության ձեւավորման մասին հռչակագիրը:

Հետագայում, ՄԱԿ-ի «Բնիկ ժողովուրդների իրավունքների մասին» հռչակագրի (13.09.2007 թ.) հիման վրա, ստեղծվել է Արեւմտյան Հայաստանի հայերի ազգային ինքնության եւ քաղաքացիության ինստիտուտը, որի հիմքի վրա ձեւավորվել են Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան) իրավական – քաղաքական եւ պետական կառույցները: Համաձայն Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 21-րդ հոդվածի, սկսած 2013 թ., Արեւմտյան Հայաստանի Հանրապետությունը (Հայաստան) ձեւավորում է իշխանության օղակները՝ Ազգային ժողովը (Խորհրդարան), Կառավարությունը եւ Նախագահական համակարգը: 2013 թվականի նոյեմբերին, առաջին անգամ, համացանցում՝ էլեկտրոնային ուղղակի քվեարկության միջոցով, անցկացվել են Արեւմտյան Հայաստանի Խորհրդարանի պատգամավորների ընտրություններ: Ընտրություններին մասնակցել են ընտրողներ 41 երկրներից, ընտրվել են 64 պատգամավոր:

Ներկայումս Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան) նախագահը Ռադիկ Խամոյանն է, վարչապետը՝ Տիգրան Փաշաբեզյանը, Ազգային ժողովի (Խորհրդարան) նախագահը՝ Արմեն Տեր-Սարգսյանը:

Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) Մամլո Ծառայություն
11.08.2018 թ.

ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄԸ
Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի կողմից
24–ը մայիսի, 1915 թ.

1915 թ. մայիսի 24–ին Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան եւ Ռուսաստանը հանդես եկան երիտթուրքական կառավարության սանձազերծած հայերի կոտորածներն ու ցեղասպանությունը դատապարտող հատուկ հայտարարությամբ, որտեղ 1915 թ. ապրիլյան կոտորածները որակեցին, որպես Թուրքիո նոր ոճիրը մարդկության եւ քաղաքակրթության դեմ:

Տեքստում մասնավորապես ասված էր. «Գրեթե մեկ ամիսէ ի վեր, Հայաստանի թյուրք եւ քյուրտ բնակիչները օսմանյան հեղինակությունների թույլտվությամբ ու հաճախ անոնց նեցուկը ունենալով ջարդեր կը գործադրեն Հայերի դէմ: Նման ջարդեր տեղի ունեցան ապրիլի կեսին Էրզրումի մեջ (Կարին), Թերճան, Եգինէ, Պիթլիս, Մուշ, Սասուն, Զէյթուն եւ ամբողջ Կիլիկիո մեջ: Վանի շրջակա գրեթե հարյուր գյուղերի հայերը բոլորն ալ սպաննվեցան եւ Վանի հայկական թաղամասը շրջապատված էր քյուրտերի կողմէ: Միեւնույն ժամանակ Օսմանյան կառավարությունը չարչրկեցին Կոստանդնուպոլսո անպաշտպան հայ բնակչությունը: Մարդկության եւ քաղաքակրթության դեմ գործված Թուրքիո այս նոր ոճիրներու հանդեպ դաշնակից տերությունների կառավարությունները հանրորէն կը տեղեկացնեն Մեծ Դռանը, որ թուրք կառավարության բոլոր անդամները անհատապես պատասխանատու պիտի համարվին, ինչպես նաեւ բոլոր այն պաշտոնյաները, որոնք մասնակից դարձան այս ջարդերուն»:

ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ
(1919–1920)

Օսմանյան կայսրությունն առաջին համաշխարհային պատերազմի մեջ ներքաշած եւ հայերի տեղահանությունն ու ցեղասպանությունը կազմակերպած երիտթուրքական «Միություն եւ առաջադիմություն» կուսակցության ղեկավար գործիչների դատավարությունը Կ. Պոլսում:

Մուդրոսի զինադադարի (1918) կնքումից անմիջապես հետո, համաշխարհային հասարակայնության ճնշման տակ, թուրքական նոր կառավարությունը որոշեց պատասխանատվության ենթարկել Թուրքիան պատերազմի մեջ ներքաշած եւ հայերի ցեղասպանությունը կազմակերպած մեղավորներին:

1918 թ. դեկտեմբերի 16–ի որոշմամբ կազմվեցին արեւմտահայության կոտորածներին վերաբերող մեղադրական ապացույցներ (ծածկագիր հեռագրեր, պաշտոնական գրություններ, հրահանգներ եւ հրամաններ, ականատեսների վկայություններ եւ այլն) հավաքող հարցաքննիչ հանձնախմբեր: Օսմանյան կայսրության տարածքը բաժանվեց 10 դատաքննչական շրջանի, նշանակվեցին դատախազներ, քննիչներ, քարտուղարներ: 1919 թ. հունվարի 8–ին կազմվեցին ռազմական արտակարգ ատյաններ: Դատական նիստերի ընթացքում քննվեց երիտթուրքական կառավարության ղեկավարների, «Միություն եւ առաջադիմություն» կուսակցության ԿԿ անդամների եւ շրջանային պատասխանատու քարտուղարների ու պաշտոնյաների, հայկական կոտորածներն իրականացնող «Թեշքիլաթ–ը մահսուսե»–ի («Հատուկ կազմակերպություն), Յոզղատի, Տրապիզոնի, Բյոյուքդերեի (Կ. Պոլսի արվարձան) եւ Խարբերդի տեղահանությունն ու կոտորածները կազմակերպողների հանցավոր գործունեությունը:

Երիտթուրքերի դատավարությունը ցույց տվեց, որ արեւմտահայության տեղահանություններն ու կոտորածները ռազմական կամ կարգապահական միջոցառումներ չէին եւ սահմանափակ կամ տեղական բնույթ չեն կրել, ինչպես ցանկանում էին ներկայացնել հանցագործները, այլ եղել են կանխամտածված ու

մշակված գործողություններ, իրականացվել բացարձակապես երիտթուրքական կուսակցության ԿԿ նախաձեռնությամբ ու կարգադրությամբ, իսկ կոտորածներն անմիջականորեն իրականացրել են այդ նպատակով բանտերից ազատ արձակված մարդասպաններն ու այլ ոճրագործներ։

Երիտթուրքերի կուսակցության պարագլուխների ու նախարարների դատավարությունը սկսվեց 1919 թ. ապրիլի 27–ին եւ ընդհատումով (մայիսի 28–ին անգլիական հրամանատարությունը 77 հոգու անսպասելիորեն աքսորեց Մալթա կղզի եւ դրանով ընդհատեց դատաքննությունը) շարունակվեց մինչեւ հունիսի 26–ը (13 նիստ)։ Դատավճիռը հրապարակվեց 1919 թ. հուլիսի 5–ին։ 31 հանցագործներից 4–ը՝ Թալեաթը, Էնվերը, Ջեմալը եւ Նազիմը, հեռակա կարգով դատապարտվեցին մահվան, իսկ մնացած 27–ից ոմանք՝ տարբեր տարիների ազատազրկման, ոմանք արդարացվեցին հանցանշանների բացակայության պատճառով։ Դատավճռում մոռացության մատնվեցին անգլիացիների՝ Մալթա աքսորած հանցագործները։

1919 թ. հունիսի 21–ին, 23–ին եւ 29–ին տեղի ունեցան «Միություն եւ առաջադիմություն» կուսակցության շրջանային պատասխանատու քարտուղարների եւ պաշտոնատար այլ անձանց դատավարությունները։ Դատավճիռը հրապարակվեց 1920 թ. հունվարի 8–ին։ 36 մեղադրյալներից 3–ը դատապարտվեցին 10 տարվա, մյուսները՝ մի քանի տարվա ազատազրկման։

Յոզղատի հայերի կոտորածն իրականացնողների դատավճիռը հրապարակվեց 1919 թ. ապրիլի 8–ին. Յոզղատի մութասարիֆի (գավառապետ) տեղակալ եւ Բողազլյանի կայմակամ (գավառապետ) Քեմալ բեյը դատապարտվեց մահվան, իսկ Յոզղատի ոստիկանապետ Թեվֆիկ բեյը՝ 15 տարվա տաժանակրության։

Տրապիզոնի կոտորածներն իրականացնողների դատավճիռը կայացվեց 1919–ի մայիսի 22–ին։ 8 հանցագործներից երկուսը՝ Ջեմալ Ազմի եւ Նայիմ բեյերը, հեռակա կարգով դատապարտվեցին մահվան, մյուսները՝ տարբեր ժամկետներով ազատազրկման։

Բյոյուքդերեի ոչ մահմեդական բնակչության՝ հայերի եւ հույների հալածանքները կազմակերպողների դատավճիռը հրապարակվեց 1919 թ. մայիսի 24–ին։ Բոլոր մեղադրյալները (4 հոգի) դատապարտվեցին մի քանի տարվա ազատազրկման։

Խարբերդի հայերի տեղահանության եւ կոտորածների հանցագործների դատավճիռը կայացվեց 1920 թ. հունվարի 14–ին. Բեհաեդդին Շաքիրը հեռակա կարգով դատապարտվեց մահվան, իսկ երիտթուրքական կուսակցության Խարբերդի պատասխանատու քարտուղար Ռեսնելի Նազիմ բեյը՝ 15 տարվա տաժանակրության։

Դատավարության արձանագրությունները հրատարակվել են 1919–20 թթ., «Թաքվիմ–ի վեքայի» («Իրադարձությունների օրացույց») արաբատառ թուրքական պաշտոնաթերթի հավելվածում։ Երիտթուրքերի դատավարությունը թեեւ չստացավ լայն արձագանք, այնուամենայնիվ բացահայտեց Արեւմտյան Հայաստանում եւ Օսմանյան կայսրության հայաբնակ վայրերում թուրքական իշխանությունների իրագործած հայերի

ցեղասպանությունը։ Երիտթուրքերի դատավարության նյութերը հերքում են թուրքական պաշտոնական շրջանների՝ հայերի ցեղասպանությունը ժխտող պնդումները։

«ԹՈՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻ» ՄԱՍԻՆ ԴԵԿՐԵՏԸ՝
29 դեկտեմբեր 1917 թ, (11 հունվար 1918 թ.)

«Ռուսաստանը հռչակում է Հայաստանի ինքնավարությունը.

Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը հայտնում է հայ ժողովրդին, որ Ռուսաստանի բանվորագյուղացիական կառավարությունը պաշտպանում է բռնագրավված «Թուրքահայաստանի» հայերի իրավունքը՝ ազատորեն ինքնորոշվելու, ներառյալ նույնիսկ նրանց անկախության իրավունքը։ Կոմիսարների Խորհուրդն ընդունում է, որ այս իրավունքի իրականացումը հնարավոր է միայն մի շարք նախնական երաշխիքների հաստատմամբ, որոնք միանգամայն անհրաժեշտ են հայ ժողովրդի հանրաքվեի համար։

Կոմիսարների Խորհուրդը որպես մասնակի երաշխիքներ է ճանաչում հետեւյալ պայմանները.

Հոդված Ա. «Թուրքահայաստանից» ռուսական զորքերի դուրսբերում եւ անհապաղ հայ ազգային միլիցիայի բանակի ստեղծում՝ «Թուրքահայաստանի» բնակիչների անձնական եւ նյութական անվտանգությունն ապահովելու նպատակով։

Հոդված Բ. Հայ փախստականների, ինչպես նաեւ տարբեր երկրներում սփռված հայ գաղթականների՝ անխոչընդոտ վերադարձը «Թուրքահայաստան»։

Հոդված Գ. Պատերազմի ժամանակ թուրքական իշխանությունների կողմից Թուրքիայի ներսում բռնի կերպով աքսորած հայերի՝ անխոչընդոտ վերադարձը «Թուրքահայաստան»։
...Կոմիսարների Խորհուրդը կպնդի այս պայմանը թուրք պատվիրակների հետ բանակցությունների ընթացքում։

Հոդված Դ. «Թուրքահայաստանում» Ժամանակավոր կառավարության կազմավորում՝ հայ ժողովրդի պատգամավորների խորհրդի ձեւով. պատգամավորները կընտրվեն ժողովրդավարության սկզբունքով։

Ստեփան Շահումյանը, նշանակվելով Կովկասի գործերով ժամանակավոր արտակարգ կոմիսար, ամենայն օժանդակություն կցուցաբերի «Թուրքահայաստանի» հայ բնակիչներին՝ Բ եւ Գ հոդվածների իրականացման համար, ինչպես նաեւ ձեւավորելու համար Խառը հանձնաժողով՝ ռուսական զորքերի դուրսբերման օրը եւ միջոցները որոշելու նպատակով՝ համաձայն հոդված Ա–ի։

«Թուրքահայաստանի» աշխարհագրական սահմանները կորոշվեն հայ ժողովրդի՝ ժողովրդավարական ճանապարհով ընտրված ներկայացուցիչների կողմից՝ հարեւան վիճելի շրջանների մահմեդական եւ այլ բնակիչների եւ կոմիսար Շահումյանի հետ»:

ՌՍՖՍՀ-Ի ԱՌԱՋԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
10 հուլիս 1918

Հոդված 6. Համառուսաստանյան Խորհուրդների 3-րդ Համագումարը ողջունում է Ժողովրդական Կոմիսարների քաղաքականությունը, որն հռչակել է Ֆինլանդիայի լիակատար անկախությունը, սկսել է զորքերի տարհանումը Պարսկաստանից, հայտարարել է Հայաստանի ազատ ինքնորոշման իրավունքը:

ՍԵՎՐԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Թարգմանությունը ռուսերենից

Մասն 3–րդ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Բաժին 6–րդ
ՀԱՅԱՍՏԱՆ

Հոդված 88. Թուրքիան հայտարարում է, որ ճանաչում է Հայաստանը, ինչպես այդ բանն արդեն արել են Դաշնակից տերությունները, որպես ազատ եւ անկախ պետություն:

Հոդված 89. Թուրքիան եւ Հայաստանը, ինչպես եւ Բարձր պայմանավորվող կողմերը, համաձայնվում են Էրզրումի, Տրապիզոնի, Վանի եւ Բիթլիսի վիլայեթներում Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ սահմանատումը թողնել Ամերիկայի Միացյալ Նահանգների որոշմանը եւ ընդունել ինչպես նրա որոշումը, նույնպես եւ այն բոլոր միջոցառումները, որոնք նա կարող է առաջարկել Հայաստանին դեպի ծով ելք տալու եւ հիշյալ սահմանագծին հարող օսմանյան բոլոր տերիտորիաների ապառազմականացման վերաբերյալ:

Հոդված 90. Այն դեպքում, եթե 89–րդ հոդվածի համաձայն սահմանագիծը որոշելիս հիշյալ վիլայեթների ամբողջ տերիտորիան կամ նրա մի մասը հանձնվի Հայաստանին, Թուրքիան այսօր արդեն հայտարարում է, որ որոշման օրից սկսած ինքը հրաժարվում է հանձնված տերիտորիայի նկատմամբ բոլոր իրավունքներից եւ իրավահիմունքներից: Սույն պայմանագրի որոշումները, որոնք կիրառվելու են Թուրքիայից անջատվող տերիտորիաների նկատմամբ, այս պահից սկսած կգործադրվեն նաեւ այդ տերիտորիայի նկատմամբ:
Հայաստանի սուվերենությանը հանձնվող տերիտորիայի կապակցությամբ նրա վրա դրվող Թուրքիայի ֆինանսական պարտավորությունների բաժինը, եւ դրանց բնույթն ու

այն իրավունքները, որոնցով նա կարող է փաստարկել, կսահմանվեն սույն Պայմանագրի 8–րդ մասի (ֆինանսական դրույթներ) 241–244–րդ հոդվածների համաձայն:
Հաջորդ կոնվենցիաները կկարգավորեն, եթե դա անհրաժեշտ լինի, այն բոլոր հացերը, որոնք չեն կարգավորվել սույն Պայմանագրով եւ որոնք կարող են ծնունդ առնել հիշյալ տերիտորիայի փոխանցման կապակցությամբ:

Հոդված 91. Եթե 89–րդ հոդվածում նշված տերիտորիայի մի մասը հանձնվի Հայաստանին, ապա Սահմանազծման հանձնաժողով, որի կազմը կորոշվի հետագայում, կստեղծվի երեք ամսվա ընթացքում այն բանից հետո, երբ արդեն ընդունված կլինի Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ տեղում սահմանագիծ անցկացնելու վերաբերյալ հիշյալ հոդվածում նախատեսվող որոշումը:

Հոդված 92. Ադրբեջանի եւ Վրաստանի հետ Հայաստանի սահմանները կորոշվեն շահագրգիռ երկրների ուղղակի համաձայնության միջոցով:
Այն դեպքում, երբ շահագրգիռ երկրները մինչեւ 89-րդ հոդվածում հիշատակված որոշման օրը չեն կարողանա համաձայնությամբ որոշել սահմանները, ապա խնդրո առարկա սահմանը կորոշվի Գլխավոր դաշնակից ուժերի կողմից, որոնք էլ տեղում կիրականացնեն նաեւ սահմանանշումը:

Հոդված 93. Հայաստանն ընդունում է, համաձայնվելով դրանք մտցնել Գլխավոր տերությունների հետ պայմանագրի մեջ, այն որոշումները, որոնք Տերություններն անհրաժեշտ կհամարեն Հայաստանում այն բնակիչների շահերը պաշտպանելու համար, որոնք ռասայի, լեզվի եւ կրոնի առումով տարբերվում են ազգաբնակչության մեծամասնությունից:
Հայաստանը նմանապես համաձայնվում է Գլխավոր տերությունների հետ Պայմանագրի մեջ մտցնել այն որոշումները, որոնք այդ տերություններն անհրաժեշտ կհամարեն տրանզիտի ազատությունը եւ այլ ազգերի առեւտրի համար արդարացի պայմանակարգը պաշտպանելու համար:

10 օգոստոս,1920 թ.
Սեւր

Պայմանագիր Առաջին համաշխարհային պատերազմում հաղթող պետությունների եւ Թուրքիայի միջեւ, որը ստորագրել են մի կողմից Թուրքիան, մյուս կողմից՝ Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Իտալիան, Ճապոնիան, Բելգիան, Հունաստանը, Լեհաստանը, Պորտուգալիան, Ռումինիան, Հայաստանը, Չեխոսլովակիան, Սերբերի, Խորվաթների եւ Սլովենների թագավորությունը, Հեջազը:

ՆԱԽԱԳԱՀ ՎԻԼՍՈՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ սահմանի, Հայաստանի դեպի ծով ելքի եւ հայկական սահմանին հարակից թուրքական տարածքների ապառազմականացման վերաբերյալ

Միացյալ Նահանգների նախագահ Վուդրո Վիլսոնը
Բոլորին, ում որ դա կվերաբերի,
Ողջունում է.

Նկատի ունենալով, որ 1920 թ. ապրիլի 26-ին դաշնակից տերությունների Գերագույն խորհուրդը Սան Ռեմոյի կոնֆերանսի ժամանակ առաջարկությունով դիմեց Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահին՝ հանդես գալու որպես իրավարար Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ, չորս վիլայեթներում՝ Էրզրումի, Տրապիզոնի, Վանի եւ Բիթլիսի սահմանների խնդիրը որոշելու համար.
Նկատի ունենալով նաեւ, որ 1920 թ. մայիսի 17-ին այս առաջարկությունն ընդունելու մասին իմ համաձայնությունը հեռագրվեց ամերիկյան դեսպանին՝ Փարիզում՝ Գերագույն խորհրդում ներկայացված տերություններին փոխանցելու համար.
Նկատի ունենալով նաեւ, որ 1920 թ. օգոստոսի 10-ին լիազոր ներկայացուցիչների կողմից Սեւրում հաշտության պայմանագիր ստորագրվեց Բրիտանական Կայսրության, Ֆրանսիայի, Իտալիայի ու Ճապոնիայի եւ Հայաստանի, Բելգիայի, Հունաստանի, Լեհաստանի, Պորտուգալիայի, Ռումինիայի ու Չեխոսլովակիայի՝ մի կողմից եւ Թուրքիայի միջեւ մյուս կողմից, որ այդ պայմանագիրը ի թիվս այլ դրույթների պարունակում էր հետեւյալը.
“ՀՈԴՎԱԾ 89: Թուրքիան եւ Հայաստանը, ինչպես եւ մյուս Բարձր պայմանավորվող կողմերը համաձայն են Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահի իրավարար որոշմանը հանձնել Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ Էրզրումի, Տրապիզոնի, Վանի եւ Բիթլիսի վիլայեթներում սահմանի որոշման խնդիրը եւ ընդունել նրա որոշումը այս հարցի վերաբերյալ, ինչպես նաեւ համաձայնագրին ցանկացած հավելումներ, որոնք նա կառաջարկի, որպեսզի Հայաստանը ելք ունենա դեպի ծովը եւ որպեսզի հիշյալ սահմանի երկարությամբ թուրքական հարակից տարածքը ապառազմականացվի”:
Նկատի ունենալով նաեւ, որ 1920 թ. հոկտեմբերի 18-ին Խաղաղության վեհաժողովի Գլխավոր քարտուղարությունը՝ գործելով դաշնակից տերությունների հանձնարարությամբ, Փարիզում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանատան միջոցով ինձ փոխանցեց վերը նշված պայմանագրի հաստատված օրինակը՝ ուշադրություն հրավիրելով նշված Հոդված 89-ին,
Ըստ այդմ, Թ. Վուդրո Վիլսոնը՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահը, ում վրա որ այսպիսով դրվել էր իրավարար առաքելությունը, քննելով խնդիրը առավել մատչելի հավաստի տեղեկատվության լույսի ներքո եւ արդարության բարձրագույն շահերից գործելու մտադրությամբ, սույնով հայտարարում է հետեւյալ որոշումը.
I
Սահմանը Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ Էրզրումի, Տրապիզոնի, Վանի եւ Բիթլիսի վիլայեթներում պետք է նշագծվի հետեւյալ կերպ.
1. Սկզբնակետ[*] պետք է ընտրվի Թուրքիայի եւ Պարսկաստանի սահմանագծին Վանի վիլայեթի՝ Հաքյարի եւ Վան սանջակների վարչական սահմանի հատման արեւելյան ծայրակետը, ինչպես որ այդ վարչական սահմանը նշված է թուրքական քարտեզի Բաշկալա էջի վրա մասշտաբը՝ 1:200,000, որը հրատարակվել է Թուրքիայի 1330-1331թթ. (1914-1915 թթ.) ֆինանսական տարում: Այս սկզբնակետից սահմանը պետք է շարունակվի հարավ-արեւմուտք՝ դեպի Մերկեզեր Դաղի արեւմտյան գագաթը, որը

տեղակայված է 6 կիլոմետր արեւմուտք 3350 մետր (10,990 ոտնաչափ) բարձունքից, մոտ 2 կիլոմետր հարավ-արեւմուտք Յոկարի Ահվալան գյուղից եւ մոտավորապես 76 կիլոմետր դեպի հարավ-արեւելք Վան քաղաքից:
Վերոնշյալ սանջակների սահմանները, այնուհետեւ վարչական սահմանը Մամուրեթ-ուլ-Համիդ եւ Էլբաք ղազաների միջեւ, ապա վերոնշյալ նույն սանջակի սահմանները թարմացված են այնտեղ, ուր անհրաժեշտ է, որ դրանք հետեւեն հիմնական ջրբաժանին Զաբ Սուի (Մեծ Զաբ գետ) եւ Խուշաբ Սուի միջեւ եւ հավասար մասերի են բաժանում Քրդես Գեդիկի եւ Չոխ Գեդիկի միջեւ եղած բարձր լեռնանցքները,
այդտեղից հյուսիս-արեւմուտք՝ մոտ 28 կիլոմետր դեպի Կլեսիրի Դաղ,
գետնին սահմանագիծ պետք է նշվի՝ որը կհետեւի հիմնական ջրբաժաններին Խոշաբ Սուի եւ դեպի Շատակ Սու թափվող գետակների միջեւ եւ կշրջանցի Յոկարի Ահլավան գյուղից հարավ ընկած լեռնանցքը եւ կանցնի Շկոլանս Դաղի (3100 մետր կամ 10, 170 ոտնաչափ) ու Բելերշուկի միջեւ լեռնանցքով,
այդտեղից հարավ-արեւմուտք՝ դեպի անանուն գետակի Շատակ Սուի հետ միախառնման վայրը՝ Շատակ գյուղից մոտ 10 կիլոմետր դեպի հարավ:
գետնին սահմանագիծ պետք է նշվի, որը կհետեւի հիմնական ջրբաժաններին եւ կանցնի Կոհ Կիրան Դաղլար, Սարի Դաղ (3150 մետր կամ 10,335 ոտնաչափ), Կեւմետալա Թեփե (3,500 մետր կամ 11,480 ոտնաչափ, 3540 մետր (11,615 ոտնաչափ) գագաթը) այնպես, որ Հայաստանին թողնվի Էյրեթի գյուղը, իսկ Թուրքիային՝ Արազ գյուղը եւ որպեսզի կտրեւի անցնի Շատակ Սու գետը Դիր Մուեմ Քիլիսա գյուղից առնվազն 2 կիլոմետր դեպի հարավ,
այդտեղից արեւմուտք դեպի այն կետը, ուր Բիթլիս-Վան վիլայեթների սահմանագիծը արեւմուտքից հասնում է Մոկս Սուին, որը տեղակայված է Մոկս գյուղից դեպի հարավ,
գետնին սահմանագիծ պետք է նշվի, որը կհետեւի հիմնական ջրբաժաններին, Հայաստանին թողնելով Կաչեթ, Սինփաս եւ Օզիմ գյուղերը, անցնելով Կանիսոր Թեփեով (3,245 մետր կամ 10,645 ոտնաչափ), անանուն լեռնագագաթը մոտ 3 կիլոմետր Առնուս Դաղից (3,550 մետր կամ 11,645 ոտնաչափ), կտրել անցնելով անանուն գետակը մոտ 2 կիլոմետր Սինփաս գյուղից դեպի հարավ, անցնելով 3,000 մետր (9,840 ոտնաչափ) բարձունքով, հետեւելով Վան եւ Բիթլիս վիլայեթների սահմանագծին մոտ 3 կիլոմետր այս կետից դեպի հարավ-արեւմուտք եւ շարունակելով հարավ-արեւմուտք նույն լեռնաշղթայով դեպի անանուն լեռնագագաթը՝ Մոկս Սուից 2 կիլոմետր դեպի արեւելք, եւ ապա իջնելով դեպի այս գետը,
այդտեղից հյուսիս՝ դեպի Վան եւ Բիթլիս վիլայեթների սահմանագծին գտնվող անանուն լեռնագագաթը, որը Մատա Գեդիկ լեռնանցքից մոտ 3 կիլոմետր արեւմուտք է,
Վան եւ Բիթլիս վիլայեթների միջեւ վարչական սահմանը, որը վերանայվել է Վանկին Դաղից (3,200 մետր կամ 10,500 ոտնաչափ) դեպի հարավ՝ հետեւելու հիմնական ջրբաժանին, այդտեղից արեւմուտք դեպի Մեյդան Չենիդյանի լեռնագագաթը, որը տեղակայված է Բիթլիս եւ Սաիրթ սանջակների սահմանագծին՝ Բիթլիս քաղաքից մոտավորապես 29 կիլոմետր դեպի հարավ,
գետնին սահմանագիծ պետք է նշվի, որը կհետեւի հիմնական ջրբաժաններին՝ անցնելով Վեբերհան Դաղով (3,110 մետր կամ 10,200 ոտնաչափ), կտրել անցնելով Քեսան Դերեն մոտ 2 կիլոմետր Խորոս գյուղից դեպի հարավ, թողնելով Թուրքիային Սեմհաջ եւ Նեւալեյն գյուղերը, ինչպես եւ նրարց միջեւ գտնվող կամուրջը կամ գետանցը եւ

Հայաստանին թողնելով Չոպանս գյուղը եւ հյուսիս-արեւելքից դեպի այն տանող ճանապարհը,
այդտեղից արեւմուտք՝ դեպի Գյուզել Դերե Սու, այն կետը, որ գտնվում է Բիթլիս քաղաքից 23 կիլոմետր դեպի հարավ եւ մոտ 2 կիլոմետր դեպի հարավ Նուրի Սեր լեռնագագաթից (2,150 մետր կամ 7,050 ոտնաչափ),
Բիթլիս եւ Սաիրթ սանջակների միջեւ վարչական սահմանով, ապա գետի վրա սահմանագիծ պետք է նշվի, որը կհետեւի հիմնական ջրբաժաններին եւ կանցնի Քուր Դաղի 2,750 եւ 2,700 մետր (համապատասխանաբար՝ 9,020 եւ 8,860 ոտնաչափ) գագաթներով, Բիլուկի Դաղ (2,230 մետր կամ 7,315 ոտնաչափ) եւ Սիհասեր Թեփե (2,250 մետր կամ 7,380 ոտնաչափ) գագաթներով,
այդտեղից արեւմուտք՝ դեպի Բիթլիս Սուի եւ անանուն գետակի միախառնման վայրը, Դեշթում գյուղի մոտակայքում, մոտ 30 կիլոմետր դեպի հարավ-արեւմուտք Բիթլիս քաղաքից,
գետնին սահմանագիծ պետք է նշվի, որը կհետեւի հիմնական ջրբաժաններին՝ թողնելով Թուրքիային Լերեդ եւ Դարունի գյուղերը, իսկ Հայաստանին՝ Էնբու գյուղը եւ բոլոր ճանապարհները, որոնք տանում են Մերգելու լեռից (1,850 մետր կամ 6,070 ոտնաչափ) հյուսիս-արեւելք՝ դեպի Բիթլիս Սու, եւ կտրում անցնում են Մերգելու Թեփե ու Շիխ Թաբուր լեռնաշղթաները,
այդտեղից արեւմուտք՝ դեպի Զուկ (Ղարզան) Սու այն կետը, որը 11 կիլոմետր հյուսիս-արեւմուտք է Հազո գյուղից եւ Զիլու գյուղից մոտավորապես 1 կիլոմետր հոսանքն ի վեր,
գետնին սահմանագիծ պետք է նշվի, որը կհետեւի հիմնական ջրբաժաններին՝ Հայաստանին թողնելով Դեշթումի գյուղը, անցնելով Կալմեն Դաղի արեւելյան գագաթով (2,710 մետր կամ 8,890 ոտնաչափով) եւ շարունակելով այնպես, որպեսզի Հայաստանին թողնվի սարահարթը կամ ներքին ջրահեռացման ավազանը, հակառակ կողմում Ավեսիպի գյուղից մոտ 3 կիլոմետր դեպի արեւմուտք գտնվող լեռնանցքը, որն անցնում է Շելաշ դաղոց (1,944 մետր կամ 6,380 ոտնաչափ),
այդտեղից արեւմուտք դեպի Սասուն Դերե, այն կետը, որը Քաբիլ Ջեւիզ գյուղից մոտ 4 կիլոմետր դեպի հարավ-արեւմուտք է եւ մոտավորապես 47 կիլոմետր դեպի հարավ է Մուշ քաղաքից,
գետնին սահմանագիծ պետք է նշվի, որը կհետեւի հիմնական ջրբաժաններին Չեյարդաշ լեռան (2,001 մետր կամ 6,565 ոտնաչափ), Կեւպեկա լեռան (1,931 մետր կամ 6,335 ոտնաչափ), Սասուն Դաղի անանուն գագաթը՝ մոտ 4 կիլոմետր Մալաթո դաղից (2,967 մետր կամ 9, 735 ոտնաչափ) դեպի հարավ-արեւմուտք, 2,229 (7,310 ոտնաչափ) բարձունքը, Թուրքիային թողնելով Գունդենու գյուղը,
այդտեղից հյուսիս-արեւելք՝ դեպի Թալուրի Դերե, այն կետը, որը գտնվում է Կասսեր գյուղից 2 կիլոմետր հոսանքն ի վեր եւ Սեյլեւան (Ֆարկին) գյուղից մոտավորապես 37 կիլոմետր (դեպի) արեւելք, ու 2,073 (6,800 ոտնաչափ) բարձունքով, Հայաստանին թողնելով Հեյշթիրեմ գյուղը,
այդտեղից հյուսիս-արեւմուտք՝դեպի Թալուրի Դերեի արեւմտյան վտակը, Հելիմ գյուղից մոտ 2 կիլոմետր դեպի արեւելք եւ Մուշ քաղաքից մոտավորապես 42 կիլոմետր դեպի հարավ-արեւմուտք գտնվող կետը,
գետնին պետք է սահմանագիծ նշվի, որը կհետեւի հիմնական ջրբաժաններին եւ կանցնի 2,251 (7,385 ոտնաչափ) բարձունքով,

այդտեղից հյուսիս-արեւմուտք՝ դեպի Կուլպ Բողազի (Կուլպ Սու) եւ Ասկար Դերեի խառնման վայրը, Մուշ քաղաքից մոտավորապես 42 կիլոմետր դեպի հարավ-արեւմուտք, գետնին սահմանագիծ պետք է նշվի, որը կհետեւի հիմնական ջրաբաժանների՝ Թուրքիային թողնելով Հելին գյուղը, իսկ Հայաստանին՝ Կեհիրվանիք գյուղը ,
այդտեղից հյուսիս-արեւմուտք՝ դեպի Գենջ եւ Մուշ սանջակների վարչական սահմանի վրա գտնվող կետը՝ Միր Իսմայիլ Դաղից հյուսիս-արեւելք, որը տեղակայված է Փելեկոզ գյուղից 5 կիլոմետր դեպի արեւմուտք եւ Արդուշին գյուղից մոտավորապես 19 կիլոմետր դեպի հարավ,
գետնին սահմանագիծ պետք է նշվի, որը կհետեւի հիմնական ջրբաժաններին եւ կանցնի Կոմիս Դաղով,
այդտեղից հյուսիս-արեւմուտք՝ դեպի Ֆրաթ Նեհրի (Մուրադ Սու կամ Եփրատ), այն կետը, որը կորոշվի գետնի վրա Դոմ գյուղից մոտ 1 կիլոմետր հոսանքն ի վեր եւ Մուշ քաղաքից մոտավորապես 56 կիլոմետր դեպի արեւմուտք,
Գենջ եւ Մուշ սանջակների միջեւ վարչական սահմանը եւ դեպի հյուսիս մոտ 2 կիլոմետր, ապա գետնին վրա սահմանագիծ պետք է նշվի, որը կհետեւի հիմնական ջրբաժաններին դեպի արեւմուտք՝ անանուն գագաթը, Չութելյաից (Աքչե Կարա) Դաղ (2,940 մետր կամ 9,645 ոտնաչափ), մոտավորապես 6 կիլոմետր դեպի արեւելք, ապա դեպի հյուսիս անցնելով Արշիկ Դաղի վրա գտնվող Հադիջե Թեփեի միջով, թողնելով Թուրքիային Քուլայ գյուղը եւ Հայաստանին՝ Քլուհուրան գյուղը,
այդտեղից հյուսիս-արեւմուտք՝ դեպի Գունիկ Սու, այն կետը, որը այս գետի երկու գետանցների միջեւ է, Էլմալի ու Չենաքջի գյուղերի միջեւ ճանապարհի գրեթե կեսին, եւ Չոլիկ (Չեւելիկ) գյուղից մոտավորապես 26 կիլոմետր դեպի հյուսիս,
գետնին սահմանագիծ պետք է նշվի, որը կհետեւի հիմնական ջրբաժաններին՝ անցնելով անանուն գագաթով՝ Շանղար գյուղից մոտ 2 կիլոմետր դեպի արեւմուտք, Սոլխան Դաղի երկայնքով, եւ 2,200 մետրի (7,220 ոտնաչափ) վրա գտնվող բարձունքով՝ Թուրքիային թողնելով Շանղար եւ Չենակջի գյուղերը եւ Հայաստանին՝ Կումիստան, Լիճինակ եւ Էլմալի գյուղերը,
այդեղից հյուսիս-արեւմուտք՝ դեպի Էրզրումի եւ Բիթլիսի վիլայեթների սահմանին գտնվող անանուն գագաթը, այն կետին մոտ, ուր Էրչեկ եւ Աղա Կեւի գյուղերի միջեւ անցկացված ուղիղ գիծը հատում է նշված վիլայեթների սահմանագիծը,
գետնին սահմանագիծ պետք է նշվի որը կհետեւի հիմնական ջրբաժաններին՝ անցնելով 2,050 մետր (6,725 ոտնաչափ) բարձունքով,
այդտեղից հյուսիս դեպի հիշյալ վիլայեթի սահմանագծին գտնվող անանուն գագաթը, որը Խորիս Դաղի Քարտալիկ Թեփեից 8 կիլոմետր դեպի հյուսիս-արեւմուտք է,
Էրզրումի եւ Բիթլիսի վիլայեթների վարչական սահմանագծով,
այդտեղից արեւմուտք՝ դեպի Բույուկ Սու (Կիղի Սու) 2 կիլոմետր հոսանքն ի վեր Ղարբզու Դերեի հետ նրա խառնման կետից, եւ Քիղի գյուղից մոտավորապես 11 կիլոմետր հյուսիս-արեւմուտք,
գետնին սահմանագիծ պետք է նշվի, որը կհետեւի Շեյթան Դաղլարի հիմնական ջրբաժաններին, անցնելով 2,610 մետր (8565 ոտնաչափ) բարձունքով, Շեյթան Դաղով (2,906 մետր կամ 9,535 ոտնաչափ), Հաքստուն Դաղով, Հայաստանին թողնելով Դինեկ գյուղը եւ նրանից հարավ-արեւմուտք գտնվող գետանցը կամ կամուրջը,
այդտեղից արեւմուտք՝ դեպի Դար Բողազ (Կուտու Դերե) այն կետը, որը մոտ 3 կիլոմետր հարավ-արեւմուտք է Չարդաքլար (Փալումոր) գյուղից,

գետնին սահմանագիծ պետք է նշվի, որը կհետեւի հիմնական ջրբաժաններին, Հայաստանին թողնելով Շորախ եւ Ֆերհադին գյուղերը, անցնելով Ղաբարթի Դաղով (2,550 մետր կամ 8,365 ոտնաչափ), Սիան Դաղով (2,750 մետր կամ 9,020 ոտնաչափ), 2,150 մետր բարձրության վրա գտնվող լեռնանցքով Մուստաֆա Բեյ Կոնաղի մոտով անցնող Փալումոր Կիղի ճանապարհով, Ֆեզիրա Թեփե (2,530 մետր կամ 8,300 ոտնաչափ), 2,244 մ (7,360 ոտնաչափ) եւ 2,035 մ (6,675 ոտնաչափ) բարձունքներով,

այդտեղից արեւմուտք՝ դեպի Երզինջան եւ Էրզրում սանջակների եւ Մամուրեթ-ուլ-Ազիզի վիլայեթի ընդհանուր սահմանը,մ որը տեղակայված է սուր անկյան տակ վիլայեթի սահմաններում, մոտավորապես 24 կիլոմետր դեպի արեւուտք Փալուրոր գյուղից եւ 32 կիլոմետր հարավ-արեւմուտք Երզինջան քաղաքից,

գետնին սահմանագիծ պետք է նշվի, որը կհետեւի հիմնական ջրբաժաններին եւ կանցնի դեպի հյուսիս-արեւմուտք անանուն գագաթով, մոտ 2 կիլոմետր հարավ-արեւմուտք Փալումորից, Սիլոս (Կեռսինոդ) Դաղով (2,405 մետր կամ 7,890 ոտնաչափ) դեպի Երզնջանի սանջակի հարավային սահմանագծին գտնվող անանուն գագաթը, մոտ 8 կիլոմետր հարավ-արեւմուտք Փալումոր-Երզնջան ճանապարհից, ապա թեքվելով դեպի հարավ-արեւմուտք սանջակի սահմանագծի երկայնքով մոտ 13 կիլոմետր, անցնելով Քարաջա Քալեհի (3,100 մետր կամ 10,170 ոտնաչափ) միջով,

ապա արեւմուտք՝ դեպի Էրզրում եւ Մանուրեթ-ում-Ազիզ վիլայեթների սահմանագծին գտնվող անանուն գագաթեւ, որը գտնվում է Մոնզուր Սիլսիլեսիի ճանապարհի վրայի լեռնանցքից մոտ 3 կիլոմետր հյուսիս-արեւմուտք, Եփրատի ափին տեղակայված Կեննախի եւ Դերսիմ (սանջակի) Փելուրի միջեւ, Երզնջան քաղաքից մոտավորապես 40 կիլոմետր դեպի հարավ-արեւելք գտնվող գագաթը,

Էրզրումի եւ Մամուրեթ-ուլ-Ազիզ վիլայեթների միջեւ վարչական սահմանը թարմացված է*, քանի որ սահմանագծման հանձնաժողովի քվե ունեցող անդամների մեծ մասը գերադասեց հետեւել լեռնաշղթայի երկայնքով ձգվող հիմնական ջրբաժանին՝ Մերջան Դաղլարից (3,449 մետր կամ 11,315 ոտնաչափ) մոտ 2 կիլոմետր հարավ-արեւմուտք գտնվող անանուն գագաթի եւ Կատար Թեփեի (3,300 մետր կան 10,825 ոտնաչափ) միջեւ,

այդտեղից հյուսիս՝ դեպի Ֆրաթ Նեհրի (Կարա Սու կամ Եփրատ), մինչեւ այն կետը, որը կորոշվի գետնի վրա Քեմաղ գյուղից մոտ 6 կիլոմետր դեպի արեւելք եւ Երզինջան քաղաքից մոտավորապես 35 կիլոմետր (դեպի) հարավ-արեւմուտք,

գետնին սահմանագիծ պետք է նշվի, որը կհետեւի հիմնական ջրբաժաններին, Թուրքիային թողնելով ճանապարհը Դերսիմի Փելուրից դեպի Եփրատի վրա գտնվող Կեմախ եւ Հայաստանին թողնելով Կոջա Արբլեր գյուղը,

այդտեղից հյուսիս՝ դեպի Էրզրումի եւ Տրապիզոնի վիլայեթների սահմանագիծը այն կետում, որը կորոշվի 2,930 մ (8,625 ոտնաչափ) գագաթից մոտ 1 կիլոմետր դեպի հարավ կամ արեւմուտք եւ Մետկուտ գյուղից մոտ 4 կիլոմետր դեպի հարավ կամ Երզինջան քաղաքից մոտավորապես 39 կիլոմետր դեպի հյուսիս-արեւմուտք,

գետնին սահմանագիծ պետք է նշվի, որը կհետեւի հիմնական ջրբաժաններին՝ Թուրքիային թողնելով Չալղի Յաղի, Թոմս ու Ալմալիկ գյուղերը եւ Հայաստանին՝ Երկղան գյուղը եւ Մելկութ գյուղից հարավ անցնող ճանապարհն ու ուղեյունը, անցնելով Ութչ Քրադաշ թեփեով, Կելեկ Կիրանով (Թեքե Թաշ, 2,800 մետր կամ 9,185 ոտնաչափ), Կեհնամ Դաղով (կամ Կարա Դաղ, 3,030 մետր կամ 9,940 ոտնաչափ), հավասարապես կիսելով Զազկեր գյուղից մոտ 2 կիլոմետր արեւմուտք ընկած լեռնանցքը Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ, եւ նմանապես Կրալ Խամ Բողազի ճանապարհի

լեռնանցքը Չարդակլի գյուղի մոտ, անցնելով Կարա Դաղի 2760 մետր (9,055 ոտնաչափ) բարձունքով, 2,740 մետր (8,990 ոտնաչափ) բարձունքով, եւ այն կետով, որը պետք է նշվի գետնի վրա, Իքի Սիվրի գետակի մոտ՝ Չիմեն Դաղ լեռնանցքից դեպի արեւմուտք 2 կիլոմետրից էլ պակաս, եւ դա պետք է արվի այնպես, որ Թուրքիային թողնվի դեպի արեւմուտք՝ Կուճի Կեւի ու Կարա Յայրակ տանող երկու ճանապարհների խաչմերուկը, որոնք տանում են դեպի Մետկուտ եւ Կիրմանա գյուղերը: Սահմանազծող հանձնաժողովը տեղում կորոշի 2,760 մետր եւ 2,740 մետր բարձունքների միջեւ անցնող մայրուղու առավել հարմար դիրքը,

այդտեղից հյուսիս-արեւմուտք՝ դեպի Կելկիտ Չայ (Կելկիտ Իրմակ), այն կետը, ուր հարավից դրան է հանդիպում Տրապիզոնի եւ Սիվասի վիլայեթների միջեւ սահմանագիծը,

Տրապիզոնի եւ Էրզրումի վիլայեթների միջեւ վարչական սահմանը եւ ահդտեղից դեպի Տրապիզոնի եւ Սիվասի վիլայեթների միջեւ վարչական սահմանը,

այդտեղից հյուսիս՝ դեպի Տրապիզոնի եւ Սիվասի վիլայեթների սահմանի վրա գտնվող անանուն գագաթը՝ Բորդա Փայայից (2,995 մետր կամ 9,825 ոտնաչափ) մոտ 4 կիլոմետր դեպի հարավ-արեւմուտք, որը գտնվում է Գյումուշ-Խանա քաղաքից մոտավորապես 38 կիլոմետր (դեպի) հարավ-արեւմուտք,

գետնի վրա սահմանագիծ պետք է նշվի, հետեւելով հիմնական ջրբաժաններին, Հայաստանին թողնելով Հալկիթ, Սինանլի, Կիլիկտին, եւ Կիրտանոս գյուղերը եւ Թուրքիային՝ Կար Կիշլա, Սադիկ, Կարա Կիա եւ Արա գյուղերը, կտրել անցնելով լեռնանցքը Շիրան Չայի արեւմտյան վտակների եւ Բարսակ Շարկի (Շապին Կարահիսար) քաղաքից մոտ 43 կիլոմետր դեպի արեւելք,

այդտեղից հյուսիս-արեւելք, հյուսիս եւ արեւմուտք՝ դեպի Տրապիզոնի եւ Սիվասի վիլայեթների սահմանին գտնվող անանուն գագաթը, որը տեղակայված է մոտ 7 կիլոմետր հյուսիս-արեւմուտք Յերչի Թեփեից (2,690 մետր կամ 8,825 ոտնաչափ) եւ 47 կիլոմետր հարավ, հարավ-արեւմուտք Կերասունտ քաղաքից,

Տրապիզոնի եւ Սիվասի վիլայեթների վարչական սահմանագիծը,

այդտեղից դեպի Սեւ ծովը, այն կետը ծովափին, որը պետք է որոշվի Քեշաբ գյուղից մոտ 1 կիլոմետր դեպի արեւմուտք եւ Կերասունտ քաղաքից մոտավորապես 9 կիլոմետր դեպի արեւելք,

գետնին սահմանագիծ պետք է նշվի, հետեւելով հիմնական ջրբաժաններին, Թուրքիային թողնելով դաշտերը, արոտավայրերը եւ գյուղերը Կոմիտ Դերեի (Ակ Սու) եւ նրա վտակների ոռոգման տարածքում եւ Հայաստանին՝ դաշտերը, արոտավայրերը, անտառները եւ գյուղերը Յաղաջ Դերեի (Էսպիյա Դերե) եւ Վենազիթ Դերեի (Քեշաբ Դերե) ու նրանց վտակների ոռոգման տարածքում, եւ անցկացվի այնպես, որ օգտագործվի սահմանը Տրիպոլի (Տիրեբոլի) եւ Կերասունտ ղազաների միջեւ՝ ընդամենը 7 կիլոմետր Կարա Թեփեից (1,696 մետր կամ 5,565 ոտնաչափ) հարավ, եւ որպեսզի առավել հարմար կապ ապահովվի նոր սահմանի եւ լեռնաշղթայով անցնող լեռնանցքների միջեւ, ինչպես որ այդ կապերը կարող են որոշվել տեղում, սահմանազծող հանձնաժողովի կողմից՝ տեղական բնակչության հետ խորհրդակցելուց հետո:

2. Որեւէ տարաձայնությունների դեպքում սույն որոշման տեքստի եւ կցված քարտեզների միջեւ՝ մասշտաբը 1:1,000,000 եւ 1:200,000, տեքստը կհամարվի գերակա:

Սեւրի պայմանագրի Հոդված 89-ով որոշված չորս վիլայեթների տարածքը սահմանված է ըստ 29 հոկտեմբերի 1914 թ. դրության,

Սահմանը, ինչպես վերը նկարագրվեց, այն գծված է կարմիր գույնով, ճշգրտված քարտեզի վրա՝ մասշտաբը 1:1,000,000, որը կցված է սույն սահմանի որոշմանը: Այստեղ հիշատակված բոլոր աշխարհագրական անունները ներկայացված են սույն տեքստին կցված քարտեզների վրա:
Տեղանքի աշխարհագրական կետերի անվանումների, լեռների բարձրության եւ վիլայեթների, սանջակների ու ղազաների սահմանների որոշման համար որպես հիմք ծառայել են թուրքական Գլխավոր շտաբի քարտեզները՝ մասշտաբը 1:200,000, եւ մասնակիորեն՝ բրիտանական քարտեզը՝ մասշտաբը 1:1,000,000:
1:200,000 մասշտաբի քարտեզները երաշխավորելի են Հոդված 91-ով նախատեսված սահմանագծող հանձնաժողովի կողմից օգտագործելու համար՝ սույն որոշմամբ հաստատված Հայաստանի սահմանները գետնի վրա նշագծելու համար:
II
Վերը նկարագրված սահմանը, որով Տրապիզոնի նավահանգիստը եւ Խարշուտ Սուի հովիտը հատկացվում են Հայաստանին, վերացնում է Հայաստանի համար հետագայում դեպի ծով ելք նախատեսելու անհրաժեշտությունը:
III
Ի լրումն սպառազինությունների սահմանափակման այն հիմնական երաշխիքների, որոնք ներառված են Սեւրի պայմանագրի V բաժնում՝ Ռազմական, ծովային եւ օդային հարցեր, Հայաստանի սահմանին, ինչպես այն հաստատվեց վերեւում, հարակից թուրքական տարածքի ապառազմականացումը, պետք է իրականացվի հետեւյալ կերպ.
Հսկողության եւ կազմակերպչական միջ-դաշնակցային ռազմական հանձնաժողովը, որի ստեղծումը նախատեսված է Սեւրի պայմանագրի հոդվածներ 196-200-ով, Թուրքիայի՝ Հայաստանի սահմաններին հարակից վիլայեթներում տեղակայված ոստիկանության ավագ սպաներին պետք է նշանակի բացառապես այն սպաների թվից, որոնք հիշյալ պայմանագրի Հոդված 159-ի համաձայն կառաջադրվեն Դաշնակից կամ Չեզոք ուժերի կողմից:
Այդ սպաները, ի հավելումն իրենց մյուս պարտականությունների, օժտված կլինեն հատուկ պարտականությամբ՝ հետեւելու եւ զեկուցելու Հսկողության եւ կազմակերպչական միջ-դաշնակցային ռազմական հանձնաժողովին Թուրքիայի այս վիլայեթներում բոլոր այն միտումների նպատակների մասին, որոնք ուղղված կլինեն Հայաստանի սահմանի դեմ, այն է՝ ռազմավարական երկաթուղիների եւ ավտոճանապարհների կառուցում, ռազմամթերքի պահեստների ստեղծում, ռազմակայանների հիմնում, ինչպես նաեւ հարեւան Հայաստանի տարածքի խաղաղությանն ու հանգստությանը սպառնացող քարոզչության ծավալում: Հսկողության եւ կազմակերպչական միջ-դաշնակցային ռազմական հանձնաժողովը այդժամ պետք է այնպիսի քայլեր ձեռնարկի, որպիսիք անհրաժեշտ կլինեն կանխարգելելու վերը բնորոշված ուժերի կենտրոնացումը եւ այլ ագրեսիվ գործողությունները:
Ի վկայություն առ այն, որ սա ես կազմել եմ իմ ձեռքով, կհավաստի այստեղ դրոշմված Միացյալ Նահանգների կնիքը:
Կատարված է երկու օրինակից Վաշինգտոն քաղաքում, հազար ինը հարյուր քսան թվականի նոյեմբեր ամսի քսաներկուսին եւ Միացյալ Նահանգների անկախության հարյուր քառասունհինգ թվականին:

(Կնիքը)

Նախագահ
ՎՈՒԴՐՈ ՎԻԼՍՈՆ

ԲԵՅՆԲՐԻՋ ՔՈԼԲԻ
Պետական քարտուղար

(ԱՄՆ 28–րդ նախագահ Վուդրո Վիլսոնի կայացրած Իրավարար վճռի գունավոր քարտեզը տես, Լուսանկարներ եւ քարտեզներ բաժնում)

ԿԻԼԻԿԻՈՅ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ԱՔՏԸ

Ստորագրեալքս իրաւասու ներկայացուցիչներ Կիլիկիոյ բոլոր Քրիստոնեայ հասարակութեանց, այսու կը յայտարարենք.
Նկատելով, որ Կիլիկիոյ մեծ պատերազմին, որպէս հետեւանք, գրաւուեցաւ դաշնակից ուժերով, որ այդ գրաւումը եւ ֆրանսական վարչութիւնը հոն պահուեցան զինադադարի ամբողջ տեւողութեան:
Նկատելով, որ բոլոր այս միջոցին թուրքերը չդադրեցան խանգարելէ երկրին անդորրութիւնը՝ ներմուծելով մահ, աւեր, արհաւիրք, որով եւ անոնք յայտնօրէն բռնաբարեցին իրենց յանձնառութիւնները եւ զինադադարը:
Նկատելով, որ իրենց այս կացութիւնը մեր կրօնակիցներուն արժեց կեանքը տասնեակ հազարաւորներու, որ ֆրանսական արիւնն եւս միաժամանակ հոսեցաւ առատօրէն մեր մարտիրոսներուն հետ:
Նկատելով, որ նոյնիսկ Թուրքիոյ հետ կնքելիք խաղաղութեան վաղորդեանին մեր շատ մը քաղաքներ սպառնալիքի տակ են՝ պաշարուած կամ ռմբակոծուած արիւնարբու հորդաններու կողմէ՝ կազմակերպուած ներողամիտ աչքերուն տակ թուրք իշխանութեանց, որոնք ատկէ զատ են եւ պիտի ըլլան միշտ անկարող զսպելու նմանօրինակ վայրագութիւններ եւ ըմբոստութիւնք, ենթադրելով՝ թէ անոնք պիտի ուզէին ընել զայդ:
Նկատելով, որ լման խաղաղութեան այս շրջանին անգամ մենք պիտի շարունակենք ապրիլ դեռ երկար ատենուան համար պատերազմական վիճակի մէջ, որ վերջ չպիտի գտնէ, եթե ոչ միայն զինուորական կարգ–կանոնով գործողութիւններու՝ ձեռնարկուած ֆրանսական քաջարի ուժերու կողմէ, որոնք միշտ ալ պիտի երկրորդուին նաեւ անվերապահ աջակցութիւններով քրիստոնեայ հասարակութեանց, որոնց այդ աջակցութիւնը այնքա՛ն օգտակար հանդիսացաւ ֆրանսական ուժերուն յաջողութեանց:
Նկատելով, որ այն պահուն իսկ, երբ պատրաստելու վրայ ենք սոյն Յայտարարութիւնը, այս երկրին հին տէրերուն գնդակները կը ճարճատեն մեր գլուխներուն վերեւէն, որ այս միեւնոյն կացութիւնը կը տիրէ նաեւ Տարսոնի եւ Մերսինի մէջ:
Նկատելով, որ անըմբռնելի է, որ օտար երկրի մը մէջ կնքուած խաղաղութիւն մը նման կացութեան մը պատճառ դառնայ:
Նկատելով, որ Կիլիկիոյ 275.000 քրիստոնեաները՝ սերտիւ համերաշխ իրենց եղբայրական զգացումներուն, իրենց շահերուն, թուրքերուն դէմ նողկանքի եւ Ֆրանսիայի հետ իրենց յարումին մէջ՝ առանց իսկ պէտք ունենալու վերյիշել սարսազդեցիկ յիշատակները անիծեալ անցեալի մը – խմորուած ամէնքն ալ ջարդերով, բռնագաղթերով,

աւարառութիւններով, քեներով, բռնարարութիւններով, ամէն տեսակ արհաւիրքներով եւ խայտառակութիւններով – հպարտ են, որ չկասեցան առջեւ ոչ մէկ զոհողութեան ու ջանքերու, որոնք ճնշուած ժողովուրդներուն համար կը կազմեն փրկագինը իրենց անկախութեան, որ, ընդհակառակն, անոնք կրնան ի նպաստ իրենց յուշածել՝ պատերազմի եւ զինադադարի երկար եւ ցաւալից շրջանին վճարած ըլլալ ամենէն թանկագին եւ ամենէն սարսափելի փրկանքները:

Նկատելով, որ Կիլիկիոյ քրիստոնեայ համայնքները ամէն պարագայի մէջ՝ Ամերիկեան երկու քննութեանց, թէ իրենց բոլոր դիմումներու ընթացքին ֆրանսական իշխանութեանց մօտ անփոփոխելիօրէն յայտնեցին իրենց անսասան որոշումը չընդունիլ վերադարձը թուրք տիրապետութեան:

Նկատելով, որ, մասնաւորաբար, իրենց անցեալ Մարտի 31 եւ Մայիս 15 թուակիր բողոքագիրներովը՝ ուղղուած Համաձայնական պետութիւններուն եւ Խաղաղութեան Խորհրդաժողովին, ինչպէս եւ իրենց առաջուց կատարած դիմումներովը, որոշակի հասկցուցին թէ զիրենք չպիտի թոյլ տային զոհանալ կիսամիջոցներով, արուեստական կարգադրութիւնները կամ խորթ, (batard) անհարազատ լուծումներով, թէ իրենք, մանաւանդ, վերջին ծայր ուժգնութեամբ բողոքեցին ընդդէմ հաշտութեան այն դաշինքին, որ արուեստականօրէն Կիլիկիան – պատմականօրէն, ցեղագրականօրէն, ռազմականօրէն, եւ տնտեսպէս մէկ եւ անբաժանելի – կը բաժնէր երկու մասերու, որմէն մէկ մասը ֆրանսական Սուրիոյ մնացած, եւ միւսը կը վերածէ թրքական գաւառի մը:

Նկատելով, որ ժողովուրդները, զորս իրենք կը ներկայացնեն, վստահալից սպասումէ մը վերջ՝ հանդէպ Դաշնակիցներուն արդարադատութեան, պիտի դատապարտուին ամենէն դառն յուսախաբութեան՝ եթէ Խաղաղութեան Խորհուրդին վերջնական որոշումները չպսակեն իրենց օրինաւոր պահանջները եւ իրենց ամենէն թանկագին յոյսերը, այդ պարագային սոյն Յայտարարութիւնը ստորագրող ներկայացուցիչները, չկարենալով պէտք եղածին պէս պատասխանել իրենց պատկան ժողովուրդներուն ցանկութեանց, անոնք խմբովին պիտի ըմբոստանան, ընդդէմ այդ հրէշային փորձին, եթէ կ'ըսենք, Կիլիկիոյ մէջ վերահաստատուի թրքական վեհապետութիւնը եւ վարչութիւնը:

Նկատելով, որ մինչեւ վերջին վայրկեան չստացուեցաւ հաւաստիքը թէ՝ իրենց պահանջները ընդունուած են, թէ՝ խաղաղութեան դաշինքը պիտի բարեփոխուի, ինչպէս որ պէտք է, թէ՝ իրենք նոյնիսկ այսօր, խաղաղութեան դաշինքին կնքումի վաղորդայնին, լքուած են ամենէն անձկալից անորոշութեան:

Նկատելով միանգամայն, թէ ներկայ շփոթ կացութիւնը եւ անիշխանական վիճակը մասամբ մը արդիւնք են տեղական թուրք վարչութեան անդամալուծման, եւ որ չէ այլեւս, եթէ ոչ անուանական կառավարութիւն մը, թէ այս պայմանաց մէջ միմիայն անհրաժեշտ իշխանութեամբ օժտուած տեղական իշխանութիւն մը կրնայ ամէնուն ալ յարգանք եւ վստահութիւն ներշնչելով, փրկել երկիրը անիշխանութենէ եւ լիակատար աւերումէ:

Բոլոր այս պատճառներուն համար եւ արժեցնելով բոլոր իրաւունքները՝ փաստերը եւ վերոյիշեալ 31 Մարտ եւ 25 Մայիս թուակիր երկու յիշատակագրութեանց մէջ մատնանշուած նկատումները, որոնց տրամաբանական վերջաւորութիւնն է ներկայ ձեռնարկը: Մենք հիմնուելով, մանաւանդ բոլոր ժողովուրդներուն եւս յստակ անանցանելի իրաւանց վրայ՝ ճշդելու իրենց ճակատագիրը, իրաւունք մը, որ իր առաջին աղբիւրն ունի Ֆրանսական յեղափոխութեան անմահ սկզբունքները:

Մենք հանդիսաւորապէս կը յայտարարենք. Կիլիկիան, սկսեալ այս օրուանէն, ազատ երկիր մը՝ բոլորովին անկախ Թուրքիայէն, օժտուած տեղական ինքնավար քրիստոնեայ

վարչութեամբ մը՝ զետեղուած Ֆրանսայի հոգատարութեան տակ: Կիլիկիոյ հողամասերուն Օսմանեան նախկին կայսրութենէն այս անջատումը մենք կ՚ըմբռնենք նոյնքան կատարեալ եւ վերջնական եւ այն միեւնոյն ձեւովը, ինչպէս՝ Հայաստանը, Սուրիան, Պաղեստինը, Միջագետքը եւ Արաբիան:
Իրագործելու եւ պահպանելու համար այս անկախութիւնը՝ թշնամին մեր դուռներէն վտարելու եւ մեր պաշարուած քաղաքները փրկելու համար, վերակազմելու համար այդ քաղաքները եւ գրաւուած շրջանները, եւ ազատելու համար մեր քրիստոնեայ եղբայրները իրենց գերութենէն, մենք պատրաստ ենք ամէն կարգի զոհողութիւններու, մենք այս երկրին հոգատար Ֆրանսայի ծառայութեան տակ կը դնենք մեր ժողովուրդներուն բոլոր կենդանի ուժերը:
Հատուածները, դաւանութիւնները, համայնքները, քրիստոնեայ ցեղերը, մենք ամէնքս միացած ենք միեւնոյն նուիրական նպատակին համար:
Մենք պիտի աշխատինք ձեռք–ձեռքի բարձրացնելու այս երկրին բարոյականը, մշակոյթը եւ տնտեսականը հովանիին տակ Ֆրանսայի: Կը փափաքինք Կիլիկիան ընել մէկ երկարաձգումը Եւրոպայի, մէկ նոր կեդրոնը քաղաքկրթութեան եւ զարգացման, ուր իսլամ անջատ ցեղերը նոյնպէս հաւասարապէս պիտի վայելեն ազատութեան եւ յառաջադիմութեան բարիքները եւ երաշխաւորութիւնները, որոնք իրենց անծանօթ էին թուրք կառավարութեան ներք եւ եւ պիտի օրհնեն այն օրը, երբ իրենք եւս անջատուեցան անկէ:
Անկախութիւնը Ֆրանսայի հոգատարութեան տակ, բացարձակ պայմանն է Քրիստոնէից գոյութեան՝ աս երկրին մէջ: Մենք նախապատիւ պիտի սեպենք մեռնիլ, քան ընդունիլ ուրիշ լուծում:
Վստահ ենք՝ թէ մեծանձն եւ ասպետական Ֆրանսան, աւանդական պաշտպանը Արեւելքի Քրիստոնէից, պիտի գնահատէ մեր պահանջաց արդարութիւնը, թէ ան պիտի բարեհաճի ճանչնալ մեր այս անկախութիւնը՝ առնելով զայն իր պաշտպանութեան տակ:
Կեցցէ՛, անկախ Կիլիկիան:
Կեցցէ՛, Ֆրանսան՝ հոգատարը Կիլիկիոյ:

Մ. Տամատեան
Ամբողջական Հայաստանի Ներկայացուցիչ

Գ. Վրդ. Արսլանեան
Ատանայի Հայոց Առաջնորդ
4–ը օգոստոսի, 1920 թ.

Գլուխ II

ԱՐԵՒՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԻ ՊԵՏԱԿԱՆԱՍՏԵՂԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ԱՐԵՒՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՁԵՒԱՎՈՐՈՒՄԸ (հիմնարար փաստաթղթեր)

ԱՐԵՒՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԻ ՊԵՏԱԿԱՆԱՍՏԵՂԾ 10–ԱՄՅԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Արեւմտյան Հայաստանի հայերի իրավունքների պաշտպանության ավելի քան 10–ամյա գործունեության արդյունքում ձեւակերպվել, մշակվել ու ձեւավորվել են հետեւյալ ծրագրերը, հիմքերը, մեխանիզմները:

1. Գործունեության իրավական – քաղաքական միասնական փաթեթի հիմնական դրույթներն ու ուղղություններն են.

ա) Իրավական–քաղաքական ուղղություն, որը ներառում է

– Ռուսաստանի Կառավարության Դեկրետը Արեւմտյան Հայաստանի մասին՝ 29 դեկտեմբեր 1917 թ.,

– Սեւրի Խաղաղության պայմանագիրը՝ 10 օգոստոս 1920 թ.,

– ԱՄՆ 28–րդ նախագահ Վուդրո Վիլսոնի Իրավարար վճիռը՝ 22 նոյեմբեր 1920 թ.,

– Կիլիկիայի Անկախության Հռչակագիրը՝ 4 օգոստոս 1920 թ.,

– հարակից այլ պայմանագրեր եւ իրավական փաստաթղթեր:

բ) Իրավական–քաղաքական ուղղություն եւ գործունեություն, որը ներառում է

– ՄԱԿ–ի Գլխավոր Ասամբլեայի ընդունած «Բնիկ ժողովուրդների իրավունքների մասին» հռչակագիրը, 13 սեպտեմբեր 2007 թ.,

– Արեւմտյան Հայաստանի հայերի ազգային ինքնության եւ քաղաքացիության կառույցի ստեղծումն ու կայացումը,

– հարակից այլ իրավական փաստաթղթեր եւ աշխատանքներ:

գ) Իրավական ուղղություն, որը ներառում է Հայերի ցեղասպանության դատապարտման եւ հատուցման ուղղությամբ իրականացվող աշխատանքները միջազգային դատական ատյաններում, այդ թվում՝ Հաագայի դատարանում:

դ) Իրավական ուղղություն, որը ներառում Հայոց պատմամշակութային եւ քաղաքակրթական արժեքների պաշտպանության ուղղությունը Եվրոպական Մարդու իրավունքների դատարանում եւ համապատասխան այլ ատյաններում:

2. Գործունեության իրավական – քաղաքական հիմքերն են.

ա) «Արեւմտյան Հայաստանի հայերի ինքնորոշման իրավունքի մասին» հռչակագիրը (17 դեկտեմբեր, 2004 թ.),

բ) «Արեւմտյան Հայաստանի հայերի իրավունքների մասին» հռչակագիրը (20 հունվար, 2007 թ.),

գ) Արեւմտյան Հայաստանի Կառավարության ստեղծման մասին հռչակագիրը (4 փետրվար, 2011 թ.),

դ) Արեւմտյան Հայաստանի պետական համակարգի մասին որոշումը (2 մարտ, 2011 թ.),
ե) Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհրդի կայացրած «Արեւմտյան Հայաստանի եւ Արեւմտյան Հայաստանի հայերի Մշտական, զինված, դրական չեզոքության մասին» որոշումը (29 մարտ, 2011 թ.),
զ) Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) ձեւավորման մասին հռչակագիրը (24 մայիս, 2013 թ.),
է) «Արեւմտյան Հայաստանի պետական կառուցվածքի, Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի պատգամավորների կարգավիճակի եւ Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի կանոնակարգի մասին» օրենքը (7 մարտ, 2014 թ.),
ը) Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագիրը Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագծի մշակման հանձնաժողով ստեղծելու մասին (10 օգոստոս, 2014 թ.):

3. Գործունեության մեխանիզմներն ու լծակներն են.
ա) Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհուրդը, որի գործունեության արդյունքում ձեւավորվում է Արեւմտյան Հայաստանի հայերի ազգային ինքնության եւ քաղաքացիության կառույցը, ինչը տալիս է Արեւմտյան Հայաստանի հայերի իրավունքները միջազգային ամենատարբեր ձեւաչափերում պաշտպանելու եւ իրականացնելու հնարավորություն: Սա ի հակադրություն «սփյուռքահայ» որակման, որն ունի թերի ազգային ինքնություն եւ չի ենթադրում ազգային – պետական նշանակության կոնկրետ իրավունքներ եւ դրանք պաշտպանելու եւ իրագործելու հնարավորություն:
բ) Այսպիսով, Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհուրդը եւ Արեւմտյան Հայաստան Հանրապետության պետականության երեք կառույցները՝ Արեւմտյան Հայաստանի Կառավարությունը, Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովը (Խորհրդարանը), Արեւմտյան Հայաստանի Նախագահական կառույցը եւ Նախագահական Խորհուրդը միասին իրականացնում են աշխատանքներ պաշտպանելու Արեւմտյան Հայաստանի հայերի իրավունքները Արեւմտյան Հայաստանի նկատմամբ եւ ձեւավորելու ու հաստատելու Արեւմտյան Հայաստան պետությունը՝ Բնօրրան Հայրենիքում:

Արեւմտյան Հայաստանի Հանրապետության կայացումը, Հայոց պետականաշինության գործում, շարունակական եւ կարեւոր քայլ է՝ ազատ, անկախ, ինքնիշխան եւ միացյալ Հայաստանի հաստատման գործում:

Հաղթանակը մերն է լինելու:

Տիգրան Փաշաբեզյան
Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Վարչապետ
20.08.2014 թ.

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԻՄՆԱԴԻՐ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ

2004 թվականի դեկտեմբերի 17–ին, Արցախի Շուշի քաղաքում, տեղի ունեցավ Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհրդի հիմնադիր ժողովը, որտեղ ներկա էին հիմնադիր ժողովի անդամներ՝ Արմենակ Աբրահամյանը, Հովսեփ Հովսեփյանը, Աշոտ Բաբայանը, Վաչագան Իշխանյանը, Հրաչյա Փիլիպոսյանը, Վիտալի Բալասանյանը, Կոմիտաս Դանիելյանը, Մելանյա Բալայանը, Սամվել Կարապետյանը, Ժիրայր Սեֆիլյանը, Գագիկ Սարգսյանը…

Հիմնադիր ժողովը քննության առավ հետեւյալ հարցերը՝

1. Արեւմտեան Հայաստանի Հայերի Ազգային Խորհրդի կազմավորման հարցը,
2. Արեւմտեան Հայաստանի Հայերի Ազգային Խորհրդի կողմից՝ «Արեւմտեան Հայաստանի Հայերի իրավունքների մասին» Հռչակագրի պատրաստումը,
3. Արեւմտեան Հայաստանի Հայերի Ազգային Խորհրդի աշխատանքների համակարգողի թեկնածության առաջադրման եւ ընտրության հարցը:

Միաձայն քվեարկությամբ՝
հաստատվեց Արեւմտեան Հայաստանի Հայերի Ազգային Խորհրդի հիմնադրումը,
հաստատվեց Արեւմտեան Հայաստանի հայերի Ազգային Խորհրդի կողմից՝ «Արեւմտեան Հայաստանի Հայերի իրավունքների մասին» Հռչակագրի պատրաստման հանձնարարականը,
Արմենակ Աբրահամյանը ընտրվեց Արեւմտեան Հայաստանի Հայերի Ազգային Խորհրդի աշխատանքների համակարգող եւ կազմակերպիչ:

Այդպիսով՝ Արեւմտեան Հայաստանի Հայերի Ազգային Խորհրդի աշխատանքներն ավարտվեց:

Արեւմտեան Հայաստանի Հայերի Ազգային Խորհուրդ
Շուշի, 17 դեկտեմբեր 2004 թ.

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԻ ՀՌՉԱԿԱԳԻՐԸ

Արեւմտեան Հայաստանի հայոց Ազգային Խորհուրդը տարագիր հայ ժողովուրդի միասնական կամքը արտայայտելով,
բոլոր հայերու ձգտումներուն իրականացման եւ պատմական արդարութեան վերականգնման յանձնառու հայ ազգի ճակատագրին հանդէպ իր պատասխանատուութեան գիտակից,
մարդու իրաւունքներու հռչակագրի համընդհանուր սկզբունքերուն եւ առհասարակ միջազգային իրաւունքով ընդունուած չափանիշներուն հիմնուելով Ժողովուրդներու ինքնորոշման իրաւունքը կիրառելով՝

ԿԸ ՅԱՅՏԱՐԱՐԷ

Արդարութեան վրայ հիմնուած ժողովրդավար ընկերութեան հաստատումը հետապնդող ազգի վերակենդանացման գործընթացի մեկնարկը.
1) «Թրքահայաստան» կոչուած Հայաստանը կը վերանուանուի Արեւմտեան Հայաստան (Հայրենիք): Արեւմտեան Հայաստանը (Հայրենիք) պիտի ունենայ իր դրօշը, զինանշանը եւ ազգային օրհներգը:
2) Արեւմտեան Հայաստանը (Հայրենիք) պիտի ըլլա ինքնավար պետութիւն՝ ազգային գերագոյն իշխանութիւն, անկախութիւն, լիարժէք գերիշխանութիւն եւ իրաւունքներ վայելող: Ազգային բացառապէս Արեւմտեան Հայաստանի (Հայրենիք) Սահմանադրութիւնն ու Արդարադատութիւնը:
3) Արեւմտեան Հայաստանի (Հայրենիք) երաշխաւորը իր ժողովուրդն է՝ այսօր տարագիր, որ իր իշխանութիւնը պիտի կիրառէ ուղղակիօրէն, ինչպէս նաեւ իր ներկայացուցիչներուն միջոցով՝ հիմնուելով Սահմանադրութեան եւ օրէնքներուն վրայ: Յանուն Արեւմտեան Հայաստանի (Հայրենիք) արտայայտուելու իրաւունքը Ազգային Խորհուրդի բացառիկ իրաւունքն է:
4) Արեւմտեան Հայաստանի (Հայրենիք) անդամ կը հանդիսանան բոլոր այն անդամները, որոնք կրնան հիմնաւորել իրենց տարագրեալ ըլլալը եւ իրենց ընտանեկան ծագումը՝ նոյնիսկ մի քանի սերունդ վաղեմութիւն ունեցող: Արեւմտեան Հայաստանի (Հայրենիք) անդամները կը վայելեն Ազգային Խորհուրդի պաշտպանութիւնն ու օգնութիւնը: Ազգային Խորհուրդը իր բոլոր անդամներուն ազատութիւնը եւ անոնց միջեւ հաւասարութիւնը կ'երաշխաւորէ:
5) Մարդոց եւ իրերու անվտանգութիւնը եւ սահմաններու անձեռնմխելիութիւնը ապահովելու նպատակով Արեւմտեան Հայաստանը (Հայրենիք) կը ստեղծէ իր ուրոյն պաշտպանական կառոյցը, հանրային ապահովութեան եւ պետական կառոյցները՝ Ազգային Խորհուրդին ընդդատեայ: Արեւմտեան Հայաստանը (Հայրենիք) իր անդամներուն իւրաքանչիւրի ազգային ծառայութեան խնդիրի կարգաւորումը կը տնօրինէ անկախաբար կերպով: Արեւմտեան Հայաստանի (Հայրենիք) պաշտպանական ուժերը կրնան տեղակայուիլ/տեղաբաշխուիլ բացառապէս Ազգային Խորհուրդի որոշումով՝ Ազգային Խորհուրդի Նախագահի բարձր հրամանատարութեան ներքոյ:
6) Միջազգային իրաւունքի գետնի առումով Արեւմտեան Հայաստանը արտաքին անկախ քաղաքականութիւն կը վարէ: Ան ուղղակի յարաբերութիւններ կը հաստատէ միւս պետութիւններուն հետ եւ կը մասնակցի միջազգային կազմակերպութիւններու գործունէութիւններուն:
7) Արեւմտեան Հայաստանի ազգային հարստութիւնը՝ իր ժողովուրդը, հողը, ընդերքը, օդային տարածքը, ջուրերը եւ այլ բնական պաշարները, տնտեսական եւ մտաւոր ներուժն ու մշակութային կարողութիւնը Ազգին կը հանդիսանան: Անոնց վարումը, օգտագործումը, վայելումը եւ տիրանալը կը վերահսկուին Արեւմտեան Հայաստանի օրէնքներով:
8) Արեւմտեան Հայաստանը (Հայրենիք) կ'որոշէ իր տնտեսական համակարգի սկզբունքները եւ կը տնօրինէ համակարգի կարգաւորումը. անհրաժեշտութեան պարագային կրնայ ստեղծել իր սեփական տարադրամը, ազգային դրամատունը, ելեւմտական փոխառութեան, հարկերու եւ այլազան ծառայութիւններու իր համակարգը՝ հիմնուած սեփականութեան տարբեր ձեւերու դրութեան վրայ:
9) Իր իսկ մէջ Ազգային Խորհուրդը կ'երաշխաւորէ խօսքի, մամուլի եւ խղճի ազատութիւնը, օրէնսդիր, գործադիր եւ դատական իշխանութիւններու իրարմէ անջատ

գոյութիւնը, արհեստակցական եւ մասնագիտական միութենական համակարգը, բազմակարծութիւնը եւ պետական պաշտօնեաներու ու պաշտպանական ուժերու ապաքաղաքական բնոյթը:
10) Ազգային Խորհուրդը կ'երաշխաւորէ կեանքի բոլոր ոլորտներուն մէջ արեւմտահայերէնի կիրառումը՝ որպէս պետական լեզու: Ազգային Խորհուրդը կը ստեղծէ իր ուրոյն կրթական համակարգը եւ գիտական ու մշակութային զարգացման դրութիւնը.
11) Ազգային Խորհուրդը 1894–էն 1923 գրաւման ենթարկուած իր տարածքին վրայ (Արեւմտեան Հայաստան, Հայրենիք) թուրքերուն կողմէ կատարուած Ցեղասպանութեան միջազգային ճանաչումին հասնելու պարտականութեան զօրավիգ է:
12) Ազգային Խորհուրդը զօրավիգ է տարագրեալներու սերունդներու վերահաստատումին զուգահեռ պէտք է վճարուի վնասուց յատուցում՝ ստեղծելով Միջազգային Հիմնադրամ՝ մեծ մասամբ Հայոց Ցեղասպանութեան մէջ պատասխանատու ճանչցուած պետութիւններու արդեամբ:
13) Այս հռչակագիրը հիմք կը ծառայէ Արեւմտեան Հայաստանի (Հայրենիք) Սահմանադրութեան մշակման, եւ, մինչեւ անոր ընդունումը, հիմք կը ծառայէ օրէնքներ ներմուծելու եւ գործող սահմանադրութեան յաւելումներ ընելու համար, ազգային իշխանութիւններու գործունէութեան համար եւ նոր օրէնսդրութեան մշակման համար:

Արեւմտեան Հայաստանի Հայոց Ազգային Խորհուրդ
17 դեկտեմբեր 2004 թ., Շուշի

ՀՌՉԱԿԱԳԻՐ
ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ
Արեւմտեան Հայաստանի վտարանդի կառավարութեան կազմութեան վերաբերեալ

Արեւմտեան Հայաստանի Հայերու Ազգային Խորհուրդը, արտայայտելով Արեւմտեան Հայաստանի հայոց կամքը ու գիտակցելով իր պատասխանատուութեան խիստ կարեւորութիւնը իր ժողովուրդի հանդէպ, զոր կ'առնչուի անոնց իղձերու իրականացման եւ խեղաթիւրուած արդարութեան վերականգնման գործընթացին, հանդէս կու գայ հրապարակելու հետեւեալ որոշումը՝
Յենուելով միջազգային հետեւեալ հանգամանքներու վրայ.

ա) ՄԱԿ–ի մարդու իրաւանց համընդհանուր սկզբունքներուն,
բ) միջազգային իրաւունքի հանրածանօթ չափանիշներուն,
գ) Արեւմտեան Հայաստանի հայերու ինքնորոշման իրաւունքի կիրառման անհրաժեշտութեան, որ պահանջուած է Ազգային Խորհուրդի կողմէ 2004 թ. դեկտեմբեր 17–ին,

ԿԸ ՀՌՉԱԿԷ

Աշխարհասփիւռ հայութեան լիիրաւ պետական կառոյցի մը ստեղծումը, այսինքն՝ Արեւմտեան Հայաստանի վտարանդի կառավարութեան կազմութեան սկիզբը:

Սոյն կառավարութեան ձեւաւորման երաշխիքները հաստատուած են իրաւական հետեւեալ որոշումներով.

ՅՕԴՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

1. 29 դեկտեմբեր 1917 թ. (11 յունուար 1918 թ.) Ռուսաստանի հրամանագիրը, որ կը ճանչնայ Արեւմտեան Հայաստանի անկախութիւնը. Ռուսիոյ Ժողովրդական պատուիրակներու Խորհուրդը լոյս կ՝ ընծայէ «Թրքահայաստանի վերաբերող հրամանագիրը» 1917 թ. դեկտեմբեր 31–ին (1918 թ. յունուար 13) «Բրաւտայի» թիւ 227–ի մէջ:
2. 2 յունուար 1918 թ. Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդի դիմումը՝ ներկայացուած ֆրանսական կառավարութեան ճանչնալու Արեւմտեան Հայաստանի անկախութիւնը:
3. 10 օգոստոս 1920 թ. Սեւրի Խաղաղութեան դաշնագիրը եւ ԱՄՆ–ու նախագահ Ու. Ուիլսընի իրաւարար վճիռը (22 նոյեմբեր 1920 թ.) եւ մինչեւ օրս վավերական ու իրենց իրաւաբանական ոյժը չկորսնցուցած միջազգային փաստաթուղթերու տը իւրէ (De jure) եւ տը ֆաքթօ (De facto) գոյութիւնը Արեւմտեան Հայաստանի վերաբերեալ:

Կը նշենք հետեւեւալ կարեւոր ամսաթիւերը. 1920 թ. Սան Ռէմօյի խորհրդաժողով, 1920 թ. ապրիլ 24, Սեւրի Խաղաղութեան դաշնագրի ստորագրումը արեւմտեան գերտէրութիւններու կողմէ, 1920 թ. մայիս 11, Սեւրի Խաղաղութեան դաշնագրի յանձնումը թրքական կառավարութեան, 1920 թ. օգոստոս 10, Սեւրի Խաղաղութեան դաշնագրի ստորագրումը Թուրքիոյ կողմէ: 1960 թ. դեկտեմբեր 14,
4. 14 դեկտեմբեր 1960, ՄԱԿ–ի Ընդհանուր Ժողովի Որոշումը Գաղութային ժողովուրդներու եւ երկիրներու անկախութեան արտօնութեան յայտարարութեան հիմամբ:
5. Արեւմտեան Հայաստանի հայերը իբրեւ բնիկ ժողովուրդ իրենց ինքնորոշման իրաւունքի տէրն են՝ համաձայն ՄԱԿ–ի Ընդհանուր Ժողովի կողմէ ընդունուած Յայտարարութեան 2007 թ. սեպտեմբեր 13–ին:

«Բնիկ ժողովուրդները ինքնորոշման իրաւունք ունին, որու հիման վրայ անոնք ազատօրէն կ՝որոշեն իրենց քաղաքական կարգավիճակը, եւ ազատօրէն կ՝ապահովեն իրենց տնտեսական, ընկերային եւ մշակութային բարգաւաճումը» (Յօդ. 3):

ՅՕԴՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

1. Արեւմտեան Հայաստանի հայոց իրաւունքներու ապահովումն ու իրականացումը կարելի է միայն Արեւմտեան Հայաստանի կառավարութեան հովանաւորութեամբ:
2. Ամէն աքսորուած հայու շառաւիղի իրաւունքն է վերադառնալու իր պապենական հայրենիքը ու բարգաւաճելու այդտեղ:
3. Հայ Ազգային Խորհուրդը կը հրաւիրէ արտաքին աշխարհի ուշադրութիւնը՝ մասնակցելու Արեւմտեան Հայաստանի պատմական տարածքներու ճանաչմանը իր նահանգներով (վիլայէթներով)՝ ներառեալ ուիլսընեան սահմանները եւ ընդունելու զայն իբրեւ անհերքելի իրողութիւն:

4. 1894–1923 թթ. թուրքական յաջորդական իշխանութիւններու կողմէն Անատոլիայի եւ Արեւմտեան Հայաստանի մէջ գործադրած ցեղասպանութեան հետեւանքով ոչնչացուած եւ իւրացուած են բռնութեամբ աքսորուած հայերու գոյքերը, որոնց համար կը պահանջուի վերադարձնել Արեւմտեան Հայաստանի կառավարութեանը՝ իբրեւ միակ հեղինակաւոր իշխանութիւն:

ՅՕԴՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ

Արեւմտեան Հայաստանի վտարանդի կառավարութեան կազմութիւնը տարագիր հայոց կարգավիճակի ծնունդն է:

Ուստի, հարկ է նկատի ունենալ հետեւեալ սահմանումները.

1. Արեւմտեան Հայաստանի վտարանդի կառավարութիւնը կը կազմուի Արեւմտեան Հայաստանի Հայերու Ազգային Խորհուրդի պատգամաւորներու կողմէ: Վտարանդի կառավարութիւնը օժտուած է նաեւ պետական իշխանութեան գերակայութեամբ եւ լիազօրութեամբ:
2. Արեւմտեան Հայաստանի հայոց անունով հանդէս գալու իրաւունքը կը պատկանի բացառապէս Արեւմտեան Հայաստանի վտարանդի կառավարութեանը:
3. Աշխարհասփիւռ հայութիւնը Արեւմտեան Հայաստանի քաղաքացիութեան իրաւունք ունի: Արեւմտեան Հայաստանի քաղաքացիները կը գտնուին անոր պաշտպանութեան եւ հովանաւորութեան ներքոյ:
4. Արեւմտեան Հայաստանի կառավարութիւնը կ՚ապահովէ իր քաղաքացիներու ազատ եւ իրաւահաւասար զարգացումը՝ անկախ անոնց ազգային, ցեղային եւ դաւանական պատկանելիութենէն:
5. Արեւմտեան Հայաստանի կառավարութիւնը հանրային անվտանգութեան պահպանման համար կը ստեղծէ համապատասխան մարմիններ եւ կառավարական կառոյցներ:
6. Արեւմտեան Հայաստանի կառավարութիւնը, իբրեւ միջազգային իրաւունքի ենթակայ, անմիջական յարաբերութիւններ կը հաստատէ այլ պետութիւններու եւ ազգային պետական կազմաւորումներու հետ, կը մասնակցի միջազգային կազմակերպութիւններու գործունէութիւններուն:

ՅՕԴՈՒԱԾ ՉՈՐՐՈՐԴ

1. Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդը կը յանձնարարէ Արեւմտեան Հայաստանի կառավարութեան՝ միջազգային յայտարարութիւններու եւ պայմանագրերու ընդունման միջոցով հաստատել, որ.
ա) Արեւմտեան Հայաստանի հարստութիւնը՝ հողը, ընդերքը, օդային տարածութիւնը, ջրային եւ այլ բնական պաշարները, տնտեսական, մտաւոր եւ պատմամշակութային կարողութիւնները, Արեւմտեան Հայաստանի հայերու սեփականութիւնն են:
բ) Արեւմտեան Հայաստանի հարստութեան տիրապետման, օգտագործման եւ տնօրինման կարգը կ՚որոշուի Արեւմտեան Հայաստանի կառավարութեան օրէնքներով:

գ) Արեւմտեան Հայաստանի կառավարութիւնը Թուրքիոյ Հանրապետութեան մէջ նաեւ ունի ազգային հարստութիւն, որոնց կարգին ոսկիի պաշարներու, ալմաստի եւ արտարժոյթի հիմնադրամներու մասնաբաժնի իրաւունք:
2. Արեւմտեան Հայաստանի կառավարութիւնը իր տիրապետութեան տակ գտնուելիք ամբողջ տարածքին վրայ ապահովելու է խօսքի, մամուլի եւ խղճի ազատութիւն, օրէնսդրական, դատական եւ գործադիր իշխանութիւններու իրաւահաւասարութիւն, ինչպէս նաեւ՝ Արեւմտեան Հայաստանի տարածքի վրայ տեղակայուելիք իրաւապահ մարմիններու եւ զինեալ ոյժերու ապաքաղաքականացում:
3. Արեւմտեան Հայաստանի կառավարութիւնը կը հռչակէ հայերենը որպէս պետական լեզու, ընդունելով արեւմտահայերէնի եւ արեւելահայերէնի համազօր օգտագործումը, կառավարութեան պաշտօնական գրագրութեան լեզուն կը յայտարարէ արեւմտահայերենը: Կառավարութիւնը կը ստեղծէ կրթական, գիտական եւ մշակութային սեփական համակարգ:
4. Արեւմտեան Հայաստանի կառավարութիւնը կը սատարէ Արեւմտեան Հայաստանի եւ Թուրքիոյ մէջ կատարուած ցեղասպանութեան ճանաչման գործին՝ համաձայն Հայ Ազգային Խորհուրդի յայտարարութեան:
5. Սոյն Հռչակագիրը հիմք կը ծառայէ Ազգային Խորհուրդի համար՝ ժամանակաւորապէս նշանակելու եւ հաստատելու Արեւմտեան Հայաստանի կառավարութեան լիազօր ներկայացուցիչ մը միջազգային կառոյցներու մէջ՝ որոշում կայացնելու իրաւունքով:

Ուստի, կոչ կ՚ ընենք ձեզ, հայե՛ր, Արեւմտեան Հայաստանի, Հայաստանի Հանրապետութեան, Արցախի, Ջաւախքի, եւ թէ՛ աշխարհով մէկ սփռուած, մասնակցիլ կառավարութեան գործունէութեանց՝ ձեր գիտելիքներով, փորձառութիւններով եւ մասնագիտութիւններով:

Արեւմտեան Հայաստանի Հայերու Ազգային Խորհուրդ
4 փետրուար 2011 թ.

ՈՐՈՇՈՒՄ
թիվ 1/2011 – 29.03.2011 թ.

ԱՐԵՒՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ
«ՉԷԶՈՔ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՒ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՅԱՄԱՔԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ» ՀԱԱԳԱ,
18 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1907 թ. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ (Convention V)
ՀԻՄԱՆ ՎՐԱ

– ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է–
ԱՐԵՒՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԻ ԵՒ
ԱՐԵՒՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՄՇՏԱԿԱՆ, ԶԻՆՎԱԾ, ԴՐԱԿԱՆ ՉԷԶՈՔՈՒԹՅՈՒՆԸ

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Նկատի առնելով մարդկության եւ հայության կրած մարդկային, հոգեւոր, մշակութային, նյութական եւ տարածքային կորուստները Առաջին եւ Երկրորդ համաշխարհային պատերազմների ժամանակ,

Հաշվի առնելով այն ճշմարտությունը, որ մարդկությունն այսօր գտնվում է հոգեւոր–մշակութային, բարոյա–հոգեբանական եւ տնտեսական–քաղաքական խոր ճգնաժամի մեջ, որոնք սպառնում են քաղաքակրթությունների բախմամբ եւ Երրորդ համաշխարհային պատերազմի հրահրմամբ,

Նկատի ունենալով «Չէզոք պետությունների եւ անձանց իրավունքների եւ պարտավորությունների մասին ցամաքային պատերազմի ժամանակ» Հաագա, 18 հոկտեմբեր 1907 թ. Կոնվենցիան (Convention V), որպես մարդկության եւ հայության իրավական ուղիղ ճանապարհ՝ խուսափելու համար ազգամիջյան եւ միջկրոնական բախումներից, նաեւ հակամարտություններից եւ պատերազմներից,

Հաշվի առնելով այն փաստը, որ Արեւմտյան Հայաստանի պետականության բացակայությունը ծավալապաշտական քաղաքականության պատճառով Արեւմտյան Հայաստանի հայությանը իրավականորէն զրկեց նույն՝ «Չէզոք պետությունների եւ անձանց իրավունքների եւ պարտավորությունների մասին ցամաքային պատերազմի ժամանակ» Հաագա, 18 հոկտեմբեր 1907 թ. Կոնվենցիային (Convention V) մաս կազմելու հնարավորությունից, ինչպես նաեւ՝ համապարփակ ինքնապաշտպանություն կազմակերպելու իր բնական իրավունքից, որով Հայկական պետությունը, որպես անկախ իշխանություն, եթե գոյություն ունենար՝ անպայման օգտվելու էր «Չէզոք պետությունների եւ անձանց իրավունքների եւ պարտավորությունների մասին ցամաքային պատերազմի ժամանակ»՝ Հաագա, 18 հոկտեմբեր 1907 թ. Կոնվենցիայի (Convention V) դրույթներից, նաեւ խաղաղության առաջին պայմանագրից՝ 1899 թ.:

Անհրաժեշտ համարելով ընդգծել այն փաստը, որը հատուկ վերհիշեցման ու գնահատման է արժանի, երբ 1915 թ. մայիս 24–ին Եռյակ համաձայնության պետությունները՝ Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան եւ Ռուսաստանը, առաջինը հանդես եկան Օսմանյան կառավարության կողմից հայերի բնաջնջման քաղաքականության դեմ համատեղ հայտարարությամբ, որով Օսմանյան կառավարության կողմից հայերի նկատմամբ իրականացված բռնությունները որակեցին, որպես «Թուրքիայի նոր ոճիրը ընդդեմ մարդկության եւ քաղաքակրթության» (1):

Հիմնվելով պատմական այն փաստի վրա, որ Հայկական Կիլիկիան անկախություն հռչակեց 1920 թ. օգոստոս 4–ին, բայց Ֆրանսիան, շրջանցելով 1915 թ. հոկտեմբեր 27–ին Հայկական Կիլիկիայի ինքնավարության վերաբերյալ համաձայնությունը Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհրդի ներկայացուցիչ Պօղոս Նուպար Փաշայի եւ Ֆրանսայի արտաքին գործերի նախարարության արեւելյան բաժնի պետ Ֆրանսուա Ջորջ–Փիքոդի միջեւ, զինաթափեց ու լքեց Կիլիկիայի հայերին, ինչի հետեւանքով Կիլիկիայի անկախությունը չգոյատեւեց (2):

Այս տարին այն ժամանակաշրջանն էր, երբ, հենվելով միջազգային ընդունված չափանիշների վրա, Օսմանյան կայսրությունը անդամահատվեց, եւ որի հիման վրա ստեղծվեցին նոր, անկախ արաբական պետություններ:

Հիմնվելով նաեւ այն իրողության վրա, որ 1918 – 1920 թթ. Հայկական Աշխարհի ազատագրական պայքար մղող նահանգները՝ Նախիջեւան, Զանգեզուր, Արցախ, Զավախք եւ Հայաստանի Հանրապետություն, ոտնձգությունների ենթակա դարձան թուրքական եւ ադրբեջանական զինված ուժերի կողմից,

Եւ այն հանգամանքը, որ մինչ 1920 թ. Հայաստանի Հանրապետությունը անդամակցության խնդրանքով Ազգերի Լիգային ուղղված դիմումի պատասխանին էր սպասում, քեմալական Թուրքիան նոր հարձակման էր ենթարկում Հայաստանն ու հայությունը՝ տապալելու համար Սեւրի Խաղաղության դաշնագրի դրույթների եւ ԱՄՆ 28–րդ նախագահ Վուդրո Վիլսոնի Իրավարար վճռի իրագործումը Հայաստանում,

Ինչպես նաեւ պատմական այլ իրադարձություններ, որոնք տասնամեակներ շարունակ արգելափակեցին հայ ժողովրդի ազատ, ինքնիշխան ապրելու, զարգանալու եւ առաջընթացի իրավունքը իր իսկ տարածքներին վրա՝ որպես բնիկ ժողովուրդ:

Եւ վերջապես, ՄԱԿ–ի հռչակած միջազգային սկզբունքների եւ չափանիշների համաձայն, վերահաստատելով մեր հանձնառությունը հակամարտությունների խաղաղ կարգավորման սկզբունքին՝ նպաստելու համար տարածաշրջանային խաղաղությանն ու անվտանգությանը, ապահովելու համար ժողովուրդների ազատ զարգացման եւ առաջընթացի իրավունքը,

Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհուրդը սույն որոշմամբ
հայտարարում է՝

1. Արեւմտյան Հայաստանի հայերի եւ Արեւմտյան Հայաստանի Մշտական, Զինված, Դրական Չեզոքությունը բռնագրավված Երկրամասի՝ Արեւմտյան Հայաստանի դե յուրե (de jure) եւ դե ֆակտո (de facto) տարածքների վրա, նկատի ունենալով առաջին հերթին՝
ա) ինչպես Հայաստան – Թուրքիա սահմանազատումը՝ համաձայն ԱՄՆ 28–րդ նախագահ Վուդրո Վիլսոնի Իրավարար վճռի, 22 նոյեմբեր 1920 թ. **(3)**,
բ) այնպես էլ պատմական Հայաստանի, այդ թվում՝ Արեւմտյան Հայաստանի եւ Հայկական Կիլիկիայի, համաձայն՝ ՄԱԿ–ի «Գաղութային երկրներին եւ ժողովուրդներին անհապաղ անկախություն շնորհելու մասին» Հռչակագրի, 14 դեկտեմբեր 1960 թ.,
գ) եւ վերջապես, Արեւմտյան Հայաստանի նկատմամբ, որպես բնիկ ժողովուրդ, Արեւմտյան Հայաստանի Հայերի ունեցած՝ պատմական, ծագումնաբանական, մշակութային, քաղաքակրթական, պետականաստեղծ անժխտելի, անբեկանելի եւ անժամանցելի իրավունքները՝ համաձայն ՄԱԿ–ի «Բնիկ ժողովուրդների իրավունքների մասին» Հռչակագրի, 13 սեպտեմբեր 2007 թ.:
2. Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհրդի Մշտական, Զինված, Դրական Չեզոքության Հայտարարությունը տարածվում է, թե՛ Արեւմտյան Հայաստանի քաղաքացիություն ստացած եւ թե՛ դեռեւս չստացած բոլոր հայերի վրա՝ հիմք ընդունելով

այն փաստը, որ նրանք սփյուռքա–հայեր չեն, ինչպես ներկայացվում է մինչեւ այսօր, այլ Հայոց ցեղասպանության եւ բռնագաղթի հետեւանքով աշխարհի տարբեր երկիրների մեջ բնակություն հաստատած Արեւմտյան Հայաստանի հայեր:

3. Արեւմտյան Հայաստանի հայերը, ներառյալ՝ Հայկական գաղթավայրերի բնակչությունը, ժամանակակից աշխարհի մեջ տեղի ունեցող ագրեսիվ պատերազմների, հեղաշրջումների, ազգամիջյան եւ միջկրոնական ընդհարումների, նաեւ այսպես կոչված քաղաքակրթությունների բախման եւ դրանցից բխող բռնություններին, կոտորածներին եւ ցեղասպանություններին, առավել եւս հրահրված կամ ուղղորդված քառսային վիճակներին չմասնակցելու իրավունք ունի համաձայն՝ «Չեզոք պետությունների եւ անձանց իրավունքների եւ պարտավորությունների մասին ցամաքային պատերազմի ժամանակ»՝ Հաագա, 18 հոկտեմբեր 1907 թ. Կոնվենցիայի (Convention V):

4. Արեւմտյան Հայաստանի հայերը, ներառյալ՝ Հայկական գաղթավայրերի բնակչությունը, հաջորդական բռնություններից, հարձակումներից, բռնագաղթերից ու կոտորածներից պաշտպանվելու, ինչպես նաեւ իր բնակության երկիրը արտաքին ագրեսիայից պաշտպանելու իրավունք ունի, համաձայն՝ ՄԱԿ–ի կանոնադրության 51–րդ հոդվածի, որը շեշտում է՝ «Անհատական եւ հավաքական ինքնապաշտպանության իրավունքը»:

5. Արեւմտյան Հայաստանի հայերը, ներառյալ՝ Հայկական գաղթավայրերի բնակչությունը, իր բնակության երկրի կողմից այլ երկրի նկատմամբ իրականացված ագրեսիային ու ներքաղաքական բախումներին, նաեւ քաղաքացիական կռիվներին չմասնակցելու իրավունք ունի, համաձայն՝ «Չեզոք պետությունների եւ անձանց իրավունքների եւ պարտավորությունների մասին ցամաքային պատերազմի ժամանակ»՝ Հաագա, 18 հոկտեմբեր 1907 թ. Կոնվենցիայի (Convention V):

Արեւմտյան Հայաստանի հայերի խաղաղ ու անվտանգ ապրելու եւ զարգանալու որպես օրինակ ունենք Լիբանանի հայ համայնքի քաղաքական առաջատար ուժերի միացյալ հայտարարությունը՝ 1975–1990 թթ. տեղի ունեցած ներքաղաքական ճգնաժամի հաղթահարման խնդրով, որը բնորոշվեց որպես «Լիբանանի հայության դրական չեզոքություն»:

6. Արեւմտյան Հայաստանի հայերը, բոլոր այն դեպքերում, երբ հարկադրված են պաշտպանելու իրենց Մշտական, Զինված, Դրական Չեզոքությունը՝ կազմակերպում են հասարակական կարգի եւ համայնքի անվտանգության, պաշտպանության եւ տարածքային ապահովության զինված ուժեր, համաձայն՝ ՄԱԿ–ի կանոնադրության 51–րդ հոդվածի, որը շեշտում է «Անհատական եւ հավաքական ինքնապաշտպանության իրավունքը»:

7. Ինչպես Արեւմտյան Հայաստանի հայերը, նունպես Հայոց Հայրենիքից տարբեր ժամանակաշրջաններում, տարբեր պատճառներով բռնագաղթված ու տարագրված հայությունը՝ բարոյական, պատմական, քաղաքակրթական, քաղաքական եւ քաղաքացիական բոլոր իրավունքներն ունեն կիրառելու Մշտական, Զինված, Դրական Չեզոքության քաղաքականությունը, այն պատճառով, որ մինչեւ օրս Ազգերի Լիգան, ապա ՄԱԿ–ը ու Միջազգային ընկերակցությունը պատշաճ մակարդակով չեն պաշտպանել Հայաստանի ու հայության բնական, մշտական եւ անօտարելի իրավունքները:

8. Այս առումով դատապարտելի են Ազգերի Լիգայի եւ ՄԱԿ–ի փաստաթուղթերի պարունակած անընդունելի այն դրութները, որոնք տեղ են գտել առաջինի ստեղծած

Միջկառավարական Խորհրդակցական Կոմիտեի որոշման մեջ՝ «Հայ փախստականների հարցերի եւ լքած գույքի մասին» (2 օգոստոս 1929 թ.) եւ երկրորդի՝ «Միջազգային մարդասիրական իրավունքի լուրջ խախտումների եւ միջազգային իրավունքի կոպիտ խախտումների զոհ դարձած անձանց իրավական պաշտպանության եւ փոխհատուցման հիմնական սկզբունքների եւ ուղեցույցների մասին» որոշման մեջ (թիվ 60/147 – 16 դեկտեմբեր 2005 թ.):

9. Արեւմտյան Հայաստանի հայերը, ներառյալ՝ Հայկական գաղթավայրերի բնակչությունը քաղաքական քաշկռտուքների եւ չարաշահությունների դաշտից դուրս գալու եւ իր ազգային հիմնախնդիրներն իրավական մեկ հարթություն տեղափոխելու իրավունք ունի:

10. Աշխարհով մեկ սփռված 10 միլիոն հայերը կարողություն ունեն մեծամասնություն ապահովել եւ անվտանգություն հաստատել Արեւմտյան Հայաստանի մեջ, հետեւաբար իրավասու է եւ անհրաժեշտություն է Վիլսոնյան Իրավարար վճռի դե ֆակտո (de facto) իրականացումը:

11. Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհուրդը Արեւմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարությանը հանձնարարում է՝ այսուհետ իր օրենսդրական, իրավական, հայեցակարգային, կառուցվածքային եւ կազմակերպչական գործունեության մեջ առաջնորդվել «Արեւմտյան Հայաստանի հայերի եւ Արեւմտյան Հայաստանի Մշտական, Զինված, Դրական Չեզոքության» քաղաքականության իրավական քաղաքական սկզբունքների համաձայն, ըստ որի՝ «Արեւմտյան Հայաստանը Մշտական, Զինված, Դրական եւ Անկախ, Ինքնիշխան Ժողովրդավարական Պետություն է»:

12. «Արեւմտյան Հայաստանի հայերի եւ Արեւմտյան Հայաստանի Մշտական, Զինված, Դրական Չեզոքության Մասին» Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհրդի Հայտարարությունը դե յուրե (de jure) ուժի մեջ է մտնում հայտարարությունից անմիջապես հետո, իսկ դե ֆակտո (de facto)՝ Հայտարարության մասին Որոշումը Նիդեռլանդների կառավարությանը հանձնելուց 60 օր հետո, համաձայն՝«Չեզոք պետությունների եւ անձանց իրավունքների եւ պարտավորությունների մասին ցամաքային պատերազմի ժամանակ»՝ Հաագա, 18 հոկտեմբեր 1907 թ. Կոնվենցիայի (Convention V):

Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհուրդ

Այլ լեզուների թարգմանության դեպքում բնագիր է համարվում փաստաթղթի հայերենը:

Ծանոթագրություն

1. î»ë, Le premier communiqué turc. Agence Télég. Wolff. Constantinople, le 4 juin 1915, L'Agence Havas avait publié, le 24 mai, la déclaration suivante, après une entente préalable entre les Gouvernements de France, de Grande–Bretagne et de Russie:

France, Grande-Bretagne et Russie. — DÉCLARATION DE LA TRIPLE-ENTENTE TENANT POUR RESPONSABLE LE GOUVERNEMENT TURC DES MASSACRES COMMIS PAR LA TURQUIE EN ARMÉNIE, EN DATE DU 24 MAI 1915.

24 mai 1915. — Depuis un mois environ, la population kurde et turque de l'Arménie procède, de connivence et souvent avec l'aide des autorités ottomanes, à des massacres des Arméniens. De tels massacres ont eu lieu vers la mi-avril (nouveau style) à Erzeroum, Dertchun, Eguine, Akn, Bitlis, Mouch, Sassoun, Zeitoun et dans toute la Cilicie ; les habitants d'une centaine de villages aux environs de Van ont été tous assassinés ; dans la ville même, le quartier arménien est assiégé par les Kurdes. En même temps, à Constantinople, le gouvernement ottoman sévit contre la population arménienne inoffensive. — En présence de ces nouveaux crimes de la Turquie contre l'humanité et la civilisation, les gouvernements alliés font savoir publiquement à la Sublime-Porte qu'ils tiendront personnellement responsables desdits crimes tous les membres du gouvernement ottoman ainsi que ceux de ses agents qui se trouveraient impliqués dans de pareils massacres.

"Depuis un mois environ, les populations turque et kurde de l'Arménie procède, de connivence et souvent avec l'appui des autorités ottomanes, à des massacres des Arméniens. De tels massacres ont eu lieu vers la mi– d'avril (nouveau style) à Erzeroum, Terdjan, Eghine, Akn, Bitlis, Mouch, Sassoun, Zeitoun et dans toute la Cilicie ; Les habitants d'une centaine de villages aux environs de Van ont été tous assassinés ; dans la ville même, le quartier arménien est assiégé par les Kurdes. En même temps, à Constantinople, le Gouvernement ottoman sévit contre la population arménienne inoffensive.
En présence de **ces nouveaux crimes de la Turquie contre l'humanité et la civilisation**, les Gouvernements alliés font savoir publiquement à la Sublime Porte qu'ils tiendront personnellement responsables des dits crimes tous les membres du Gouvernement ottoman ainsi que ceux de ses agents qui se trouveraient impliqués dans de pareils massacres. "

«Գրեթե մէկ ամիս է ի վեր, Հայաստանի թուրք եւ քիւրտ բնակիչները օսմանյան հեղինակությունների թուլատուութեամբ ու յաճախ անոնց նեցուկը ունենալով ջարդեր կը գործադրեն Հայերի դէմ: Նման ջարդեր տեղի ունեցան ապրիլի կէսին Էրզրումի մեջ (Կարին), Թերճան, Եղինէ, Պիթլիս, Մուշ, Սասուն, Զէյթուն եւ ամբողջ Կիլիկիոյ մէջ: Վանի շրջակայ գրեթե հարյուր գյուղերի հայերը բոլորն ալ սպաննուեցան եւ Վանի հայկական թաղամասը շրջապատուած էր քիւրտերի կողմէ: Միեւնոյն ժամանակ օսմանյան Կառավարությունը չարչրկեցին Կոստանդնուպոլսու անպաշտպան հայ բնակչությունը: Մարդկութեան եւ քաղաքակրթութեան դէմ գործուած Թուրքիոյ այս նոր ոճիրներու հանդէպ դաշնակից կառավարութիւնները հանրօրէն կը տեղեկացնեն Մեծ Դռան, որ թուրք կառավարութեան բոլոր անդամները անհատապէս պատասխանատու պիտի համարուին, ինչպէս նաեւ բոլոր այն պաշտօնեաները, որոնք մասնակից դարձան այս ջարդերուն»:

2. Le 19 janvier 1920 Le Conseil Supreme des allies a decider
1/ que le gouvernement de l'Etat Arménien est reconnu comme gouvernement de fait;
2/ Que cette reconnaissance ne préjuge pas la question des frontières de l'Etat Armenien.

2. 19 Հունվար 1920 թ. Դաշնակիցների Գերագուն Խորհուրդը տեղեկացնում է,
1/ որ ճանաչում է Հայկական պետության կառավարությունը, որպես փաստացի կառավարություն,
2/ որոշված է, որ ճանաչումը չի կանխորոշում Հայկական պետության սահմանների հարցը:

3. Իրավարար վճռի պաշտօնական եւ ամբողջական անվանումն է. «Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահի որոշումը Թուրքիո եւ Հայաստանի միջեւ սահմանի, Հայաստանի ծով ելքի եւ հայկական սահմանին հարակից թուրքական տարածքի ապառազմականացման վերաբերյալ», 22–ը նոյեմբերի, 1920 թ.:

3. Voici la Sentence Arbitrale officiel et complet ; "La décision du Président des Etats–Unis d'Amérique pour la détermination de la frontière entre la Turquie et l'Arménie, l'accès à la mer de l'Arménie et la démilitarisation de tout territoire turc adjacent".

ՀՐԱՄԱՆԱԳԻՐ
ԱՐԵՒՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՐՈՇԻ ՄԱՍԻՆ

Համաձայն Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհրդի 17 դեկտեմբեր 2004 թ. Հռչակագրի ա) Կետի Արեւմտյան Հայաստանը (Հայրենիք) պետք է ունենա իր պետական դրոշը, զինանշանը եւ օրհներգը: Ելնելով սույն Հռչակագրի դրույթներից՝ Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհուրդը որոշեց հաստատել Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նոր դրոշը:
Արեւմտյան Հայաստանի Հանրապետության դրոշը Արեւմտյան Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշներից է:

Արեւմտյան Հայաստանի Հանրապետության դրոշը քառագույն է: Կենտրոնում երկու խորհրդանշաններն են՝ մուգ կապույտ ութանկյան մեջ՝ ծիրանագույն հավերժության ութաթեւ նշանը, որոնք իմաստավորում են տիեզերական ներդաշնակությունը:
Ութանկյան չորս գագաթներից՝ սկիզբ առնող մուգ կապույտ ճառագայթները ձգվում են չորս ուղղությամբ, ինչպես աշխարհի չորս ծագերը, մուգ կապույտը երիզված է ծիրանագույնով, դրոշի չորս հատվածները բաց երկնագույն են:
Դրոշը խորհրդանշում է Հայկական բարձրավանդակը, որպես քաղաքակրթության բնօրրան:
Մուգ կապույտը խորհրդանշում է հայ ժողովրդի հավերժականությունը: Ծիրանագույնը խորհրդանշում է հայ ժողովրդի բանախոսությունը, արիականությունը եւ ստեղծագործ ազատության կենսասիրությունը: Բաց երկնագույնը խորհրդանշում է հայ ժողովրդի լուսավորչականությունը եւ առաքելականությունը: Սպիտակը խորհրդանշում է հայ ժողովրդի բարեպաշտությունը: Դրոշի լայնության եւ երկարության չափերի հարաբերությունն է՝ 1:2 – ի:
Արեւմտյան Հայաստանի Հանրապետության դրոշի լայնության եւ երկարության հարաբերակցության չափերի պահպանմամբ կարող է օգտագործվել նաեւ փոքր կամ մեծ չափի դրոշ:
Արեւմտյան Հայաստանի Հանրապետության դրոշի նկարագրության գունավոր պատկերը ներկայացվում է սույն օրենքին կից:

Անցումային դրույթներ
1. Մինչեւ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Կառավարության եւ Խորհրդարանի վերջնական ձեւավորումը սույն հրամանագիրն օրենքի ուժ ունի:

2. Սույն հրամանագրի ուժի մեջ մտնելու պահից Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհրդի նախկին դրոշը հանձնվում է Արեւմտյան Հայաստանի Հայերի Ասամբլեային, որպես Ասամբլեայի խորհրդանիշ։
3. Արեւմտյան Հայաստանի Հանրապետության դրոշը կիրառության մեջ է մտնում հրամանագրի ստորագրման պահից։

Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհուրդ
Փարիզ, Ֆրանսիա, 21.10. 2011 թ.

(Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Դրոշի գունավոր պատկերը տես, շապիկի 2-րդ էջին)

ՀՐԱՄԱՆԱԳԻՐ
ԱՐԵՒՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆԱՆՇԱՆԻ ՄԱՍԻՆ

Սույն Հրամանագրով հաստատվում է Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Զինանշանը:
Զինանշանը վահան է, երկու եզրաշերտերով՝ կապույտ եւ ծիրանագույն: Վահանի վրա հավերժության նշանն է՝ ութանկյան մեջ, որի ճառագայթների շարունակման միջոցով վահանը բաժանվում է չորս մասի:
Զինանշանի բոլոր գույները կրկնում են Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Դրոշի գույները՝ կապույտ, ծիրանագույն, մուգ կապույտ, սպիտակ:

Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Նախագահ
06.04.2015 թ.

(Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Զինանշանի գունավոր պատկերը տես, շապիկի 1-ին էջին)

ՕՐԵՆՔ
ԱՐԵՒՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ

Օրենքի բովանդակությունը եւ նպատակը
Հոդված 1. Սույն օրենքը պարունակում է հիմնական դրույթներ արեւմտահայերենի, ինչպես նաեւ արեւելահայերենի, գրաբարի, հայերենի բարբառների, ազգային փոքրամասնությունների, այլ ազգերի լեզուների մասին: Օրենքը պարունակում է նաեւ դրույթներ հանրային պատասխանատվության մասին, այն է՝ անհատին տալ հնարավորություն լեզվի եւ դրա գործածման վերաբերյալ հանրային եւ միջազգային ոլորտներում: Ինչպես նաեւ Ժեստերի լեզվի ու Բրայելի համակարգի գործածման վերաբերյալ:

Հոդված 2. Օրենքի նպատակն է՝ երաշխավորել արեւմտահայերենի, ինչպես նաեւ արեւելահայերենի, գրաբարի եւ ազգային փոքրամասնությունների լեզուների կարգավիճակը եւ գործածությունը Արեւմտյան Հայաստանի Հանրապետությունում: Օրենքը նպատակ ունի պահպանելու ու զարգացնելու արեւմտահայերենը, արեւելահայերենը, գրաբարը, հայերենի բարբառները եւ ազգային փոքրամասնությունների լեզվական բազմազանությունը Արեւմտյան Հայաստանի Հանրապետությունում:

Արեւմտյան Հայաստանի Հանրապետության պետական լեզուն

Հոդված 3. Արեւմտյան Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է՝ գրական արեւմտահայերենը:

Հոդված 4. Արեւմտահայերենը պետության եւ հասարակության միասնական լեզուն է, որը Արեւմտյան Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին պետք է լինի հասանելի՝ կրթության եւ կենսագործունեության բոլոր ոլորտներում:

Հոդված 5. Հանրությունը հատուկ պարտականություն եւ պատասխանատվություն ունի գործածելու եւ զարգացնելու արեւմտահայերենը:

Հոդված 6. Արեւմտյան Հայաստանի Հանրապետությունում լայն հնարավորություններ են ստեղծվում ուսանելու, տիրապետելու, գործածելու եւ զարգացնելու արեւմտահայերենը եւ արեւելահայերենը, ինչպես նաեւ նրանց հիմք հանդիսացող գրաբարը:

Ազգային փոքրամասնությունների լեզուները

Հոդված 7. Պետությունը եւ հանրությունը հատուկ պատասխանատվություն եւ պարտականություն ունեն նպաստելու ազգային փոքրամասնությունների լեզուների գործածությանն ու զարգացմանը:

Ժեստերի լեզուն եւ Բրայելի համակարգը

Հոդված 8. Ժեստերի լեզուն եւ Բրայելի համակարգը գտնվում են պետության հոգածության տակ:

Լեզվի գործածությունը պետական եւ հասարակական գործունեության ոլորտում

Հոդված 9. Պետական եւ հասարակական գործունեության ոլորտում գործածվող պետական լեզուն գրական արեւմտահայերենն է:

Հոդված 10. Անհրաժեշտության դեպքում, ազգային փոքրամասնությունների եւ օտարների համար, պետությունը ապահովում է թարգմանության միջոցով այլ լեզուների գործածությունը:

Հոդված 11. Պետական եւ հասարակական ոլորտում գործածվող լեզուն պետք է լինի գրական, մշակված, պարզ ու հասկանալի եւ մշտապես պետք է լինի պետության հոգածության առարկա եւ գտնվի պետության վերահսկողության տակ: Արեւմտահայերեն լեզվի բնականոն զարգացումն ապահովելու համար Կրթության նախարարության կազմում ստեղծվում է «Արեւմտահայերեն լեզվի պահպանման ու զարգացման ռազմավարության մշակման հանձնաժողով» եւ Արեւմտահայերեն լեզվի անաղարտ գործածության նպատակով «Արեւմտահայերեն լեզվի հսկողության տեսչություն»:

Հոդված 12. Արեւմտահայերենը Արեւմտյան Հայաստանի Հանրապետության պետական լեզուն է միջազգային հարաբերությունների համատեքստում:

Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Նախագահ
17.06.2015 թ.

ՀՐԱՄԱՆԱԳԻՐ

Արեւմտյան Հայաստանի հայերի ինքնապաշտպանության ուժերի ստեղծման մասին, հիմնական նպատակ ունենալով պաշտպանելու հայությունն ու Հայաստանը

Հաշվի առնելով՝ մարդկության եւ հայության կրած մարդկային, հոգեւոր, մշակութային, նյութական եւ տարածքային կորուստները Առաջին եւ Երկրորդ համաշխարհային պատերազմների ժամանակ,

հաշվի առնելով՝ այն իրողությունը, որ մարդկությունն այսօր գտնվում է հոգեւոր–մշակութային, բարոյա–հոգեբանական եւ տնտեսա–քաղաքական խոր ճգնաժամի մէջ, որոնք սպառնում են միջկրոնական ու քաղաքացիական բախումներով եւ Երրորդ համաշխարհային պատերազմի հրահրմամբ,

հաշվի առնելով՝ Մերձավոր Արեւելքում ընթացող եւ խորացող ռազմաքաղաքական գործընթացները, որոնք կարող են սպառնալ տարածաշրջանի հայությանը եւ Հայաստանի ապահովությունը,

ինչպես նաեւ ՄԱԿ–ի հռչակած միջազգային սկզբունքների եւ չափանիշների համաձայն՝ կրկին վերահաստատելով մեր հանձնառությունը նպաստելու հակամարտությունների խաղաղ կարգավորման սկզբունքին, տարածաշրջանային խաղաղությանն ու անվտանգությանը, ապահովելու ժողովուրդների ազատ զարգացման եւ առաջընթացի իրավունքը,

Նկատի առնելով՝ Արեւմտյան Հայաստանի հայերի ինքնորոշման իրավունքի կիրառման անհրաժեշտությունը, որ պահանջված է Ազգային Խորհրդի կողմից 2004 թ. դեկտեմբեր 17–ին,

նկատի առնելով՝ Աշխարհասփյուռ հայության իրավունքը լիիրավ պետական կառույցի ստեղծման, այն է՝ Արեւմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարության կազմության մասին Հռչակագիրը ընդունված՝ 4 փետրվար, 2011–ին, Փարիզ, Ֆրանսա,

նկատի առնելով՝ Արեւմտյան Հայաստանի Հայերի եւ Արեւմտյան Հայաստանի Մշտական, Զինված, Դրական Չեզոքության քաղաքականություն որդեգրելու մասին (29.03.2011 թ.) Որոշումը «Չեզոք պետությունների եւ չեզոք անձանց իրավունքների եւ պարտականությունների մասին՝ ցամաքային պատերազմի ժամանակ» Կոնվենցիայի հոդվածների եւ դրույթների համաձայն (Հաագա, 18–ը Հոկտեմբերի 1907 թ.):

գիտակցելով մեր պատասխանատվությունը հայության խնդիրների հանդէպ, որ առնչվում են նրանց ինքնապաշտպանության իրավունքին եւ կյանքի ու գույքի ապահովության, ինչպես նաեւ հայության զարգացման ու առաջընթացի բնական իրավունքին հիմնված՝ ՄԱԿ–ի Մարդու Իրավունքների Համընդհանուր Հռչակագրի եւ ներպետական ու միջազգային հիմնարար այլ սկզբունքների ու նորմերի վրա.

Հրամանագրում եմ՝

Արեւմտյան Հայաստանի Հայերի, Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհրդի եւ Արեւմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարության Ինքնապաշտպանության հատուկ ուժերի ստեղծման գործընթացի սկիզբը՝ հիմնական նպատակ ունենալով պաշտպանել հայությունն ու Հայաստանը։

ա) Արեւմտյան Հայաստանի հայերի ինքնապաշտպանության ուժերը ստեղծվում են բոլոր այն վայրերում, որտեղ ապրում են Արեւմտյան Հայաստանի հայերը, ունենալով մեկ հիմնական խնդիր, կարիքի դեպքում մասնակցելու հայության եւ Հայաստանի պաշտպանությանը։
բ) Արեւմտյան Հայաստանի հայերի ինքնապաշտպանության ուժերը ունենալու են իրենց Կանոնագիրը եւ Վարքականոնը, որ կդրվի շրջանառության մեջ հետագայում։
գ) Արեւմտյան Հայաստանի հայերի ինքնապաշտպանության ուժերը օժտված են լինելու շարժունակությամբ եւ ըստ պահանջի տեղաշարժվելու եւ պահանջված տեղում համախմբվելու նպատակով։
դ) Արեւմտյան Հայաստանի հայերի ինքնապաշտպանության ուժերը գործելու են բացառապես Արեւմտյան Հայաստանի հայերի եւ Արեւմտյան Հայաստանի Մշտական, Զինված, Դրական Չեզոքության մասին Որոշման (29.03.2011 թ.) եւ «Չեզոք պետությունների եւ չեզոք անձանց իրավունքների եւ պարտականությունների մասին՝ ցամաքային պատերազմի ժամանակ» Կոնվենցիայի հոդվածների ու դրույթների համապատասխան։

Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհուրդ
26.12.2012 թ.

ՀՐԱՄԱՆԱԳԻՐ
«Արեւմտյան Հայաստանի Հանրապետությունը որպես շարունակող պետություն»

Թիւ 12 – 2014–02–23

Որոշում՝ հիշեցում, Արեւմտյան Հայաստանի Հանրապետության վերաբերյալ, որը հանդիսանում է 1920–ին ճանաչված Հայկական պետության՝ Հայաստանի, շարունակությունը:

Հայկական պետության՝ Հայաստանի, անկախությունը ճանաչվել է
1920 թվականի հունվարի 19–ին:

Սեւրի Խաղաղության պայմանագրի 93–րդ հոդվածով հաստատված են Հայաստան պետության մեջ բնակվող փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը:

Հոդված 1 – Հիմք ընդունելով այն փաստերը, որ Հայկական պետությունը Դաշնակից տերությունների կողմից՝ «Դե ֆակտո» ճանաչվել է 1920 թ. հունվարի 19–ին եւ «Դե յուրե» 1920 թ. մայիսի 11–ին, հայտարարում ենք, որ Արեւմտյան Հայաստանի Հանրապետությունը (Հայաստան) հանդիսանում է Հայկական պետության՝ Հայաստանի, շարունակող պետություն:

Հոդված 2 – Հաշվի առնելով վերոնշյալ փաստերը, Արեւմտյան Հայաստանի Հանրապետությունն այսօր, որպես Հայկական պետության՝ Հայաստանի շարունակող, պարտավորություն է կրում՝ բոլոր ուխտերով, պայմանագրերով, կոնվենցիաներով եւ դատավճիռներով, որոնք կայացվել է 1920 թ. ճանաչված Հայկական պետության՝ Հայաստանի, կողմից:

Հայաստան պետության անկախության պաշտոնական ճանաչումները

1917 թվականի դեկտեմբերի 29–ին հրամանագրով Ռուսաստանի Սովետական ժողովրդական կոմիսարների խորհուրդը (Սովնարկոմ) ճանաչում է Արեւմտյան Հայաստանի (Տաճկահայաստանի) անկախությունը:

1919 թվականի փետրվարի 12–ին Արեւմտյան Հայաստանի հայերի Ազգային պատվիրակությունը եւ Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը հանդիպում են Փարիզում գումարված Խաղաղության վեհաժողովի շրջանակներում, որպեսզի ներկայացնեն հուշագիր հայ ժողովրդի պահանջների վերաբերյալ, որը հետագայում՝ 1919 թվականի փետրվարի 26–ին, ներկայացվում է Վերսալյան խաղաղության կոնֆերանսին:

Այս փաստաթուղթը, Ազգերի Լիգայի եւ Դաշնակից տերությունների հովանավորության ներքո, պահանջում է մասնավորապես Հայաստան պետության անկախության ճանաչումը, որը կազմված է Արեւմտյան Հայաստանի 6 մարզերից, Կիլիկիայից, ինչպես նաեւ նոր հռչակված Հայաստանի Հանրապետությունից:

Ներկայացված պահանջներին ի պատասխան Դաշնակիցների Գերագույն Խորհուրդը 1920 թ. հունվարի 19–ին կայացրել է հետեւյալ որոշումը եւ «Դե ֆակտո» ճանաչել է Հայկական պետությունը.
1) Հայկական պետության կառավարությունը ճանաչվում է, որպես կառավարություն,
2) այս որոշումը չի կանխորոշում Հայկական պետության սահմանների հարցը:

1920 թվականի հունվարի 27–ին Խաղաղության վեհաժողովի քարտուղարությունը այս երկու որոշումները պաշտոնապես ներկայացրել է Հայ Ազգային Միացյալ պատվիրակությանը:

1920 թվականի մայիսի 11–ին թուրքական պատվիրակությունը հրավիրվում է վեհաժողով, որտեղ նրան ներկայացվում են «Խաղաղության պայմանները»: Դաշնակից Ուժերի մեջ էր նաեւ Հայկական պետության պատվիրակությունը: «Խաղաղության Պայմանների» նախաբանում, որը հետագայում դարձավ Սեւրի Խաղաղության դաշնագրի նախաբանը, Հայաստանը նշված է Դաշնակից տերությունների շարքում: Հայկական պետությունը ճանաչվեց նաեւ «Դե յուրե»:

1920 թ. օգոստոսի 10–ին ստորագրվեց Սեւրի Խաղաղության դաշնագրի, որի 88–93–րդ հոդվածները վերաբերում են Հայաստան պետությանը:

1920 թ. նոյեմբերի 22–ին ԱՄՆ 28–րդ նախագահ Վուդրո Վիլսոնը վավերացրեց Իրավարար վճիռ՝ «Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահի որոշումը Թուրքիո եւ Հայաստանի միջեւ սահմանի, Հայաստանի ծով ելքի եւ հայկական սահմանին հարակից թուրքական տարածքի ապառազմականացման վերաբերյալ»:

Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Նախագահ

ՀՐԱՄԱՆԱԳԻՐ
«Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագիծը մշակելու վերաբերյալ»

Թիվ 23, 2014–08.10

Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհրդի ստեղծման 10–րդ,
Արեւմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարության կազմավորման գործընթացի սկզբնավորման 4–րդ տարեդարձի,
Արեւմտյան Հայաստանի Խորհրդարանի ձեւավորման,
Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախագահի ընտրության փաստի,

այն է՝ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության պետական կառույցների ձեւավորման փաստի կապակցությամբ՝

հաստատում եւ վերահաստատում ենք, որ
Արեւմտյան Հայաստանի Հանրապետությունը (Հայաստան)
ազատ, անկախ, ինքնիշխան, սոցիալական, իրավական, ժողովրդավարական,
ինչպես նաեւ մշտական զինված, դրական չեզոք պետություն է,

ինչը հիմնավորված է հետեւյալ հռչակագրերի, որոշումների, օրենքների եւ իրավական փաստաթղթերի վրա՝

1. Արեւմտյան Հայաստանի Հայերի Ազգային Խորհրդի հիմնադիր ժողովի որոշման, 17.12.2004 թ.,
2. Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհրդարանի պատգամավորների ընդունած

հռչակագրի, 20.01.2007 թ.,

3. Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհրդի Արեւմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարություն կազմելու մասին հռչակագրի, 04.02.2011 թ.,
4. Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհրդի չեզոքության մասին որոշման, 29.03.2011 թ.,
5. Արեւմտյան Հայաստանի Հանրապետության դրոշի մասին հրամանագրի, 21.10.2011 թ.,
6. Արեւմտյան Հայաստանի հայերի ինքնապաշտպանության ուժերի ստեղծման մասին հրամանագրի, 26.12.2012 թ.,
7. Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) ձեւաւորման մասին հռչակագրի, 24.05.2013 թ.,
8. Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագիր, Որոշում՝ հիշեցում, Արեւմտյան Հայաստանի Հանրապետության վերաբերյալ, որը հանդիսանում է 1920-ի Հայկական պետության շարունակությունը: Թիւ 12 – 2014-02-23:

եւ ըստ այդմ՝

Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովին (Խորհրդարանին) առաջարկում ենք ձեւավորել Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մշակման հանձնաժողով եւ ձեռնարկել Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագծի մշակումը, Արեւմտյան Հայաստանի Հանրապետության պետական կառույցների ձեւի եւ բովանդակության համար՝ որպես հիմք ընդունելով Արեւմտյան Հայաստանի հայերի եւ Արեւմտյան Հայաստանի քաղաքացիների կամարտահայտության վերաբերյալ վերոհիշյալ հռչակագրերը, որոշումները, օրենքներն ու իրավական փաստաթղթերը:

Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Նախագահ

Գլուխ III

ԱՐԵՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՈՒՂԵՐՁՆԵՐԸ ՄԱԿ-ԻՆ ԵՒ ՄԱԿ-Ի ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

ՈՒՂԵՐՁ

ՄԱԿ–ի Անվտանգության խորհրդի անդամներին, Մեւրի Խաղաղության դաշնագիրը ստորագրած պետություններին, միջազգային ընկերակցության անդամ պետություններին

Արեւմտյան Հայաստանի հայերի իրավունքների վերաբերյալ

Յուրաքանչյուր ազգ **ապրելու, զարգանալու եւ ապագա** ունենալու իրավունք ունի:

Ապրելու, զարգանալու եւ ապագա ունենալու իրավունք ունի նաեւ հայությունը՝ Արեւմտյան Հայաստանի հայությունը, Մերձավոր Արեւելքում ապրող հայությունը, ով, ի դեպ, այդ իրավունքը վաստակել է քաղաքակրթական հարուստ անցյալով, ստեղծագործ ներկայով եւ ապագայի նկատմամբ լուսավոր հավատով:

Հիշեցնենք, որ Մերձավոր Արեւելքում ապրող հայությունը տարածաշրջանում վեահաստատվել է 1894–1923 թթ. հայության նկատմամբ թուրքական երեք կառավարությունների իրականացրած ցեղասպանության ու բռնագաղթի՝ ծրագրված հանցագործ քաղաքականության հետեւանքով, որը 1915 թվականի մայիսի 24–ին դատապարտեցին Մեծ Բրիտանիան, Ռուսաստանը եւ Ֆրանսիան՝ որակելով դա որպես «հանցագործություն մարդկայնության դեմ»:

Ինչպես նշեցինք, Միջազգային ընկերակցության կողմից՝ 1920–ական թվականներին, ճանաչվել եւ հաստատվել են հայության իրավունքները Բնօրրան Հայրենիքի (Արեւմտյան Հայաստանի) նկատմամբ, բայց չեն իրականացվել: Դա այդ ժամանակաշրջանում գործող միջազգային ընկերակցության մեծ բացթողումն էր, որը հնարավոր է թելադրված էր նեղ շահադիտական ռազմա–քաղաքական ինչ–ինչ հաշվարկներով: Սակայն նույն սխալը նույն հետեւանքներով աններելի է կրկնել այսօր, տարածաշրջանի պետությունների եւ ժողովուրդների համար պատմական այս բարդ ժամանակահատվածում, նկատի առնելով այն հանգամանքը, որ կայուն խաղաղություն եւ խաղաղ համագործակցություն հաստատելու համար անհրաժեշտ է կյանքի կոչել եւ վերջնականապես հանգուցալուծել տարածաշրջանում առկա մի շարք բարդ խնդիրներ, այդ թվում՝ Հայկական Հարցը:

Հետեւաբար, Արտերկրի հայության, մասնավորապես Մերձավոր Արեւելքի եւ Սիրիայի հայության հիմնախնդիրները լուծելու համար **առաջարկում ենք**.

–կյանքի կոչել եւ իրականացնել Արեւմտյան Հայաստանի հայության Բնօրրան Հայրենիք վերադառնալու իրավունքը՝ դրանից բխող իրավական – քաղաքական բոլոր պարտավորություններով եւ իրավունքներով հանդերձ, այդ թվում՝ անկախ պետության

հաստատման, հաշվի առնելով ԱՄՆ 28–րդ նախագահ Վուդրո Վիլսոնի 1920 թ. նոյեմբերի 22–ին կայացրած Իրավարար վճիռը եւ այդ վճռով Հայաստանին հատկացված տարածքը, որը բռնազավթված է առ այսօր:

–կյանքի կոչել եւ իրականացնել Կիլիկիային անհապաղ անկախություն շնորհելու իրավական – քաղաքական դրույթը, հաշվի առնելով՝ 1920 թ. օգոստոսի 4–ի Կիլիկիայի Անկախության մասին հռչակագիրը եւ ՄԱԿ–ի 1968 թ. «Գաղութային երկրներին անհապաղ անկախություն շնորհելու մասին» կոնվենցիան:

–կյանքի կոչել եւ իրականացնել Արեւմտյան Հայաստանի եւ Կիլիկյան Հայաստանի տարածքի ապառազմականացումը, հաշվի առնելով՝
–2011 թվականին մարտի 29–ի Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհրդի եւ Արեւմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարության Որոշումը «Արեւմտյան Հայաստանի հայերի եւ Արեւմտյան Հայաստանի՝ Մշտական, զինված, դրական չեզոքության քաղաքականություն ընտրելու մասին» հայտարարությունը,
–եւ 2011 թվականի սեպտեմբերին Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհրդի եւ Արեւմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարության ՄԱԿ–ի անվտանգության խորհրդին ուղղված դիմումը, որտեղ առաջարկվում էր կյանքի կոչել ԱՄՆ 28–րդ նախագահ Վուդրո Վիլսոնի Իրավարար վճիռը եւ Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհրդի եւ Արեւմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարության չեզոքության որոշման հիման վրա՝ ապառազմականացնել Կիլիկյան Հայաստանի եւ Արեւմտյան Հայաստանի տարածքը:

Տիգրան Փաշաբեզյան
Արեւմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարության Վարչապետ
12.03.2014 թ.

ԴԻՄՈՒՄ

Պրն. Ապտիւլլահ Կիւլին,
Թուրքիոյ Հանրապետութեան Նախագահին

Պարոն Նախագահ,

Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդը եւ Արեւմտեան Հայաստանի Հայերու Համագումարը (արձանագրուած՝ ՄԱԿ–ի հետեւեալ յանձնախումբերուն, ՄՍՀԿ – Մտաւոր Սեփականութեան Համաշխարհային Կազմակերպութիւն, ԲԺԻՓԿ – Բնիկ Ժողովուրդներու Իրաւունքներու Փորձագէտ Կազմութիւն եւ ՏՆՏԸՆԽ – Տնտեսական եւ Ընկերային Խորհուրդ), ինչպէս նաեւ Արեւմտեան Հայաստանի Վտարանդի Կառավարութիւնը, նստավայր ունենալով Փարիզ, ՖՐԱՆՍԱ՝ սոյն պաշտօնական նամակագրութեամբ կը պահանջէ Թուրքիոյ Հանրապետութեան Կառավարութենէն՝ պաշտօնապէս ճանչնալ 1894–1923 թթ. օսմանեան, երիտթուրքական, քեմալական կառավարութիւններու կողմէ՝ հայութեան եւ հայկական քաղաքակրթութեան դէմ

կատարուած շարունակական ոճրագործութիւնը, այսինքն հայերու դէմ կատարուած ցեղասպանութեան փաստը, եւ միանգամայն վերջ տալ ժխտողականութեան քաղաքականութեան:

Երեք Թրքական կառավարութիւններու կողմէ նախապէս ծրագրուած եւ իրականացուած ոճրագործութիւններու առ ի հետեւանք, հայութիւնը ունեցաւ մօտ երկու միլիոն նահատակ: Իսկ բռնագաղթի, հայրենազրկման եւ ուծացման ենթարկուեցան աւելի քան մէկ միլիոն հայ:

Այսօր, որպէս բնիկ ժողովուրդ, մօտաւորապէս տասը միլիոն հայեր, Թուրքիոյ Հանրապետութեան վարած հայատեաց քաղաքականութեան հետեւանքով՝ կ՛ապրին իրենց հայրենիքէն դուրս, ու կ՛ենթարկուին ձուլման եւ ոչնչացման:

Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդը եւ Վտարանդի կառավարութիւնը կտրականապէս կը մերժէ Հայոց ցեղասպանութեան հարցի քաղաքականացուած կեդրոնացումը միայն 1915 թուականի վրայ:
Ցեղասպանութիւնը սկսուած է 1894 թուականէն Սասունի ջարդերով, որու նպատակով 1891 թուականէն նախապէս կազմուած էին համիտեան գունդերը:

Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդը եւ վտարանդի կառավարութիւնը Թուրքիոյ կողմէ իրականացուած ցեղասպանութեան փաստը կը բաժնէ երեք ժամանակաշրջաններու.
1. 1894 – 1896 թթ. Ապտիւլ Համիտ Բ.ի կողմէ կատարուած ցեղասպանութիւնը,
2. 1909 թ. Հայկական Կիլիկիոյ՝ Ատանայի ջարդերը, երիտթուրքերու կողմէ կատարուած ցեղասպանութիւնը,
3. 1915 – 1923 թթ. երիտթուրքերու եւ քեմալական կառավարութեանց կատարած ցեղասպանութիւնը:

Ըստ այնմ, Թուրքիոյ Հանրապետութեան կառավարութենէն կը պահանջուի 1894 – 1923 թթ. Հայերու դէմ պետականօրէն ծրագրուած եւ իրականացուած ցեղասպանութեան փաստի ամբողջական ճանաչումը, հիմնուած պատմական–իրաւական արխիւային փաստաթուղթերու վրայ.
– «1915 թ. մայիս 24–ին Երրեակ Համաձայնութեան տէրութիւնները՝ Մեծն Բրիտանեան, Ֆրանսան եւ Ռուսաստանը, առաջինն էին որոնք հանդէս եկան Օսմանեան կառավարութեան կողմէ հայերու բնաջնջման քաղաքականութեան դէմ համատեղ մէկ յայտարարութեամբ, որով Օսմանեան կառավարութեան կողմէ հայերու նկատմամբ ի գործ դրուած բռնութիւններն ու ջարդերը որակեցին իբրեւ «Թուրքիոյ նոր ոճիրները ընդդէմ մարդկութեան եւ քաղաքակրթութեան»:
– 1919 թ. Կ. Պոլսոյ ռազմական յատուկ ատեանի վճիռները:
– 1965 – 2010 թթ. ցեղասպանութիւնը դատապարտած պետութիւններու ցանկը:
– 1984 թ. ժողովուրդներու մշտական ատեանի վճիռը:
– 1985 թ. ՄԱԿ–ի մարդկային իրաւանց ենթայանձնախումբի որոշումը:
– 1987 թ. Եւրոպական Խորհրդարանի որոշումը:
– 2007 թ. «Բնիկ Ժողովուրդներու իրաւունքներու մասին» Հռչակագիրը:

– 2011 թ. Արժանթինի գերագոյն ատեանի վճիռը:

Պրն. Արմենակ Աբրահամեան
Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդի Նախագահ

Պրն. Տիգրան Փաշաբեզեան
Արեւմտեան Հայաստանի Վտարանդի Կառավարութեան Վարչապետ

Փարիզ, 18 Ապրիլ, 2011 թ.

ՈՒՂԵՐՁ
Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախագահի

ՄԱԿ–ի Անվտանգության Խորհրդին, ՄԱԿ–ի անդամ պետություններին, Սեւրի Խաղաղության դաշնագիրը ստորագրած պետություններին

Հաշվի առնելով՝ ՄԱԿ–ի Մարդու Իրավունքների Համընդհանուր Հռչակագիրը, «Ցեղասպանության հանցագործությունները կանխարգելելու եւ դատապարտելու մասին» եւ «Պատերազմի եւ մարդկության դեմ հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին» Կոնվենցիաները,

Հաշվի առնելով, որ Հայերի ցեղասպանության կազմակերպիչները դատապարտվել են 1919 թ. Կոնստանդնուպոլսի ռազմական հատուկ ատյանի կողմից,

հաշվի առնելով, որ որպես ցեղասպանության հատուցում 1919 թ. Փարիզի վեհաժողովի հատուկ հանձնաժողովը հաշվարկել է 1915–1918 թթ. Արեւմտյան Հայաստանին հասցված վնասի չափը, իսկ 1920 թ. օգոստոսին 10–ին ստորագրվել է Սեւրի Խաղաղության պայմանագիրը եւ 1920 թ. նոյեմբերի 22–ին ԱՄՆ 28–րդ նախագահ Վուդրո Վիլսոնը վավերացրել է Իրավարար վճիռ Հայաստանի եւ Թուրքիայի սահմանի մասին,

ինչը նշանակում է, որ ցեղասպանության կազմակերպիչների ու հանցագործների դատապարտումը տեղի է ունեցել, նյութական վնասի չափը հաշվարկվել է, որոշվել է տարածքը, որի վրա տարածվում է Հայաստան Պետության տիտղոսը,

նկատի առնելով, որ 2004 թ. սկսած ձեւավորվել է Արեւմտյան Հայաստանի հայերի ինքնության եւ քաղաքացիության կառույցը, որի համակարգի վրա ձեւավորվել է Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան) իրավական–քաղաքական հիմքերը եւ պետականաստեղծ կառույցները՝ կառավարությունը, խորհրդարանը, նախագահի կառույցը,

նկատի առնելով, որ Արեւմտյան Հայաստանի հայերը, ինչպես ցանկացած ազգ այս աշխարհում՝ ապրելու, զարգանալու եւ ապագա ունենալու իրավունք ունեն, ինչը

նշանակում է, որ նրանք իրավունք ունեն պահանջելու սեփական պետության հաստատումը Բնօրրան Հայրենիքում՝ Արեւմտյան Հայաստանում,

հայտնում ենք, 2015 թ. ապրիլի 24–ից հետո, Արեւմտյան Հայաստանի հայերի եւ Արեւմտյան Հայաստանի քաղաքացիների, Արեւմտյան Հայաստանի Հանրապետության պատրաստակամությունը Հայերի ցեղասպանության հետեւանքների վերացման նպատակով՝ 1915–1918 թթ. ընթացքում, հայությանը հասցված բարոյական, նյութական եւ տարածքային վնասի հատուցման իրականացման իրավական–քաղաքական գործընթաց սկսելու մասին:

Արմենակ Աբրահամյան
Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Նախագահ
24.04.2015 թ.

ՈՒՂԵՐՁ
Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախագահի

«համայն հայությանը, Արեւմտյան Հայաստանի հայերին ու քաղաքացիներին, հայ անհատին ու հայկական կառույցներին»

Հաշվի առնելով, որ Հայերի ցեղասպանության 100–ամյա տարելիցի միջոցառումների ավարտով իրականում սկսվում է հայության իրավունքների պաշտպանության եւ հաստատման նոր վճռական փուլը,

հաշվի առնելով, որ 2014 թ. հոկտեմբերին 10–ին հրապարակվել է «Արեւմտյան Հայաստանի հայերի իրավունքների պաշտպանության իրավական–քաղաքական միասնական փաթեթը»,

հաշվի առնելով, որ 2015 թ. հունվարի 29–ին հռչակվել է «Հայոց ցեղասպանության 100–ամյա տարելիցի համայկական հռչակագիրը»,

ինչպես նաեւ հաշվի առնելով՝ Մերձավոր Արեւելքի հայ համայնքներին, ՀՀ–ին ու ԼՂՀ–ին եւ համայն հայությանը սպառնացող ներկայի ռազմա–քաղաքական մարտահրավերները,

նկատի առնելով, որ Հայերի ցեղասպանության կազմակերպիչները դատապարտվել են 1919 թ. Կոնստանդնուպոլսի ռազմական հատուկ ատյանի կողմից եւ որպես ցեղասպանության հատուցում՝ 1919 թ. Փարիզի վեհաժողովի հատուկ հանձնաժողովը հաշվարկել է 1915–1918 թթ. Արեւմտյան Հայաստանին հասցված վնասի չափը, որ 1920 թ. օգոստոսին 10–ին ստորագրվել է Սեւրի Խաղաղության պայմանագիրը, իսկ 1920 թ. նոյեմբերի 22–ին ԱՄՆ 28–րդ նախագահ Վուդրո Վիսլոնը վավերացրել է Իրավարար վճիռ Հայաստանի Թուրքիայի սահմանի մասին,

ինչը նշանակում է, որ ցեղասպանության կազմակերպիչների դատապարտումը տեղի է ունեցել, նյութական վնասի չափը հաշվարկվել է, որոշվել է տարածքը, որի վրա տարածվում է Հայաստան Պետության տիտղոսը,

նկատի առնելով, որ 2014 թ.–ին ավարտվել է Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան) պետական կառույցների ձեւավորումը, այն է՝ կառավարության, խորհրդարանի, նախագահի կառույցի,

հայտնում ենք, 2015 թ. ապրիլի 24–ից հետո, Արեւմտյան Հայաստանի հայերի եւ Արեւմտյան Հայաստանի քաղաքացիների, Արեւմտյան Հայաստանի Հանրապետության պատրաստակամությունը Հայերի ցեղասպանության հետեւանքների վերացման նպատակով՝ 1915–1918 թթ. ընթացքում, հայությանը հասցված բարոյական, նյութական եւ տարածքային վնասի հատուցման իրականացման իրավական–քաղաքական գործընթաց սկսելու մասին:

Համայն հայությանը հրավիրում ենք Արեւմտյան Հայաստանի Հանրապետության պետականաստեղծ կառույցների մեջ եւ նրա շուրջ համախմբվելու եւ միասնաբար պաշտպանելու եւ հաստատելու մեր բոլոր իրավունքները:

Արմենակ Աբրահամյան
Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Նախագահ
24.04.2015 թ.

ՈՒՂԵՐՁ
Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի)

«ՄԱԿ–ի անդամ երկրների խորհրդարաններին»

Նկատի առնելով, որ 1965–2015 թթ. ընթացքում Հայերի ցեղասպանությունը արդեն իսկ ճանաչել եւ դատապարտել են 20–ից ավելի պետությունների խորհրդարաններ եւ բազմաթիվ միջազգային կազմակերպություններ եւ կառույցներ,

նկատի առնելով, որ Հայերի ցեղասպանության 100–ամյա տարելիցի հիշատակի ոգեկոչումներին զուգահեռ Հայերի ցեղասպանությունը ճանաչել ու դատապարտել են Եվրախորհրդարանը, Վատիկանը, Ավստրիան, Գերմանիան եւ մի շարք այլ երկրներ ու կառույցներ եւ որ ցեղասպանության դատապարտման գործընթացը շարունակվում է,

նկատի առնելով՝ Մերձավոր Արեւելքի հայ համայնքներին, ՀՀ–ին ու ԼՂՀ–ին եւ համայն հայությանը սպառնացող ներկայի ռազմա–քաղաքական մարտահրավերները,

նկատի առնելով այն հայտնի իրողությունը, որ Հայերի ցեղասպանության 100–ամյա տարելիցի միջոցառումների ավարտով իրականում սկսվում է հայության իրավունքների պաշտպանության նոր վճռական փուլը,

հաշվի առնելով, որ Թուրքիայի Հանրապետությունը շարունակում է ժխտել Հայերի ցեղասպանության փաստը եւ վարում է այդ փաստի ժխտման ներքին եւ արտաքին քաղաքականություն,

հաշվի առնելով, որ Հայերի ցեղասպանության կազմակերպիչները Կոնստանդնուպոլսի ռազմական հատուկ ատյանի կողմից 1919 թ. ճանաչվել են որպես մարդկության դեմ ուղղված հանցագործության պատասխանատուներ եւ այդ ատյանի վճռով դատապարտվել, որ 1919 թ. Փարիզի վեհաժողովի հատուկ հանձնաժողովը հաշվարկել է 1915–1918 թթ. Արեւմտյան Հայաստանին հասցված վնասի չափը, որ 1920 թ. օգոստոսին 10–ին ստորագրվել է Սեւրի Խաղաղության պայմանագիրը, իսկ 1920 թ. նոյեմբերի 22–ին ԱՄՆ 28–րդ նախագահ Վուդրո Վիսլոնը վավերացրել է Իրավարար վճիռ Հայաստանի եւ Թուրքիայի սահմանի մասին,

հաշվի առնելով, որ 2014 թ.–ին ավարտվել է Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան) պետական կառույցների ձեւավորումը, այն է՝ կառավարության, խորհրդարանի, նախագահի կառույցի,

ՄԱԿ–ի անդամ երկրների խորհրդարաններից խնդրում ենք, ՄԱԿ–ի հովանու ներքո, իրավական–քաղաքական գործընթաց ձեւավորել ապահովելու համար 1919–1920 թթ. կայացված վերոնշյալ որոշումների իրականացումը, պաշտպանելու եւ հաստատելու համար Արեւմտյան Հայաստանի հայերի ու քաղաքացիների եւ Արեւմտյան Հայաստանի բնիկների ազատ ապրելու, զարգանալու եւ ապագա ունենալու իրավունքը Արեւմտյան Հայաստանի Հանրապետության հովանու ներքո՝ Բնօրրան Հայրենիքում:

Արմեն Տեր–Սարգսյան
Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Նախագահ
25.04.2015 թ.

ՈՒՂԵՐՁ
Արեւմտյան Հայաստանի Հանրապետության կառավարության

«ՄԱԿ–ի անդամ երկրների կառավարություններին»

Նկատի առնելով, որ 1921 թվականից սկսած Հայկական Հարցի կարգավորման եւ Փարիզի վեհաժողովի որոշումների իրականացման գործընթացը կասեցվեց շուրջ 50 տարով,

նկատի առնելով, որ 1965 թ. ապրիլի 24–ին երեւանյան շարժումով ու ցույցերով չեզոքացվեց Հայերի ցեղասպանության ճանաչման եւ իրավունքների շուրջ 50–ամյա շրջափակումը, որին հետեւեց հայության նոր պայքարը սեփական իրավունքների պաշտպանության խնդրով,

նկատի առնելով, որ 1965–2015 թթ. ընթացքում Հայերի ցեղասպանությունը ճանաչել եւ դատապարտել են 20–ից ավելի պետություններ եւ բազմաթիվ միջազգային կազմակերպություններ եւ կառույցներ, եւ որ այդ գործընթացը այսօր էլ շարունակվում է,

հաշվի առնելով՝ Մերձավոր Արեւելքի հայ համայնքներին, ՀՀ–ին ու ԼՂՀ–ին եւ համայն հայությանը սպառնացող ներկայի ռազմա–քաղաքական մարտահրավերները,

հաշվի առնելով այն հայտնի իրողությունը, որ Հայերի ցեղասպանության 100–ամյա տարելիցի միջոցառումների ավարտով իրականում սկսվում է հայության իրավունքների պաշտպանության նոր վճռական փուլը,

հաշվի առնելով, որ Հայերի ցեղասպանության պատասխանատուները, որպես ցեղասպանության կազմակերպիչ հանցագործներ, դատապարտվել են 1919 թ. Կոնստանդնուպոլսի ռազմական հատուկ ատյանի կողմից, եւ որպես ցեղասպանության հետեւանքների վերացմանն ուղղված որոշումներ 1919 թ. Փարիզի վեհաժողովի հատուկ հանձնաժողովը հաշվարկել է 1915–1918 թթ. Արեւմտյան Հայաստանին հասցված վնասի չափը, որ 1920 թ. օգոստոսին 10–ին ստորագրվել է Սեւրի Խաղաղության պայմանագիրը, իսկ 1920 թ. նոյեմբերի 22–ին ԱՄՆ 28–րդ նախագահ Վուդրո Վիսլոնը վավերացրել է Իրավարար վճիռ Հայաստանի եւ Թուրքիայի սահմանի մասին,

հաշվի առնելով, որ 2014 թ.–ին ավարտվել է Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան) պետական կառույցների ձեւավորումը, այն է՝ կառավարության, խորհրդարանի, նախագահի կառույցի,

ՄԱԿ–ի անդամ երկրների կառավարություններից խնդրում ենք, ՄԱԿ–ի հովանու ներքո, իրավական–քաղաքական գործընթաց սկսել ապահովելու համար 1919–1920 թթ. կայացված որոշումների իրականացումը, պաշտպանելու եւ հաստատելու համար Արեւմտյան Հայաստանի հայերի ու քաղաքացիների եւ Արեւմտյան Հայաստանի բնիկների ազատ ապրելու, զարգանալու եւ ապագա ունենալու իրավունքը Արեւմտյան Հայաստանի Հանրապետության հովանու ներքո՝ Բնօրրան Հայրենիքում:

Տիգրան Փաշաբեզյան
Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Վարչապետ
26.04.2015 թ.

ԳԼՈՒԽ IV

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԵՒ ՆՅՈՒԹԵՐ ԱՐԵՒՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ (ԽՈՐՀՐԴԱՐԱՆ) ՁԵՒԱՎՈՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՌՉԱԿԱԳԻՐ
Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) ձեւավորման մասին

24 մայիսի, 2013 թ.

Արեւմտյան Հայաստանի Ազգային խորհուրդը, Արեւմտյան Հայաստանի վտարանդի կառավարությունը եւ Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողով (Խորհրդարան) ձեւավորող հատուկ հանձնաժողովը, ստանձնելով Արեւմտյան Հայաստանի պետական համակարգերի կազմավորման ու ստեղծման, հայերի գոյության ու ինքնության պահպանման, Արեւմտյան Հայաստանի տնտեսության վերականգնման ու վերաշինության պատասխանատվությունը,

Հայտարարում են՝

- Ստեղծել Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողով (Խորհրդարան), որն իրականացնելու է հայության ուժերի համախմբումը:
- Հենքային համարել Հայկական հարցի՝ Հայոց պահանջատիրության լուծման խնդրում ազգային միասնությունը եւ հայոց անժամանցելի իրավունքը:
- Ընդունել մեկ բանաձեւ. հայ ժողովուրդը պետք է ապրի ինքնաբավ, իսկ ապագայում մեկ միասնական եւ անկախ Հայոց պետության կազմում:

Առաջնորդվում են՝

ա) Արեւմտյան Հայաստանի հայերի Ազգային խորհրդի պաշտոնական հայտարարությամբ (ընդունված՝ 2004 թվականի դեկտեմբերի 17–ին) եւ «Արեւմտյան Հայաստանի հայերի իրավունքների մասին» հռչակագրով (ընդունված՝ 2007 թվականի հունվարի 20–ին):

բ) Արեւմտյան Հայաստանի վտարանդի կառավարության ստեղծման (ընդունված՝ 2011 թվականի փետրվարի 4–ին) եւ Արեւմտյան Հայաստանի պետական համակարգի մասին որոշումներով (ընդունված՝ 2011 թվականի մարտի 2–ին):

գ) 2012 թվականի նոյեմբերի 30–ի Արեւմտյան Հայաստանի հայերի՝ Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողով (Խորհրդարան) ձեւավորելու մասին 5–րդ վեհաժողովի որոշմամբ:

Հռչակում են, որ՝

Նկատի առնելով այն փաստը, որ հակառակ մարդկային բարոյականության եւ ցանկացած իրավունքի՝ ճանաչելու Հայոց իրավունքները բնօրրան հայրենիքի նկատմամբ, Թուրքիայի իրարհաջորդ կառավարություններ՝ սուլթանական, երիտթուրքական եւ քեմալական, 1894–1923 թթ. իրականացրել են Հայերի

ցեղասպանություն եւ բռնագաղթ, որի միջոցով աննախադեպ փոփոխել են ազգագրական պատկերը տարածաշրջանում, իսկ հետեւանքում կրճատելով հայերի թիվը բռնազավթված տարածքներում, որպես «հավելավճար» իրենց հանցագործությունների՝ խախտել են ազգությունների միջեւ բնականոն հարաբերակցությունը՝ Արեւմտյան Հայաստանում, եւ

նկատի առնելով վերոհիշյալ ողջ իրողությունը հռչակում են, որ՝

Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) իրավասությունը տարածվում է ինչպես Արեւմտյան Հայաստան պետության քաղաքացիների, այնպես էլ Արեւմտյան Հայաստանի բռնագրավված երկրամասի՝ Արեւմտյան Հայաստանի իրավական (de jure) եւ փաստական (de facto) տարածքների վրա՝ նկատի ունենալով
ա) Հայաստան – Թուրքիա սահմանազատումը՝ համաձայն ԱՄՆ–ի 28–րդ նախագահ Վուդրո Վիլսոնի Իրավարար վճռի (22 նոյեմբերի, 1920 թ.):
բ) Պատմական Հայաստանի, այդ թվում՝ Արեւմտյան Հայաստանի եւ Կիլիկյան Հայաստանի անկախությունը՝ համաձայն ՄԱԿ–ի՝ «Գաղութային երկրներին եւ ժողովուրդներին անհապաղ անկախություն տրամադրելու մասին» հռչակագրի (14 դեկտեմբերի, 1960 թ.):
գ) Որպես բնիկ ժողովուրդ՝ Արեւմտյան Հայաստանի հայերի ունեցած պատմական, ծագումնաբանական, մշակութային, քաղաքակրթական, պետականաստեղծ անժամկետ եւ անժխտելի իրավունքները՝ համաձայն ՄԱԿ–ի «Բնիկ ժողովուրդների իրավունքների մասին» հռչակագրի (13 սեպտեմբերի, 2007 թ.):

Վերոհիշյալ իրավասությունը տարածվում է Արեւմտյան Հայաստանի հետեւյալ նահանգների եւ տարածքների վրա՝
1. Վան,
2. Բիթլիս,
3. Էրզրում (Կարին),
4. Տրապիզոն (Համշեն),
5. Սիվաս (Սեբաստիա),
6. Դիարբեքիր (Տիգրանակերտ),
7. Խարփութ (Խարբերդ),
8. Կիլիկիա (այդ թվում՝ Կեսարիա, Մարաշ, Ադանա, Զեյթուն, Այնթափ, Անտիոք),
9. Կարս (եւ Սուրմալու),
10. Ջավախք,
11. Նախիջեւան:

Առաջնորդվելով վերը նշված փաստաթղթերով եւ դրույթներով՝ Արեւմտյան Հայաստանի Ազգային խորհուրդը, Արեւմտյան Հայաստանի վտարանդի կառավարությունը եւ Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողով (Խորհրդարան) ձեւավորող հատուկ հանձնաժողովը

Հայտարարում են, որ՝

ստեղծվում է Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողով (Խորհրդարան) ձեւավորող Կենտրոնական ընտրական հանձնաժողով (ԿԸՀ), որը լիազորված է կազմակերպելու եւ անցկացնելու ընտրական ողջ գործընթացը:
(Տե՛ս Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողով (Խորհրդարան) ձեւավորող Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքը՝ http:www.western–armenia–election.org):

Քաղաքացիների գրանցումը

Արեւմտյան Հայաստանի քաղաքացիներ են բոլոր այն անձինք, ովքեր կարող են հիմնավորել թե՛ իրենց տարագրյալ լինելը Հայրենիքից (Արեւմտյան Հայաստանից), թե՛ իրենց ծագումը՝ նույնիսկ մի քանի սերունդ վաղեմությամբ (ուղիղ ժառանգական կապով):

1) Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) ընտրություններին մասնակցելու ցանկություն հայտնած Արեւմտյան Հայաստանի քաղաքացիների, ինչպես նաեւ հայրենակցական ու հայրենասիրական հասարակական կազմակերպությունների եւ միությունների գրանցման գործընթացն իրականացվում է՝ 2013 թ. մայիսի 24–ից մինչեւ դեկտեմբերի 1–ը:

2) Ընտրություններին մասնակցելու ցանկություն հայտնած Արեւմտյան Հայաստանի քաղաքացիները գրանցվում են հետեւյալ կայքում՝
http://www.western–armenia–election.org/votes/Enregistrement2013–fr–arm.php

Թեկնածուների գրանցումը

1) 2013 թ. հունիսի 1–ից սկսվում է Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) պատգամավորության թեկնածուի կողմից իրականացվող ստորագրահավաքը՝ հատուկ հաստատված ձեւաթղթերի միջոցով:

2) Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովը (Խորհրդարանը) բաղկացած է Արեւմտյան Հայաստանի քաղաքացիներից: Արեւմտյան Հայաստանի քաղաքացու անձնագիր ունենալը պարտադիր է պատգամավորության թեկնածուի համար:

3) Թեկնածուների գրանցումն իրականացվում է 2013 թ. հոկտեմբերի 1–ից ժամը 08:00, մինչեւ հոկտեմբերի 22–ը՝ ժամը 24:00:

4) Ընտրություններն անցկացվում են 2013 թ. նոյեմբերի 22–ից ժամը 08:00, մինչեւ դեկտեմբերի 1–ը՝ ժամը 00:00 (Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքի միջոցով կամ գրավոր):

5) Ընտրությունների արդյունքները Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հաստատվում եւ հրապարակվում են 2013 թ. դեկտեմբերի 17–ին:

6) Առաջադրվելու համար թեկնածուն պետք է ներկայացնի Արեւմտյան Հայաստանի քաղաքացիների նվազագույնը 100 ստորագրություն:

7) Թեկնածուն պետք է ներկայացնի ինքնակենսագրություն եւ գործունեության համառոտ ծրագիր:

8) Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) պատգամավորության թեկնածուները գրանցվում են հետեւյալ կայքում՝
http://www.western–armenia–election.org/votes/Candidature2013–fr–arm–en–ru.php
http://www.western–armenia–election.org/Consultation–Electorale/2013/Teqnadzouneri_timoume–2013.pdf

http://www.western–armenia–election.org/Consultation–Electorale/2013/Requete_de_candidature–2013.pdf

Հաստատում են, որ՝
Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) պատգամավորության թեկնածուները, որոնք պաշտոնապես ընդունում են Արեւմտյան Հայաստանի Ազգային խորհրդի եւ Արեւմտյան Հայաստանի վտարանդի կառավարության Հռչակագիրը եւ հիմնադիր փաստաթղթերը, կարող են ինքնաառաջադրվել եւ կամ ներկայացվել հայրենակցական ու հայրենասիրական հասարակական կազմակերպությունների եւ միությունների, Արեւմտյան Հայաստանի Ազգային խորհրդի ու Արեւմտյան Հայաստանի վտարանդի կառավարության կողմից:
Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) ձեւավորման հիմնական մեխանիզմները, այդ թվում՝ կանոնակարգի նախագիծը, որով հաստատվում է Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) առաջին նստաշրջանի գումարման ժամկետը, պատգամավորների քանակը, հայրենակցական ու հայրենասիրական հասարակական կազմակերպությունների եւ միությունների ներգրավման օրինակարգը՝ հաստատված Արեւմտյան Հայաստանի Ազգային խորհրդի կողմից:

Կոչ են անում համայն հայությանը՝
պաշտպանելու ու հաստատելու իր անսակարկելի եւ անժամանցելի իրավունքները, որի կարեւորագույն գործողություններից մեկը Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) ձեւավորումն է, ակտիվորեն մասնակցելու այս ընտրություններին՝ Արեւմտյան Հայաստանի քաղաքացիություն ձեռք բերելու եւ դրա ընձեռած բացառիկ հնարավորության շրջանակներում:

Արմենակ Աբրահամյան
Արեւմտյան Հայաստանի Ազգային խորհրդի Նախագահ

Տիգրան Փաշաբեզյան
Արեւմտյան Հայաստանի վտարանդի կառավարության Վարչապետ

Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողով (Խորհրդարան) ձեւավորող
հատուկ հանձնաժողով

ՈՐՈՇՈՒՄ
Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողով (Խորհրդարան) ձեւավորող
Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովի

16–ը դեկտեմբերի, 2013 թ.

Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (խորհրդարանի)
ընտրությունների արդյունքների ամփոփումը

Համաձայն «Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողով (Խորհրդարան) ձեւավորելու մասին» Հռչակագրի (24–ը մայիսի 2013 թ.),ընդունված Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհրդի, Արեւմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարության եւ Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողով (Խորհրդարան) ձեւավորող Հատուկ Հանձնաժողովի կողմից, 2013 թվականի նոյեմբերի 22–ի ժամը 08:00–ից, մինչեւ դեկտեմբերի 1–ը՝ 00:00 ամբողջ աշխարհում բնակվող հայ ժողովրդի պատմության մեջ առաջին անգամ իրականացվեց Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) պատգամավորների ընտրություններ:

Ընտրություններն անցան ուղղակի եւ գաղտնի քվեարկությամբ: Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողով (Խորհրդարան) ձեւավորելու եւ ընտրությունները կազմակերպելու համար ստեղծվեց Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովը (ԿԸՀ), բաղկացած 15 անձից: ԿԸՀ անդամները ապրում են Հայաստանում, Ռուսաստանում, Ֆրանսիայում, ԱՄՆ–ում, Գերմանիայում, Սիրիայում, Ջավախքում: Նրանք լիազորված էին կազմակերպել եւ անցկացնել ամբողջ նախընտրական քարոզարշավը, ընտրությունների փաստացի ամփոփումը:

2013 թվականի հունիսի 1–ից մինչեւ 2013 թվականի դեկտեմբերի 17–ը ԿԸՀ անցկացրեց 28 նիստ, որոնց ընթացքում Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողով (Խորհրդարան) ձեւավորելու վերաբերյալ ընդունվեցին կանոնակարգային անհրաժեշտ փաստաթղթեր, հաստատվեցին ընտրողների ցուցակները, ստուգվեցին եւ հաստատվեցին պատգամավորության թեկնածուների ցուցակները, ինչպես նաեւ ստուգվեցին եւ հաստատվեցին Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) առաջին գումարման ընտրության արդյունքները:

Նախընտրական քարոզարշավի եւ ընտրությունների վերաբերյալ նյութերը պարբերաբար հրապարակվել են ԿԸՀ պաշտոնական կայքում եւ ԶԼՄ–ներում:

Ընտրությունների կազմակերպման, այդ թվում՝ ընտրողների գրանցման, պատգամավորության թեկնածուների եւ քվեարկության համար ԿԸՀ կողմից ստեղծվել էր հատուկ կայք հետեւյալ հասցեով www.western–armenia–election.org, որտեղ բոլոր ցանկացողները կարող էին՝
1) Դիմել Արեւմտյան Հայաստանի քաղաքացիություն ստանալու համար:
2) Գրանցվել, որպես ընտրող:
3) «Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողով (Խորհրդարան) ձեւավորելու մասին» Հռչակագրում հրապարակված պայմանների համաձայն՝ գրանցվել, որպես Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) պատգամավորական թեկնածու:
4) Գրանցված ընտորղները՝ Արեւմտյան Հայստանի քաղաքացիները, կարող էին մասնակցել Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) պատգամավորների ընտրություններին՝ ուղղակի եւ գաղտնի քվեարկությամբ:

Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) պատգամավորության թեկնածու առաջադրվել էին 75 անձ: Ներկայացված փաստաթղթերի ստուգման

արդյունքում՝ անհրաժեշտ փաստաթղթերի բացակայության պատճառով 11 անձի դիմում մերժվել է ԿԸՀ կողմից: ԿԸՀ այս որոշումը չի բողոքարկվել իրենց կողմից:
Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) ձեւավորման կանոնադրության պայմանների համաձայն՝ թեկնածուների ցուցակում վերջնականապես գրանցվել են 64 անձ, որոնց անունները մտցվել են քվեաթերթիկ:
Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) պատգամավորների թեկնածուների պաշտոնական ցուցակը հրապարակվել է 2013 թ. նոյեմբերի 22–ին ԿԸՀ կայքում՝ քվեարկության համար:

2013 թվականի հունիսի 1–ից մինչեւ նոյեմբերի 30–ը՝ 41 երկրներից գրանցվել էին 17837 ընտրողներ, ովքեր որպես Արեւմտյան Հայաստանի քաղաքացիներ իրավունք էին ստացել մասնակցելու Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) պատգամավորների ընտրություններին:

Ընտրողները Հայաստանի Հանրապետությունից էին, Արցախից, Արեւմտյան Հայաստանից, Ռուսաստանից, Ֆրանսիայից, Աբխազիայից, Ջավախքից, Ուկրաինայից, այդ թվում՝ Ղրիմից, Վրաստանից, Լատվիայից, Լիտվայից, Մոլդովայից, Բելառուսից, Ղազախստանից, Ուզբեկստանից, Ամերիկայի Միացյալ Նահանգներից, Կանադայից, Արգենտինայից, Ուրուգվայից, Բրազիլիայից, Մեքսիկայից, Ավստրալիայից, Գերմանիայից, Հունաստանից, Կիպրոսից, Չեխիայից, Ավստրիայից, Շվեդիայից, Դանիայից, Հունգարիայից, Լեհաստանից, Բուլղարիայից, Իսրայելից, Իրանից, Սիրիայից, Լիբանանից, Իրաքից, Քուվեյթից, Եգիպտոսից, Թուրքիայի Հանրապետությունից:

Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) առաջին գումարման պատգամավորների ընտրություններին մասնակցել եւ քվեարկել են 17155 ընտրողներ, որը կազմում է գրանցված ընտրողների 96,176 %–ը:
72 քվեաթերթեր համարվել են անվավեր, որը կազմում է քվեարկությանը մասնակցողների 0,42%–ը:
17062 ընտրող քվեարկել է կողմ, որը կազմում է քվեարկությանը մասնակցողների 99,458 %–ը:
Դեմ է քվեարկել 0 ընտրող:
Ձեռնպահ է քվեարկել 21 ընտրող, որ կազմում է 0.122 %–ը:

Ընտրությունների արդյունքների համաձայն Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) առաջին գումարման պատգամավոր է ընտրվել 64 անձ: Պատգամավորները ընտրվել են 10 երկրների 27 քաղաքներից:
Երկրներն են՝ Հայաստան, Ռուսաստան, Ֆրանսիա, ԱՄՆ, Գերմանիա, Աբխազիա, Ջավախք, Դանիա, Հունգարիա, Շվեդիա եւ քաղաքներն են՝ Երեւան, Էջմիածին, Արմավիր, Աբովյան, Մոսկվա, Դոնի Ռոստով, Սոչի, Գագրա, Սուխում, Ախալցխա, Փարիզ, Մարսել, Նիս, Կրետեյլ, Վիեննա, Բոստոն, Գլենդել, Գոտենբուրգ, Մայնց, Օդենս, Բուդապեշտ եւ այլն:
Ընտրված անդամները արմատով եւ ազգային ինքնությամբ ներկայացնում էին Արեւմտյան Հայաստանի 15 ավելի տարածքներ եւ մարզեր, այդ թվում Կարս, Բիթլիս,

Վան, Տիգրանակերտ, Խարբերդ, Համշեն, Տրապիզոն, Կարին (Էրզրում), Իգդիր, Մուշ, Սեբաստիա, Սասուն, Կիլիկիա, Ջավախք եւ այլն:
Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) կազմում պատգամավոր են ընտրվել 20 կին, որը կազմում է ընդհանուր թվի 31%–ը:
Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) պատգամավորների տարիքային կազմը հետեւյալն է՝
60 տարեկանից բարձր – 7 պատգամավոր,
50 –ից 60 տարեկան – 20 պատգամավոր,
40 –ից 50 – 16 պատգամավոր,
30 –ից մինչեւ 40 – 11 պատգամավոր,
30–ից փոքր – 10 պատգամավոր:

Ամենատարեց պատգամավորը 78 տարեկան է, ամենաերիտասարդ պատգամավորը 21:
Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) պատգամավորների ընտրությունների ընթացքում խախտումներ չեն հայտնաբերվել: Քվեարկության անցկացման եւ ընտրությունների արդյունքների վերաբերյալ ԿԸՀ հասցեով բողոքներ չեն ստացվել:

Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովը որոշում է՝
1) Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) առաջին գումարման պատգամավորների ընտրությունները համարել կայացած:
2) Հաստատել Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) առաջին գումարման 64 պատգամավորների ընտրությունները:
3) Ներկայացնել հաստատման Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) առաջին գումարման 64 պատգամավորների լիազորությունները՝ համաձայն հետեւյալ ցուցակի...

Որոշումը ընդունված է միաձայն:

Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողով (Խորհրդարան) ձեւավորող
Կենտրոնական Ընտրական Հանձնաժողով

ՔԱՂՎԱԾՔ № 1
Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի)
1–ին գումարման 1–ին նստաշրջանի 1–ին նիստի արձանագրությունից

18–ը հունվարի, 2014 թ., Փարիզ

Նիստի սկիզբը ժամը 10:00–ին, ավարտը՝ 17:00–ին:
Ընտրված 64 պատգամավորներից մասնակցել են 50 պատգամավոր:

Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) պատգամավորների գրանցում (այսուհետ տեքստում՝ Արեւմտյան Հայաստանի Խորհրդարան):

Ընտրված 64 պատգամավորներից գրանցվել են 50 պատգամավոր, (29–ը դահլիճում եւ 21–ը ինտերնետ կապով), որը կազմում է ավելի քան 78 տոկոս:
Քվորումը ապահովված է:

Հնչում է Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհրդի օրհներգը:
Բարձրացվում է Արեւմտյան Հայաստանի Հանրապետության պետական դրոշը:

1. Լսեցին՝ Արեւմտյան Հայաստանի Խորհրդարանի առաջին նստաշրջանի օրակարգի մասին:
Որոշեցին՝ հաստատել Արեւմտյան Հայաստանի Խորհրդարանի առաջին նստաշրջանի օրակարգը:
Քվեարկության արդյունքները.
Կողմ – 50, դեմ – 0, ձեռնպահ –0,
Որոշումը ընդունված է միաձայն:

2. Լսեցին՝ Արեւմտյան Հայաստանի Խորհրդարանի կանոնակարգի մասին:
Որոշեցին՝ հաստատել Արեւմտյան Հայաստանի Խորհրդարանի կանոնակարգը:
Քվեարկության արդյունքները.
Կողմ – 50, դեմ – 0, ձեռնպահ – 0
Որոշումը ընդունված է միաձայն:

3. Լսեցին՝ Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհրդի նախագահ Արմենակ Աբրահամյանին, ով ըստ կանոնակարգի առաջարկեց, որ մինչեւ Արեւմտյան Հայաստանի Խորհրդարանի նախագահի ընտրությունը, նիստը վարի ամենատարեց պատգամավորը:
Որոշեցին՝ ըստ կանոնակարգի, մինչեւ Արեւմտյան Հայաստանի Խորհրդարանի նախագահի ընտրությունը, նիստը վարի ամենատարեց պատգամավոր Վրեժ Աբրահամյանը:
Քվեարկության արդյունքները.
Կողմ – 50, դեմ – 0, ձեռնպահ – 0
Որոշումը ընդունված է միաձայն:

Մեկ րոպե լռությամբ հարգանքի տուրք է տրվում Հայերի ցեղասպանության զոհերի հիշատակին, որ տեղի է ունեցել 1894–1923 թթ., երեք թուրքական իրարհաջորդ կառավարությունների կողմից՝ Արեւմտյան Հայաստանում եւ Օսմանյան կայսրությունում:

4. Լսեցին՝ նստաշրջանի հաշվիչ հանձնաժողովի ընտրության մասին:
Որոշեցին՝ ընտրել նստաշրջանի հաշվիչ հանձնաժողով.
նախագահ՝ Տիգրան Բաբայան, տեղակալներ՝ Վիոլետա Ղազարոսյան եւ Արամ Հարությունյան:
Քվեարկության արդյունքները.
Կողմ – 50, դեմ – 0, ձեռնպահ – 0
Որոշումը ընդունված է միաձայն:

5. Լսեցին՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի զեկույցը Արեւմտյան Հայաստանի Խորհրդարանի պատգամավորների ընտրության արդյունքների վերաբերյալ:
Որոշեցին՝ հաստատել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի զեկույցը պատգամավորների ընտրության արդյունքների վերաբերյալ:
Քվեարկության արդյունքները.
Կողմ – 50, դեմ – 0, ձեռնպահ – 0
Որոշումը ընդունված է միաձայն:

6. Լսեցին՝ Արեւմտյան Հայաստանի Խորհրդարանի պատգամավորների լիազորությունների հաստատման մասին:
Որոշեցին՝ հաստատել Արեւմտյան Հայաստանի Խորհրդարանի 64 պատգամավորների լիազորությունները, որոնց ըստ ընդհանուր ցուցակի ընտրել են 17.837 ընտրողներ՝ Արեւմտյան Հայաստանի քաղաքացիներ, 41 երկրներից:
Քվեարկության արդյունքները.
Կողմ – 50, դեմ – 0, ձեռնպահ – 0
Որոշումը ընդունված է միաձայն:

7. Լսեցին՝ Արեւմտյան Հայաստանի Խորհրդարանի նախագահի ընտրության մասին:
Որոշեցին՝ Արեւմտյան Հայաստանի Խորհրդարանի նախագահ ընտրել Արմեն Տեր–Սարգսյանին, 17–ը հունվարի 2014 թ. Արեւմտյան Հայաստանի Խորհրդարանի 1–ին նստաշրջանի նախապատրաստական նիստի աշխատանքային խմբերի ընդունած որոշումների ու առաջարկների հիման վրա:
Քվեարկության արդյունքները.
Կողմ – 49, դեմ – 0, ձեռնպահ – 1
Որոշումը ընդունված է:

8. Լսեցին՝ Արեւմտյան Հայաստանի Խորհրդարանի նախագահի տեղակալների ընտրության մասին:
Որոշեցին՝ Արեւմտյան Հայաստանի Խորհրդարանի նախագահ Արմեն Տեր–Սարգսյանի առաջարկությամբ Արեւմտյան Հայաստանի Խորհրդարանի նախագահի տեղակալներ ընտրել Տիգրան Բաբայանին եւ Հայկ Հարությունյանին:
Քվեարկության արդյունքները.
Կողմ – 49, դեմ – 0, ձեռնպահ – 1
Որոշումը ընդունված է:

9. Լսեցին՝ Արեւմտյան Հայաստանի Խորհրդարանի քարտուղարների ընտրության մասին:
Որոշեցին՝ Արեւմտյան Հայաստանի Խորհրդարանի քարտուղարներ ընտրել Բիատրիս Նազարյանին եւ Սաթենիկ Ալեքսանյանին:
Քվեարկության արդյունքները.
Կողմ – 50, դեմ – 0, ձեռնպահ – 0
Որոշումը ընդունված է միաձայն:

10. Լսեցին՝ Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների մասին:

Որոշեցին՝ հաստատել Արեւմտյան Հայաստանի Խորհրդարանի հետեւյալ մշտական հանձնաժողովները, 17–ը հունվարի 2014 թ. Արեւմտյան Հայաստանի Խորհրդարանի 1–ին նստաշրջանի նախապատրաստական նիստի աշխատանքային խմբերի ընդունած որոշումների ու առաջարկների հիման վրա. Իրավական, օրենսդրական եւ պետական հարցերի հանձնաժողով, Պաշտպանության, ներքին գործերի եւ ազգային անվտանգության հարցերի հանձնաժողով, Արտաքին դիվանագիտական եւ պառլամենտական կապերի հանձնաժողով, Հայրենակցական, համայնքային եւ հայրենասիրական հասարակական միությունների հանձնաժողով, Ֆինանսական, տնտեսական հարցերի հանձնաժողով, Կրթության եւ գիտության հարցերի հանձնաժողով, Մշակույթի հարցերի հանձնաժողով, Ընտանիքի, կանանց եւ առողջապահության հարցերի հանձնաժողով, Երիտասարդության եւ սպորտի հարցերի հանձնաժողով, Լրատվության հարցերի հանձնաժողով, Հոգեւոր ոլորտի եւ կրոնի հարցերի հանձնաժողով, Վետերանների եւ հաշմանդամների հարցերի հանձնաժողով, Ներքին կանոնակարգի եւ աշխատակարգի հանձնաժողով:

Քվեարկության արդյունքները,

Կողմ – 50, դեմ – 0, ձեռնպահ – 0

Որոշումը ընդունված է միաձայն:

11. Լսեցին՝ Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների նախագահների ընտրության մասին:

Որոշեցին՝ Արեւմտյան Հայաստանի Խորհրդարանի մշտական հանձնաժողովների նախագահներ ընտրել, 17–ը հունվարի 2014 թ. Արեւմտյան Հայաստանի Խորհրդարանի 1–ին նստաշրջանի նախապատրաստական նիստի աշխատանքային խմբերի ընդունած որոշումների ու առաջարկների հիման վրա. Իրավական, օրենսդրական եւ պետական հարցերի հանձնաժողով՝ նախագահ չի ընտրվել, Պաշտպանության, ներքին գործերի եւ ազգային անվտանգության հարցերի հանձնաժողով՝ նախագահ չի ընտրվել, Արտաքին դիվանագիտական եւ պառլամենտական կապերի հանձնաժողով՝ Բասամ Թահան, Հայրենակցական, համայնքային եւ հայրենասիրական հասարակական միությունների հանձնաժողով՝ Դավիթ Ալեքսանյան, Ֆինանսական, տնտեսական հարցերի հանձնաժողով՝ Վարդան Մանջիկյան, Կրթության եւ գիտության հարցերի հանձնաժողով՝ Կարինե Հայրապետյան, Մշակույթի հարցերի հանձնաժողով՝ Յուլիա Գյուլոյան, Ընտանիքի, կանանց եւ առողջապահության հարցերի հանձնաժողով՝ Սաիդա Օհանյան, Երիտասարդության եւ սպորտի հարցերի հանձնաժողով՝ Վաղարշակ Սահգելդյանց, Լրատվության հարցերի հանձնաժողով՝ Տիգրան Հարությունյան, Հոգեւոր ոլորտի եւ կրոնի հարցերի հանձնաժողով՝ Արմենակ Հարմանդանյան, Վետերանների եւ հաշմանդամների հարցերի հանձնաժողով՝ Վրեժ Աբրահամյան, Ներքին կանոնակարգի եւ աշխատակարգի հանձնաժողով՝ Արամ Հարությունյան:

Քվեարկության արդյունքները,

Կողմ – 50, դեմ – 0, ձեռնպահ – 0

Որոշումը ընդունված է միաձայն:

12. Լսեցին՝ Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների անդամների հաստատման մասին:
Որոշեցին՝ հաստատել Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների անդամների ներկայացված ցանկը:
Քվեարկության արդյունքները,
Կողմ – 50, դեմ 0, ձեռնպահ – 0
Որոշումը ընդունված է միաձայն:

13. Լսեցին՝ Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների նախագահների ելույթները աշխատանքային ծրագրերի մասին:
Որոշեցին՝ հաստատել Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների աշխատանքային ծրագրերը:
Քվեարկության արդյունքները,
Կողմ – 50, դեմ – 0, ձեռնպահ – 0
Որոշումը ընդունված է միաձայն:

Արմեն Տեր–Սարգսյան
Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Նախագահ

Բիատրիս Նազարյան
Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) քարտուղար

ՔԱՂՎԱԾՔ № 2
Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի)
1–ին գումարման 1–ին նստաշրջանի 2–րդ նիստի արձանագրությունից

20–ը հունվարի, 2014 թ., Փարիզ

Նիստի սկիզբը ժամը 10:00–ին, ավարտը՝ 17:00–ին:

Ընտրված 64 պատգամավորներից մասնակցել են 50 պատգամավոր (29–ը նիստերի դահլիճում, 21–ը ինտերնետ կապի միջոցով), որը կազմում է ավելի քան 78 տոկոս:
Քվորումը ապահովված է:

1. **Լսեցին՝** Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախագահի ընտրության մասին:
Որոշեցին՝ Հաշվի առնելով այն իրողությունը, որ Արեւմտյան Հայաստանի հայերի եւ Արեւմտյան Հայաստանի քաղաքացիների պետական համակարգը՝ Արեւմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարությունը եւ Արեւմտյան Հայաստանի Խորհրդարանը պարտադրված են առայժմ գործել արտերկրում, Արեւմտյան Հայաստանի Խորհրդարանը հաստատում է, որ մինչեւ Բնօրրան Հայրենիքում հաստատվելը, Արեւմտյան Հայաստան Հանրապետության նախագահ՝ պետության գլուխ, ընտրում է Արեւմտյան Հայաստանի Խորհրդարանը:

Քվեարկության արդյունքները.
Կողմ – 50, դեմ – 0, ձեռնպահ – 0
Որոշումը ընդունված է միաձայն:

2. Լսեցին՝ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախագահի թեկնածուի մասին: Որպես թեկնածուներ առաջադրվեցին Արմենակ Աբրահամյանը եւ Արամ Մկրտչյանը (այստեղ նշենք, որ Արամ Մկրտչյանը հետագայում՝ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախագահի 03.07.2014 թ.-ի հրամանագրով, ազատվեց Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարարի զբաղեցրած պաշտոնից-հրտ.): Ելույթներից եւ քննարկումներից հետո Արամ Մկրտչյանը հանեց իր թեկնածությունը: Հաշվի առնելով, որ Արամ Մկրտչյանը հանեց իր թեկնածությունը քվեարկվում է Արմենակ Աբրահամյանի թեկնածությունը:
Որոշեցին՝ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախագահ՝ պետության գլուխ, ընտրել Արմենակ Աբրահամյանին:
Քվեարկության արդյունքները.
Կողմ – 49, դեմ – 0, ձեռնպահ – 1
Որոշումը ընդունված է:

3. Լսեցին՝ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախագահ Արմենակ Աբրահամյանի քաղաքական ելույթը:
Որոշեցին՝
ա/ Հաստատել Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախագահ Արմենակ Աբրահամյանի քաղաքական ելույթի դրույթները, դրական գնահատական տալով Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհրդի 10–ամյա աշխատանքներին:
բ/ Հաստատել, որ Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհուրդը պետք է շարունակի աշխատանքները ՄԱԿ–ի Բնիկ ժողովուրդների ձեւաչափում՝ վերջնականապես հաստատելու համար Արեւմտյան Հայաստանի հայերի իրավունքները Արեւմտյան Հայաստանի նկատմամբ:
Քվեարկության արդյունքները.
Կողմ – 50, դեմ – 0, ձեռնպահ – 0
Որոշումը ընդունված է միաձայն:

Ըստ կանոնակարգի՝ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախագահը ընդունում է Արեւմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարության վարչապետ Տիգրան Փաշաբեզյանի եւ նրա ղեկավարած Կառավարության հրաժարականը, որը գործել է երեք տարի:

4. Լսեցին՝ Արեւմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարության վարչապետի ընտրության մասին:
Որոշեցին՝ Ըստ կանոնակարգի՝ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախագահը, որպես Արեւմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարության վարչապետի առաջարկում է Տիգրան Փաշաբեզյանի թեկնածությունը:
Քվեարկության արդյունքները.
Կողմ – 50, դեմ – 0, ձեռնպահ – 0

Որոշումը ընդունված է միաձայն:

5. Լսեցին՝ Արեւմտյան Հայաստանի Կառավարության վարչապետ Տիգրան Փաշաբեզյանի հաշվետվությունը 2011–2014 թթ. աշխատանքների վերաբերյալ:
Որոշեցին՝ Հաստատել Արեւմտյան Հայաստանի Կառավարության վարչապետ Տիգրան Փաշաբեզյանի հաշվետվությունը 2011–2014 թթ. աշխատանքների վերաբերյալ:
Քվեարկության արդյունքները.
Կողմ – 50, դեմ – 0, ձեռնպահ – 0
Որոշումը ընդունված է միաձայն:

6. Լսեցին՝ Արեւմտյան Հայաստանի Կառավարության կազմի՝ Նախարարների մասին:
Որոշեցին՝
ա/ Ըստ կանոնակարգի Արեւմտյան Հայաստանի Կառավարության նոր կազմը՝ Նախարարների թեկնածությունը Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախագահին ներկայացնում է վարչապետը, որը հատուկ Հրամանագրով հաստատում է Արեւմտյան Հայաստանի Կառավարության կազմը՝ նախարարներին:
բ/ Լրացուցիչ՝ պատգամավոր Արամ Մկրտչյանի առաջարկությամբ, Արեւմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարության նոր կազմի՝ Նախարարների, մասին տեղյակ պահել Արեւմտյան Հայաստանի Խորհրդարանին եւ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախագահին, Արեւմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարության կազմը հաստատելիս հաշվի առնել Արեւմտյան Հայաստանի Խորհրդարանի պատգամավորների կարծիքները:
Քվեարկության արդյունքները.
Կողմ – 50, դեմ – 0, ձեռնպահ – 0
Որոշումը ընդունված է միաձայն:

7. Լսեցին՝ Արեւմտյան Հայաստանի Կառավարության ապագա ծրագրերի մասին:
Որոշեցին՝ Առաջիկա երկու ամիսների ընթացքում Արեւմտյան Հայաստանի Խորհրդարանի քննարկմանն ու հաստատմանը ներկայացնել Արեւմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարության ապագա ծրագրերը:
Քվեարկության արդյունքները.
Կողմ – 50, դեմ – 0, ձեռնպահ – 0
Որոշումը ընդունված է միաձայն:

8. Լսեցին՝ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության պետական դրոշի հաստատման մասին:
Որոշեցին՝ Հիմք ընդունելով Արեւմտյան Հայաստանի Ազգային խորհրդի Հրամանագիրը Արեւմտյան Հայաստանի դրոշի մասին, հաստատել դրոշը, որպես Արեւմտյան Հայաստանի Հանրապետության պետական դրոշ:
Քվեարկության արդյունքները.
Կողմ – 50, դեմ – 0, ձեռնպահ – 0
Որոշումը ընդունված է միաձայն:

Այսպիսով Արեւմտյան Հայաստանի Խորհրդարանի առաջին գումարման, առաջին նստաշրջանի աշխատանքներն ավարտվում են:

Արմեն Տեր–Սարգսյան
Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) Նախագահ

Բիատրիս Նազարյան
Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) քարտուղար

ՈՐՈՇՈՒՄ

**Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովի
Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման
պատգամավորների ընտրությունների մասին**

14 սեպտեմբեր 2018 թ.

Համաձայն ՄԱԿ-ի Մարդու Իրավունքների Համընդհանուր Հռչակագրի 21-րդ հոդվածի (10 դեկտեմբեր 1948 թ.), «Բնիկ ժողովուրդների իրավունքների մասին» Հռչակագրի (13 սեպտեմբեր 2007 թ.) եւ համաձայն՝
- «Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողով (Խորհրդարան) ձեւավորելու մասին» Հռչակագրի (24 մայիս 2013 թ.),
- «Արեւմտյան Հայաստանի պետական կառուցվածքի, Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) պատգամավորների կարգավիճակի եւ Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) կանոնակարգի մասին» Օրենքի, (21 հունվար 2014 թ., լրացումներով ու փոփոխություններով ընդունված՝ 29 մայիս 2018 թ.),
- Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 1-ին գումարման 7-րդ նստաշրջանի որոշման, 29 մայիս 2018 թ.:
- Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրի № 16/2018, 01 հունիս 2018 թ.,

հայ ժողովրդի պատմության մեջ երկրորդ անգամ, ամբողջ աշխարհում,

2018 թ. սեպտեմբերի 1-ից, ժամը 00-01-ից մինչեւ 2018 թ. սեպտեմբերի 5-ը, ժամը 24:00, Երեւանի ժամանակով, տեղի ունեցան Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) պատգամավորների ընտրություններ, որոնք անցկացվեցին ուղիղ եւ գաղտնի քվեարկությամբ, համացանցում, հետեւյալ հասցեով www.elections-western-armenia.info, ինչպես նաեւ Արեւմտյան Հայաստանի հայերի տարածքային գրասենյակներում:

Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման պատգամավորների ընտրությունները կազմակերպելու համար ձեւավորվել էր

Կենտրոնական ընտրական հանձնաժողով (ԿԸՀ), որը լիազորված էր կազմակերպել եւ անցկացնել ընտրական ողջ գործընթացը:

2018 թ. հունիսի 1-ից մինչեւ 2018 թ. սեպտեմբերի 14-ը անցակցվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 19 նիստ, որտեղ ընդունվել են համապատասխան որոշումներ Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման պատգամավորների ընտրություններ անցկացնելու համար, հաստատվել են ընտրողների եւ Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման պատգամավորների թեկնածուների ցուցակները, ինչպես նաեւ ստուգվել եւ վերջնականապես հաստատվել են Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման պատգամավորների ընտրությունների արդյունքները:

Արեւմտյան Հայաստանի Հանրապետության պաշտոնական կայքերում՝
- խորհրդարանի ընտրությունների՝ www.elections-western-armenia.info,
- քաղաքացիության համար դիմելու՝ www.citizenship-western-armenia.info,
- խորհրդարանի՝ www.parliament-wa.info,
- կառավարության www.gov-wa.info եւ ԶԼՄ-ներում մշտապես հրապարակվել են նյութեր ինչպես նախընտրական քարոզարշավի, այնպես էլ ընտրությունների ընթացքի մասին վեց լեզուներով՝ հայերեն, անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն, թուրքերեն եւ արաբերեն:

Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման պատգամավորների ընտրություններն անցկացնելու, այդ թվում՝ ընտրողների ու պատգամավորության թեկնածուների գրանցման եւ քվեարկության համար համացանցում բացվել է հատուկ կայքէջ հետեւյալ հասցեով՝ www.elections-western-armenia.info, որտեղ բոլոր ցանկացողները կարող էին՝
- առաջին, դիմել Արեւմտյան Հայաստանի քաղաքացիության համար,
- երկրորդ, գրանցվել որպես ընտրող,
- երրորդ, համաձայն՝ «Արեւմտյան Հայաստանի պետական կառուցվածքի, Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) պատգամավորների կարգավիճակի եւ Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) կանոնակարգի մասին» Օրենքի, (լրացումներով ու փոփոխություններով ընդունված՝ 29 մայիս 2018 թ.) եւ հրապարակված Արեւմտյան Հայաստանի Հանրապետության պաշտոնական կայքերում, գրանցվել որպես Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) պատգամավորության թեկնածու,
- չորրորդ, որպես Արեւմտյան Հայաստանի քաղաքացի մասնակցել Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման պատգամավորների ընտրություններին ուղիղ եւ գաղտնի քվեարկության միջոցով:

Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման պատգամավորության թեկնածու է առաջադրվել 112 անձ:

Ներկայացված փաստաթղթերի ստուգման արդյունքում, որպես Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման պատգամավորության թեկնածու, 11

անձի դիմում մերժվել է: Նրանք Կենտրոնական ընտրական հանձնաժողովին չէին ներկայացրել համապատասխան փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ էին գրանցվելու որպես պատգամավորության թեկնածու:

Սույն որոշումը չի բողոքարկվել:

Համաձայն՝ «Արեւմտյան Հայաստանի պետական կառուցվածքի, Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) պատգամավորների կարգավիճակի եւ Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) կանոնակարգի մասին» Օրենքի, (լրացումներով ու փոփոխություններով ընդունված՝ 29 մայիս 2018 թ.) եւ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրի № 16/2018, 01 հունիս 2018 թ., հաստատվել է Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման պատգամավորների թեկնածուների վերջնական ցանկը՝ բաղկացած 101 անձից, որոնց տվյալները մուտքագրվել են քվեարկության ընտրացուցակ:

Պաշտոնապես գրանցված Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման պատգամավորի թեկնածուների ցանկը հրապարակվել է 2018 թ. օգոստոսի 31-ին ընտրությունների պաշտոնական կայքում՝ www.elections-western-armenia.info:

2018 թ. սեպտեմբերի 1-ից մինչեւ 2018 թ. սեպտեմբերի 5-ը ներառյալ, գրանցվել է, մասնակցել եւ քվեարկել է **51.505 ընտրող 47 երկրից,** փաստորեն ներկայացված աշխարհի գրեթե բոլոր հայաբնակ տարածքներից, որոնք, ինչպես եւ Արեւմտյան Հայաստանի քաղաքացիները, ստացել են իրավունք մասնակցելու Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման պատգամավորի թեկնածուների ընտրություններին:
Նրանք ընտրողներ են՝ Հայաստանի Հանրապետությունից, Արցախից, Արեւմտյան Հայաստանից, Ռուսաստանից, Ֆրանսիայից, Աբխազիայից, Ղրիմից, Ջավախքից, Վրաստանից, Ուկրաինայից, Ամերիկայի Միացյալ Նահանգներից, Կանադայից, Արգենտինայից, Ուրուգվայից, Բրազիլիայից, Մեքսիկայից, Բոլիվիայից, Ավստրալիայից, Գերմանիայից, Հունաստանից, Կիպրոսից, Չեխիայից, Ավստրիայից, Դանիայից, Հոլանդիայից, Սերբիայից, Հունգարիայից, Լեհաստանից, Բուլղարիայից, Իսպանիայից, Շվեդիայից, Շվեյցարիայից, Լատվիայից, Լիտվայից, Մոլդովայից, Բելառուսից, Իրանից, Սիրիայից, Լիբանանից, Իրաքից, Հորդանանից, Քուվեյթից, Իսրայելից, Եգիպտոսից, Ղազախստանից, Ուզբեկստանից, Թուրքիայի Հանրապետությունից:

Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման պատգամավորների ընտրություններին մասնակցած եւ քվեարկած 51.505 ընտրողներից՝
- կողմ՝ քվեարկել է 51.116 ընտրող, ինչը կազմում է 99,245 % ընտրությունների մասնակիցների ընդհանուր թվից,
- դեմ՝ քվեարկել է 37 ընտրող, ինչը կազմում է 0,072 % ընտրությունների մասնակիցների ընդհանուր թվից,

- անվավեր՝ ճանաչվել է 352 քվե, ինչը կազմում է 0,683 % ընտրությունների քվեաթերթիկների ընդհանուր թվից:

Ընտրությունների արդյունքով ընտրվել է Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման **101 պատգամավոր:**

Պատգամավոր են ընտրվել 11 երկրների 32 քաղաքներից:
Երկրներն են՝ Հայաստանի Հանրապետություն, Ռուսաստան, Աբխազիա, Ֆրանսիա, ԱՄՆ, Լիբանան, Սիրիա, Իսրայել, Կանադա, Հոլանդիա, Շվեդիա:
Քաղաքներն են՝ Երեւան, Էջմիածին, Արմավիր, Թալին, Դվին, Սպիտակ, Ապարան, Մոսկվա, Սանկտ Պետերբուրգ, Կրասնոդար, Դոնի Ռոստով, Սոչի, Նովորոսիյսկ, Օդինցովո, Տուլա, Վոլգոգրադ, Գագրա, Սուխում, Ախալքալակ, Փարիզ, Նիս, Կրետեյլ, Շուազի լե Ռուա, Օթմարսում, Վեստերոս, Լոս Անջելես, Բեյրութ, Երուսաղեմ եւ այլ:

Ընտրված պատգամավորներն արմատներով ներկայացնում են Արեւմտյան Հայաստանի 27 տարածքներ եւ մարզեր այդ թվում՝ Բիթլիս, Սասուն, Մուշ, Վան, Տիգրանակերտ, Խարբերդ, Համշեն, Տրապիզոն, Օրդու, Սեբաստիա, Կարին (Էրզրում), Կարս, Արդահան, Անի, Իգդիր, Խարբերդ, Կիլիկիա, Սիս, Ադանա, Ուրֆա, Մալաթիա, Խնուս, Դերսիմ, Տարոն, Ջավախք եւ այլ:

Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) պատգամավորների տարիքային կազմը հետեւյալն է՝
70 տարեկանից բարձր - 7 պատգամավոր,
60-ից մինչեւ 70 տարեկան - 26 պատգամավոր,
50-ից մինչեւ 60 տարեկան - 29 պատգամավոր,
40-ից մինչեւ 50 տարեկան - 20 պատգամավոր,
30-ից մինչեւ 40 տարեկան - 14 պատգամավոր,
30-ից փոքր - 5 պատգամավոր:
Ամենատարեց պատգամավորը 80 տարեկան է, ամենաերիտասարդ պատգամավորը 25:

Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման 101 պատգամավորներից 48-ը վերընտրվել են Խորհրդարանի 1-ին գումարման կազմից, իսկ 53-ը ընտրվել են առաջին անգամ:

Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) կազմում պատգամավոր է ընտրվել 19 կին, որը կազմում է ընդհանուր թվի 19 %-ը:

Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման պատգամավոր է ընտրվել բնիկ ժողովուրդների եւ ազգային փոքրամասնությունների 5 ներկայացուցիչ. ասորի, հույն:

Հատկանշական է, որ առաջինը քվեարկեց ընտրող Հայաստանի Հանրապետությունից՝ արմատներով Կիլիկիայից, վերջինը Ռուսաստանի Դաշնությունից՝ արմատներով Համշենից:

Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման պատգամավորների ընտրությունների ընթացքում խախտումներ չեն հայտնաբերվել:

Քվեարկության անցկացման եւ ընտրությունների արդյունքների վերաբերյալ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հասցեով բողոքներ չեն ստացվել:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը որոշում է՝
1. Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման պատգամավորների ընտրությունները համարել կայացած:
2. Հաստատել Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման 101 պատգամավորների ընտրությունը: (Ցուցակը կցվում է)
3. Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) հաստատմանը ներկայացնել 101 պատգամավորների լիազորությունները:

Որոշումն ընդունված է միաձայն:

Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) ընտրությունների անցկացման Կենտրոնական Ընտրական Հանձնաժողով

ՀԱՍՏԱՏՎԵՑԻՆ

Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման պատգամավորների լիազորությունները

Երեւանում, «Փարիզ» հյուրանոցի նիստերի դահլիճում, 2018 թ. սեպտեմբերի 27-ից 28-ը, կայացավ Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման 1-ին նստաշրջանը:

Սեպտեմբերի 26-ին տեղի ունեցավ նախապատրաստական նիստ, որտեղ պատգամավորները քննարկեցին Խորհրդարանի 2-րդ գումարման 1-ին նստաշրջանի օրակարգի նախագծի, Խորհրդարանի նախագահի, տեղակալների եւ քարտուղարների, Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախագահի, Մշտական հանձնաժողովների ցանկի, դրանց պատասխանատուների թեկնածուների վերաբերյալ առաջարկներն ու հարցերը:

Սեպտեմբերի 27-ին տեղի ունեցավ նստաշրջանի բացումը:
Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման ընտրված 101 պատգամավորներից նստաշրջանում գրանցվել էին 94 պատգամավոր, 41-ը դահլիճում եւ 53-ը ինտերնետ կապով, որը կազմում է 94 տոկոս: Քվորումն ապահովված էր:

Ողջույնի խոսքով հանդես եկավ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան) նախագահ Ռադիկ Խամոյանը:
Նստաշրջանն ընտրեց հաշվիչ հանձնաժողով, հաստատեց նստաշրջանի օրակարգը: Ըստ կանոնակարգի, մինչեւ Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) նախագահի ընտրությունը, նիստը վարեց ամենատարեց պատգամավոր Ստեփան Սահակյանը:

Պատգամավորները մեկ րոպե լռությամբ հարգեցին Հայոց Ցեղասպանության Սրբոց Նահատակաց հիշատակը, ցեղասպանության, որ տեղի ունեցավ Արեւմտյան Հայաստանում, Հայկական Կիլիկիայում, Օսմանյան Կայսրությունում եւ Արեւելյան Հայաստանում՝ 1894-1923 թթ. ընթացքում եւ շարունակվում է մինչեւ այսօր, ինչպես նաեւ բոլոր ժամանակների Հայ ազատարար զինվորի հիշատակը:

Պատգամավորները լսեցին Կենտրոնական ընտրական հանձնաժողովի Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման պատգավորների ընտրության արդյունքների վերաբերյալ զեկույցը: Նստաշրջանը հաստատեց Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումը Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման պատգավորների ընտրության արդյունքների վերաբերյալ, որից հետո հաստատեց Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման պատգամավորների լիազորությունները:

Նստաշրջանը Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) նախագահ ընտրեց Արմեն Տեր-Սարգսյանին, նախագահի տեղակալներ՝ Հայկ Հարությունյանին, Տիգրան Բաբայանին, Սուրեն Քերսելյանին, Մուշեղ Հովսեփյանին:
Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) քարտուղարներ ընտրվեցին Դիանա Գրիգորյանը, Բիատրիսա Նազարյանը, Վալենտինա Բարաշյանը:

Ընդարձակ զեկույցով հանդես եկավ Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) նախագահ Արմեն Տեր-Սարգսյանը, որտեղ մանրամասն ներկայացրեց Խորհրդարանի 1-ին գումարման ընտրություններից հետո՝ 2014 թ. հունվարից մինչեւ 2018 թ. սեպտեմբեր տեղի ունեցած Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 1-ին գումարման 7 նստաշրջանների աշխատանքները, Խորհրդարանի ընդունած որոշումները, միջազգային առավել կարեւոր պայմանագրերը, կոնվենցիաներն ու հռչակագրերը ճանաչելու, վավերացնելու եւ դրանց միանալու մասին Խորհրդարանի ընդունած օրենքները, վերջին մեկ տարվա ընթացքում Խորհրդարանի կատարած աշխատանքները:
Խորհրդարանի նախագահը հիշեցրեց, որ Արեւմտյան Հայաստանի Հանրապետությունը (Հայաստան) որոշում էր կայացրել դիմել ՄԱԿ-ին՝ անդամակցության, ինչպես նաեւ ԱՄՆ 28–րդ նախագահ Վուդրո Վիլսոնի 1920 թ. նոյեմբերի 22–ին կայացրած Իրավարար վճիռը կյանքի կոչելու, իրականացնելու Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան պետության) հաստատումը Իրավարար վճռով սահմանազատված տարածքի վրա: Համապատասխան դիմումնագրերը 2018 թ. մայիս ամսին ուղարկվել են ՄԱԿ եւ այդ ուղղությամբ աշխատանքները շարունակվելու են:
Զեկույցի եզրափակիչ մասում Խորհրդարանի նախագահը նորընտիր

պատգամավորներին մաղթեց արդյունավետ ու նպատակասլաց գործունեություն:

Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) պատգամավորների վկայականների (մանդատների) հանձնման արարողությունից հետո նստաշրջանը հաստատեց Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) Մշտական հանձնաժողովների ցանկը, ընտրեց Մշտական հանձնաժողովների նախագահներ, հաստատեց Մշտական հանձնաժողովների աշխատանքային ծրագրերը:

Սեպտեմբերի 28-ի երրորդ նիստում նստաշրջանը Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախագահ ընտրեց Ռադիկ Խամոյանին:
Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախագահ Ռադիկ Խամոյանը հանդես եկավ քաղաքական ելույթով, որտեղ կարեւորեց Արեւմտյան Հայաստանի Հանրապետության պետական կառույցներում օրենքի ու օրինականության գերակայությունը պահպանելու ու ամրապնդելու, միջազգային հարթակներում եւ միջպետական հարաբերություններում հայության իրավունքների պաշտպանությունը իրավաչափության ամուր հիմքերից հետապնդելու եւ իրականացնելու, Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ընդունման գործընթացում ընդունված ընթացակարգերով ու սկզբունքներով առաջնորդվելու, Մերձավոր Արեւելքում, տարածաշրջանում եւ ՀՀ-ում առկա իրավիճակը հայության ազգային-պետական առաջնահերթ շահերի ու անվտանգության տեսակետից վերլուծելու եւ արժեւորելու հարցերն ու խնդիրները:

Այնուհետեւ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախագահ Ռադիկ Խամոյանի առաջարկությամբ եւ համաձայն «Արեւմտյան Հայաստանի պետական կառուցվածքի, Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) պատգամավորների կարգավիճակի եւ Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) կանոնակարգի մասին» Օրենքի 44-րդ հոդվածի, նստաշրջանը վարչապետի պաշտոնում հաստատեց Տիգրան Փաշաբեզյանին:
Արեւմտյան Հայաստանի Հանրապետության վարչապետ Տիգրան Փաշաբեզյանը հանդես եկավ զեկույցով, որտեղ խոսեց Արեւմտյան Հայաստանի հայերի իրավունքների պաշտպանության իրավական–քաղաքական միասնական փաթեթի, որն այս պահին արդեն թարգմանված է 6 լեզուներով՝ հայերեն (նաեւ արեւմտահայերեն), ռուսերեն, անգլերեն, թուրքերեն եւ ֆրանսերեն, ինչպես նաեւ Արեւմտյան Հայաստանի հայերի իրավունքների պաշտպանության հայեցակարգի ու ռազմավարության փաստաթղթի մասին, եւ Արեւմտյան Հայաստանի հայերի իրավունքների պաշտպանության գործընթացում ու ամենօրյա աշխատանքներում այդ փաստաթղթերից մշտապես օգտվելու կարեւորության մասին:
Վարչապետը նշեց, որ Արեւմտյան Հայաստանի հայերի իրավունքների պաշտպանության հարցերով ՄԱԿ-ին ուղղված դիմումնագրերի մասին, որից թվով երրորդը՝ բռնազավթված տարածքների վերաբերյալ, այժմ ներկայացվում է նստաշրջանի ընդունմանը:

Նստաշրջանի ընթացքում, դահլիճում եւ համացանցով, ծրագրային ելույթներով հանդես եկան 30-ից ավելի պատգամավորներ, Մշտական հանձնաժողովների նախագահներ,

պաշտոնյաներ, որոնց ելույթներում հնչած առաջարկներն ու ծրագրերը ընդունվեցին նստաշրջանի կողմից:

Տեղի ունեցավ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության մի խումբ քաղաքացիների ինքնության եւ քաղաքացիության քարտերի (անձնագրերի) հանձնման արարողություն:

Նստաշրջանը որոշեց ընդունել Արեւմտյան Հայաստանի Հանրապետության կողմից ՄԱԿ-ին ուղղված թվով երրորդ դիմումնագիրը բռնազավթված տարածքների վերաբերյալ, որը ներկայացվել է Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից եւ նախապես քննարկվել ու հաստատվել Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) Միջազգային հարաբերությունների եւ միջխորհրդարանական կապերի, Իրավական, օրենսդրական եւ պետական հարցերի, Պաշտպանության, ներքին գործերի եւ ազգային անվտանգության հարցերի, Հայրենակցական, համայնքային եւ հայրենասիրական հասարակական միությունների հանձնաժողովներում:

Նստաշրջանը հայտարարություններ ընդունեց Մերձավոր Արեւելքում, տարածաշրջանում եւ ՀՀ-ում առկա իրավիճակի վերաբերյալ, ՄԱԿ-ի Մարդու Իրավունքների Համընդհանուր Հռչակագրի (10 դեկտեմբեր 1948 թ.) 70-ամյակի կապակցությամբ, «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու եւ դրա համար պատժի մասին» Կոնվենցիայի (9 դեկտեմբեր 1948 թ.) 70-ամյակի կապակցությամբ:

Նստաշրջանի օրերին պատգամավորներն այցելեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, եղան Մայր Աթոռի թանգարան-ցուցասրահում, ինչպես նաեւ այցելեցին Ծիծեռնակաբերդ՝ Հայոց Ցեղասպանության Սրբոց Նահատակաց Հուշահամալիր եւ Եռաբլուրի Զինվորական Պանթեոն:
Սեպտեմբերի 27-ին պատգամավորները հանդիսավոր կերպով նշեցին Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման, 1-ին նստաշրջանի բացման եւ Հայաստանի Հանրապետության անկախության վերականգման 27-րդ տարեդարձը:

Սեպտեմբերի 29-ին եւ 30-ին աշխատանքները շարունակվեցին Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) Մշտական հանձնաժողովներում:

Այդպիսով Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման 1-ին նստաշրջանի աշխատանքներն ավարտվեցին:

Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) Մամլո Ծառայություն
18.10.2018 թ.

ՔԱՂՎԱԾՔ № 1
Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի)

2-րդ գումարման 1-ին նստաշրջանի 1-ին նիստի արձանագրությունից

Առաջին նիստ
27 սեպտեմբեր, 2018 թ.,

ժամը 10:00-ից մինչեւ 11:00

Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման ընտրված 101 պատգամավորներից գրանցվել են 94 պատգամավոր, 41-ը դահլիճում եւ 53-ը ինտերնետ կապով, որը կազմում է 94 տոկոս: (Կից տրվում է պատգամավորների ցուցակը)
Քվորումն ապահովված է:

ժամը 11:00-ից մինչեւ 13:00

1. Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախագահ Ռադիկ Խամոյանի ողջույնի խոսքը:

2. **Լսեցին՝** Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման, 1-ին նստաշրջանի հաշվիչ հանձնաժողով ընտրելու մասին:
Որոշեցին՝ Հաստատել Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման, 1-ին նստաշրջանի հաշվիչ հանձնաժողովի հետեւյալ կազմը՝ նախագահ Տիգրան Հարությունյան, անդամներ՝ Վահան Բաբախանյան, Սաիդա Օհանյան:
Քվեարկության արդյունքները.
Կողմ - 94, դեմ - 0, ձեռնպահ – 0
Որոշումն ընդունված է միաձայն:

3. **Լսեցին՝** Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման 1-ին նստաշրջանի օրակարգի մասին:
Որոշեցին՝ Հաստատել Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման 1-ին նստաշրջանի օրակարգը:
Քվեարկության արդյունքները.
Կողմ - 94, դեմ - 0, ձեռնպահ - 0
Որոշումն ընդունված է միաձայն:

4. **Լսեցին՝** Ըստ կանոնակարգի, մինչեւ Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) նախագահի ընտրությունը, նիստը վարող ամենատարեց պատգամավորի թեկնածության մասին:
Որոշեցին՝ Որոշեցին՝ ըստ կանոնակարգի, մինչեւ Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) նախագահի ընտրությունը, նիստը վարի ամենատարեց պատգամավոր Ստեփան Սահակյանը:
Քվեարկության արդյունքները.
Կողմ - 94, դեմ - 0, ձեռնպահ - 0
Որոշումն ընդունված է միաձայն:

5. Մեկ րոպե լռությամբ հարգեցին Հայոց Ցեղասպանության Սրբոց Նահատակաց հիշատակը, ցեղասպանության, որ տեղի ունեցավ՝ Արեւմտյան Հայաստանում, Հայկական Կիլիկիայում, Օսմանյան Կայսրությունում եւ Արեւելյան Հայաստանում՝ 1894-1923 թթ. ընթացքում եւ շարունակվում է մինչեւ այսօր, ինչպես նաեւ բոլոր ժամանակների Հայ ազատարար զինվորի հիշատակը:

6. **Լսեցին՝** Կենտրոնական ընտրական հանձնաժողովի զեկույցը Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման պատգավորների ընտրության արդյունքների վերաբերյալ:
Որոշեցին՝ Հաստատել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի զեկույցը Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման պատգավորների ընտրության արդյունքների վերաբերյալ:
Քվեարկության արդյունքները.
Կողմ - 94, դեմ - 0, ձեռնպահ - 0
Որոշումն ընդունված է միաձայն:

7. **Լսեցին՝** Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման պատգամավորների լիազորությունների հաստատման մասին:
Որոշեցին՝ Հաստատել Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման պատգամավորների լիազորությունները:
Քվեարկության արդյունքները.
Կողմ - 94, դեմ - 0, ձեռնպահ - 0
Որոշումն ընդունված է միաձայն:

8. **Լսեցին՝** Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) նախագահի թեկնածուի առաջադրման եւ ընտրության մասին:
Որոշեցին՝ Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) նախագահ ընտրել Արմեն Տեր-Սարգսյանին:
Քվեարկության արդյունքները.
Կողմ - 93, դեմ - 0, ձեռնպահ - 1
Որոշումն ընդունված է:

9. **Լսեցին՝** Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) նախագահի տեղակալների ընտրության մասին:
Որոշեցին՝ Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) նախագահի տեղակալներ ընտրել Հայկ Հարությունյանին, Տիգրան Բաբայանին, Սուրեն Քերսելյանին, Մուշեղ Հովսեփյանին:
Քվեարկության արդյունքները.
Կողմ - 90, դեմ - 0, ձեռնպահ - 4
Որոշումն ընդունված է:

10. **Լսեցին՝** Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) քարտուղարների ընտրության մասին:

Որոշեցին՝ Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) քարտուղարներ ընտրել Դիանա Գրիգորյանին, Բիատրիսա Նազարյանին, Վալենտինա Բարաշյանին:
Քվեարկության արդյունքները.
Կողմ - 91, դեմ - 0, ձեռնպահ - 3
Որոշումն ընդունված է:

11. **Լսեցին՝** Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) նախագահ Արմեն Տեր-Սարգսյանի զեկույցը:
Որոշեցին՝ Հաստատել Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) նախագահ Արմեն Տեր-Սարգսյանի զեկույցը:
Քվեարկության արդյունքները.
Կողմ - 94, դեմ - 0, ձեռնպահ - 0
Որոշումն ընդունված է միաձայն:

Առաջին նիստն ավարտված է:

Արմեն Տեր-Սարգսյան
Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) Նախագահ

Դիանա Գրիգորյան
Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) Քարտուղար

ՔԱՂՎԱԾՔ № 2

Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի)
2-րդ գումարման 1-ին նստաշրջանի 2-րդ նիստի արձանագրությունից

Երկրորդ նիստ
27 սեպտեմբեր, 2018 թ.,

ժամը 14:00-ից մինչեւ 16:00

1. Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) պատգամավորների վկայականների (մանդատների) հանձնման արարողություն:

2. **Լսեցին՝** Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) Մշտական հանձնաժողովների մասին:
Որոշեցին՝ Հաստատել Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) Մշտական հանձնաժողովների հետեւյալ ցանկը.
1. Իրավական, օրենսդրական եւ պետական հարցերի մշտական հանձնաժողով:
2. Պաշտպանության, ներքին գործերի եւ ազգային անվտանգության հարցերի մշտական հանձնաժողով:

3. Միջազգային հարաբերությունների եւ միջխորհրդարանական կապերի մշտական հանձնաժողով:
4. Հայրենակցական, համայնքային եւ հայրենասիրական հասարակական միությունների մշտական հանձնաժողով:
5. Ֆինանսական եւ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով:
6. Կրթության եւ գիտության հարցերի մշտական հանձնաժողով:
7. Մշակույթի հարցերի մշտական հանձնաժողով:
8. Ընտանիքի, կանանց եւ առողջապահության հարցերի մշտական հանձնաժողով:
9. Երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողով:
10. Լրատվության հարցերի մշտական հանձնաժողով:
11. Հոգեւոր ոլորտի եւ կրոնի հարցերի մշտական հանձնաժողով:
12. Բնիկ ժողովուրդների եւ ազգային փոքրամասնությունների հարցերի մշտական հանձնաժողով:
13. Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման եւ հատուցման հարցերի մշտական հանձնաժողով:
14. Վետերանների եւ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով:
15. Ներքին կանոնակարգի եւ աշխատակարգի մշտական հանձնաժողով:

Քվեարկության արդյունքները.

Կողմ - 94, դեմ - 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունված է միաձայն:

3. Լսեցին՝ Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) Մշտական հանձնաժողովների նախագահների ընտրության մասին:

Որոշեցին՝ Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) Մշտական հանձնաժողովների նախագահներ ընտրել հետեւյալ պատգամավորներին.

1. Իրավական, օրենսդրական եւ պետական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ չի ընտրվել:
2. Պաշտպանության, ներքին գործերի եւ ազգային անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Նարեկ Աբրահամեան:
3. Միջազգային հարաբերությունների եւ միջխորհրդարանական կապերի մշտական հանձնաժողովի նախագահ Մացակ Փոլատեան:
4. Հայրենակցական, համայնքային եւ հայրենասիրական հասարակական միությունների մշտական հանձնաժողովի նախագահ Սաիդա Օհանյան:
5. Ֆինանսական եւ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Արտաշես Միքայելյան:
6. Կրթության եւ գիտության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Լեւոն Բեկլարյան:
7. Մշակույթի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Հարություն Փանոսյան:
8. Ընտանիքի, կանանց եւ առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Շուշաննա Սիմոնյան:
9. Երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վաղարշակ Սագերտյանց:

10. Լրատվության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյան:
11. Հոգեւոր ոլորտի եւ կրոնի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Արմենակ Հարմանտայեան:
12. Բնիկ ժողովուրդների եւ ազգային փոքրամասնությունների հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Դավիթ Խինոյեվ:
13. Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման եւ հատուցման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վահան Բաբախանյան:
14. Վետերանների եւ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ չի ընտրվել:
15. Ներքին կանոնակարգի եւ աշխատակարգի մշտական հանձնաժողովի նախագահ Կոնստանդին Տեր-Հովհաննեսով:

Քվեարկության արդյունքները.

Կողմ - 94, դեմ - 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունված է միաձայն:

4. **Լսեցին՝** Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) Մշտական հանձնաժողովների անդամների մասին:

Որոշեցին՝ Հաստատել Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) Մշտական հանձնաժողովների անդամներին: (Անդամների ցուցակը կցվում է)

Քվեարկության արդյունքները.

Կողմ - 94, դեմ - 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունված է միաձայն:

5. **Լսեցին՝** Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) Մշտական հանձնաժողովների նախագահների ելույթներ:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) Մշտական հանձնաժողովների նախագահների ելույթները:

Քվեարկության արդյունքները.

Կողմ - 94, դեմ - 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունված է միաձայն:

6. **Լսեցին՝** Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) Մշտական հանձնաժողովների աշխատանքային ծրագրերի մասին:

Որոշեցին՝ Հաստատել Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) Մշտական հանձնաժողովների աշխատանքային ծրագրերը:

Քվեարկության արդյունքները.

Կողմ - 94, դեմ - 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունված է միաձայն:

7. **Լսեցին՝** Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) պատգամավորների ելույթներն ու քննարկումները:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) պատգամավորների ելույթներում ու քննարկումներում հնչած առաջարկները:
Քվեարկության արդյունքները.
Կողմ - 94, դեմ - 0, ձեռնպահ - 0
Որոշումն ընդունված է միաձայն:

ժամը 16:30-ից մինչեւ 22:00

Այցելեցին Ծիծեռնակաբերդ՝ Հայոց Ցեղասպանության Սրբոց Նահատակաց Հուշահամալիր եւ Եռաբլուրի Զինվորական Պանթեոն:

Սեպտեմբերի 27-ին պատգամաւորները հանդիսաւոր կերպով նշեցին Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման, 1-ին նստաշրջանի բացման եւ Հայաստանի Հանրապետության անկախության վերականգման 27-րդ տարեդարձը:

Արմեն Տեր-Սարգսյան
Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) Նախագահ

Դիանա Գրիգորյան
Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) Քարտուղար

ՔԱՂՎԱԾՔ № 3

Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի)
2-րդ գումարման 1-ին նստաշրջանի 3-րդ նիստի արձանագրությունից

28 սեպտեմբեր, 2018 թ.,
ժամը 10:00-ից մինչեւ 12:00

Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման պատգամավորներն այցելեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ ուխտագնացության ու աղոթքի, եղան Մայր Աթոռի թանգարան ցուցասրահում:

Երրորդ նիստ
ժամը 14:00-ից մինչեւ 16:00

Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման ընտրված 101 պատգամավորներից գրանցվել են 91 պատգամավոր, 37-ը դահլիճում եւ 54-ը ինտերնետ կապով, որը կազմում է 91 տոկոս: (Կից տրվում է պատգամավորների ցուցակը)

Քվորումն ապահովված է:

1. **Լսեցին՝** Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախագահի թեկնածության առաջադրման, քննարկման, ընտրության վերաբերյալ:
Որոշեցին՝ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախագահ ընտրել Ռադիկ Խամոյանին:
Քվեարկության արդյունքները.
Կողմ - 90, դեմ - 0, ձեռնպահ - 1
Որոշումն ընդունված է:

2. Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախագահ Ռադիկ Խամոյանի երդմնակալության արարողությունը:

3. **Լսեցին՝** Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախագահ Ռադիկ Խամոյանի քաղաքական ելույթը:
Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախագահ Ռադիկ Խամոյանի քաղաքական ելույթը:
Քվեարկության արդյունքները.
Կողմ - 91, դեմ - 0, ձեռնպահ - 0
Որոշումն ընդունված է միաձայն:

4. **Լսեցին՝** Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Կառավարության հրաժարականի մասին:
Որոշեցին՝ Ընդունել Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Կառավարության հրաժարականը:
Քվեարկության արդյունքները.
Կողմ - 91, դեմ - 0, ձեռնպահ - 0
Որոշումն ընդունված է միաձայն:

5. **Լսեցին՝** Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախագահի կողմից Արեւմտյան Հայաստանի Հանրապետության վարչապետի թեկնածության առաջադրման, քննարկման եւ հաստատման մասին:
Որոշեցին՝ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության վարչապետի պաշտոնում հաստատել Տիգրան Փաշաբեզյանին:
Քվեարկության արդյունքները.
Կողմ - 90, դեմ - 0, ձեռնպահ - 1
Որոշումն ընդունված է:

6. **Լսեցին՝** Արեւմտյան Հայաստանի Հանրապետության վարչապետ Տիգրան Փաշաբեզյանի զեկույցը:
7. **Որոշեցին՝** Հաստատել Արեւմտյան Հայաստանի Հանրապետության վարչապետ Տիգրան Փաշաբեզյանի զեկույցը:
Քվեարկության արդյունքները.
Կողմ – 91, դեմ - 0, ձեռնպահ - 0
Որոշումն ընդունված է միաձայն:

Արմեն Տեր-Սարգսյան
Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) Նախագահ

Դիանա Գրիգորյան
Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) Քարտուղար

ՔԱՂՎԱԾՔ № 4

Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի)
2-րդ գումարման 1-ին նստաշրջանի 4-րդ նիստի արձանագրությունից

Չորրորդ նիստ
28 սեպտեմբեր, 2018 թ.,

ժամը 16:00-ից մինչեւ 18:00

1. Արեւմտյան Հայաստանի Հանրապետության մի խումբ քաղաքացիների ինքնության եւ քաղաքացիության քարտերի (անձնագրերի) հանձնման արարողություն:

2. **Լսեցին՝** Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) պատգամավորների ելույթներն ու քննարկումները:
   Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) պատգամավորների ելույթներում ու քննարկումներում հնչած առաջարկները:
   Քվեարկության արդյունքները.
   Կողմ - 91, դեմ - 0, ձեռնպահ - 0
   Որոշումն ընդունված է միաձայն:

3. **Լսեցին՝** Արեւմտյան Հայաստանի Հանրապետության կողմից ՄԱԿ-ին ուղղված երրորդ դիմումնագրի մասին՝ բռնազավթված տարածքների վերաբերյալ: Դիմումնագիրը ներկայացված է Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից եւ նախապես քննարկվել ու հաստատվել է Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) հետեւյալ չորս՝ Միջազգային հարաբերությունների եւ միջխորհրդարանական կապերի, Իրավական, օրենսդրական եւ պետական հարցերի, Պաշտպանության, ներքին գործերի եւ ազգային անվտանգության հարցերի, Հայրենակցական, համայնքային եւ հայրենասիրական հասարակական միությունների հանձնաժողովներում:
4. **Որոշեցին՝** Ընդունել Արեւմտյան Հայաստանի Հանրապետության կողմից ՄԱԿ-ին ուղղված ուղղված երրորդ դիմումնագիրը՝ բռնազավթված տարածքների վերաբերյալ:
   Քվեարկության արդյունքները.

Կողմ - 91, դեմ - 0, ձեռնպահ - 0
Որոշումն ընդունված է միաձայն:

5. Լսեցին՝ Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) հայտարարության մասին Մերձավոր Արեւելքում, տարածաշրջանում եւ ՀՀ-ում առկա իրավիճակի վերաբերյալ:
Որոշեցին՝ Ընդունել Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) հայտարարությունը Մերձավոր Արեւելքում, տարածաշրջանում եւ ՀՀ-ում առկա իրավիճակի վերաբերյալ:
Քվեարկության արդյունքները.
Կողմ - 91, դեմ - 0, ձեռնպահ - 0
Որոշումն ընդունված է միաձայն:

6. Լսեցին՝ Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) հայտարարության մասին ՄԱԿ-ի Մարդու Իրավունքների Համընդհանուր Հռչակագրի (10 դեկտեմբեր 1948 թ.) 70-ամյակի կապակցությամբ:
Որոշեցին՝ Ընդունել Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) հայտարարությունը ՄԱԿ-ի Մարդու Իրավունքների Համընդհանուր Հռչակագրի (10 դեկտեմբեր 1948 թ.) 70-ամյակի կապակցությամբ:
Քվեարկության արդյունքները.
Կողմ - 91, դեմ - 0, ձեռնպահ - 0
Որոշումն ընդունված է միաձայն:

7. Լսեցին՝ Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) հայտարարության մասին «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու եւ դրա համար պատժի մասին» Կոնվենցիայի (9 դեկտեմբեր 1948 թ.) 70-ամյակի կապակցությամբ:
Որոշեցին՝ Ընդունել Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) հայտարարությունը «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու եւ դրա համար պատժի մասին» Կոնվենցիայի (9 դեկտեմբեր 1948 թ.) 70-ամյակի կապակցությամբ:
Քվեարկության արդյունքները.
Կողմ - 91, դեմ - 0, ձեռնպահ - 0
Որոշումն ընդունված է միաձայն:

8. Հայտարարվեց Արեւմտյան Հայաստանի Ազային ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման 1-ին նստաշրջանի ավարտը:

Արմեն Տեր-Սարգսյան
Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) Նախագահ

Դիանա Գրիգորյան
Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) Քարտուղար

ԳԼՈՒԽ V

ԱՐԵՒՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ (ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ) 1-ին գումարման 5-րդ նստաշրջանի որոշումներն ու նյութերը 11.06.2017 թ.

ՔԱՂՎԱԾՔ № 1

Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) առաջին գումարման հինգերորդ նստաշրջանի առաջին նիստի արձանագրությունից

11-ը հունիսի, 2017 թ., Երեւան

Առաջին նիստ
Նիստի սկիզբը ժամը 13:00-ին, ավարտը՝ 15:00-ին:

Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) պատգամավորների գրանցում (այսուհետ տեքստում՝ Արեւմտյան Հայաստանի Խորհրդարան):
Ընտրված 64 պատգամավորներից գրանցվել են 51 պատգամավոր, 7-ը դահլիճում եւ 44-ը ինտերնետ կապով, որը կազմում է 80 տոկոս:
Քվորումը ապահովված է:

1. **Լսեցին՝** Արեւմտյան Հայաստանի Խորհրդարանի 1-ին գումարման 5-րդ նստաշրջանի օրակարգի մասին:

Որոշեցին՝ հաստատել Արեւմտյան Հայաստանի Խորհրդարանի 1-ին գումարման 5-րդ նստաշրջանի օրակարգը:
Քվեարկության արդյունքները.
Կողմ – **46**, դեմ – **0**, ձեռնպահ – **5**:
Որոշումն ընդունված:

2. **Լսեցին՝** նստաշրջանի հաշվիչ հանձնաժողովի ընտրության մասին:

Որոշեցին՝ ընտրել նստաշրջանի հաշվիչ հանձնաժողով հետեւյալ կազմով՝ նախագահ՝ Տիգրան Հարությունյան, տեղակալներ՝ Աննա Խաչատրյան, Սաիդա Օհանյան:
Քվեարկության արդյունքները.
Կողմ – **48**, դեմ – **0**, ձեռնպահ – **3**,
Որոշումն ընդունված է:

3. **Լսեցին՝** Արեւմտյան Հայաստանի Հանրապետության պետական համակարգում ստեղծված իրավիճակի եւ դրանից դուրս գալու ուղիների մասին:

Ելույթ ունեցան՝ Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Նախագահ Արմեն Տեր-Սարգսյանը, Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Վարչապետ

Տիգրան Փաշաբեզյանը, Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) պատգամավորներ Էդուարդ Փոլատովը, Հայկ Հարությունյանը, Սաիդա Օհանյանը, Արտաշես Մելիքյանը, Ռադիկ Խամոյանը, Արմենակ Հարմանդայանը, Վաղարշակ Սեգերտյանցը, Դավիթ Խինոյեվը, Վալերա Մուրադյան, Արեւմտյան Հայաստանի Հանրապետության կրթություն նախարար Վրեժ Քոսայանը, Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Ներքին գործերի նախարար Մարտիրոս Շահբազյանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ՝
-Արեւմտյան Հայաստանի Հանրապետությունը Սահմանադրության բոլոր ընթացակարգերով անցած եւ ընդունված Սահմանադրություն դեռեւս չունի եւ նա առաջնորդվում է՝ Արեւմտյան Հայաստանի «Արեւմտյան Հայաստանի պետական կառուցվածքի, Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի պատգամավորների կարգավիճակի եւ Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի կանոնակարգի մասին» Օրենքով,

Հաշվի առնելով Արմենակ Աբրահամյանի անժխտելի ներդրումը Արցախյան ազատամարտում, վաստակը Արեւմտյան Հայաստանի հայերի իրավունքների պաշտպանության գործում, սկսած 2004 թ.-ից, որպես Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհրդի հիմնադիրներից եւ նախագահ, 2011 թ.-ից, որպես Արեւմտյան Հայաստանի պետական կառույցի հիմնադիրներից, 2014 թ.-ից, որպես Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախագահ, այնուհանդերձ նշենք, որ նախկին ձեռքբերումները չեն կարող արդարացնել ներկայիս նրա կողմից Արեւմտյան Հայաստանի պետական օրենքների խախտումները եւ իշխանության յուրացման փորձը:

Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Նախագահ Արմենակ Աբրահամյանը խախտել է վերոնշյալ օրենքի «Արեւմտյան Հայաստանի պետական կառուցվածքը» բաժնի հետեւյալ հոդվածների դրույթներն ու պահանջները.
Հոդված 36) Արեւմտյան Հայաստանի Հանրապետությունը նախագահա-խորհրդարանական հանրապետություն է:
Հոդված 37) Արեւմտյան Հայաստանի նախագահը՝ պետության գլուխն է՝ Արեւմտյան Հայաստանի բարձրագույն պաշտոնատար անձը, Սահմանադրության, մարդու իրավունքների ու ազատությունների երաշխավորը: Արեւմտյան Հայաստանի Սահմանադրության եւ օրենքների համաձայն՝ նա միջոցներ է ձեռք առնում Արեւմտյան Հայաստանի հայերի իրավունքների պաշտպանության, անկախության եւ տարածքային ամբողջականության պահպանման, պետական իշխանության մարմինների միջեւ գործառույթների ներդաշնակ համադրման եւ համագործակցության:
Հոդված 44) Արեւմտյան Հայաստանի նախագահը՝
-Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի համաձայնությամբ նշանակում ու ազատում է Արեւմտյան Հայաստանի կառավարության վարչապետին,
-Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի համաձայնությամբ որոշում է կայացնում Արեւմտյան Հայաստանի կառավարության հրաժարականի մասին,
-Արեւմտյան Հայաստանի վարչապետի առաջարկությամբ նշանակում ու ազատում է պաշտոնից Արեւմտյան Հայաստանի վարչապետի օգնականներին եւ նախարարներին,

Հոդված 52) Արեւմտյան Հայաստանի կառավարության վարչապետը Արեւմտյան Հայաստանի նախագահին առաջարկում է Արեւմտյան Հայաստանի կառավարության փոխվարչապետի պաշտոնի թեկնածուներին եւ Արեւմտյան Հայաստանի նախարարներին՝ նախապես տեղյակ պահելով Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովին եւ հաշվի առնելով Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի պատգամավորների կարծիքները:
Որտեղ նշված է նաեւ,
Հոդված 14) Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի պատգամավորի լիազորությունների դադարեցումը կարող է տեղի ունենալ հետեւյալ դեպքերում.

- այն դեպքում, երբ Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի պատգամավորը իր գործունեությամբ կամ անգործությամբ վնաս է հասցնում Արեւմտյան Հայաստանին, Արեւմտյան Հայաստանի պետական կառույցներին: Սույն հոդվածի կետը վերաբերում է նաեւ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության բոլոր պաշտոնյաներին:

Հակընդդեմ վերը մեջբերված հոդվածների դրույթների ու պահանջների՝
-Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Նախագահ Արմենակ Աբրահամյանը շուրջ երկու տարի է ինչ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության ողջ պետական համակարգին պարտադրում է 2016-ի մայիսի 9-ին իր միանձյա ստորագրությամբ, իբրեւ թե իր կողմից հաստատում ստացած Սահմանադրության իր տարբերակը,
-որն ի տարբերություն վերը նշված գործող օրենքի դրույթի ու պահանջի, ոչ թե նախագահա-խորհրդարանական, այլ նախագահական կոշտ ու անզիջում կառավարման համակարգի օրինակ է:

Արձանագրենք նաեւ, որ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Նախագահ Արմենակ Աբրահամյանի պարտադրած Սահմանադրության օրինակը ոչ մի կերպ չի համապատասխանում Արեւմտյան Հայաստանի Հանրապետության պետական կառուցվածքի իրավական-քաղաքական տրամաբանությունը եւ չի կարող ընդունվել, որպես հիմք կամ օրինակ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության համար, որովհետեւ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգը նախագա-խորհրդարանական է:

Դրանով իսկ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Նախագահ Արմենակ Աբրահամյանը հայտ է ներկայացնում Արեւմտյան Հայաստանի Հանրապետության պետական իշխանության յուրացման ու բռնազավթման, որոնք Սահմանադրության իր պարտադրած օրինակում հետեւյալ ձեւերով են արտահայտված.
Հոդված 162
4-րդ կետ. Մինչեւ Ազգային ժողովի յաջորդ գումարման առաջին նստաշրջանի բացման օրը՝ Հանրապետութեան Նախագահը կրնայ.

- Ազգային ժողովի նախագահին եւ վարչապետին հետ խորհրդակցելէ ետք՝ արձակել Ազգային ժողովը, եւ նշանակել արտահերթ ընտրութիւն,
- ազատել վարչապետին:

5-րդ կետ. Մինչեւ Ազգային ժողովի յաջորդ գումարման առաջին նստաշրջանի բացման օրը՝ կառավարութեան նիստերը կը հրաւիրէ եւ կը վարէ Հանրապետութեան

Նախագահը, կամ անոր յանձնարարութեամբ՝ վարչապետը: Կառավարութեան որոշումները կը ստորագրէ վարչապետը, կը վաւերացնէ՝ Հանրապետութեան Նախագահը:

Յօդուած 107.

Ազգային ժողովը Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահի առաջարկութեամբ կը վաւերացնէ, կը կասեցնէ կամ չեղեալ կը յայտարարէ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան միջազգային պայմանագիրները, բացառութեամբ անոնց, որոնք ունին քաղաքական կամ ռազմական բնոյթ կամ կը նախատեսեն պետական սահմանի փոփոխութիւն եւ որոնք ենթակայ են Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահի:

Մնում էր, որ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Նախագահ Արմենակ Աբրահամյանը հիշեր նաեւ, իր իսկ ձեռքով ստորագրված եւ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության պետական համակարգին պարտադրված Սահմանադրության օրինակի 3-րդ հոդվածի 3-րդ կետում պատահաբար պահպանված ու նշված է, որ՝ **«Իշխանության յուրացումը որեւէ կազմակերպության կամ անհատի կողմից հանցագործություն է»**:

Այսօր արդեն Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Նախագահ Արմենակ Աբրահամյանի կողմից Արեւմտյան Հայաստանի Հանրապետության պետական իշխանության յուրացման ու բռնազավթման առաջին քայլերն արված են, դրանք են՝ **Նախագահի հրամանագիր, Թիւ 42 – 2017.05.31 (ԱՀՀ վարչապետի գործառույթները դադարեցնելու մասին) եւ Նախագահի հրամանագիր, Թիւ 43 – 2017.06.05 (ԱՀՀ վարչապետի նշանակման մասին),** որպես Արեւմտյան Հայաստանի Հանրապետության վարչապետի ու կառավարության պաշտոնանկության հրամանագիր, հիմնված ապօրինի ու անօրինական Սահմանադրության ապօրինի հոդվածի վրա:

Նախագահի սույն հրամանագրերը՝ Թիւ 42 – 2017.05.31 եւ Թիւ 42 – 2017.05.31, համարում ենք ապօրինի եւ անօրինական՝ ընդունման պահից:

Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 5-րդ նստաշրջանը մանրամասն քննելով ու համադրելով ներկայացված փաստերը՝

Որոշեց՝

1. Դատապարտել Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Նախագահ Արմենակ Աբրահամյանի կողմից գործող օրենսդրության գիտակցաբար ու կոպիտ խախտումները, որոնք կատարվել են, մասնավորապես, Արեւմտյան Հայաստանի «Արեւմտյան Հայաստանի պետական կառուցվածքի, Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի պատգամավորների կարգավիճակի եւ Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի կանոնակարգի մասին» Օրենքի 36-րդ, 37-րդ, 44-րդ հոդվածները:
2. Դատապարտել Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Նախագահ Արմենակ Աբրահամյանի կողմից Սահմանադրության միանձնյա օրինակի ընդունման եւ դրա պարտադրման գործողությունները, ուղղված Արեւմտյան Հայաստանի Հանրապետության իշխանության օրինական մարմիններին:

3. Դատապարտել Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Նախագահ Արմենակ Աբրահամյանի կողմից Սահմանադրության միանձնյա իր օրինակի ընդունման, հաստատման եւ տարածման գործողությունները:
4. Դատապարտել Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Նախագահ Արմենակ Աբրահամյանի կողմից պետական իշխանությունը յուրացնելու փորձը:
5. Անվստահություն հայտնել Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Նախագահ Արմենակ Աբրահամյանին Արեւմտյան Հայաստանի պետական համակարգի օրենքները խախտելու համար:
6. Ելնելով վերոնշյալից՝ 2017 թ. հունիսի 11-ից դադարեցնել Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Նախագահ Արմենակ Աբրահամյանի լիազորությունները, որպես Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Նախագահ:

Քվեարկության արդյունքները.
Կողմ –**44**, դեմ – **0**, ձեռնպահ – **7**:
Որոշումն ընդունված է:

Ընդմիջում՝ 15:00-15:30:

Երկրորդ նիստ
Նիստի սկիզբը ժամը 15:30-ին, ավարտը՝ 18:00-ին:

Հաշվի առնելով, որ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Նախագահի լիազորությունները դադարեցված է եւ նախագահի պաշտոնը այս պահին թափուր է, նստաշրջանում ընտրել Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նոր նախագահ:
Համաձայն Արեւմտյան Հայաստանի «Արեւմտյան Հայաստանի պետական կառուցվածքի, Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի պատգամավորների կարգավիճակի եւ Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի կանոնակարգի մասին» Օրենքի՝ Հոդված 42) Արեւմտյան Հայաստանի տարածքում, որը ժամանակավորապես բռնազավթված է Թուրքիայի Հանրապետության կողմից, ուղղակի ընտրություններ անցկացնելու անհնարինության հետ կապված՝ այս փուլում ընտրված Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովը (Խորհրդարանը) ինքն է ընտրում պետության գլուխ՝ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախագահ, Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) պատգամավորների կազմից:

4. **Լսեցին՝** Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Նախագահի ընտրության մասին: Որպես թեկնածու առաջադրվեց Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) պատգամավոր Ռադիկ Խամոյանը:

Որոշեցին՝ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Նախագահ՝ պետության գլուխ, ընտրել Ռադիկ Խամոյանին:
Քվեարկության արդյունքները.
Կողմ – **44**, դեմ – **0**, ձեռնպահ – **7**
Որոշումն ընդունված է:

***

Համաձայն Արեւմտյան Հայաստանի «Արեւմտյան Հայաստանի պետական կառուցվածքի, Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի պատգամավորների կարգավիճակի եւ Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի կանոնակարգի մասին» Օրենքի՝ Հոդված 43) Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նորընտիր նախագահ Ռադիկ Խամոյանը ստանձնելով պաշտոնը, պատգամավորների ներկայությամբ, նախագահի երդումը տվեց:

***

Ըստ Արեւմտյան Հայաստանի «Արեւմտյան Հայաստանի պետական կառուցվածքի, Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի պատգամավորների կարգավիճակի եւ Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի կանոնակարգի մասին» Օրենքի՝ Հոդված 44) Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նորընտիր նախագահ Ռադիկ Խամոյանը ընդունում է Արեւմտյան Հայաստանի Հանրապետության վարչապետ Տիգրան Փաշաբեզյանի եւ նրա ղեկավարած կառավարության հրաժարականը, որը գործել է 2014 թ. հունվարի 20-ից մինչ օրս:

5. **Լսեցին՝** Արեւմտյան Հայաստանի Հանրապետության վարչապետի ընտրության մասին:

Որոշեցին՝ համաձայն «Արեւմտյան Հայաստանի պետական կառուցվածքի, Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի պատգամավորների կարգավիճակի եւ Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի կանոնակարգի մասին» օրենքի՝ հոդված 44), Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նորընտիր նախագահ Ռադիկ Խամոյանի առաջարկությամբ, Արեւմտյան Հայաստանի Հանրապետության վարչապետի պաշտոնում հաստատել Տիգրան Փաշաբեզյանին:

Քվեարկության արդյունքները.

Կողմ – **48**, դեմ – **0**, ձեռնպահ – **3**

Որոշումն ընդունված է:

6. **Լսեցին՝** Արեւմտյան Հայաստանի Հանրապետության կառավարության կազմելու մասին:

Որոշեցին՝ համաձայն «Արեւմտյան Հայաստանի պետական կառուցվածքի, Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի պատգամավորների կարգավիճակի եւ Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի կանոնակարգի մասին» օրենքի՝ հոդված 52), Արեւմտյան Հայաստանի Հանրապետության վարչապետ Տիգրան Փաշաբեզյանը նորընտիր նախագահ Ռադիկ Խամոյանի հաստատմանը, իսկ Խորհրդարանի պատգամավորների հավանությանը ներկայացրեց կառավարության կազմում փոխվարչապետ Պետրոս Քեշիշօղլյանի, Կրթության նախարար Վրեժ Քոսայանը, Մշակույթի նախարար Վահան Սանանյանի թեկնածությունը եւ պարտավորվեց մեկամսյա ժամկետում ներկայացնել կառավարության կազմի այլ թեկնածուների:

Քվեարկության արդյունքները.

Կողմ – **48**, դեմ – **0**, ձեռնպահ – **3**

Որոշումն ընդունված է:

7. **Լսեցին՝** Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի մասին:

Որոշեցին՝ Առաջիկա երկու ամիսների ընթացքում Արեւմտյան Հայաստանի Խորհրդարանի քննարկմանն ու հաստատմանը ներկայացնել Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրերը:

Քվեարկության արդյունքները.

Կողմ – 48, դեմ – **0**, ձեռնպահ – **3**

Որոշումն ընդունված է:

8. **Լսեցին՝** Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ ընթերցման եւ Սահմանադրության ընդունման հետագա ընթացակարգի վերաբերյալ:

Որոշեցին՝

ա) Հաստատել Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագծի 3-րդ, վերջնական, ընթերցումը եւ հաշվի առնելով պատգամավորների առաջարկներն ու լրացումները՝ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագիծը դնել համաժողովրդական քննարկման,

բ) որից հետո մեկ ամսվա ընթացքում Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագիծը դնել համաժողովրդական հանրաքվեյի:

գ) Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագիծը հրապարակել Արեւմտյան Հայաստանի Հանրապետության պաշտոնական կայքերում եւ լրատվամիջոցներում:

Քվեարկության արդյունքները.

Կողմ – 45 , դեմ – **0**, ձեռնպահ – **6**:

Որոշումն ընդունված է:

9. **Լսեցին՝** 4-րդ նստաշրջանից հետո Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Նախագահության կողմից ընդունված որոշումների հաստատում:

Որոշեցին՝ հաստատել 4-րդ նստաշրջանից հետո Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Նախագահության կողմից ընդունված որոշումները:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -46, դեմ – 0, ձեռնպահ – 5:

Որոշումն ընդունված է:

Այլ հարցեր:

10. **Լսեցին՝** սույն արձանագրության 3-րդ կետում նշված որոշումների կատարման ուղիների մասին:

Որոշեցին՝ հաշվի առնելով, որ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախագահ Արմենակ Աբրահամյանի լիազորությունները դադարեցված է եւ ընտրված Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նոր նախագահ Ռադիկ Խամոյանը, ստեղծել կառավարության եւ խորհրդարանի համատեղ հատուկ հանձնաժողով հետեւյալ հարցերի կարգավորման նպատակով.

ա) Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախկին նախագահ Արմենակ Աբրահամյանից ստանալ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության պետական կնիքը:

բ) Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Կառավարության լիազոր մարմնին հանձնարարել շարունակել աշխատանքները Արեւմտյան Հայաստանի հայերի

ինքնության ու քաղաքացիության հայտերի գրանցման եւ համապատասխան փաստաթղթերի հանձնման:
գ) Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Կառավարության լիազոր մարմնին հանձնարարել Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախկին նախագահ Արմենակ Աբրահամյանից ստանալ ինքնության քարտերի պատրաստման սարքավորումը:
դ) Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախկին նախագահ Արմենակ Աբրահամյանից ստանալ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության պետական բյուջեյի մուտքերի եւ ծախսերի հաշվեկշիռը:
ե) Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Կառավարության լիազոր մարմնին հանձնարարել կարգավորել պետական հաշվեհամարների օգտագործման լիազորությունների հարցը եւ նշանակել պատասխանատուներ հաշիվների օգտագործման համար:
զ) Բոլոր հրամանագրերն ու որոշումները, հայտարարություններն ու պաշտոնական փաստաթղթերը ստորագրված 2017 թ. հունիսի 11-ից հետո Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախկին նախագահ Արմենակ Աբրահամյանի կողմից համարել անվավեր եւ իրավական ուժ չունեցող:
Քվեարկության արդյունքները.
Կողմ – **43**, դեմ – **0**, ձեռնպահ – **8**:
Որոշումն ընդունված է:

Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) առաջին գումարման հինգերորդ նստաշրջանի նիստն ավարտվեց:

Արմեն Տեր–Սարգսյան՝
Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Նախագահ

Դիանա Գրիգորյան՝
Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Քարտուղար

11.06.2017 թ., Երեւան

ԱՐԵՒՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Արեւմտյան Հայաստանի Հանրապետության պետական օրենքների կոպիտ խախտումների եւ իշխանության յուրացման փորձի մեղադրանքներով, 2017 թ. հունիսի 11-ին գումարված Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 1-ին գումարման 5-րդ նստաշրջանի որոշմամբ դադարեցվել են Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Նախագահ Արմենակ Աբրահամյանի լիազորությունները:

Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 1-ին գումարման 5-րդ նստաշրջանում Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախագահ է ընտրվել է

Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) պատգամավոր Ռադիկ Խամոյանը:

Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 1-ին գումարման 5-րդ նստաշրջանում Արեւմտյան Հայաստանի Հանրապետության վարչապետ է վերահաստատվել Տիգրան Փաշաբեզյանը, որի թեկնածությունը առաջադրել է հին կառավարության հրաժարականը ընդունած Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նորընտիր նախագահ Ռադիկ Խամոյանը:

Կից ներկայացվում է Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 1-ին գումարման 5-րդ նստաշրջանի արձանագրությունը:

Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Լրատվական ծառայություն
19.06.2017 թ.

Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Նախագահ Արմեն Տեր-Սարգսյանի ուղերձը պատգամավորներին, պաշտոնյաներին ու քաղաքացիներին

11-ը հունիսի 2017 թ. գումարված Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 5-րդ նստաշրջանում կայացված որոշումների կապակցությամբ

Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախկին նախագահ Արմենակ Աբրահամյանը այսօր փորձում է Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 1-ին գումարման 5-րդ նստաշրջանին «հեղաշրջման փորձի» կեղծ մեղադրանք ներկայացնել մոռանալով, որ ինքն է անձամբ վերջին երկու տարիներին իրականացրել «հեղաշրջման փորձ» Արեւմտյան Հայաստանի Հանրապետության ողջ պետական համակարգի նկատմամբ, իսկ դրա «իրավաչափությունը» ապահովելու համար համակարգին պարտադրել ինքնաստեղծ Սահմանադրություն, որն իր բնութագրմամբ, ստորագրել, հաստատել ու վավերացրել է 2016 թ. մայիսի 9-ին:
Մոռանալով, որ ունենալով մեծ իշխանություն, որը նախագահի լիազորություններով է պայմանավորված, ձգտել է ամբողջատիրական (տոտալ) իշխանության ողջ համակարգի եւ նրա բոլոր մասնակիցների նկատմամբ:

Հիշեցնենք, որ 2017 թ. հունիսի 11-ին Երեւանում գումարված Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 1-ին գումարման 5-րդ նստաշրջանի նիստում ընդունվել է որոշում 2017 թ. հունիսի 11-ից Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախագահ Արմենակ Աբրահամյանի լիազորությունների դադարեցման մասին՝ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության պետական օրենքների կոպիտ խախտումների եւ իշխանության յուրացման փորձի մեղադրանքներով:

Նշենք, որ աշխարհում գոյություն չունեն ինքնաստեղծ սահմանադրություններ, ըստ միջազգային իրավական համակարգի, ցանկացած Սահմանադրություն, որպեսզի համարվի ընդունված ու իրավաչափ՝ պետք է անցնի շատ որոշակի գործընթաց.

1. Սահմանադրության նախագծի առաջին ընթերցում (ներ),
2. Սահմանադրության նախագծի հրապարակային համաժողովրդական քննարկում,
3. Սահմանադրության նախագծի օրինակի համաժողովրդական հանրաքվե,
4. որից հետո միայն, եթե հանրաքվեին մասնակցած հանրությունը կողմ է քվեարկում հանրաքվեի դրված Սահմանադրության օրինակին, ապա դա համարվում է ընդունված:

Կարեւոր չէ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախկին նախագահ Արմենակ Աբրահամյանը տիրապետում է այդ գիտելիքներին, թե ոչ: Կարեւորը նրա ձգտումն է անպայման «իրավաչափ ու օրինական» դարձնելու Սահմանադրության ինքնաստեղ իր օրինակը, որպեսզի դրա միջոցով, հնարավոր ու անհնարին բոլոր իրավունքները վերապահելով իրեն, միանձյա ու լիակատար իր իշխանությունը տարածի Արեւմտյան Հայաստանի Հանրապետության ողջ պետական համակարգի եւ քաղաքացիների վրա եւ իր ինքնաստեղծ Սահմանադրության հոդվածների վրա հենվելով, համակարգի բոլոր թեւերի՝ նախագահական, կառավարություն, խորհրդարան եւ համակարգի բոլոր մասնակիցների նկատմամբ, պաշտոնյաներ, պատգամավորներ, քաղաքացիներ, վարվի օրվա քմահաճույքի համեմատ:

Դրա առաջին քայլը, որ կարելի է կոչել նաեւ սողացող «հեղաշրջման փորձ», ինչպես նաեւ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության պետական իշխանության յուրացման ու բռնազավթման առաջին փորձ՝ իրականացման է դրվել 2017 թ. մայիսի 31-ին, երբ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախագահ (այժմ արդեն նախկին նախագահ) Արմենակ Աբրահամյանի կողմից ստորագրվել են ապօրինի հրամանագրեր, հիմնված ապօրինի Սահմանադրության ինքնաստեղծ օրինակի վրա: (Նախագահի հրամանագիր, Թիւ 42 – 2017.05.31 (ԱՀՀ վարչապետի գործառույթները դադարեցնելու մասին) եւ Նախագահի հրամանագիր, Թիւ 43 – 2017.06.05 (ԱՀՀ վարչապետի նշանակման մասին)

Այդ իմաստով, 5-րդ նստաշրջանում կայացված որոշումները բնավ պատահականության արդյունք չէին, այլ խորապես քննության առնված, կշռադատված ու պահանջված:

Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Սահմանադրության պատրաստության աշխատանքները սկսվել են 2014 թ. օգոստոսի 10-ից հետո, Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրի հիման վրա, որտեղ նշված էր. «Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովին (Խորհրդարանին) առաջարկում ենք ձեւավորել Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մշակման հանձնաժողով եւ ձեռնարկել Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագծի մշակումը, Արեւմտյան Հայաստանի Հանրապետության պետական կառույցների ձեւի եւ բովանդակության համար՝ որպես հիմք ընդունելով Արեւմտյան Հայաստանի հայերի եւ Արեւմտյան Հայաստանի քաղաքացիների կամարտահայտության վերաբերյալ վերոհիշյալ հռչակագրերը, որոշումները, օրենքներն ու իրավական փաստաթղթերը»:

Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագծի առաջին ընթերցումը հաստատել է Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի)

առաջին գումարման երրորդ նստաշրջանը (27-ը դեկտեմբերի, 2015 թ., Երեւան): Ահա քաղվածք նստաշրջանի արձանագրությունից.
«Լսեցին՝ Առաջին ընթերցմամբ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագծի հաստատման մասին: Ելույթի համար խոսքը տրվում է Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախագահ Արմենակ Աբրահամյանին:
Որոշեցին՝ հաստատել. առաջին ընթերցմամբ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագիծը»:

Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագծի երկրորդ ընթերցումը հաստատել է Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) առաջին գումարման չորրորդ նստաշրջանը (17-ը դեկտեմբերի, 2016 թ., Երեւան): Ահա քաղվածք արձանագրությունից.
«Լսեցին՝ երկրորդ ընթերցմամբ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագծի հաստատման մասին:
Որոշեցին՝ հաստատել. երկրորդ ընթերցմամբ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագիծը»:

Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագծի երրորդ ընթերցումը հաստատել է Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) առաջին գումարման հինգերորդ նստաշրջանը (11-ը հունիսի, 2017 թ., Երեւան): Ահա քաղվածք այդ արձանագրությունից.
«Լսեցին՝ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ ընթերցման եւ Սահմանադրության ընդունման հետագա ընթացակարգի վերաբերյալ:
Որոշեցին՝
ա) Հաստատել Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագծի 3-րդ, վերջնական, ընթերցումը եւ հաշվի առնելով պատգամավորների առաջարկներն ու լրացումները՝ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագիծը դնել համաժողովրդական քննարկման,
բ) որից հետո մեկ ամսվա ընթացքում Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագիծը դնել համաժողովրդական հանրաքվեյի:
գ) Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագիծը հրապարակել Արեւմտյան Հայաստանի Հանրապետության պաշտոնական կայքերում եւ լրատվամիջոցներում»:

Հետեւաբար, Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախկին նախագահ Արմենակ Աբրահամյանը երբեք հնարավորություն չուներ հրամանագիր ստորագրել հիմնված գոյություն չունեցող Սահմանադրության հոդվածի վրա: Սա ե՛ւ լիազորությունների չարաշահում է, ե՛ւ սողացող «հեղաշրջման փորձ», ե՛ւ իշխանության յուրացման փորձ:
Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) ընդունած որոշման մեջ մասնավորապես նշված է.

«Հաշվի առնելով այն հանգամանքը, որ՝
-Արեւմտյան Հայաստանի Հանրապետությունը Սահմանադրության բոլոր ընթացակարգերով անցած եւ ընդունված Սահմանադրություն դեռեւս չունի եւ նա

առաջնորդվում է՝ Արեւմտյան Հայաստանի «Արեւմտյան Հայաստանի պետական կառուցվածքի, Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի պատգամավորների կարգավիճակի եւ Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի կանոնակարգի մասին» Օրենքով, որ

Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախագահ (արդեն նախկին նախագահ) Արմենակ Աբրահամյանը խախտել է վերոնշյալ օրենքի «Արեւմտյան Հայաստանի պետական կառուցվածքը» բաժնի հետեւյալ հոդվածների դրույթներն ու պահանջները.
Հոդված 36) Արեւմտյան Հայաստանի Հանրապետությունը նախագահա-խորհրդարանական հանրապետություն է:
Հոդված 37) Արեւմտյան Հայաստանի նախագահը՝ պետության գլուխն է՝ Արեւմտյան Հայաստանի բարձրագույն պաշտոնատար անձը, Սահմանադրության, մարդու իրավունքների ու ազատությունների երաշխավորը: Արեւմտյան Հայաստանի Սահմանադրության եւ օրենքների համաձայն՝ նա միջոցներ է ձեռք առնում Արեւմտյան Հայաստանի հայերի իրավունքների պաշտպանության, անկախության եւ տարածքային ամբողջականության պահպանման, պետական իշխանության մարմինների միջեւ գործառույթների ներդաշնակ համադրման եւ համագործակցության:
Հոդված 44) Արեւմտյան Հայաստանի նախագահը՝
-Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի համաձայնությամբ նշանակում ու ազատում է Արեւմտյան Հայաստանի կառավարության վարչապետին,
-Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի համաձայնությամբ որոշում է կայացնում Արեւմտյան Հայաստանի կառավարության հրաժարականի մասին,
-Արեւմտյան Հայաստանի վարչապետի առաջարկությամբ նշանակում ու ազատում է պաշտոնից Արեւմտյան Հայաստանի վարչապետի օգնականներին եւ նախարարներին,
Հոդված 52) Արեւմտյան Հայաստանի կառավարության վարչապետը Արեւմտյան Հայաստանի նախագահին առաջարկում է Արեւմտյան Հայաստանի կառավարության փոխվարչապետի պաշտոնի թեկնածուներին եւ Արեւմտյան Հայաստանի նախարարներին՝ նախապես տեղյակ պահելով Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովին եւ հաշվի առնելով Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի պատգամավորների կարծիքները:

Որտեղ նշված է նաեւ,
Հոդված 14) Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի պատգամավորի լիազորությունների դադարեցումը կարող է տեղի ունենալ հետեւյալ դեպքերում.
-այն դեպքում, երբ Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի պատգամավորը իր գործունեությամբ կամ անգործությամբ վնաս է հասցնում Արեւմտյան Հայաստանին, Արեւմտյան Հայաստանի պետական կառույցներին: Սույն հոդվածի կետը վերաբերում է նաեւ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության բոլոր պաշտոնյաներին:

Հակընդդեմ վերը մեջբերված հոդվածների դրույթների ու պահանջների՝
-Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախագահ (արդեն նախկին նախագահ) Արմենակ Աբրահամյանը շուրջ երկու տարի է ինչ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության ողջ պետական համակարգին ուժով պարտադրում է 2016-ի մայիսի 9-

ին իր միանձնյա ստորագրությամբ, իբրեւ թե իր կողմից հաստատում ստացած Սահմանադրության իր տարբերակը,
-որն ի տարբերություն վերը նշված գործող օրենքի դրույթի ու պահանջի, եւ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Սահմանադրության առաջին եւ երկրորդ ընթերցումների մեջ ներառված հոդվածների, ոչ թե նախագահա-խորհրդարանական, այլ նախագահական կոշտ ու անզիջում կառավարման օրինակ է:

Արձանագրելով, որ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախագահ (այժմ արդեն նախկին նախագահ) Արմենակ Աբրահամյանի պարտադրած Սահմանադրության օրինակը ոչ մի կերպ չի համապատասխանում Արեւմտյան Հայաստանի Հանրապետության պետական կառուցվածքի իրավական-քաղաքական տրամաբանությունը եւ չի կարող ընդունվել, որպես հիմք կամ օրինակ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության համար, որովհետեւ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգը նախագա-խորհրդարանական է:

Հետեւաբար, Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 5-րդ նստաշրջանը մանրամասն քննելով ու համադրելով ներկայացված փաստերը՝
Որոշեց՝ 2017 թ. հունիսի 11-ից դադարեցնել Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախագահ Արմենակ Աբրահամյանի նախագահական լիազորությունները:

Ահա այս որոշումը եւ այլ որոշումներ նույնպես միտված էին կարգավորելու հետեւյալ խնդիրները.
ա) Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախկին նախագահ Արմենակ Աբրահամյանի ապօրինի հրամանագրերից ու ոտնձգություններից պաշտպանելու համակարգի պաշտոնյաներին, պատգամավորներին, քաղաքացիներին ու բոլոր մասնակիցներին,
բ) պաշտպանելու համակարգի թեւերի՝ նախագահական, կառավարություն, խորհրդարան ազատությունը, անկախությունը, լիակատար համագործակցությունը,
գ) պաշտպանելու հայության իրավունքների պաշտպանության գործընթացը արտաքին եւ ներքին ոտնձգություններից ու թելադրանքներից:

Այդ խնդիրները կարգավորված են:
Արեւմտյան Հայաստանի Հանրապետությունը նոր նախագահ ունի՝ Ռադիկ Խամոյանը, նոր կառավարություն է ձեւավորվում՝ վարչապետի պաշտոնում երրորդ անգամ անընդմեջ հաստատվել է Տիգրան Փաշաբեզյանը, խորհրդարանը Արմեն Տեր-Սարգսյանի նախագահությամբ շարունակում է իր աշխատանքները եւ, ըստ այդմ, Արեւմտյան Հայաստանի Հանրապետության ողջ պետական համակարգը կարող է առաջ շարժվել եւ առանց հին արգելքների ու խոչընդոտների շարունակել Արեւմտյան Հայաստանի հայերի իրավունքների պաշտպանության շատ պատասխանատու գործը:

Արմեն Տեր-Սարգսյան
Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Նախագահ
14.06.2017 թ.

Արեւմտյան Հայաստանի Հանրապետության վարչապետ Տիգրան Փաշաբեզյանի ուղերձը պաշտոնյաներին, պատգամավորներին ու քաղաքացիներին

11-ը հունիսի 2017 թ. գումարված Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 5-րդ նստաշրջանում կայացված որոշումների կապակցությամբ

1.
Արեւմտյան Հայաստանի Հանրապետության պետական համակարգի դեմ ուղղված անօրինականության երկու փորձերի մասին իրականացված 2014 եւ 2017 թվականներին:
Արեւմտյան Հայաստանի Հանրապետության պետական համակարգը անօրինականության ու ապօրինության գործողություններին ու փաստերին առընչվել է երկու անգամ՝ 2014 թ. եւ 2017 թ.:

ա) Մեր հայրենակիցներին ու քաղաքացիներին, ընկերներին ու գործընկերներին հիշեցնենք, որ անօրինականության առաջին գործողությունը իրականացվել է 2014 թվականի հուլիսի 21-ի, երբ Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) կայացրած անվստահության որոշման (համաձայն՝ «Արեւմտյան Հայաստանի պետական կառուցվածքի, Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի պատգամավորների կարգավիճակի եւ Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի կանոնակարգի մասին» օրենքի 14-րդ հոդվածի) (11.06.2014), Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախագահ Արմենակ Աբրահամյանի հրամանագրի (03.07.2014) եւ վարչապետ Տիգրան Փաշաբեզյանի թիվ 7 որոշման (22.07.2014) հիման վրա Արեւմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարության (այժմ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Կառավարություն) Արտաքին գործերի նախարարի պաշտոնից ազատված Արամ Մկրտչյանը հրավիրել է Արեւմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարության ապօրինի նիստ, կայացրել ապօրինի որոշումներ ու անօրինական նշանակումներ, այդ թվում, ինքն իրեն վարչապետ նշանակել, որից հետո այդ ամենը փորձել է ներկայացնել, իբրեւ թե իրավական ու իրավաչափ մի գործընթաց:
Այդ հարցով մենք հանդես ենք եկել շուրջ 21 հայտարարություններով, հրապարակումներով ու հոդվածներով: Վերոհիշյալ պարբերության մեկ հատվածը վերցված էր «Մեկ օրվա «լեգիտիմության» զավեշտը» հրապարակումից (16.11.2014 թ.):

2017 թ. հունիսի 15-ին Արամ Մկրտչյանը հանդես է եկել հայտարարությամբ, որի շարժառիթը պարզապես առիթից օգտվելն է, որտեղ իրողությունները կրկին կեղծված են, իսկ նպատակը մեկը՝ «իրավաչափության» շունչ ու բնույթ հաղորդել անօրինականության հիմքի վրա ձեւավորված ինքնաստեղծ իր կառույցին (Արեւմտյան Հայաստան պետության վտարանդի կառավարության եւ ազգային ժողովի համատեղ հայտարարությունը):

Մյուս կողմից, առանց հատուկ ճիգի, իբրեւ թե անշահախնդիր դիտորդի կարգավիճակով, Արամ Մկրտչյանի կողմից հրամցվում է կարծես դիմակայության երկրորդ ճակատը, հավանաբար պահը հարմար նկատելով, բայց դա ճիշտ կլիներ, եթե 1-ին գումարեինք 1 ու

բնականաբար ստանայինք 2: Սակայն այս դեպքում քանի որ գործ ունենք երկու անօրինականությունների հետ, ապա նրանց գումարը տալիս 1, այսինքն՝ անօրինականությունը նույնական է, մեկն է, ուստի դրա դեմ պայքարն էլ մեկն է ու միանշանակ է:

Սակայն, ֆեյսբուքյան ոճով պարզամիտ ձեւակերպումների, մտքերի ու բառակույտերի միջոցով հայտարարություններ ու հրամանագրեր կազմելը, դրանց տակ ստորագրելը որպես «վարչապետ» ու «պետության գլուխ», ինքնաշեն կնիքների ու զինանշանների գործածությունը, որպես պաշտոնականության ու պետականության անպայման պայման, չեն կարող շտկել եւ կամ փրկել իրավիճակը, որովհետեւ երբ փաստերի հետ գործ ունես, ապա նրանք համառ են եւ արձանագրում են, որ Արամ Մկրտչյանը այդ պահին՝ 2014-ին, ստեղծված իրավիճակից անպայման ելք գտնելու ձգտումով դիմել է անօրինական ու ապօրինի քայլերի, ավելի ուշ ինքը նույնպես ինքնաստեղծ ու ապօրինի Սահմանադրության օրինակի ընդունումով, դրանցով ակամա կանխորոշելով հետագա գործողությունների ու ճանապարհի անօրինականությունը մինչեւ այսօր:
Միջազգային դիվանագիտական հարաբերությունների դերակատարներն ու մասնակիցները խուլ ու համր անտեղյակներ չեն եւ այս հարցերը, եթե նույնիսկ մենք չբարձրացնենք այսօր, յուրաքանչյուր հարմար պահի նրանք են բարձրացնելու՝ զատորոշելով օրինականը անօրինականից ու դրանց համապատասխան կողմնորոշվելու ու որոշումներ կայացնելու: Ապօրինի հիմքերով ձեւավորված կառույցների հետ գործ բռնելը անվտանգ գործ չէ:

բ) Արեւմտյան Հայաստանի Հանրապետության պետական համակարգի նկատմամբ անօրինականության երկրորդ գործողությունը իրականացվել է 2017 թ.: Դրա առաջին քայլը, ինչը կարելի է կոչել սողացող «հեղաշրջման փորձ», ինչպես նաեւ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության պետական իշխանության յուրացման ու բռնազավթման փորձ՝ իրականացման է դրվել 2017 թ. մայիսի 31-ին, երբ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախագահ (այժմ արդեն նախկին նախագահ) Արմենակ Աբրահամյանի կողմից ստորագրվել են ապօրինի հրամանագրեր, հիմնված ապօրինի ու ինքնաստեղծ Սահմանադրության օրինակի վրա: (Նախագահի հրամանագիր, Թիւ 42 – 2017.05.31 (ԱՀՀ վարչապետի գործառույթները դադարեցնելու մասին) եւ Նախագահի հրամանագիր, Թիւ 43 – 2017.06.05 (ԱՀՀ վարչապետի նշանակման մասին)

Հիշեցնենք, որ 2017 թ. հունիսի 11-ին Երեւանում գումարված Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 1-ին գումարման 5-րդ նստաշրջանում որոշում է ընդունվել 2017 թ. հունիսի 11-ից Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախագահ Արմենակ Աբրահամյանի լիազորությունների դադարեցման մասին՝ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության պետական օրենքների կոպիտ խախտումների եւ իշխանության յուրացման փորձի մեղադրանքներով:

2.
Վարչապետի հրաժարականի մասին:
Վարչապետ Տիգրան Փաշաբեզյանի հրաժարականի վերաբերյալ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախկին նախագահ Արմենակ Աբրահամյանի կողմից

շրջանառության մեջ դրված տեղեկատվությունը, բացատրություններն ու պատճառաբանությունները նույնպես իրականությանը չեն համապատասխանում, եւ կեղծված են: Դրանք միտված են մի կողմից քողարկելու եւ մյուս կողմից արդարացնելու ինքնաստեղծ ապօրինի Սահմանադրության վրա շինված ապօրինի ու նախադեպային երկու հրամանագրերը վարչապետի պաշտոնից ազատելու, կառավարությունը ցրելու եւ նոր վարչապետի նշանակման:

Հարցի նախապատմությունը հետեւյալն է: 2017 թ. հունվարի սկզբին Արեւմտյան Հայաստանի Հանրապետության այժմ արդեն նախկին նախագահ Արմենակ Աբրահամյանի հետ մի առանձնազրույցում հայտնեցինք մեր մտահոգությունները առ այն, որ տեւական մի ժամանակահատված է, շուրջ երկու տարի, ինչ փոխված է նրա կեցվածքն ու վերաբերմունքը, ինչպես նաեւ գործելաոճը ընկերների ու գործընկերների, պաշտոնյաների ու պատգամավորների եւ, համապատասխանաբար, նրանց կողմից ձեռնարկված ցանկացած նախաձեռնության ու գործունեության նկատմամբ: Նշեցինք նաեւ, որ եթե առաջիկա երեք ամիսների ընթացքում՝ հունվար, փետրվար, մարտ, իրավիճակը արմատես չփոխվի, ապա հրաժարական ենք ներկայացնելու: Կարծում էինք, թե հրաժարականի մասին սպառնալիքը սթափվելու եւ իրավիճակը փոխելու հնարավորություն է ընձեռելու այժմ արդեն նախկին նախագահին:
Առանձնազրույցից մեկ շաբաթ անց ներկայացրինք հրաժարականի դիմումը, որը գրված էր 10 հունվար 2017-ին, բայց թվագրված 30 մարտ 2017-ով, այսինքն՝ այն եռամսյա ժամկետով, ինչով պայմանավորել էին փոփոխություններ իրականացնելու մեր առաջարկը: Ահա դրա բովանդակությունը.
«Պարոն նախագահ
Խնդրում եմ ընդունել իմ հրաժարականը Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Վարչապետի պաշտոնից՝ ազգային - ազատագրական պայքարի գործընթացում այլ պատասխանատվություն ստանձնելու որոշման կապակցությամբ:
Տիգրան Փաշաբեզյան, Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Վարչապետ»

Երկու օր անց, 12 հունվար 2017-ին մեկ այլ գրությամբ հետ վերցրինք հրաժարականի դիմումը: Գրությունը բաղկացած էր 6 կետից, որից ներկայացնում ենք 1-ին, 2-րդ եւ 4-րդ կետերը, որոնք առավել կարեւոր են իրենց շեշտադրումներով:
1. «Հետ եմ կանչում վարչապետի հրաժարականի մասին դիմումը ուղարկված 10 հունվար 2017 թ., որ նախօրոք մեր պայմանավորվածության համաձայն թվագրել էի 30 մարտ 2017 թ.-ով, այսինքն՝ երեք ամսվա պայմանաժամկետով:
2. Վարչապետի հրաժարականի դիմումը հետ կանչելը պայմանավորված է, այն մտահոգությամբ, որ չի կարելի այս պատասխանատու պահին համակարգը թողնել առանց հիմնական դերակատարների, առանց նրանց ում ուսերին ու ում ջանքերով է իրականացվել մինչեւ այսօր կայացած բոլոր աշխատանքները եւ ձեռքբերումները, ինչպես նաեւ համակարգի երեք պատասխանատուներից մեկի հետ քննարկումների վերջնաարդյունքով:
4. Կարեւոր հանգամանք է, որ ընտրությունների արդյունքում մեր ստանձնած պարտավորությունն ու պատասխանատվությունը իրականացնենք մինչեւ վերջ, թեկուզ մինչեւ ընտրությունների սահմանած ժամանակը, հինգ տարվա ժամկետում:
Տիգրան Փաշաբեզյան

Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Վարչապետ»

Այնուհետեւ, 2017-ի հունվարի 10-ից եւ հունվարի 12-ից անցնում է ոչ միայն պայմանաժամի եռամսյա ժամկետը, այլեւ եւս երեք ամիս եւ հրապարակվում են վերոնշյալ ապօրինի հրամանագրերը, հիմնված անօրինական - ինքնաստեղծ Սահմանադրության վրա: Ոչ մի բացատրություն հունվարին ներկայացված առաջարկի վերաբերյալ, այն իմաստով, թե ինչ որ բան փոխվել է արդյո՞ք այժմ արդեն նախկին նախագահի վարքագծում եւ կամ փոխվելո՞ւ է ընդհանրապես: Ոչ մի խոսք, ոչ մի բացատրություն:
Ոչ մի պատասխան ու բացատրություն նաեւ մեր այն պնդումներին ու հորդորներին, թե չի կարելի միանձյա ստորագրել եւ հաստատել անօրինական Սահմանադրությունը անցած մի թվագրումով՝ 9-ը մայիսի 2017 թ.-ով:
Բացատրությունների կամ քննարկումների փոխարեն, ինչպես արդեն նշեցինք հրապարակվում են ապօրինի ու անօրինական զույգ հրամանագրերը:

Պարզ է, որ երբ անօրինականության ուղին ես բռնում, դա կոծկելու համար այլ բան չի մնում անել, քան դիմել կրկնակի կեղծիքի, ինչպես եւ արվում է այս դեպքում:
Համակարգը տեսանելի ու անտեսանելի խութերից պաշտպանելու մեր այս նախաձեռնությունը այդ վերաբերմունքին արժանացավ ու ենթարկվեց կեղծիքի ու այլափոխումների, իբրեւ թե՝ «վարչապետն էր հրաժարական տվել, իսկ ես ընդամենը ընդառաջել եմ նրան»:
Այս դեպքում այժմ արդեն նախկին նախագահ Արմենակ Աբրահամյանի կողմից կոպտորեն խախտվել է «Արեւմտյան Հայաստանի պետական կառուցվածքի, Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի պատգամավորների կարգավիճակի եւ Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի կանոնակարգի մասին» օրենքի 44-րդ հոդվածի պահանջը, ըստ որի՝ վարչապետի նշանակումը եւ պաշտոնից հեռացումը հաստատում է միայն խորհրդարանը:
Ցանկալին իրականության տեղ է ընդունել, այնքան մեծ է եղել ընդդիմախոսությունն ու կառուցողական քննադատությունը չեզոքացնելու ձգտումը:
Կարծում ենք հիմա հասել է իր նպատակին, թեեւ բավականաչափ թանկ գնով՝ այժմ արդեն նախկին նախագահի կարգավիճակով:

3.
Վարչապետի վերաբերմունքը այժմ արդեն նախկին նախագահի պարտադրած Սահմանադրության օրինակի նկատմամբ:
Գործընկերային ընդդիմախոսության ու քննադատության օրինակ է այժմ արդեն նախկին նախագահ Արմենակ Աբրահամյանի պարտադրած Սահմանադրության տարբերակի մերժումն ու հիմնավորումը:
2017 թ. մայիսին հրապարկվեց Սահմանադրության ապօրինի օրինակը, որը, իբրեւ թե, ընդունվել է դեռեւս 2016 թ. մայիսի 9-ին, որից հետո Արմենակ Աբրահամյանի կողմից շրջանառության մեջ դրվեց եւ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության պետական համակարգին պարտադրվեց այն թեզը, որ ինքը ստորագրել, հաստատել ու վավերացրել է Սահմանադրության ինքնաստեղծ այդ օրինակը:

Նշենք նաեւ, որ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության այժմ արդեն նախկին նախագահ Արմենակ Աբրահամյանի պարտադրած Սահմանադրության օրինակը ոչ մի կերպ չի համապատասխանում Արեւմտյան Հայաստանի Հանրապետության պետական կառուցվածքի իրավական-քաղաքական տրամաբանությունը եւ չի կարող ընդունվել, որպես հիմք կամ օրինակ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության համար:

Իշխանության յուրացման փորձ է Արմենակ Աբրահամյանի կողմից պարտադրված Սահմանադրության ապօրինի օրինակի 107 եւ 162-րդ հոդվածների ձեւակերպումները, որոնցում նշված է՝
Յօդուած 107.
Ազգային ժողովը Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նախագահի առաջարկութեամբ կը վաւերացնէ, կը կասեցնէ կամ չեղեալ կը յայտարարէ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան միջազգային պայմանագիրները, բացառութեամբ անոնց, որոնք ունին քաղաքական կամ ռազմական բնոյթ կամ կը նախատեսեն պետական Սահմանի փոփոխութիւն եւ որոնք ենթակայ են Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նախագահի:
Հոդված 162.
4-րդ կետ. Մինչեւ Ազգային ժողովի յաջորդ գումարման առաջին նստաշրջանի բացման օրը՝ Հանրապետութեան նախագահը կրնայ.
-Ազգային ժողովի նախագահին եւ վարչապետին հետ խորհրդակցելէ ետք՝ արձակել Ազգային ժողովը, եւ նշանակել արտահերթ ընտրութիւն,
-ազատել վարչապետին:

Սահմանադրության ինքնաստեղծ օրինակի պարտադրանքը ի հայտ էր գալիս բոլոր հարկի ու անհարկի պարագաներում, առանձնազրույցներում, նիստերի ժամանակ, 4-րդ նստաշրջանին եւ այլ... Վերջին անգամ դա պարտադրվեց Նախագահության նիստի ժամանակ, որտեղ բանավոր արտահայտեցինք մեր անհամաձայնությունը, իսկ նիստից հետո պատրաստեցինք դրա գրավոր օրինակը, որը թվագրված էր 2017 թ. մարտի 16-ով:
Ահա այդ դիմումի ամբողջական տեքստը.

«Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախագահ Արմենակ Աբրահամյանին
Պարոն նախագահ
Ես որպես ԱՀՀ վարչապետ բանավոր հայտնել եմ իմ անհամաձայնությունը 13 մարտ 2017 թ. Նախագահական նիստի օրակարգում ներառված ԱՀՀ Սահմանադրության ձեր առաջարկած տարբերակի ընդունման փորձի նկատմամբ, ընդգծելով երկու խնդիր.
ա) իմ անհամաձայնությունը ԱՀՀ Սահմանադրության ձեր ներկայացրած օրինակի մի շարք հոդվածների նկատմամբ, այդ թվում՝ հոդված 107, 108, 162 եւ այլ, ինչպես նաեւ
բ) ԱՀՀ Սահմանադրության ձեր ներկայացրած օրինակի ընդունման ու հաստատման ձեւի ու եղանակի կապակցությամբ, որը ենթադրում է Սահմանադրության ընդունում առանց Արեւմտյան Հայաստանի հայերի մեջ անցկացված հանրաքվեի:
Նշեմ, որ երկու դեպքում էլ հաշվի չի առնված ԱՀՀ վարչապետի վերջին շրջանում ձեր իսկ համաձայնությամբ իրականացված աշխատանքի արդյունքներն ու առաջարկները, եւ ձեզ ներկայացված Սահմանադրության նախագծի համապատասխան օրինակը, որը կարող էր համարվել որպես ԱՀՀ Սահմանադրության նախագծի 2-րդ ընթերցում, ինչպես

նաեւ հաշվի չի առնված Խորհրդարանի նախագահության ու նախագահի պատրաստվող առաջարկները Սահմանադրության նախագծի վերաբերյալ:
Ես որպես 1980 թ.-ից Արեւմտյան Հայաստանի ազատագրության համար պայքարող, իսկ 2011 թ. փետրվարից որպես Արեւմտյան Հայաստանի հայերի իրավունքների պաշտպանության գործին ու նպատակին օր ու գիշեր լծված ու ծառայած մարդ չեմ կարող ընդունել այն փորձերը, որոնք խախտում են ԱՀՀ պետական համակարգի թեւերի արդյունավետ համագործակցության հնարավորությունն ու հավասարակշռությունը եւ ամբողջ իշխանությունը փորձում են կենտրոնացնել մեկ մարդու ձեռքում, այս դեպքում՝ ԱՀՀ նախագահի:
Ինչպես նաեւ չեմ կարող ընդունել, որ Արեւմտյան Հայաստանի հայերի իրավունքների պաշտպանության գործում բազմաթիվ հռչակագրեր, հրամանագրեր ու օրենքներ՝ ընդունված իրավական-քաղաքական նորմերին համապատասխան պատրաստելուց ու հաստատելուց հետո այժմ, ամենապատասխանատու պահին, փորձ է արվում Սահմանադրության անընդունելի օրինակի հաստատման փորձ ձեռնարկել՝ ընդունված իրավական-քաղաքական նորմերին հակառակ:
Դա ԱՀՀ պետական համակարգի համար կարող է ունենալ անկախատեսելի բացասական հետեւանքներ եւ արտաքին, եւ ներքին քաղաքականության ոլորտներում, ինչը բնականաբար անընդունելի է ու մերժելի հիմքից:
Մինչեւ վերջ հավատարիմ մնալով Արեւմտյան Հայաստանի հայերի իրավունքների պաշտպանության գործին ու նպատակին՝ հարկ համարեցի իմ սկզբունքային անհամաձայնությունների վերաբերյալ տեղյակ պահել ձեզ նաեւ գրավոր, որոնք բանավոր արտահայտել եմ 13 մարտ 2017 թ. Նախագահական նիստի ժամանակ:
Այս գրության մեկական օրինակ ուղարկված է նաեւ Արեւմտան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) նախագահին եւ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության փոխվարչապետին:
Տիգրան Փաշաբեզյան
Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Վարչապետ»

Սույն դիմումը գիտակցաբար չենք հրապարակել ու տարածել առանց այն էլ լարված իրավիճակին նոր լարվածություն չհաղորդելու ակընկալիքով, սակայն իրադրությունը մնաց անփոփոխ, Արմենակ Աբրահամյանը այդ ամենին անհաղորդ, ինքնավստահ ու անտարբեր:

Երեք ամիս անց Արեւմտյան Հայաստանի Հանրապետության այժմ արդեն նախկին նախագահ Արմենակ Աբրահամյանի կողմից հրապարակ բերվեց ինքնաստեղծ Սահմանադրության հիմքի վրա ձեւակերպված զույգ անօրինական ու ապօրինի հրամանագրերը, որոնք էլ առիթ հանդիսացան Արեւմտյան Հայաստանի Հանրապետության մեջ ստեղծված այս նոր իրավիճակի ու նաեւ դրա հանգուցալուծման, ինչը իրականացվեց Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 5-րդ նստաշրջանում եւ միանգամայն օրինաչափ կերպով ավարտվեց Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախագահ Արմենակ Աբրահամյանի նախագահական լիազորությունների դադարեցմամբ:

Կյանքում պատահականություններ չեն լինում, առավել եւս 5-րդ նստաշրջանում կայացված որոշումները պատահականության արդյունք չէին, այլ խորապես կշռադատված ու պահանջված ակտեր:

Ահա այս որոշումը եւ այլ որոշումներ միտված էին կարգավորելու հետեւյալ խնդիրները.
ա) Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախկին նախագահ Արմենակ Աբրահամյանի ապօրինի հրամանագրերից ու ոտնձգություններից պաշտպանելու համակարգի պաշտոնյաներին, պատգամավորներին, քաղաքացիներին,
բ) պաշտպանելու համակարգի թեւերի՝ նախագահական, կառավարություն, խորհրդարան ազատությունը, անկախությունը, լիակատար համագործակցությունը,
գ) պաշտպանելու հայության իրավունքների պաշտպանության գործընթացը արտաքին եւ ներքին ոտնձգություններից ու թելադրանքներից:

Փաստերն անողոք են եւ, ըստ այդմ, պարզորոշ է, որ իրավաչափության եւ օրինականության ճանապարհով ընթացել եւ այս պահին ընթանում է Արեւմտյան Հայաստանի Հանրապետության պետական այն համակարգը, որի պատասխանատուներն են՝ նորընտիր նախագահ Ռադիկ Խամոյանը, վարչապետ Տիգրան Փաշաբեզյանը, խորհրդարանի նախագահ Արմեն Տեր-Սարգսյանը:
Նրանք խոստացել են պահպանել ու բարձր պահել օրինականության եւ իրավունքի նշաձողը:

Տիգրան Փաշաբեզյան
Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Վարչապետ
20.06.2017 թ.

Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նորընտիր նախագահ Ռադիկ Խամոյանի ուղերձը պաշտոնյաներին, պատգամավորներին ու քաղաքացիներին

Որպես Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նորընտիր նախագահ պարտքս եմ համարում հանդես գալ ազգային – պետական ռազմավարության տեսակետից կարեւոր երեք հարցադրումների նկատմամբ վերաբերմունքով եւ դիրքորոշումով:

Դրանք են՝
-Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ընդունման գործընթացի մասին:
-Միջազգային պայմանագրերի վավերացման հարցի մասին:
-Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախագահի լիազորությունների մասին:

1. Սահմանադրության ընդունման ու հաստատման գործընթացի մասին:
Սահմանադրության ընդունումը պարտադիր քայլերի ամբողջականությունից բաղկացած գործընթաց է. Ազգային Ժողովի կողմից կազմվում է Սահմանադրության նախագծի մշակման հատուկ հանձնաժողով, հատուկ հանձնաժողովը Սահմանադրության նախագիծը ներկայացնում է 1-ին, 2-րդ եւ 3-րդ ընթերցման, որից հետո դրվում է

համաժողովրդական քննարկման, այնուհետեւ համաժողովրդական հանրաքվեի եւ հանրաքվեի արդյունքների համաձայն ընդունվում է:
Սահմանադրության տակ ոչ ոք ստորագրություն չի դնում, այդ թվում հանրապետության նախագահը, ստորագրություն չի դնում որեւէ խումբ կամ կառույց:

Սակայն այս սկզբունքային հարցերում տեղի է ունեցել ապօրինի ու կամայական մոտեցում՝
Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 4-րդ նստաշրջանին ընթերցված Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախագահ (այժմ նախկին նախագահ) Արմենակ Աբրահամյանի զեկույցում կարդում ենք. «Մեր Սահմանադրությունը վավերացվեց 2016 թ. մայիսի 9-ին...», 17.12.2016:
Զուգահեռ, Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 4-րդ նստաշրջանի օրակարգի 9-րդ կետի համաձայն «2-րդ ընթերցմամբ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագծի հաստատում», 4-րդ նստաշրջանը որոշեց «Հաստատել. 2-րդ ընթերցմամբ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագիծը»: Որոշումն ընդունվել է միաձայն, 17.12.2016:

Այսինքն փաստ է, որ Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 4-րդ նստաշրջանը 2-րդ ընթեցմամբ հաստատել է Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագիծը, 17.12.2016:
Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 5-րդ նստաշրջանը 3-րդ վերջնական ընթերցմամբ հաստատել է Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագիծը, որը դրվելու է համաժողովրդական քննարկման, 11.06.2017:

Մինչդեռ նախկին նախագահը համառում է Սահմանադրության ինքնաստեղծ օրինակի իր կողմից վավերացման հարցում, որն անօրինական ու ապօրինի դիրքորոշման արդյունք է, երբ գիտենք, թե Սահմանադրությունը չի վավերացվում, չի ստորագրվում, չի հաստատվում, այլ ընդունվում է ընթացակարգի ավարտին՝ ժողովրդական հանրաքվեի արդյունքներով:

Մեջբերենք երեք օրինակ.
ա) «Նախագահական Հրամանագիր, Թիւ 42 – 2017.05.31, ԱՀՀԿ վարչապետի, գործառույթները դադարեցնելու մասին, Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահը» նյութի առաջին տողում կարդում ենք.
«Համաձայն Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան (ԱՀՀ) Սահմանադրութեան Յօդուած 76-ին»:

բ) «Նախագահական Հրամանագիր, Թիւ 43 – 2017.06.05, ԱՀՀԿ վարչապետի նշանակման մասին, Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահը» նյութի առաջին տողում կրկին կարդում ենք.
«Համաձայն Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան (ԱՀՀ) Սահմանադրութեան Յօդուած 76-ին»:

գ) «Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Ներքին Գործերու Նախարարութեան թիւ 1-2017.06.13 արձանագրութիւնը եւ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Ազգային Ժողովի (Խորհրդարանի) իրաւաբանական յանձնաժողովի որոշումներ», Երեւան, Յունիսի 13, 2017 թուական» նյութի առաջին տողում կարդում ենք.
«Համաձայն Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան (ԱՀՀ) Սահմանադրութեան Յօդուած 76-ին»:

Երեք դեպքերում էլ հղումներ են արված չընդունված Սահմանադրության ապօրինի հոդվածների վրա, փորձելով իրավականության ու իրավաչափության պատրանք ստեղծել, սակայն երեք դեպքերում էլ նյութերի շարունակությունը կարելի է չնայել, որովհետեւ գործ ունենք ակնհայտ անօրինականության ու ապօրինության նախադեպային փաստերի հետ:

Այդպես նախկին նախագահը կարող էր եւ կարող է անընդհատ շարունակել ու շարունակել, սակայն դրանով իսկ չի կարող ձեւավորել պետական համակարգի իրավական իրական ու ամուր հիմքեր, փոխարենը կարող է ցնցել ու ցնցել ողջ պետական համակարգը, ինչպես դա արդեն պատահել է եւ նախկինում, եւ ներկայիս:

Ասվածից պարզ է ու հստակ, որ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը իրավունքի ու օրենքի սկզբունքի ու տառի համաձայն ողջ ընթացակարգը չի անցել, հետեւաբար եւ ընդունված չէ, ուստի նախկին նախագահ Արմենակ Աբրահամյանի կողմից դրա հոդվածներին հղումներ անելը, հրամանագրեր ու հայտարարություններ արձակելը անօրինական ու ապօրինի գործողություն է՝ սահմանակցված իշխանության յուրացման փորձին, ինչը բոլոր օրենսդրություններում եւ Սահմանադրություններում որակվում է, որպես հանցագործություն:

Այն, որ այսօրինակ ակնհայտ ապօրինությունն ու չարդարացված ճնշումները պատճառ են դարձել Արեւմտյան Հայաստանի Հանրապետության պետական համակարգի ներսում լարված իրադրության առաջացման ու դրա անխուսափելի հանգուցալուծման, ամենեւին զարմանալի չէ, ավելին՝ օրինաչափ է:

Հիշեցնենք, որ 2017 թ. հունիսի 11-ին գումարված Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 1-ին գումարման 5-րդ նստաշրջանում որոշում է ընդունվել 2017 թ. հունիսի 11-ից Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախագահ Արմենակ Աբրահամյանի լիազորությունների դադարեցման մասին՝ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության պետական օրենքների կոպիտ խախտումների եւ իշխանության յուրացման փորձի մեղադրանքներով:

Որպես Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նորընտիր նախագահ ջանք չեմ խնայելու օրենքի եւ իրավունքի ոգուն ու տառին հավատարիմ առաջնորդելու Սահմանադրության ընդունման ընթացակարգը մինչեւ վերջ, դրանով իսկ ապահովելով Արեւմտյան Հայաստանի Հանրապետության պետական համակարգի օրենսդրական ամուր հիմքն ու անժխտելի իրավաչափությունը:

2. Միջազգային պայմանագրերի վավերացման հարցի մասին:

Միջազգային պայմանագրերի վավերացման հարցում նույնպես առկա է ընթացակարգի խնդիրը. պայմանագրի ստորագրում, պայմանագրի քննարկում խորհրդարանում եւ համապատասխան որոշման կայացում, կայացված որոշման հիման վրա օրենքի ձեւակերպում, օրենքի ստորագրում նախագահի կողմից:

Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախկին նախագահի կողմից առաջադրված ու նրա կողմից միակողմանի փոփոխված Սահմանադրության օրինակում կարդում ենք.

Հոդված 76. «Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահը Պայմանագիրներու վաւերացման վերաբերեալ

Կետ 8) Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահին կողմէ վաւերացման ենթակայ են այն միջազգային պայմանագիրները, որոնք ունի քաղաքական կամ ռազմական բնույթ, կամ կը նախատեսեն պետական սահմանի փոփոխութիւն»:

Նույն ձեւակերպումը կարդում ենք նաեւ 107-րդ հոդվածում.

Հոդված 107. «Ազգային ժողովը Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նախագահի առաջարկութեամբ կը վաւերացնէ, կը կասեցնէ կամ չեղեալ կը յայտարարէ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան միջազգային պայմանագիրները, բացառութեամբ անոնց, որոնք ունին քաղաքական կամ ռազմական բնոյթ կամ կը նախատեսեն պետական Սահմանի փոփոխութիւն եւ որոնք ենթակայ են Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նախագահի»:

Կրկնենք. «...բացառութեամբ անոնց, որոնք ունին քաղաքական կամ ռազմական բնոյթ կամ կը նախատեսեն պետական Սահմանի փոփոխութիւն եւ որոնք ենթակայ են Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նախագահի»:

Հնարավո՞ր է, որ ազգային – պետական նշանակության այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ «քաղաքական կամ ռազմական բնոյթ կամ կը նախատեսեն պետական Սահմանի փոփոխութիւն«, ենթակա լինեն մեկ մարդու կամքին ու քմահաճույքին, նույնիսկ եթե նա նախագահ է:

Բացառված է: Եւ նման օրինակ չեք գտնի աշխարհի եւ ոչ մի քաղաքակիրթ երկրի Գլխավոր օրենքում՝ ոչ մի երկրի Սահմանադրության մեջ:

Այս կարեւորագույն հարցում եւս հոդվածը պետք է ձեւակերպված լինի այնպես, ինչպես ընդունված է «Միջազգային պայմանագրերի վավերացման մասին» ընթացակարգում, ըստ քայլերի հերթականության, եւ ոչ թե նախկին նախագահի համառության ու քմահաճույքի:

3. Նախագահի լիազորությունների մասին:

Նախագահի լիազորությունները պետք է լինեն ճիշտ այնքան, որքան նախատեսում է երկրի պետական կառավարման համակարգի ընտրությունը. նախագահական, նախագահա-խորհրդարանական, խորհրդարանա-նախագահական եւ այլ...

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրության նախագծի մեջ նշված է. «Արեւմտեան Հայաստանի Հանրապետությունը նախագահա-խորհրդարանական հանրապետություն է»:
Հետեւաբար, այստեղ նախագահի լիազորությունները այնքան են, որքան թելադրում է կառավարման համակարգի այս ձեւը, բայց ոչ երբեք միապետական:
Այս դեպքում կարեւոր չէ նույնիսկ, թե ի՞նչ ձեւակերպում է տրվում նախագահի պարագային՝ «նախագահ», «նախագահ՝ պետության գլուխ», թե «պետության գլուխ՝ նախագահ», որովհետեւ իրականում պարտականությունների ու լիազորությունների հարցը կարգավորվում է օրենքով, օրենքի համապատասխան բաժիններում՝ նախագահ, խորհրդարան, կառավարություն, որտեղ հստակ նշված են նաեւ, թե լիազորությունների, թե իշխանության թեւերի հավասարակշռության, եւ թե արդյունավետ համագործակցության սահմանները, դրանց չափն ու կշիռը:

Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախկին նախագահ Արմենակ Աբրահամյանը ձգտել է բացարձակ լիազորությունների, որոնք նախատեսված չեն եղել ոչ «Արեւմտյան Հայաստանի պետական կառուցվածքի, Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի պատգամավորների կարգավիճակի եւ Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի կանոնակարգի մասին» կանոնակարգ օրենքով (11.06.2014) եւ ոչ էլ հատուկ հանձնաժողովի ներկայացրած Սահմանադրության նախագծի օրինակով: Դրանք ամեն անգամ նախկին նախագահը միակողմանի փոփոխել է իր նախագահական հավակնությունների ու շահերի համեմատ, ձգտելով բացարձակ իշխանության ողջ պետական համակարգի նկատմամբ:
Դրա վառ ապացույցը նրա կողմից միակողմանի փոփոխված Սահմանադրության օրինակն է եւ դրա միակողմանի «վավերացումը», «ստորագրումը», եւ վերոնշյալ երկու հրամանագրերն ու վերջին հայտարարությունը, որոնց՝ օրինականության ու իրավունքի շունչ հաղորդելու փորձեր է արվում, հենվելով չընդունված Սահմանադրության ապօրինի հոդվածների վրա:

Այժմ լիովին տեսանելի է, որ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան) պետական համակարգը Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 5-րդ նստաշրջանի սկզբունքային որոշման հիման վրա խուսափել է իշխանության յուրացման փորձից:

Խնդիրը դյուրին չէ, իրավիճակը կայունացնելու, ապա ամրացնելու, պետական համակարգը դեպի նոր ծրագրային ուղիներ առաջնորդելու հարցը կա:
Որպես պատգամավոր կատարել եմ պարտքս, քվեարկել համակարգի փրկության, ազատության ու անկախության համար:

Որպես նորընտիր նախագահ, որպես 1978 թվականից հայաշունչ ազգային ու ազգագրական շարժման ու գործունեության անմիջական մասնակից ու դերակատար, այդ թվում՝ «Զարթոնք» եւ «Զվարթունք» ազգագրական համույթների համաղեկավար՝ Հայրիկ Մուրադյանի հետ միասին, որպես Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության եւ Արցախյան ազատամարտի մասնակից, որպես արմատներով

Սասուն աշխարհից հայ մարդ, մտավորական ու քաղաքացի՝ անպայման ձգտելու եմ արդարացնել գործընկերների եւ Արեւմտյան Հայաստանի քաղաքացիների վստահությունը:

Նոր երկար ճանապարհի առաջին քայլերն են արված, միասին ենք, այդ միասնությունը կօգնի հաջողությամբ ու պատվով անցնելու մնացած ճանապարհը. ազատագրելու Արեւմտյան Հայաստանը, արդարացի ու վերջնական լուծում տալու Հայկական Հարցին, հաստատելու Արեւմտյան Հայաստանի Հանրապետությունը՝ Արեւմտյան Հայաստանի տարածքի վրա:

Ռադիկ Խամոյան
Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Նախագահ
23.06.2017 թ.

Արեւմտյան Հայաստանի Հանրապետության վարչապետ Տիգրան Փաշաբեզյանի 2-րդ ուղերձը պաշտոնյաներին, պատգամավորներին ու քաղաքացիներին

Արեւմտյան Հայաստանի, այսպես կոչված, կառավարությունների մասին

Ինչպես պարզվում է սովորութային է դառնում ապօրինությունների ուղին բռնելը, իրավական հիմքերին կարեւորություն չտալը եւ մի նոր «կառավարության», ինչպես նաեւ ինքնակոչ «նախագահի» անվան տակ հանդես գալը:
Չենք կարող ուշադրություն չդարձնել այն իրողությանը, որ դրանք հաջորդում են Մերձավոր Արեւելքում նախապատրաստվող ինչ-ինչ ծրագրերի ու գործողությունների, այդ թվում, օրինակ, 2004-ի հուլիսին եւ 2017-ի մայիսին հայտարարված Իրաքի քրդաբնակ շրջաններում հանրաքվե անցկացնելու ծրագրերին: Այնքան էլ կարեւոր չէ, թե մեր պետական համակարգի նախկին մասնակիցները ինչ որ բան հասկացել են, թե՞ ոչ: Կարեւորն այս դեպքում փաստերի արձանագրումն է:
Այդ իմաստով եւս մեկ անգամ անդրադառնանք այս հարցին եւ անցնենք առաջ: Մանավանդ որ, այսպես կոչված, կառավարությունների բազմաքանակ լինելու հարցը՝ անպայման չէ, որ վնասակար է:

Արեւմտյան Հայաստանի, այսպես կոչված, կառավարությունների մասին:
Արեւմտյան Հայաստանի «կառավարությունների» իրողությունը խոսում է այն մասին, որ այդ կառավարություններից կամ ոչ մեկը իրավաչափ (այսինքն՝ լեգիտիմ) չէ, կամ դրանցից մեկն իրավաչափ է, որովհետեւ չի կարող այնպես լինել, որ մեկ կամ ավելի նույնանուն կառույցներ լինեն եւ միաժամանակ համարվեն իրավաչափ:
Ըստ այդմ, քննության առնենք, թե երկու հատկանշական թվականներին՝ 2014 եւ 2017, երբ Մերձավոր Արեւելքում պատրաստվում էին հատուկ գործողություններ, այդ ի՞նչ տեղի ունեցավ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության պետական համակարգի հետ, որի հետեւանքում «ձեւավորվեցին» եւս երկու, այսպես կոչված, կառավարություններ:

ա) Արեւմտյան Հայաստանի, այսպես կոչված, Վտարանդի Կառավարություն, Մայնց, Գերմանիա (ինքնահռչակվել է՝ 21.07.2014 թ.):
Սա անօրինականության առաջին գործողությունն է, որն իրականացվել է 2014 թվականի հուլիսի 21-ի, երբ Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) կայացրած անվստահության որոշման (համաձայն՝ «Արեւմտյան Հայաստանի պետական կառուցվածքի, Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի պատգամավորների կարգավիճակի եւ Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի կանոնակարգի մասին» օրենքի 14-րդ հոդվածի) (11.06.2014), Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախագահ Արմենակ Աբրահամյանի հրամանագրի (03.07.2014) եւ վարչապետ Տիգրան Փաշաբեզյանի թիվ 7 որոշման (22.07.2014) հիման վրա Արեւմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարության (այժմ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Կառավարություն) Արտաքին գործերի նախարարի պաշտոնից ազատված Արամ Մկրտչյանը հրավիրել է Արեւմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարության ապօրինի նիստ, կայացրել ապօրինի որոշումներ ու անօրինական նշանակումներ, այդ թվում, ինքն իրեն վարչապետ նշանակել, որից հետո այդ ամենը փորձել է ներկայացնել, իբրեւ թե՝ իրավական ու իրավաչափ մի գործընթաց:

Հետագայում ստեղծել ու տարածել է ինքնաստեղծ Սահմանադրության օրինակ:

բ) Արեւմտյան Հայաստանի, այսպես կոչված, Կառավարություն, (անօրինական կերպով հիմնվել է նախկին նախագահ Արմենակ Աբրահամյանի ապօրինի հրամանագրով՝ 31.05.2017 թ.):
Անօրինականության երկրորդ գործողությունը Արեւմտյան Հայաստանի Հանրապետության պետական համակարգի նկատմամբ իրականացվել է 2017 թ. մայիսի 31-ին, երբ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախագահ (այժմ արդեն նախկին նախագահ) Արմենակ Աբրահամյանը ստորագրել է ապօրինի հրամանագրեր, հիմնված ապօրինի - ինքնաստեղծ Սահմանադրության օրինակի վրա (Նախագահի հրամանագիր, Թիւ 42 - 2017.05.31 (ԱՀՀ վարչապետի գործառույթները դադարեցնելու մասին) եւ Նախագահի հրամանագիր, Թիւ 43 - 2017.06.05 (ԱՀՀ վարչապետի նշանակման մասին), կոպտորեն խախտելով գործող «Արեւմտյան Հայաստանի պետական կառուցվածքի, Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի պատգամավորների կարգավիճակի եւ Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի կանոնակարգի մասին» օրենքի հոդվածների պահանջները (11.06.2014):
Այստեղից սկիզբ է առնում ոչ իրավաչափ երկրորդ «կառավարության» ձեւավորման փորձը, հիմնված չընդունված Սահմանադրության ապօրինի հոդվածների վրա:

2017 թ. մայիսի 9-ից, իր կողմից իրականացված փոփոխություններով, պատրաստել ու տարածել է ինքնաստեղծ Սահմանադրության օրինակ:

Հիշեցնենք, որ 2017 թ. հունիսի 11-ին Երեւանում գումարված Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 1-ին գումարման 5-րդ նստաշրջանում որոշում է ընդունվել 2017 թ. հունիսի 11-ից Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նախագահ Արմենակ Աբրահամյանի լիազորությունների դադարեցման մասին՝ Արեւմտյան

Հայաստանի Հանրապետության պետական օրենքների կոպիտ խախտումների եւ իշխանության յուրացման փորձի մեղադրանքներով:

գ) Ասվածից զատ, իրականում, մնում է ներկայացնել առաջին ու իրավատու միակ պետական կառույցի՝ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան) Կառավարության անցած ճանապարհը, միաժամանակ ներկայացնելով փաստեր նրա իրավաչափության վերաբերյալ (գործում է ստեղծման պահից՝ 04.02.2011 թ., մինչեւ այսօր, վարչապետն է Տիգրան Փաշաբեզյանը):

2011 թ. փետրվարի 4-ին Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհրդի որոշումով սկսվել է Արեւմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարության ձեւավորման գործընթացը:
Արեւմտյան Հայաստանի Հանրապետության պետական համակարգի ձեւավորման առաջին քայլն է սա:
Այնուհետեւ Արեւմտյան Հայաստանի հայերի ինքնության (հետագայում ինքնության ու քաղաքացիության) համակարգի ձեւավորման միջոցով ընթացել է Արեւմտյան Հայաստանի Հանրապետության պետական կառույցի օրենսդրական փաթեթի՝ հռչակագրերի, օրենքների, որոշումների ու հրամանագրերի ընդունման գործընթացը, որի տրամաբանական շարունակությունը «Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) ձեւաւորման մասին» հռչակագրի ընդունումն է (24.05.2013):
2013 թվականի նոյեմբերի 22-ից մինչեւ դեկտեմբերի 1-ը՝ ամբողջ աշխարհում բնակվող Արեւմտյան Հայաստանի քաղաքացիները, առաջին անգամ, իրականացրել են Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) պատգամավորների ընտրություններ:
Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 1-ին գումարման պատգամավորների մանդատների հաստատումը, խորհրդարանի 1-ին գումարման 1-ին նստաշրջանի անցկացումը եւ խորհրդարանի ձեւավորումը տեղի է ունեցել 2014 թ. հունվարի 18-20-ը:
2014 թ. հունվարի 20-ին խորհրդարանը ընտրել է նախագահ, նախագահը խորհրդարանի հաստատմանն է ներկայացրել վարչապետի թեկնածությունը, վարչապետը ձեռնարկել է կառավարության ձեւավորումը:
Այսպես ամբողջացել է Արեւմտեան Հայաստանի Հանրապետության պետական համակարգի ձեւավորումը, որը 2014 թ. օգոստոսի 10-ից կոչվում է Արեւմտյան Հայաստանի Հանրապետություն (Հայաստան):

2017 թ. հունիսի 11-ին Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 5-րդ նստաշրջանը 3-րդ ընթերցմամբ հաստատել է Արեւմտեան Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, որը սկզբում դրվելու է համաժողովրդական քննարկման եւ ապա հանրաքվեի:
«Արեւմտյան Հայաստանի պետական կառուցվածքի, Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի պատգամավորների կարգավիճակի եւ Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի կանոնակարգի մասին» օրենքի՝ 9-րդ հոդվածի համաձայն՝ Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 2017 թ. հունիսի 11-ին գումարված 5-րդ նստաշրջանում ընտրվել է նախագահ, ում առաջարկով, համաձայն սույն օրենքի 44-րդ հոդվածի, խորհրդարանը վերահաստատել է Արեւմտյան Հայաստանի

Հանրապետության վարչապետ Տիգրան Փաշաբեզյանի թեկնածությունը:

Բոլոր նրանք, ովքեր փորձում են չտեսնելու տալ եւ կամ «արդարացնել» օրենքից ու օրինականությունից ա) եւ բ) կետերում ներկայացված ապօրինությունները, միգուցե պնդելով, թե՝ «այլ ելք չէր մնացել...», նույնիսկ օրենքն ու օրինականությունը խախտելու գնով, թող հիշեն, որ ամեն ինչ սկսվում է հենց այդպես եւ հենց դրանից...
Եւ թող հիշեն, որ այդ դեպքում այլեւս իրավունք չունեն տրտնջալու ու բողոքելու այն իրողություններից եւ իրավիճակներից, որոնք պատահել են հայության ազգային ու պետական, հասարակական ու ընկերային կյանքում ու կենսագործունեության մեջ:

2017 թ. հունիսի 11-ը, Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 5-րդ նստաշրջանի անցկացումն ու որոշումները սովորական երեւույթներ չէին, դրանք մեր մեջ հաստատեցին օրինականությունն ու բարոյականությունը պաշտպանելու մեր պատգամավորների կամքն ու վճռականությունը:

Դրանք միտված էին պաշտպանելու՝
ա) հայության իրավունքների հետապնդման գործընթացը ու նրա շարունակելիությունը,
բ) Արեւմտյան Հայաստանի Հանրապետության պետական համակարգը եւ քաղաքացիներին, նրանց ազատությունն ու անկախությունը,
գ) Արեւմտյան Հայաստանի Հանրապետության պետական համակարգի պաշտոնյաներին, պատգամավորներին, քաղաքացիներին՝ ապօրինի հրամանագրերից ու ոտնձգություններից:

Իրավաչափ է Արեւմտյան Հայաստանի Հանրապետության այն կառավարությունը եւ այն պետական համակարգը, որի պատասխանատուներն են՝ նորընտիր նախագահ Ռադիկ Խամոյանը, վարչապետ Տիգրան Փաշաբեզյանը, խորհրդարանի նախագահ Արմեն Տեր-Սարգսյանը:
Նրանք գիտեն, որ պարտավոր են արդարացնել գործընկերների՝ պատգամավորների, պաշտոնյաների ու քաղաքացիների վստահությունը, որի ամենակարճ եւ ուղիղ ճանապարհը՝ օրինականության ու իրավունքի սկզբունքներին հավատարիմ լինելն է:

Տիգրան Փաշաբեզյան
Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Վարչապետ
17.07.2017 թ.

Ծանոթագրություն
1. Տես, Իրաքյան Քուրդիստանի պաշտոնական հանրաքվեն եւ Թուրքիան. պաշտոնական Անկարան մտավախություններ ունի, 23. 06.2017, Armenpress:
2. Տես, Барзани воскрешает дух Севрского договора, 11 июня 2017, Regnum.

ԳԼՈՒԽ VI

ԱՐԵՒՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԵՒ ՆՅՈՒԹԵՐ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայերի ցեղասպանության ճանաչման, դատապարտման եւ հատուցման հարցերի շուրջ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան) ռազմավարության մասին

(լրամշակված օրինակ)

Հայերի ցեղասպանության ճանաչման, դատապարտման եւ հատուցման խնդիրներում Արեւմտյան Հայաստանի Հանրապետության ռազմավարությունը կառուցված է հետեւյալ հարցադրումներին տրված ճշգրիտ պատասխանների վրա.

- Հայերի ցեղասպանությունը դատարապարտվել է 1896, 1909, 1915, 1919 թթ., որտե՞ղից ծագեց Հայերի ցեղասպանության ճանաչման խնդիրը եւ Հայերի ցեղասպանությունը մեկ անգամ եւս կրկին դատապարտելու խնդիրը:
- Ե՞րբ է իրականացվել Հայերի ցեղասպանությունը, ո՞ր տարիներին, ո՞ւմ կողմից եւ ո՞րն է Հայերի ցեղասպանության ժամանակագրությունը, 1915-1923, թե՞ 1894-1923 թթ.:
- Ո՞րն է Հայերի ցեղասպանության հետեւանքով հայությանն ու Հայաստանին հասցված վնասը եւ իրականացվել է, արդյո՞ք այդ վնասի գնահատումը, հաշվարկը, այլ կերպ ասած, գոյություն ունի, արդյո՞ք վնասի հատուցման հաշվարկի ամբողջական փաթեթը:

I. Հայերի ցեղասպանության դատապարտման ժամանակը:

Միջազգային ընկերակցությունը Լոզանի կոնֆերանսից հետո՝ 1923-1965 թթ., Հայերի ցեղասպանության խնդիրը վարպետորեն շրջանցեց եւ մոռացության մատնեց:

Մոռացության պատը հնարավոր եղավ քանդել 1965 թ. Մեծ եղեռնի 50-ամյա տարելիցի օրերին Խորհրդային Հայաստանում բռնկված պահանջատիրության ցույցերով, շարժումով եւ, մանավանդ, 1973-1975 թթ. Հայկական սփյուռքում ձեւավորված ազգային ազատագրական պայքարի՝ Գուրգեն Յանիկյանի, Գեւորգ Աճեմյանի, Սիմոն Սիմոնյանի, Հայաստանի Ազատագրության Հայ Գաղտնի Բանակի, Հայերի Ցեղասպանության Արդարության Մարտիկների եւ այլ կազմակերպությունների ու անհատների մեծ ջանքերի ու զոհողությունների գնով:

1965-1985 թվականները Հայերի ցեղասպանության ճանաչման տարիներն են: Այդ ժամանակ էր, որ հայ ազատագրական պայքարի ծավալմանը զուգընթաց՝ համաշխարհային լրատվամիջոցները բառացիորեն ողողվեցին հայության եւ Հայաստանի, ինչպես նաեւ Հայերի ցեղասպանության վերաբերյալ տեղեկություններով, հարցազրույցներով, հոդվածներով, գրքերով, հաղորդաշարերով ու ֆիլմերով…

1985-ը Գորբաչովյան պերեստրոյկայի եւ 1987-ը՝ Եվրոպական պառլամենտի «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» բանաձեւի ընդունման տարեթվերն են, որոնց անմիջապես հաջորդել են Սումգայիթում, Բաքվում, Գանձակում եւ այլ վայրերում բնակվող ազգությամբ հայ քաղաքացիների հալածանքները, կոտորածը, բռնագաղթը եւ ԼՂՀ-ի ու ՀՀ-ի դեմ Ադրբեջանի Հանրապետության սանձազերծած ագրեսիան:

Նոր ժամանակների հայ ազգային ազատագրական պայքարի նոր փուլը Արցախյան ազատամարտն է՝ 1988-1994 թթ., որի հաղթական ավարտից հետո, իսկապես, որ պետք է գար Հայերի ցեղասպանության դատապարտման եւ հատուցման ժամանակը՝ մանավանդ, որ ազգովին դիմակայել էինք հայերի նոր ցեղասպանություն կազմակերպելու դավադրությանը:

Ու թեեւ թանկարժեք ժամանակը կորսված է, սակայն ամեն ինչ չէ, որ կորած է:

Պարզապես, պետք է ընդունել, որ Հայերի ցեղասպանության ճանաչման պարտադրված գործընթացն ավարտված է եւ պետք է անցում կատարել Հայերի ցեղասպանության միջազգային դատապարտման եւ հատուցման գործընթացին:

II. Հայերի ցեղասպանության իրականացման ժամանակաշրջանը եւ ցեղասպանության դատապարտումները:

Հայերի ցեղասպանությունը իրականացվել է 1894-1923 թթ. ընթացքում Թուրքիայի իրար հաջորդող կառավարությունների կողմից՝ սուլթանական, երիտթուրքական քեմալական, հետագայում՝ հանրապետական: Իրականացվել է Օսմանյան կայսրության տարածքում, Արեւմտյան Հայաստանում, Կիլիկյան Հայաստանում, Արեւելյան Հայաստանում, Բաքվում, Շուշիում…

Եւ 1918-2016 թթ. ընթացքում Ադրբեջանի երեք հանրապետությունների իրար հաջորդող կառավարությունների կողմից՝ Ադրբեջանում, Արցախում, Նախիջեւանում եւ հայկական այլ տարածքներում:

Հայերի ցեղասպանության, հայատյացության, հալածանքների, հայկական մշակութային ու քաղաքակրթական արժեքների ոչնչացման, ինչպես նաեւ հայ մշակույթի կեղծարարության եւ մշակութային արժեքների յուրացման քաղաքականությունն ու գործելակերպը Թուրքիայի եւ Ադրբեջանի կառավարությունների կողմից շարունակվում է մինչեւ այսօր:

Ավելին, պետական ահաբեկչության այդ նույն քաղաքականությունն իրականացվում է նաեւ Մեծ Մերձավոր Արեւելքի այլ հին ժողովուրդների նկատմամբ՝ հույների, ասորիների, թալիշների եւ այլ:

- Հայերի ցեղասպանությունը դատարապարտվել է 1896, 1909, 1915, 1919 թթ.:

- 1894-1896 թթ. Սուլթան Աբդուլ Համիդ 2-րդի կազմակերպած կոտորածներին զոհ են գնացել 300 հազար, բռնի կրոնափոխության ենթարկվել 200 հազար, տարագրվել 100 հազար հայ: Հայկական կոտորածներն իրականացրել են թուրքական կանոնավոր զորամասերը, «Համիդիե» գնդերը, ոստիկանությունը եւ ազգայնամոլ ամբոխը:
- Համիդյան կոտորածների ընթացքում տեղի է ունեցել հայերի բռնի կրոնափոխությունը, ինչը հիմք է հանդիսացել իսլամացման ու թուրքացման քաղաքականության սկզբնավորման եւ էլ ավելի բիրտ եղանակներով դրա շարունակության համար:
- 1894-1896 թթ. Համիդյան կոտորածները դատապարտել են ժամանակի առաջադեմ գործիչներ Ժան Ժորեսը, Վիկտոր Բերարը, Անատոլ Ֆրանսը, Յոհաննես Լեփսիուսը, Լինչը եւ ուրիշներ:
- 1909 թ. Ադանայի կոտորածների ձեռագիրը նույնն է, այն կազմակերպել է թուրքական իշխանությունը, իրականացրել ազգայնամոլ ամբոխը, մասնակցել թուրքական բանակը: Ադանայի կոտորածներին զոհ է գնացել շուրջ 30 հազար հայ: Ցեղասպանության փաստի առընչությամբ դատավարություն է կազմակերպվել, որը սակայն ձեւական բնույթ է կրել: Կազմակերպված հրդեհի միջոցով դատավարության նյութերը փորձել են կրակի մատնել ու ոչնչացնել, թեեւ շատ նյութեր փրկվել են եւ պահպանվում են առ այսօր:
- 1915 թ. ապրիլի 24-ին Կոստանդնուպոլսի հայ մտավորականների ձերբակալությամբ սկսվել է Հայերի ցեղասպանության ամենամեծ ալիքը, որը շարունակվել է մինչեւ 1923 թ. եւ, ըստ էության, չի ավարտվել մինչեւ այսօր: Հայերի ցեղասպանության հետեւանքով զոհվել է ավելի քան մեկ ու կես միլիոն հայ եւ կես միլիոն հայ բռնագաղթվել է, դարձել փախստական ու տարագիր:
- 1915 թ. մայիսի 24-ին Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան եւ Ռուսաստանը հանդես են եկել երիտթուրքական կառավարության սանձազերծած հայերի կոտորածներն ու ցեղասպանությունը դատապարտող հատուկ հայտարարությամբ, որտեղ 1915 թ. ապրիլյան կոտորածները որակել են, որպես «Թուրքիայի նոր ոճիրը մարդկության եւ քաղաքակրթության դեմ»: Տեքստում մասնավորապես ասված էր. «Հաշվի առնելով մարդկության և քաղաքակրթության դեմ Թուրքիայի նոր հանցագործությունները՝ Դաշնակից պետությունների կառավարությունները հրապարակայնորեն հայտարարում են Բարձր դռանը այս հանցագործությունների համար Օսմանյան կառավարության բոլոր անդամների անձնական պատասխանատվության մասին, ինչպես նաեւ տեղական այն պաշտոնյաների, որոնք մասնակից կդառնան այդ կոտորածներին»:
- Օսմանյան կայսրությունը, որն իրականացրել է Հայերի ցեղասպանությունը, ինքն է առաջիններից մեկը ճանաչել ու դատապարտել այն: Կոստանդնուպոլսի Ռազմական հատուկ ատյանը 1919 – 1920 թթ. իրականացրել է երիտթուրք պարագլուխների դատավարությունը նրանց ներկայացնելով երկու մեղադրանք. Օսմանյան կայսրությունը պատերազմի մեջ ներքաշելու եւ կայսրության հպատակ հայ քաղաքացիների կոտորածները, ցեղասպանությունը ու բռնագաղթը իրականացնելու համար, ինչի հիման վրա երիտթուրք պարագլուխներից Թալեաթը, Էնվերը, Ջեմալը, Նազիմը, Քեմալ բեյը, Ջեմալ Ազմին, Նայիմը, Բեհաեդդին Շաքիրը հեռակա կարգով դատապարտվել են մահվան, որն հետագայում ի կատար են ածել «Նեմեսիս գործողություն» հայ վրիժառուները:

- Հայերի ցեղասպանությունը ճանաչել եւ դատապարտել են ՄԱԿ-ի անդամ 39 պետություններ, ՄԱԿ-ի մի քանի հանձնաժողովներ (1985), Եվրոպայի Խորհուրդը (1998, 2001), Եվրախորհրդարանը (1987, 2000, 2002, 2015), Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը (1983), Ժողովուրդների մշտական դատական ատյանը (1984), ԱՄՆ 50 նահանգներից 49-ը եւ այլն:
- 1919 թ. կատարվել է Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Հայաստանին հասցված նյութական վնասի գնահատումը:
- 1920 թ. ստորագրվել է Սեւրի պայմանագիրը, որի 88-93-րդ հոդվածները վերաբերում էին Հայաստանին եւ 1920 թ. նոյեմբերի 22-ին ԱՄՆ 28-րդ նախագահ Վուդրո Վիլսոնը ընդունել է Իրավարար վճիռ Թուրքիայի եւ Հայաստանի սահմանի վերաբերյալ:

Վերոնշյալ փաստերը ցույց են տալիս, որ հայ ժողովրդին ու Հայաստանին հասցված վնասի հատուցումը, որն իրականացվելու էր Սեւրի դաշնագրի եւ Վիլսոնի Իրավարար վճռի դրույթների գործադրմամբ, ինչպես նաեւ պատճառված նյութական վնասի հատուցմամբ՝ որոշվել է, ստորագրվել, վավերացվել, սակայն չի իրականացվել:

Ավելին, 1923 թ. հետո այդ ամենը միտումնավոր կերպով մոռացության է մատնվել:

III. Հայերի ցեղասպանության ժամանակագրության հարցը՝ 1915-1923 թթ., թե՞ 1894-1923 թթ.:

Այս հարցում, իրավական դիրքորոշման տեսակետից, կարեւոր է, թե ի՞նչ ժամանակահատվածում եւ ո՞ւմ կողմից է իրականացվել Հայերի ցեղասպանությունը: Այդ իմաստով մերժելի է 1915-1923 թթ. ձեւակերպումը: Ճիշտ է եւ պատմականորեն փաստարկված՝ 1894-1923 թթ. ձեւակերպումն ու ժամանակագրությունը, որովհետեւ երեք եւ ավելի իրար հաջորդող թուրքական կառավարություններ՝ օսմանյան, երիտթուրքական, քեմալական, նույնատիպ բնաջնջման գործողություններ են իրականացրել հայության նկատմամբ:

Անպայման պետք է հիշատակել նաեւ 1894-96 թթ. Աբդուլ Համիդ 2-ի կազմակերպած Համիդյան կոտորածները, 1909 թ. Երիտթուրքերի կազմակերպած Ադանայի հայության կոտորածը, որոնք նույնպես Հայերի ցեղասպանության դրվագներից են: Մենք ոչ իրավական, ոչ քաղաքական, եւ ոչ էլ բարոյական իրավունք ունենք դրանք անտեսելու եւ մոռացության մատնելու, առավել եւս, որ դրանք Հայերի պահանջատիրության ապագա քայլերի իմաստով խիստ կարեւոր նշանակություն ունեն ընդհանուր շղթայի մեջ:

IV. Հայ ժողովրդի, մարդկության եւ քաղաքակրթության դեմ՝ Թուրքիայի իրար հաջորդող կառավարությունների իրականացրած հանցագործությունները, առնվազն վերջին 100 տարիների ընթացքում:

Որպեսզի պատկերացում կազմենք Հայերի ցեղասպանության հետեւանքով հայերին հասցված ամբողջական վնասի վերաբերյալ, հարկավոր է պարզապես հիշել թուրքական

իրար հաջորդող կառավարությունների՝ սուլթանական, երիտթուրքական, քեմալական, կողմից իրականացված բոլոր հանցագործությունները մարդկության եւ հայության նկատմամբ:

Պարզապես թվարկենք դրանք:

- Այլատյացության, հայատյացության, ազգային գերազանցության ու սնապարծության, ռասիզմի գաղափարախոսության՝ պանթուրքիզմի ձեւավորում, տարածում եւ քարոզչություն:
- Հայերի տեղահանության եւ ցեղասպանության ծրագրերի ու գաղափարների մշակում, տարածում, քարոզչություն:
- 1894-1896, 1909, 1915-1918, 1919-1923 թթ. ընթացքում հայ ժողովրդի բնօրրանում՝ Հայկական լեռնաշխարհում, եւ Օսմանյան կայսրության տարածքում Հայերի ցեղասպանության ու բռնագաղթի իրականացում, հայ ժողովրդի ունեցվածքի հափշտակում եւ յուրացում:
- 1915-ին եւ դրան հաջորդող տարիներին՝ հույների, ասորիների, արաբների (հետագայում, 1920-ական թթ. կեսերից սկսած, նաեւ քրդերի) կոտորածների ու ցեղասպանության իրականացում, նրանց ունեցվածքի հափշտակում եւ յուրացում:
- 1918 թ., ագրեսիայի ձեռնարկում Արեւելյան Հայաստանի հայության նկատմամբ, Բաթումի ապօրինի պայմանագրի (4 հունիս 1918 թ.) պարտադրում նորաստեղծ Հայաստանի Հանրապետությանը
- 1918 թ., Բաքվի հայերի կոտորած, ցեղասպանություն, հայերի ունեցվածքի կողոպուտ:
- 1920 թ., Շուշիի հայերի կոտորած, քաղաքի հրդեհում, հայերի ունեցվածքի կողոպուտ:
- 1920 թ., ագրեսիայի ձեռնարկում անկախ եւ ինքնիշխան պետության՝ Հայաստանի Հանրապետության նկատմամբ, այնուհետեւ անօրինական եւ ապօրինի պայմանագրերի (2 դեկտեմբեր 1920 թ., Ալեքսանդրապոլ եւ 13 հոկտեմբեր 1921 թ., Կարս) պարտադրում ագրեսիայի ենթարկված կողմին՝ Հայաստանի Հանրապետությանը:
- Հայ ժողովրդի իրավունքների հաշվին, 3 մարտ 1918 թ.-ին, մի կողմից Ռուսաստանի Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության եւ մյուս կողմից՝ Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Բուլղարիայի եւ Օսմանյան կայսերական կառավարության միջեւ ստորագրվեց Բրեստի լրացուցիչ պայմանագիրը: Այդ պայմանագրով Ռուսաստանը Թուրքիային հանձնեց Արեւմտյան Հայաստանը եւ Արեւելյան Հայաստանի մի զգալի մասը: Պայմանագրով ստանձնած հանձնառության համաձայն՝ Ռուսաստանը զորացրեց Հայկական կամավորական գնդերը եւ զորքերը դուրս բերեց Հայաստանից: 16 մարտ 1921 թ.-ին ստորագրված, այսպես կոչված, Մոսկվայի անօրինական պայմանագիրը՝ Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Սովետական Հանրապետության կառավարության եւ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի միջեւ, ըստ էության, Բրեստի լրացուցիչ պայմանագրի շարունակություն էր եւ դրա «վավերացումը»:
- Վերոհիշյալ պայմանագրերը փաստորեն կոպտորեն խախտել են միջազգային իրավունքի հիմնարար դրույթները, քանի որ կնքվել են ագրեսիայի ու պարտադրանքի արդյունքում

- 1937 թ., Դերսիմի հայերի ու ալեւիների կոտորածների ու ցեղասպանության իրականացում:
- 1955 թ., սեպտեմբեր, Կոստանդնուպոլսի հույների ու հայերի կոտորածներ, ցեղասպանություն, հույների ու հայերի ունեցվածքի թալան, հափշտակում: Ըստ պաշտոնական տվյալների՝ սեպտեմբերի 6-7-ին մահացել է 11 մարդ, մինչդեռ հայկական ու հունական համայնքների մոտ եղած տեղեկություններն այլ են. 37 սպանված, 300-ից ավելի բռնաբարված կին, ավերված 71 եկեղեցի, 3 թերթի խմբագրություն, 4.500 արհեստանոց ու խանութ, 26 դպրոց, 2.100 տուն ու բնակարան:
- 1974 թ., Կիպրոսի Հանրապետության հյուսիսային տարածքների բռնազավթում, տեղի հույն եւ հայ բնակչության կոտորածներ, ցեղասպանություն, բռնագաղթ, ունեցվածքի հափշտակում:
- 1894-1923 թթ., 1923 թ.-ից մինչեւ այսօր Հայոց քաղաքակրթական արժեքների, այդ թվում՝ պատմաճարտարապետական հուշարձանների եւ եկեղեցիների ու խաչքարերի ոչնչացում ու ավերում: Համաձայն 1914 թ. տվյալների հայկական եկեղեցիների ու եկեղեցական համալիրների ընդհանուր թիվն Արեւմտյան Հայաստանում եւ Օսմանյան կայսրության մեջ կազմել է 2549 (այդ թվում IV-V դդ. վաղ քրիստոնեական հուշարձանները): Դրանց մեծ մասը թալանվել, հրկիզվել եւ ավերվել է ցեղասպանության ժամանակ: ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1974 թ. տվյալների համաձայն՝ 1923 թ.-ից հետո պահպանված 913 պատմա-ճարտարապետական հուշարձաններից 464-ը հիմնահատակ ոչնչացվել են, 252-ը ավերակ վիճակում է, 197-ը հիմնական վերանորոգման կարիք ունի: Այսօր արդեն գրեթե ոչինչ չի մնացել վերականգնելու, Թուրքիայի Հանրապետության կառավարությունները դրանք բոլորը ծրագրավորված կերպով ոչնչացրել են:
- Հայերի եւ տարածաշրջանի այլ ժողովուրդների պատմության, մշակույթի եւ քաղաքակրթական այլ արժեքների կեղծարարություն, յուրացում:
- Հայերի ցեղասպանության ժխտողականություն: Այս հարցով ժամանակ շահելու եւ հատուցումը հետաձգելու ակնկալիքներով՝ պատմաբանների հանձնաժողովի ստեղծման առաջարկներ:
- ԱՄՆ 28-րդ Նախագահ Վուդրո Վիլսոնի 1920թ. նոյեմբերի 22-ի Իրավարար վճռով Հայաստանին պատկանող տարածքի բռնազավթում:
- 1993 թ.-ից Հայաստանի Հանրապետության շրջափակում:

Ադրբեջանի երեք հանրապետությունների իրար հաջորդող կառավարությունների իրականացրած հանցագործությունները Հայաստանի, հայերի, տարածաշրջանի այլ ժողովուրդների եւ մարդկության նկատմամբ Թուրքիայի իշխանությունների ձեռագրի ու ծրագրի կրկնությունն են, որի ամբողջական պատկերը կներկայացնենք հաջորդ պարագրաֆում՝ ստորեւ:

V. Հայ ժողովրդի, մարդկության եւ քաղաքակրթության դեմ՝ Ադրբեջանի երեք հանրապետությունների իրար հաջորդող կառավարությունների հանցագործությունները, առնվազն վերջին 100 տարիների ընթացքում, որոնք Թուրքիայի իրար հաջորդող կառավարությունների ցեղասպանական ծրագրերին մասն են կազմում եւ այդ ծրագրերի ուղղակի պատճենահանումն ու

կրկնօրինակումներն են: Ավելի մեծ ժամանակային ծավալ ընդգրկել չենք կարող, քանի որ Ադրբեջան անվանումով արհեստական պետությունը ստեղծվել է 1918 թ.-ին:

- 1905-1906 թթ., մասնակցություն Կովկասում հայերի դեմ հրահրված խժդժություններին, հայերի հալածանքներ ու սպանություններ, նրանց ունեցվածքի հափշտակում:
- 1918 թ., մասնակցություն թուրքական զորքերի կողմից իրականացված Բաքվի հայերի կոտորածներին, նրանց ունեցվածքի հափշտակում:
- 1918-1921 թթ., զինված հարձակումներ ու բռնություններ Ղարաբաղի, Նախիջեւանի, Զանգեզուրի հայ բնակչության նկատմամբ, ագրեսիա՝ Հայաստանի Հանրապետության նկատմամբ, տարածքային անհիմն պահանջների ներկայացում, անկայունության հրահրում տարածաշրջանում:
- 1920 թ., Շուշի քաղաքի հայ բնակչության կոտորած, քաղաքի հրդեհում, քաղաքի հայերի ունեցվածքի հափշտակում:
- Արցախը Ադրբեջանին բռնակցելու անօրինական որոշման ընդունում: 1921 թ.-ի հուլիսի 5-ին Ռուսաստանի Կոմունիստական Կուսակցության Կովկասյան Բյուրոյի նիստը, արհամարհելով Ազգերի լիգայի համապատասխան որոշումը եւ Արցախի ժողովրդի կարծիքը՝ որպես Խորհրդային Հայաստանի եւ Խորհրդային Ադրբեջանի միջեւ սահմանների որոշման ժողովրդավարական գործիք, ի հակադրություն միացման բանաձեւի, արարողակարգային խախտումներով՝ անօրինական որոշում ընդունեց Խորհրդային Հայաստանից Արցախի բռնի անջատման մասին՝ Խորհրդային Ադրբեջանի կազմում լայն իրավասություններով ազգային ինքնավարություն կազմավորելու պայմանով: Այսպիսով, պատմական հայկական ու հայաբնակ տարածքների մեծ մասը հանձնվեց Խորհրդային Ադրբեջանին:
- 1921 թ., Մոսկվայի ապօրինի պայմանագրի ստորագրում, Նախիջեւանի երկրամասի բռնակցում Ադրբեջանին՝ խնամակալության անվան ներքո: Նախջեւանի երկրամասի բռնազավթում եւ շահագործում, հանցագործություններ եւ հալածանքներ Նախջեւանի բնիկ հայերի նկատմամբ, ի վերջո՝ Նախիջեւանի երկրամասի հայաթափում:
- 1921-1988 թթ., Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բռնազավթում եւ շահագործում, հանցագործություններ Արցախի բնիկ հայության նկատմամբ:
- 1930-ական թթ. մինչեւ մեր օրերը, Ադրբեջանում, Նախիջեւանում եւ Արցախում ապրող ժողովուրդների՝ հայերի, ուդիների, թալիշների, թաթերի, ավարների, լեզգիների բռնի ձուլում, նրանցից շատերի նկատմամբ ցեղասպանական գործողությունների իրականացում:
- 1960-ական թթ. մինչեւ մեր օրերը, տարածաշրջանի ժողովուրդների, այդ թվում, մասնավորապես, հայերի պատմության եւ մշակույթի կեղծարարություն, քաղաքակրթական եւ պատմական, ճարտարապետական արժեքների ոչնչացում կամ յուրացում:
- 1988 թ., Արցախի հայության՝ ապրելու, զարգանալու եւ ապագա ունեալու կամքի եւ իրավունքի արտահայտության ճնշում բռնամիջոցներով, իրականացված հայերի զանգվածային սպանություններով, հալածանքներով, ահաբեկումներով, բանտարկություններով:

- 1988 թ., Սպիտակի երկրաշարժի վերականգնողական աշխատանքների համար նախատեսված շինանյութի, ինչպես նաեւ աղետի գոտու համար ժողովված մարդասիրական օգնության ամոթալի կողոպուտ ու թալան:
- 1988-1990 թթ., Ադրբեջանի Հանրապետության քաղաքացի հայ բնակչության ցեղասպանության եւ բռնագաղթի իրականացում, ունեցվածքի հափշտակում:
- 1991-1994 թթ., լայնածավալ ագրեսիա ԼՂՀ-ի, ինչպես նաեւ ՀՀ-ի սահմանամերձ շրջանների նկատմամբ:
- Ադրբեջանի Հանրապետությունը, պետություն է, որի կառավարությունը ավերել է եւ շարունակում է ոչնչացնել բազմաթիվ հին հայկական հուշարձաններ, եկեղեցիներ, հայ ժողովրդի մշակութային ժառանգությունը: Այս ամենի խոսուն վկայություն է Ադրբեջանի Հանրապետության, Արցախի եւ Նախիջեւանի հայկական տարածքներում գտնվող 89 միջնադարյան հայկական եկեղեցիների, 5480 խաչքարերի եւ 22,700 գերեզմանների ոչնչացումը, այդ թվում՝ Ագուլիսում 400 խաչքարերի եւ 2005 թ. Նախիջեւանում Ջուղայի հազարավոր միջնադարյան բնօրինակ եւ հնագույն խաչքարերի ոչնչացումը:
- 2016 թ., ապրիլ, ապրիլյան քառօրյա պատերազմի ու ագրեսիայի սանձազերծում Արցախի Հանրապետության եւ Արցախի հայության նկատմամբ, պատերազմական նոր հանցագործությունների իրականացում:
- 1988-2019 թթ., ԼՂՀ-ի, ՀՀ-ի շրջափակում, ազատ զարգանալու հնարավորության իրավունքի խոչընդոտում, արգելափակում:
- 1988-2019 թթ., միջազգային ընտանիքի կողմից թույլ իրականացվող վերահսկողության պայմաններում, Ադրբեջանի Հանրապետության կողմից սպառազինությունների թույլատրելիության բոլոր նորմերի ու սահմանումների խախտում, տարածաշրջանային անկայունության հրահրում: Ադրբեջանի Հանրապետության իշխանությունների կողմից, հատկապես նոր սերնդի մոտ, հայատյացության, այլատյացության, ռասիզմի սերմանում, ազգամիջյան կույր ատելության բորբոքում ու հրահրում, նոր պատերազմների ու ցեղասպանության քարոզչություն եւ նախապատրաստություն:

VI. Ամփոփիչ խոսք:

Սա է ոչ ամբողջական ցանկը մարդկության եւ հայության դեմ՝ Թուրքիայի եւ Ադրբեջանի իրար հաջորդող կառավարությունների իրականացրած հանցագործությունների, առնվազն վերջին 100 տարիների ընթացքում:

Այս ամենին հավելենք, ոչ մինչեւ այսօր չի կատարվել հայ ժողովրդին հասցված ողջ վնասի գնահատումն ու հաշվարկը, ինչպես նաեւ 1923-ից հետո ընկած ժամանակահատվածում այլ հանցագործությունների միջոցով հայությանն ու Հայաստանին հասցված ողջ վնասի չափի գնահատումն ու հաշվարկը:

Սակայն այստեղ թվարկված հանցագործություններն ուղիղ մատնանշում են այն վնասները, որոնք կարելի է եւ պետք է հաշվարկել ու այդպես պատրաստել Հայերի ցեղասպանության հետեւանքով հայությանն ու Հայաստանին հասված ամբողջ վնասի իրական չափը, վնասների հատուցման ամբողջական փաթեթը:

Մեկ կարեւոր նկատառում եւս, որպես եզրափակիչ խոսք:

Հայերի նկատմամբ 1894 - 1923 թթ. ընթացքում իրականացված կոտորածն ու բռնագաղթը հանդիսանում է ցեղասպանություն, համաձայն՝ ՄԱԿ-ի «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման եւ դրա պատժի մասին» Կոնվենցիայի, 9 դեկտեմբեր 1948 թ.: Հայերի ցեղասպանությունը ենթակա է դատապարտման, համաձայն՝ ՄԱԿ-ի «Պատերազմի հանցագործությունների եւ մարդկության դեմ հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին» Կոնվենցիայի, 26 նոյեմբեր 1968 թ.:

Կարող ենք փաստել, որ Հայերի ցեղասպանությունը մինչեւ այսօր շարունակվում է եւ շարունակվելու է, քանի դեռ չի իրականացվել հանցագործության դատապարտումը եւ պատճառված վնասի ամբողջական հատուցումը: Եվ քանի դեռ հայությունը չի վերագտել՝ ապրելու, զարգանալու եւ առաջընթացի իրավական – քաղաքական, ազգային – պետական ամուր եւ անսասան հիմքերը:

Սույն հայտարարությունն ընդունված է 19.10.2014 թ. Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 1-ին գումարման 2-րդ նստաշրջանում:
Լրացումները կատարվել են 04.09.2019 թ. Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման Խորհրդարանի Նախագահության եւ Կառավարության համատեղ նիստում:

Արմեն Տեր-Սարգսյան
Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Նախագահ

04.09.2019 թ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Ասորիների եւ հույների ցեղասպանությունը դատապարտելու մասին

Հաշվի առնելով Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան) Նախագահի թիվ 33, թիվ 34 հրամանագրերը (06.04.2015) ասորիների եւ հույների ցեղասպանությունը դատապարտելու մասին,

առաջնորդվելով՝ ՄԱԿ-ի «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու եւ դրա համար պատժի մասին» եւ «Պատերազմի հանցագործությունների եւ մարդկության դեմ հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին» Կոնվենցիաների հոդվածների պահանջներով,

Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովը (Խորհրդարանը) դատապարտում է թուրքական իրարհաջորդ կառավարությունների կողմից 1915-1923 թթ. իրականացված ասորիների եւ հույների ցեղասպանությունը:

Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովը (Խորհրդարանը) զորակցում է բարեկամ ժողովուրդներին նրանց իրավունքների պաշտպանության հարցերում եւ աջակցում ցեղասպանության հետեւանքների վերացման ու արդարության հաստատման գործում:

Արմեն Տեր-Սարգսյան
Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) Նախագահ
07.04.2015 թ.

ՈՒՂԵՐՁ
Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (խորհրդարանի) ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի անդամ պետությունների խորհրդարաններին

(Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ ուղղված Ադրբեջանի Հանրապետության ագրեսիայի վերաբերյալ)

Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովը (Խորհրդարանը) խստորեն դատապարտում է Ադրբեջանի Հանրապետության եւ նրա հրահրիչների, աննախադեպ ագրեսիվ եւ անպատասխանատու որոշումը լայնածավալ ռազմական գործողություններ սկսել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ, որը հանգեցրել է Արցախի հետ շփման գծի ողջ երկայնքով եւ Հայաստանի Հանրապետության հետ սահմաններում իրավիճակի կտրուկ սրացման եւ գերաճած ռազմական առճակատման, զրահատեխնիկայի, ավիացիայի ու հրետանու օգտագործմամբ: Կան բազմաթիվ զոհեր եւ վիրավորներ Արցախի խաղաղ բնակչության շրջանում, այդ թվում՝ կանանց եւ երեխաների:

Մերձավոր Արեւելքի հակամարտության հրահրողները եւ Թուրքիայի Հանրապետության ղեկավարությունը, որպեսզի խուսափեն իրենց արարքների անխուսափելի պատասխանատվությունից, ձգտում են պատասխանատվությունը իրենց եւ Թուրքիայի Հանրապետության վրայից փոխանցել ՀՀ-ի եւ Արցախի սահմաններ՝ Ադրբեջանի Հանրապետության ագրեսիայի միջոցով: Այսպիսով, փորձելով շեղել համաշխարհային հանրության ուշադրությունը իրենց իրական նպատակներից եւ հանցագործ ծրագրերից Մերձավոր Արեւելքում, ու փրկել Թուրքիայի Հանրապետությունը եւ նրա հրահրողներին անխուսափելի պատասխանատվությունից:

Կոչ ենք անում միջազգային հանրությանը, մասնավորապես այն երկրներին, որոնք ներգրավված են հակամարտության կարգավորման գործընթացում, գործուն քայլեր ձեռնարկել, ստիպելով Ադրբեջանի Հանրապետությանը դադարեցնել ագրեսիան եւ հարկադրել խաղաղության:

Հակամարտության հետագա վատթարացումը կարող է հանգեցնել անկանխատեսելի հետեւանքների, ինչպես ադրբեջանական, այնպես էլ թուրքական կողմի համար:
Ամեն ինչ կավարտվի այնտեղ, որտեղ սկսվել է, այդ թվում, Արեւմտյան Հայաստանի Հանրապետության հաստատմամբ՝ Արեւմտյան Հայաստանում:

Արմեն Տեր-Սարգսյան
Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Նախագահ
03.04.2016թ.

Օ Ր Ե Ն Ք
«Սեւրի խաղաղության պայմանագիրը վավերացնելու մասին, ստորագրված 10 օգոստոս 1920 թ., Սեւրում»

Ընդունված է՝
Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) կողմից, 23 հունիս 2016 թ.

Նկատի առնելով, որ Սեւրի խաղաղության պայմանագիրը՝ խաղաղության պայմանագիր է,

հաշվի առնելով, որ Սեւրի խաղաղության պայմանագրի ստորագրումից ի վեր Մերձավոր Արեւելքում չեն դադարում զինյալ հակամարտությունները,

հաշվի առնելով, որ Սեւրի խաղաղության պայմանագրի վավերացումը կարող է վճռական քայլ հանդիսանալ Մերձավոր Արեւելքում իրական խաղաղության ու համագործակցության հաստատման,

հաշվի առնելով, որ Սեւրի խաղաղության պայմանագրով են հաստատվել Մերձավոր Արեւելքի պետությունների սահմանները, այդ թվում՝ Հայաստան պետության սահմանը, որի վերաբերյալ կայացվել է Իրավար վճիռ, որը սակայն կյանքի չի կոչվել.

Հոդված 1.
Վավերացնե՛լ Սեւրի խաղաղության պայմանագիրը, ստորագրված 10 օգոստոս 1920 թ. Սեւրում, ինչպես նաեւ նույն օրը ստորագրված լրացուցիչ պայմանագրերի Հավելվածները:
Հոդված 2.
Հետապնդե՛լ ԱՄՆ 28-րդ Նախագահ Վուդրո Վիլսոնի Իրաւարար վճռի Պաշտոնավարության հրամանի իրականացման գործընթացը, ստորագրված 22 նոյեմբեր 1920 թ.:
Հոդված 3.
Սույն օրենքի կրկնօրինակն ուղարկել Ֆրանսիայի Հանրապետության Կառավարություն:
Հոդված 4.
Սույն օրենքը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Նախագահ
24 հունիս 2016 թ.

Օ Ր Ե Ն Ք

«Ծովային Իրավունքի մասին» Միավորված Ազգերի Կազմակերպության Կոնվենցիան վավերացնելու մասին, ստորագրված 10 դեկտեմբերի 1982 թ.՝ Մոնտեգո-Բեյ քաղաքում, եւ 29 հուլիսի 1994 թ. համաձայնության «Ծովային Իրավունքի մասին» Միավորված Ազգերի Կազմակերպության Կոնվենցիայի XI մասի իրականացման վերաբերյալ»

Ընդունված է՝
Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) կողմից,
8 օգոստոս 2016 թ.:

Ղեկավարվելով ծովային իրավունքին վերաբերող բոլոր հարցերը փոխըմբռնման եւ համագործակցության ոգով կարգավորելու ցանկությամբ եւ գիտակցելով սույն Կոնվենցիայի՝ որպես խաղաղության, արդարության եւ աշխարհի բոլոր ժողովուրդների համար առաջադիմության ապահովման գործում կարեւոր ներդրումի պատմական նշանակությունը, նկատի ունենալով, որ 1958 եւ 1960 թվականներին Ժնեւում կայացած ծովային իրավունքի վերաբերյալ Միավորված Ազգերի Կազմակերպության խորհրդաժողովներից հետո տեղի ունեցած զարգացումներն ընդգծեցին ծովային իրավունքի նոր, բոլորի կողմից ընդունելի կոնվենցիայի մշակման անհրաժեշտությունը,

գիտակցելով, որ ծովային տարածության հիմնախնդիրները սերտորեն փոխկապակցված են եւ պետք է դիտվեն որպես մեկ ամբողջություն,

ճանաչելով սույն Կոնվենցիայի միջոցով հաստատելու եւ իրապես արժեւորելու բոլոր պետությունների ինքնիշխանության ցանկությունը, այնպիսի մի իրավական ռեժիմ սահմանելու ծովերի ու օվկիանոսների համար, որը կնպաստի միջազգային հաղորդակցություններին եւ ծովերն ու օվկիանոսները խաղաղ նպատակներով օգտագործելուն, դրանց պաշարների արդարացի եւ արդյունավետ օգտագործմանը, կենդանի պաշարների պահպանմանը, ծովային միջավայրի հետազոտմանը, պաշտպանությանը եւ պահպանմանը,

հաշվի առնելով այն փաստը, որ այդ նպատակների նվաճումը կնպաստի արդարացի եւ իրավահավասար միջազգային տնտեսական կարգի հաստատմանը, որի պայմաններում հաշվի կառնվեն ողջ մարդկության շահերն ու պահանջները եւ, մասնավորապես, ինչպես ափամերձ, այնպես էլ դեպի ծով ելք չունեցող զարգացող պետությունների հատուկ շահերն ու պահանջները,

ձգտելով սույն Կոնվենցիայի միջոցով զարգացնել այն սկզբունքները, որոնք ամրագրված են 1970 թվականի դեկտեմբերի հ. 17 2749 (XXV) բանաձեւում, որում Միավորված Ազգերի Կազմակերպության Գլխավոր ասամբլեան հանդիսավոր կերպով inter alia հայտարարել

է, որ ծովերի ու օվկիանոսների հատակի շրջանը եւ դրանց ընդերքը՝ ազգային իրավազորությունից դուրս, ինչպես նաեւ դրանց պաշարները հանդիսանում են մարդկության ընդհանուր ժառանգությունը, որոնց հետախուզումը եւ շահագործումը իրականացվում է հանուն ողջ մարդկության բարեկեցության՝ անկախ պետությունների աշխարհագրական դիրքից,

վստահ լինելով, որ սույն Կոնվենցիայի միջոցով ծովային իրավունքի կոդիֆիկացիան եւ առաջադիմական զարգացումը կնպաստեն խաղաղության, անվտանգության, բոլոր պետությունների միջեւ համագործակցության եւ բարեկամական հարաբերությունների ամրապնդմանը՝ արդարության եւ իրավահավասարության սկզբունքներին համապատասխան, ինչպես նաեւ աշխարհի բոլոր ժողովուրդների տնտեսական եւ սոցիալական առաջադիմությանը՝ Միավորված Ազգերի Կազմակերպության Կանոնադրության մեջ ամրագրված նպատակներին ու սկզբունքներին համապատասխան,

հաստատելով, որ սույն Կոնվենցիայով չկարգավորվող հարցերը շարունակում են կարգավորվել ընդհանուր միջազգային իրավունքի նորմերով ու սկզբունքներով.

Հոդված 1.
Վավերացնե՛լ «Ծովային Իրավունքի մասին» Միավորված Ազգերի Կազմակերպության Կոնվենցիան, ստորագրված 10 դեկտեմբերի 1982 թ.՝ Մոնտեգո-Բեյ քաղաքում, եւ 29 հուլիսի 1994 թ. համաձայնության «Ծովային Իրավունքի մասին» Միավորված Ազգերի Կազմակերպության Կոնվենցիայի XI մասի իրականացման վերաբերյալ:

Հոդված 2.
Օրենքի կրկնօրինակն ուղարկել Միավորված Ազգերի Կազմակերպության Գլխավոր Քարտուղարին:

Հոդված 3.
Սույն օրենքը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Նախագահ
9 օգոստոս 2016 թ.

Օ Ր Ե Ն Ք

«Պետությունների իրավունքների եւ պարտականությունների մասին» Կոնվենցիան (ստորագրված 26 դեկտեմբեր 1933 թ., համաամերիկյան պետությունների 7-րդ միջազգային համաժողովում (Մոնտեվիդեոյի Կոնվենցիա), որպես պետությունների իրավունքներ եւ պարտականություններ ճանաչելու մասին»

Ընդունված է՝
Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) կողմից,
8 հոկտեմբեր 2016 թ.:

Համաձայն՝

- Ռուսաստանի Կառավարության Դեկրետի «Թուրքահայաստանի մասին» («Արեւմտյան Հայաստանի մասին»), 13 հունվար 1918 թ.,
- Դաշնակից Տերությունների Գերագույն Խորհրդի կողմից դե ֆակտո (de facto) Հայաստան պետության անկախության ճանաչման, Փարիզի Վեհաժողովի ժամանակ, 19 հունվար 1920 թ.,
- Դաշնակից Տերությունների Գերագույն Խորհրդի կողմից դե յուրե (de jure) Հայաստան պետության անկախության ճանաչման, Փարիզ, 11 մայիս 1920 թ.,
- ԱՄՆ Սենատի որոշման, որը ճանաչում էր Հայաստանի Հանրապետության անկախությունը, Թիւ 359, 11 մայիս 1920 թ.,
- Սեւրի խաղաղության պայմանագրի 88-րդ, 89-րդ եւ 93-րդ հոդվածների, 10 օգոստոս 1920 թ.,
- ԱՄՆ 28-րդ Նախագահ Վուդրո Վիլսոնի կայացրած Իրավարար վճռի Հայաստանի եւ Թուրքիայի սահմանի վերաբերյալ, 22 նոյեմբեր 1920 թ.,

հաշվի առնելով՝

- «Գաղութացված երկրներին անհապաղ անկախություն շնորհելու մասին» ՄԱԿ-ի Կոնվենցիան, 14 դեկտեմբեր 1960 թ.,
- «Բնիկ ժողովուրդների իրավունքների մասին» ՄԱԿ-ի Հռչակագիրը, 13 սեպտեմբեր 2007 թ.,

հիմնվելով՝

- Հայաստանի Հայերի Ազգային Խորհրդի հիմնադիր ժողովի որոշման - 17.12.2004 թ.,
- Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհրդարանի պատգամավորների ընդունած հռչակագրի - 20.01.2007 թ.,
- Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհրդի Արեւմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարություն կազմելու մասին հռչակագրի - 04.02.2011 թ.,
- Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհրդի չեզոքության մասին որոշման - 29.03.2011 թ.,
- Արեւմտյան Հայաստանի Հանրապետության դրոշի մասին հրամանագրի - 21.10.2011 թ.,
- Արեւմտյան Հայաստանի հայերի ինքնապաշտպանության ուժերի ստեղծման մասին հրամանագրի - 26.12.2012 թ.,
- Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) ձեւաւորման մասին հռչակագրի - 24.05.2013 թ.,
- Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրի (թիվ 12), Որոշում՝ հիշեցում, Արեւմտյան Հայաստանի Հանրապետության վերաբերյալ, որը հանդիսանում է 1920 թ.-ի Հայկական պետության Արեւմտյան շարունակությունը - 23.02.2014 թ.,
- Արեւմտյան Հայաստանի Հանրապետության զինանշանի մասին հրամանագրի - 06.04.2015 թ.,
- Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Նախագահի «Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մասին» հրամանագրի - 09.05.2016 թ.,

նկատի առնելով՝
«Պետությունների իրավունքների եւ պարտականությունների մասին Կոնվենցիայի» (Մոնտեվիդեոյի Կոնվենցիա) 1-ին, 3-րդ, 6-րդ, 7-րդ եւ 16-րդ հոդվածների պահանջները, որտեղ նշված են պետության հատկանիշները եւ իրավունքները, որպես միջազգային իրավունքի սուբյեկտ.
1-ին հոդված - մշտական բնակչություն, որոշակի տարածք, կառավարություն, այլ պետությունների հետ հարաբերությունների մեջ մտնելու ունակություն,
3-րդ հոդված - պետության քաղաքական գոյությունը կախված չէ այլ պետությունների ճանաչումից,
6-րդ հոդված - ճանաչումը հանդիսանում է անխոս եւ անհերքելի,
7-րդ հոդված - պետության ճանաչումը կարող է լինել ուղիղ կամ ըստ կանխադրման,
16-րդ հոդված - սույն Կոնվենցիան բաց է միանալու այն պետությունների համար, որոնք Կոնվենցիայի կողմ չեն հանդիսանում,

Հոդված 1.
Ընդունել եւ Ճանաչե՛լ «Պետությունների իրավունքների եւ պարտականությունների մասին» Կոնվենցիան (ստորագրված 26 դեկտեմբեր 1933 թ., համաամերիկյան պետությունների 7-րդ միջազգային համաժողովում (Մոնտեվիդեոյի Կոնվենցիա), որպես պետությունների իրավունքներ եւ պարտականություններ:

Հոդված 2.
Սույն օրենքի կրկնօրինակը ուղարկել Ամերիկյան պետությունների կազմակերպության գլխավոր քարտուղարություն:

Հոդված 3.
Սույն օրենքը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Նախագահ
8 հոկտեմբեր 2016 թ.

ՈՐՈՇՈՒՄ
«Ազգային ինքնությունից հեռացած հայերն աշխարհի տարածքին» թեմայով
2-րդ միջազգային համաժողովի մասնակիցների

Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Հոգեւոր ոլորտի եւ կրոնի հարցերի մշտական հանձնաժողովի կազմակերպած «Ազգային ինքնությունից հեռացած հայերն աշխարհի տարածքին» 2-րդ միջազգային համաժողովը, որ տեղի ունեցավ 11 մարտ 2017 թ. ընդունեց հետեւյալ որոշումը,

հիմնվելով
-«Այլակրոն հայերն աշխարհի տարածքին» թեմայով միջազգային 1-ին համաժողովի՝ 08 սեպտեմբեր 2016 թ. մասնակիցների,

-«Ազգային ինքնությունից հեռացած հայերն աշխարհի տարածքին» 2-րդ միջազգային համաժողովի՝ 11 մարտ 2017 թ. մասնակիցների,
-ինչպես նաեւ այս թեմայով կազմակերպված Կլոր սեղանների մասնակիցների արտահայտած գաղափարների ու առաջարկների վրա,

ստեղծել աշխատանքային խմբեր հետապնդելու համար հետեւեալ ծրագրային նպատակները.
1. Ստեղծել Ազգային ինքնությունից հեռացած հայերի խնդիրներն ուսումնասիրելու գիտական կենտրոն:
2. Ստեղծել Ազգային ինքնությունից հեռացած հայերի վերաբերյալ ուսումնասիրությունների ու հրատարակությունների գրապահոց (արխիվ):
3. Մշակել տարեկան աշխատանքային ծրագրեր Ազգային ինքնությունից հեռացած հայերի հետ կապերի վերակազնման ու հաստատման:

Արմենակ Հարմանդայան
Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Հոգեւոր ոլորտի եւ կրոնի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ
18.03.2017 թ.

ԿՈՉ
Ադրբեջանում Հայոց ցեղասպանության իրավական գնահատման վերաբերյալ Երեւանյան խմբի

Ադրբեջանում Հայոց ցեղասպանության իրավական գնահատման վերաբերյալ Երեւանյան խումբը՝ կոչ է անում Հայաստանի պետական, հասարակական կազմակերպություններին, լրատվամիջոցներին եւ այլ երկրների քաղաքացիներին ընդունել հետեւյալ թեզերը.

- Ադրբեջանի իշխանությունները, այդ պետության կազմավորման հենց սկզբից (1918թ) իրականացնում են մշտապես եղեռնագործ քաղաքականություն հայ ժողովրդի նկատմամբ տարբեր մեթոդներով, արյունահեղ ելքերով 1918, 1920, 1988-92 թվականներին,
- Ադրբեջանի կողմից հայ ժողովրդի նկատմամբ կատարվող հանցագործությունները համապատասխանում են 1948 թ. ՄԱԿ-ի ընդունած կոնվենցիային եւ պետք է որակվեն ոչ այլ կերպ, քան Ցեղասպանություն,
- հայերի նկատմամբ իրականացվող եղեռնագործ քաղաքականությունը թուրքական երկու զավթիչ պետությունների՝ Թուրքիայի եւ Ադրբեջանի կողմից, միասնական գործընթաց է, փոխհամաձայնեցված ոճրագործ ծրագիր,
- Ադրբեջանի այդ քաղաքականությունը շարունակվում է նաեւ այսօր եւ նրա նկատմամբ ցուցաբերվող մեղմ մոտեցումը տարածաշրջանում անվերապահորեն կհանգեցնի նորանոր ագրեսիվ գործողությունների, ինչպես դա տեղի ունեցավ 2016 թ. ապրիլին ադրբեջանա-թուրքական ռազմամոլների եւ նրանց դաշնակից Իսլամական Պետության ներկայացուցիչների մասնակցությամբ, որը հանգեցրեց բազում զոհերի,

- անհրաժեշտ է, որ Հայաստանը պետական մակարդակով եւ իրավական բոլոր նորմերով հստակ գնահատական տա Ադրբեջանի ոճրագործ քաղաքականությանը եւ նրա կողմից հայերի նկատմամբ իրականացվող ցեղասպանությանը, ինչպես նաեւ էթնոցիդ եւ պատրիցիդ,
- անհրաժեշտ է դա ամրակայել Հայաստանի արտաքին քաղաքականության մեջ, թույլ չտալով միջազգային կառույցների կողմից հավասարության նշան դնել ագրեսորի եւ ագրեսիայի օբյեկտի միջեւ, կանխել պատմության աղավաղումները, հարցի էության խաթարումներն ու ճշմարտության շրջանցումը:
Ադրբեջանի վարած եղեռնագործ քաղաքականության եւ հայերի հանդեպ իրականացվող ցեղասպանության վերաբերյալ լիարժեք իրավական գնահատական տալու նպատակով եւ նշված թեման համարելով առաջնահերթ, համազգային խնդիր, կոչ ենք անում.
- աջակցել Երեւանյան խմբի նախաձեռնությանը եւ գործունեությանը, աջակցել նրա աշխատանքին, ինչպես նաեւ դառնալ լիիրավ մասնակից:
***
- «Ադրբեջան» - նկատի են առնվում երեք հանրապետություններ. Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետություն (28.5.1918-28.4.1920), Ադրբեջանական ԽՍՀ (28.4.1920-30.8.1991), Ադրբեջանի Հանրապետություն (սկսած 30.8.1991), ինչպես նաեւ Անդրկովկասյան Դեմոկրատական Ֆեդերատիվ Հանրապետության տարածքում Բաքվի եւ Ելիզավետպոլի նահանգներ (22.4.1918-26.5.1918):

Վահան Բաբախանյան, «Հայկական ընկերակցություն» (Սանկտ-Պետերբուրգ), Ռուս-հայկական կազմակերպությունների համակարգող խորհրդի անդամ, Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի (Խորհրդարանի) պատգամավոր,
Հրայր Ուլուբաբյան, հասարակական գործիչ,
Մարիամ Ավագյան, Ադրբեջանական ԽՍՀ-ից փախստականների համագումար,
Մարտին Իսրայելյան, Ադրբեջանական ԽՍՀ հայերի միավորում,
Ալբինա Սուքիասյան-Դոլբակյան, «Արարատ» հայկական մշակութային-կրթական միություն, Ռուս-հայկական կազմակերպությունների համակարգող խորհրդի անդամ (Մոսկվա),
Բակուր Կարապետյան, «Շուշի» բարեգործական Հիմնադրամ,
Գրիգորի Այվազյան, Ադրբեջանահայերի Ասամբլեա,
Կոնստանտին Տեր-Հովհաննիսյան, Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի (Խորհրդարանի) պատգամավոր,
Ելենա Խաչատրյան, «Армения, не побежденная судьбой» եւ Լ.Հ. Մելիք-Շահնազարյանի հավաքածու «О войне и о победе» կազմող,
Տատյանա Մինասյան, հասարակական գործիչ:

«Երեւանյան խմբի» անունից՝ Վահան Բաբախանյան
Երեւան, 2 հոկտեմբերի 2017 թ.

ՈՐՈՇՈՒՄ
«Արեւմտյան Հայաստանի հայերի պաշտպանության ուժեր կազմավորելու վերաբերյալ»

Ընդունված Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի)
10 հունվարի 2018 թ. նիստում, որոշում թիվ 01/2018

Համաձայն

– ՄԱԿ-ի Կանոնադրության 51-րդ հոդվածի՝ «Անհատական եւ հավաքական ինքնապաշտպանության իրավունքի» մասին, 26 հունիսի 1945 թ.,

– Ռուսաստանի Կառավարության Դեկրետի «Թուրքահայաստանի մասին» («Արեւմտյան Հայաստանի մասին»), 11 հունվարի 1918 թ.,

– Դաշնակից Տերությունների Գերագույն Խորհրդի կողմից դե ֆակտո (de facto) Հայաստան պետության անկախության ճանաչման, 19 հունվարի 1920 թ.,

– Դաշնակից Տերությունների Գերագույն Խորհրդի կողմից դե յուրե (de jure) Հայաստան պետության անկախության ճանաչման, 11 մայիսի 1920 թ.,

– Սեւրի խաղաղության պայմանագրի, 10 օգոստոսի 1920 թ.,

– ԱՄՆ 28-րդ Նախագահ Վուդրո Վիլսոնի կայացրած Իրավարար վճռի Հայաստանի եւ Թուրքիայի սահմանի վերաբերյալ, 22 նոյեմբերի 1920 թ.,

– ՄԱԿ-ի «Բնիկ ժողովուրդների իրավունքների մասին» Հռչակագրի, 13 սեպտեմբերի 2007 թ.,

եւ հաշվի առնելով

– ողջ մարդկության եւ հայության կրած ֆիզիկական, ինչպես նաեւ հոգեւոր, մշակութային, նյութական եւ տարածքային կորուստները Առաջին եւ Երկրորդ համաշխարհային պատերազմների ընթացքում, այդ թվում՝ հատկապես թուրքական երեք իրար հաջորդող կառավարությունների կողմից 1894-1923 թթ. ընթացքում հայերի, ասորիների եւ հույների ցեղասպանության իրականացումը իրենց բնօրրաններում,

– անհերքելի այն իրողությունը, որ մարդկությունն այսօր գտնվում է հոգեւոր-մշակութային, բարոյահոգեբանական եւ տնտեսական ու քաղաքական խոր ճգնաժամի մեջ, որոնք սպառնում են միջկրոնական ու քաղաքացիական բախումներով, չի բացառվում նաեւ Երրորդ համաշխարհային պատերազմի հրահրմամբ,

– Մերձավոր Արեւելքում ընթացող ու խորացման ենթակա ռազմաքաղաքական գործընթացները, որոնք ոչ միայն կարող են, այլեւ արդեն իրապես սպառնում են ողջ տարածաշրջանին՝ ինչպես բնիկ հայության, այնպես էլ մշակութային-քաղաքակրթական ու պետականակերտ ազգերի անվտանգությանը,

– տարածաշրջանի բնիկ ժողովուրդ հանդիսացող Մերձավոր Արեւելքի, Սիրիայի ու Արեւմտյան Հայաստանի հայերի, ինչպես նաեւ Մերձավոր Արեւելքի մյուս բնիկ ժողովուրդների, քրիստոնյաների կյանքի, գույքի անվտանգությունն ապահովելու անհրաժեշտությունը, որը փաստացի մինչ այսօր չեն ապահովել գերտերությունները եւ որի պատճառով էլ տեղի է ունեցել տարածաշրջանի բնիկ հայերի, ինչպես նաեւ այլ բնիկների, ժողովուրդների ու քրիստոնյաների նոր բռնագաղթը,

– Մերձավոր Արեւելքում եւ Սիրիայում համընդհանուր հաշտություն ու խաղաղություն հաստատելու անհրաժեշտությունը, ներկա պայթյունավտանգ փուլում առնվազն կանխարգելող անվտանգության ու խաղաղության կղզյակներ ձեւավորելու, որոնք առաջիկայում պետք է դառնան կանխարգելիչ զսպող գործոններ,

– ինչպես նաեւ վերահաստատելով մեր հանձնառությունը հարազատ մնալու ՄԱԿ-ի հռչակած միջազգային սկզբունքներին եւ չափանիշներին, որոնց համաձայն

պատրաստակամ ենք հետեւողականորեն նպաստելու հակամարտությունների խաղաղ կարգավորման սկզբունքին, տարածաշրջանային խաղաղությանն ու անվտանգությանը, ապահովելու տարածաշրջանի բնիկների ու ժողովուրդների ազատ զարգացման ու առաջընթացի իրավունքները,

հիմնվելով

– «Արեւմտյան Հայաստանի հայերի Մշտական, զինյալ, դրական չեզոքության մասին» որոշման վրա, ընդունված 29.03.2011 թ.,

– «Արեւմտյան Հայաստանի հայերի ինքնապաշտպանության ուժերի ստեղծման մասին» հրամանագրի վրա, ընդունված 26.12.2012 թ.,

– ՄԱԿ–ի Անվտանգության Խորհրդին, ՄԱԿ–ի անդամ պետություններին, Սեւրի Խաղաղության դաշնագիրը ստորագրած պետություններին ուղղված դիմումի, «Մերձավոր Արեւելքի հայության ինքնապաշտպանության ուժեր կազմավորելու մասին» որոշման վրա, ընդունված 06.04.2014 թ.,

– Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Անվտանգության Խորհրդի «Արեւմտյան Հայաստանի հայերի պաշտպանության ուժերը կազմավորելու վերաբերյալ» որոշման վրա, ընդունված 08.01.2018 թ.՝

Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովը (Խորհրդարանը)
ՈՐՈՇՈՒՄ Է

1) Հաստատել «Արեւմտյան Հայաստանի հայերի պաշտպանության ուժերը կազմավորելու վերաբերյալ» որոշման նախագիծը:

2) Դիմել Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Նախագահին ստորագրելու «Արեւմտյան Հայաստանի հայերի պաշտպանության ուժերը կազմավորելու վերաբերյալ» օրենքը,

3) Հավատարիմ մնալ այն հիմնարար սկզբունքին, ըստ որի՝ Արեւմտյան Հայաստանի հայերի պաշտպանության ուժերը ստեղծվում են բոլոր այն վայրերում, որտեղ համահավաք ապրում են Արեւմտյան Հայաստանի հայեր, ըստ այդմ՝ հետեւելով հիմնական այն նպատակին, որ անհրաժեշտության դեպքում ստեղծվող ուժերը մասնակցելու են ոչ միայն տեղի հայության, այլեւ Հայաստանի պաշտպանությանը, ըստ անհրաժեշտության կազմակերպված ձեւով ներգրավվելով նաեւ միջազգային ահաբեկչության դեմ պայքարին:

4) Հիմք ընդունել այն սկզբունքը, ըստ որի՝ Արեւմտյան Հայաստանի հայերի պաշտպանության ուժերի միավորումներ ստեղծվելու են տարածաշրջանային սկզբունքով՝ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Անվտանգության խորհրդի ու Արեւմտյան Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հրամանատարության ներքո:

5) Սույն որոշման մասին տեղյակ պահել ՄԱԿ–ի Անվտանգության Խորհրդին, ՄԱԿ–ի անդամ պետություններին, Սեւրի Խաղաղության դաշնագիրը ստորագրած պետություններին:

Արմեն Տեր-Սարգսյան
Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Նախագահ

Դիանա Գրիգորյան
Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Քարտուղար
10 հունվար 2018 թ.

ԳԼՈՒԽ VII

ԾՐԱԳՐԱՅԻՆ ՅՕԴՈՒԱԾՆԵՐ ԵՒ ԵԼՈՅԹՆԵՐ

Ո՞րն է Թուրքիայի Հանրապետության արեւելյան սահմանը հարեւանների հետ

Ահմեդ Դավիթօղլուն Cy-24-ի կործանումը համարել է իրավաչափ: Մասնավորապես «Ինչպես տեղեկացնում է gazeta.ru-ն՝ վկայակոչելով SkyNews-ին, Ա. Դավիթօղլուի խոսքերով՝ Թուրքիան պարտավոր է եղել արձագանքել իր օդային տարածքի խախտմանը»: (Տես, Նոյյան տապան, 24-11-2015 18:30:38)

Դավութօղլուն խեղաթյուրում է փաստերը, որովհետեւ այդ իրավունքը նրան տվել են միջազգային հանրության հիմնական դերակատարներից շատերը: Ահավասիկ նրան անմիջապես ձայնակցում է ՆԱՏՕ-ի ղեկավարը. «Russia Today-ը հայտնում է, որ ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Սթոլթենբերգի հայտարարության համաձայն՝ կառույցը գտնում է, որ ռուսաստանյան օդանավը խախտել է Թուրքիայի օդային տարածքը»: (Տես, Tert.am, 12:42 • 24.11.15»:

Սակայն պարոնայք, ո՞րն է Թուրքիայի Հանրապետության օդային տարածքը եւ դա արդյո՞ք իրավաչափ է ցամաքային տարածքին, սահմանին:

Փաստերն այլ բան են ասում: Հիշեցնենք դրանցից մի քանիսը.
-1918 թ. հոկտեմբերի 30-ին Դաշնակիցների եւ Թուրքիայի միջեւ կնքված Մուդրոսի զինադադարի 16-րդ հոդվածի համաձայն՝ Թուրքիան պարտավորվում էր իրականացնել. «Հեջասի, Ասիրի եւ Եմենի, Սիրիայի եւ Միջագետքի բոլոր կայազորների հանձնումը դաշնակցային հրամանատարությանը..., Թուրքական զորքերի դուրս բերումը Կիլիկիայից»:
-1920 թ. Նոյեմբերի 22-ից հետո, ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի կայացրած Իրավարար վճռի համաձայն՝ թուրքական զինված ուժերը պարտավոր էին դուրս գալ Արեւմտյան Հայաստանի չորս վիլայեթներից:

Այսու, հաշվի առնելով նաեւ 1920 թ. օգոստոսի 4-ի Կիլիկիայի անկախության հռչակման փաստը, ապա ստացվում է ամբողջովին հակահիրավական եւ անօրինական մի գործընթաց, երբ Թուրքիայի Հանրապետության զինված ուժերը
ա) արդեն շուրջ 95 տարի է, ինչ բռնազավթված են պահում Արեւմտյան Հայաստանը եւ Կիլիկյան Հայաստանը,
բ) երբ այդ նույն բռնազավթված տարածքներից նորանոր ագրեսիաների սպառնալիքներ են ստեղծում տարածաշրջանի ժողովուրդների եւ երկրների համար:
Ճիշտ այնպես, ինչպես դա պատահեց Քեսապի բռնազավթման դեպքում, ինչպես դա տեղի ունեցավ Ռուսաստանի Դաշնության զինված ուժերին պատկանող ռազմական օդանավի հետ:

Հետեւաբար, միջազգային հարաբերությունների դաշտում խաղացողներին արժե՞ հիշեցնել, որ նրանց իսկ լուռ թողտվությամբ եւ համաձայնությամբ են տեղի ունեցել «իրավաչափության խախտումներ», որոնք էլ հանգեցրել են նոր «իրավաչափ խախտումների» այժմյան աշխարհի բոլոր տաք ու տաքացող կետերում, այդ թվում՝ Բեյրութում, Սինայում, Փարիզում, Մալիում... Եվ արժե՞ արդյոք հիմա Եվրոպառլամենտի պատգամավորներին հիշեցնել, որ նրանք նույնքան մեղսակցություն ունեն սույն իրադարձությունների համատեքստում, երբ 1987 թ. հունիսի 18-ին ընդունելով «Հայկական Հարցի քաղաքական լուծման մասին» բանաձեւը այնտեղ նշում էին, թե Եվրոպական պառլամենտը
«Գտնում է, որ ողբերգական իրադարձությունները, որ տեղի ունեցան 1915-1917 թվականներին Օսմանյան կայսրության տարածքում հայերի նկատմամբ, հանդիսանում են ցեղասպանություն, համաձայն «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու եւ դրա համար պատժի մասին» Կոնվենցիայի, ընդունված ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից 1948 թվականի դեկտեմբերի 9-ին:
Նշում է միաժամանակ, որ ժամանակակից Թուրքիան պատասխանատու չի կարող համարվել Օսմանյան կայսրության հայ բնակչության ողբերգության համար եւ ամենայն հաստատակամությամբ ընդգծում է, որ պատմական այդ իրադարձությունների ճանաչումը որպես ցեղասպանության՝ առիթ չի կարող հանդիսանալ քաղաքական, իրավական կամ նյութական որեւէ պահանջի այսօրվա Թուրքիայի նկատմամբ»:

Ի՞նչպես էր անդրադառնալու այս ոչ իրավաչափ որոշումը հետագայում… Ի՞նչպես էր անդրադառնալու այն ոչ իրավաչափ որոշումը, երբ Թուրքիայի Հանրապետությանը թույլ տրվեց բռնազավթել Արեւմտյան Հայաստանը, ապա Կիլիկյան Հայաստանը, ապա Ալեքսանդրեթի սանջակը, ապա հետագայում անպատիժ ոչնչացնել հայկական պատմաճարտարապետական ու քաղաքակրթական հետքը Հայաստան աշխարհում եւ նրան հարակից տարածքներում… եւ անպատիժ ժխտել Հայերի ցեղասպանության իրողությունը, այդպիսով իրականացնել նոր ցեղասպանության քարոզչություն:

Ի՞նչպես էր անդրադառնալու… եթե ոչ բումերանգի հետագծով:

Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհուրդը եւ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության պետականաստեղծ կառույցները 2012-2015 թթ. ընթացքում բազմիցս դիմել են ՄԱԿ-ի Անվտագության Խորհրդին եւ Սեւրի խաղաղության դաշնագիրը ստորագրած պետություններին Արեւմտյան Հայաստանի (ներառյալ Կիլիկիայի) տարածքը ապառազմականացնելու առաջարկով:
Առաջարկը հիմնավորվել է նաեւ նրանով, որ 2011 թ. Մարտի 29-ին Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհուրդը որոշում է ընդունել «Արեւմտյան Հայաստանի հայերի եւ Արեւմտյան Հայաստանի Մշտական, զինված, դրական չեզոքության մասին», ինչը նշանակում է, որ Թուրքիայի Հանրապետության զինված ուժեր չեն կարող լինել նվազագույնը վիլսոնյան Իրավարար վճռով Հայաստանին հատկացված այդ տարածքներում:
Առաջարկվել է սկսել միանգամայն իրավական եւ օրինական (եւ իրավաչափ) մի գործընթաց, որի նպատակն է լինելու Թուրքիայի Հանրապետության զավթիչ ուժերի

դուրս բերումը Հայաստանի բռնազավթված տարածքներից, մասնավորապես Արեւմտյան Հայաստանից եւ Կիլիկյան Հայաստանից:

Արեւմտյան Հայաստանի հայերը՝ իրենց ինքնության, բնիկության, քաղաքացիության եւ պետականաստեղծ իրավասությունների համաձայն, վճռական են պաշտպանելու իրենց իրավական-քաղաքական բոլոր իրավունքները Արեւմտյան Հայաստանի նկատմամբ, այդ թվում՝ տարածքի վերջնական ապառազմականացման՝ զավթիչ ու օտար ուժերից:
Այդպես միայն կարող են իրավականությունը եւ իրավաչափությունը համապատասխանել, այլապես բոլոր ճանապարհները չէ որ տանում են դեպի խաղաղություն, խաղաղ համակեցություն եւ ազգամիջյան ու միջպետական հարաբերությունների բնականոն զարգացում աշխարհում:

Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Կառավարության
Լրատվական Բաժին
25.11.2015 թ.

Հայկական Հարցը եւ Թուրքիայի նեոօսմանական քաղաքականությունը, մարտահրավերներ եւ սպառնալիքներ

(Հատուկ զեկույց Մերձավոր Արեւելքի հարցով «REGNUM» Ռուսաստանի դաշնային լրատվական գործակալություն կազմակերպած «Թուրքիայի վարած ներկայի նեոօսմանական քաղաքականությունը՝ մարտահրավերներ ու սպառնալիքներ» անվանումով միջազգային կոնֆերանսում՝ Ռուսաստանի, Հայաստանի, Սիրիայի, Իրանի, Թուրքիայի, Իրաքի եւ Իսրայելի ճանաչված քաղաքագետների եւ փորձագետների մասնակցությամբ:)

Թուրքիայի Հանրապետության վարած ներկայի նեոօսմանական քաղաքականությունը, ըստ էության, Օսմանյան Կայսրության եւ Թուրքիայի Հանրապետության 1894-1923 թթ. վարած քաղաքականության կրկնությունն է եւ դրանով իսկ սպառնալիքներ ու մարտահրավերներ պարունակող խիստ վտանգավոր քաղաքականություն Թուրքիայի Հանրապետության մեջ ապրող ժողովուրդների եւ մերձավորարեւելյան տարածաշրջանի երկրների ու ժողովուրդների համար:

Օսմանյան կայսրությունը պատմության մեջ հայտնի է որպես ժողովուրդների հանրաբանտ: Դրանով իսկ Օսմանյան կայսրությունը հարյուրամյակներ շարունակ արգելափակեց կայսրության տարածքում ապրող ժողովուրդների ազատության եւ քաղաքակրթական զարգացման հնարավորությունն ու բնական իրավունքը: Սակայն իրավիճակը շատ ավելի սրվեց ու վատթարացավ, երբ 19-րդ դարի առաջին կեսից կայսրությունը որդեգրեց սկզբում պանօսմանիզմի, ապա 1873-74 թթ.-ից նաեւ պանթուրքիզմի քաղաքականությունը:

Դա հանգեցրեց կայսրության մեջ ապրող ժողովուրդների, առաջին հերթին քրիստոնյաների, ցեղասպանությանն ու բռնագաղթին: 1916-1923 թթ. ցեղասպանության

ու բռնագաղթի ենթարկվեցին հույները, 1914-1923 թթ. ասորիները, իսկ ամբողջ 1894-1923 թթ. ընթացքում՝ հայերը: Ավելի քան 30 տարի տեւած եւ 19-րդ դարի վերջը ու 20-րդ դարի սկիզբը ընդգրկած մեծագույն հանցագործության հետեւանքում, որ իրականացրին թուրքական երեք իրար հաջորդող կառավարություններ՝ սուլթանական, երիտթուրքական, քեմալական, հազարամյակներ շարունակ Բնօրրան Հայրենիքում՝ Հայկական Լեռնաշխարհում ապրող ավելի քան 1.5 միլիոն հայեր ցեղասպանության ենթարկվեցին, նույնքան էլ բռնագաղթի ու աքսորի, հարյուրհազարավորներ, այդ թվում՝ կանայք ու երեխաներ, բռնի մահմեդականացման:

Հայերի ցեղասպանությունը առաջինը դատապարտեցին Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան եւ Ռուսաստանը 1915 թ. մայիսի 24-ին այն որակելով, որպես «Հանցագործություն՝ մարդկայնության դեմ», տեղեկացնելով, որ դրա «կազմակերպիչներն ու իրականացնողները ենթակա են լինելու քրեական պատասխանատվության»: Հետագայում աշխարհի առաջադեմ շատ պետություններ ճանաչեցին ու դատապարտեցին թուրքական իշխանությունների հրեշավոր հանցագործությունները: Ճանաչման ու դատապարտման այդ գործընթացը շարունակվում եւ այսօր: Հատկանշական է, որ նույնիսկ թուրքական պետությունը Կոստանդնուպոլսի ռազմական հատուկ ատյանում 1919-20 թթ. իրականացրեց երիտթուրքական կառավարության պարագլուխների դատավարությունը, նրանցից շատերի համար մահվան դատավճիռներ արձակելով:

Եթե 19-րդ դարի վերջին ծնունդ առավ Հայկական Հարցը, ապա հայկական իրավունքների հարցում, այդ թվում՝ Հայաստան պետության վերաբերյալ որոշումները կայացվեցին 20-րդ դարի սկզբին՝ 1918-1920 թթ.:

Հիշենք դրանք:

- 1918 թ. հունվարի 11-ին Ռուսաստանի Կառավարությունը ընդունեց «Թուրքահայաստանի մասին» Դեկրետը («Արեւմտյան Հայաստանի մասին»),
- 1920 թ. հունվարի 19-ին, Փարիզի Վեհաժողովի ժամանակ, Դաշնակից Տերությունների Գերագույն Խորհուրդը դե ֆակտո (de facto) ճանաչեց Հայաստան պետության անկախությունը,
- 1920 թ. մայիս 11-ին Դաշնակից Տերությունների Գերագույն Խորհուրդը դե յուրե (de jure) ճամաչեց Հայաստան պետության անկախությունը,
- 1920 թ. օգոստոսի 10-ին կնքվեց Սեւրի խաղաղության պայմանագիրը, որի 88-93-րդ հոդվածները վերաբերում են Հայաստանին,
- 1920 թ. նոյեմբերի 22-ին ԱՄՆ 28-րդ Նախագահ Վուդրո Վիլսոնը կայացրեց Իրավարար վճիռ Հայաստանի եւ Թուրքիայի սահմանի վերաբերյալ:

Ներկայի Թուրքիայի Հանրապետության իշխանությունները ոչ միայն շարունակում են Հայերի ցեղասպանության ժխտողականության քաղաքականություն վարել, ոչ միայն մերժում են ճանաչել հայերին ու Հայաստան պետությանը 1918-1920 թթ. ընթացքում տրված իրավունքները, այլեւ կրկին որդեգրելով ու շարունակելով նախորդ թուրքական կառավարությունների պանօսմանիզմի ու պանթուրքիզմի քաղաքականությունը՝ նոր

սպառնալիքներ ու մարտահրավերներ են ստեղծում հանրապետության մեջ եւ, դրանից դուրս, տարածաշրջանում ապրող ժողովուրդների ու պետությունների համար:

Թուրքիայի Հանրապետության նեոօսմանական քաղաքականության սպառնալիքն ամբողջությամբ ի հայտ եկավ Մերձավոր Արեւելքում՝ Իրաքի ու Սիրիայի պատերազմների ժամանակ, երբ հանրապետության իշխանությունը սկսեց բացահայտ աջակցել սիրիական ընդդիմությանը, այդ թվում՝ ծայրահեղ ընդդիմադիր խմբավորումներին: Դրանք հանգեցրին Սիրիայի հյուսիսային տարածքներ ներխուժման, Հալեպում հումանիտար աղետի բռնկման, բռնի տեղահանվածների հարցով Եվրոպային ահաբեկելու գործողություններում:

Եւ միանգամայն ճիշտ նշեց Ռուսաստանի Նախագահ Վլադիմիր Պուտինը, երբ 24 նոյեմբեր 2015 թ.-ին Սիրիայում ռուսական ռազմատիեզերական ուժերի ռմբակոծիչ ՍՈՒ-24-ի խոցումը Թուրքիայի կողմից՝ որակեց որպես «...հարված թիկունքից, որ մեզ հասցրին ահաբեկիչների աջակիցները»:

Հատկանշական է, որ 9 նոյեմբեր 2016 թ.-ին Եվրահանձնաժողովն իր տարեկան զեկույցում Թուրքիային մեղադրել է այն բանում, որ այդ երկրում տարածվում են հայտարարություններ, որոնք ատելություն են սերմանում հայերի նկատմամբ, հրապարակվում են ելույթներ ու սպառնալիքներ, ուղղված բնիկ ժողովուրդների, ազգային եւ կրոնական փոքրամասնությունների դեմ: Առանձին շեշտված է, որ «Թուրքիայի իշխանությունները շարունակում են կոշտ արձագանքել Հայերի ցեղասպանության ճանաչման փաստերին այս կամ այն երկրում»: Եվրահանձնաժողովը Թուրքիային նաեւ մեղադրել է Լեռնային Ղարաբաղում 2016 թ-ին ապրիլյան չորսորյա պատերազմում Ադրբեջանին բացահայտորեն աջակցելու մեջ: Եւ «այս ամենը խորը մտահոգություններ է առաջացնում», - ասված է զեկույցում:

Ինչպես նաեւ, Արցախյան պատերազմի օրերին, որտեղ Թուրքիայի Հանրապետության ներկայի ղեկավարությունը փորձելով շեղել համաշխարհային հանրության ուշադրությունը իր իրական նպատակներից ու գործողություններից, ինչպես նաեւ անխուսափելի պատասխանատվությունից, ձգտում էր Ադրբեջանի Հանրապետության կողմից սանձազերված ապրիլյան չորսօրյա ագրեսիայի միջոցով այդ խնդիրները մոռացության տալ ու փոխանցել ՀՀ-ի եւ Արցախի սահմաններ: Ավելորդ է ասել, որ դրանք չեն հաջողվի իրականացնել եւ ամեն ինչ կավարտվի այնտեղ, որտեղ սկսվել է, այդ թվում Արեւմտյան Հայաստանում՝ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության հաստատմամբ:

Մինչդեռ պետք չէ մոռանալ, որ 1920 թ. կնքված Սեւրի խաղաղության պայմանագիրը, ըստ էության, խաղաղության պայմանագիր է եւ դա վավերացնելու, դրա բոլոր որոշումները հարգելու եւ իրականացնելու միջոցով է հնարավոր Մերձավոր Արեւելքում հաստատել կայուն խաղաղություն ու իրական համագործակցություն:

Սեւրի խաղաղության պայմանագրի առաքելությունը տարածաշրջանի համար ավարտված չէ: Հայերի, ասորիների, հույների, ալեվիների, արաբների, քրդերի ու

նույնիսկ թուրքերի իրավունքները հարգելով եւ դրանք իրականացնելով է հնարավոր տարածաշրջանում հասնել իրական արդարության ու խաղաղ գոյակցության:

Ուստի, տարածաշրջանում ապրող բոլոր ժողովուրդների ապրելու, զարգանալու եւ ապագա ունենալու իրավունքի իրականացման միջոցով է միայն հնարավոր իրականացնել այնքան սպասված խաղաղություն եւ խաղաղ համակեցություն տարածաշրջանում, այդ թվում՝ հայերին եւ Հայաստան պետությանը վերաբերող Սեւրի խաղաղության պայմանագրի հոդվածները եւ Վիլսոնյան Իրավարար վճիռը կյանքի կոչելու միջոցով:

Այլ ճանապարհներ, այդ թվում՝ նեոօսմանիզմի քաղաքականության շարունակումը Թուրքիայի Հանրապետության կողմից խիստ վտանգավոր սպառնալիքներ ու մարտահրավերներ է պարունակում տարածաշրջանում ապրող բոլոր ժողովուրդների համար:

Դեռեւս ունենք հնարավորություն խուսափելու դրանից, ունենք հնարավորություն հարգելու միմյանց իրավունքները եւ խաղաղ ճանապարհով կյանքի կոչելու դրանք: Շտապենք, այլապես վաղը ուշ է լինելու: Մենք հավատում ենք, որ այս դեպքում առողջ բանականությունն ու բարի կամքն են հաղթելու:

Արմեն Տեր-Սարգսյան
Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) Նախագահ
17.11.2016 թ.

Հայ ժողովրդի մշակութային ու հոգեւոր արժեքների յուրացումն ու ոչնչացումը եւ Թուրքիայի նեոօսմանական քաղաքականությունը, մարտահրավերներ եւ սպառնալիքներ

(Հատուկ զեկույց Մերձավոր Արեւելքի հարցով «REGNUM» Ռուսաստանի դաշնային լրատվական գործակալություն կազմակերպած «Թուրքիայի վարած ներկայի նեոօսմանական քաղաքականությունը՝ մարտահրավերներ ու սպառնալիքներ» անվանումով միջազգային կոնֆերանսում՝ Ռուսաստանի, Հայաստանի, Սիրիայի, Իրանի, Թուրքիայի, Իրաքի եւ Իսրայելի ճանաչված քաղաքագետների եւ փորձագետների մասնակցությամբ:)

Թուրքիայի նեոօսամանական քաղաքականության ժամանակակից ակնհայտ դրսեւորումներից մեկը հայ ժողովրդի հոգեւոր մշակութային արժեքների յուրացումն ու ոչնչացումն է: Քաղաքականություն, որ տեւական ժամանակ իրականացրին թուրքական կառավարությունները, լինի դա սուլթանական, երիտթուրքական, կամ քեմալական: Այն արտահայտվեց սարսափելի ձեւերով, հատկապես Հայերի ցեղասպանության տարիներին՝ 1894-1923 թթ., իրականացված թուրքական կառավարությունների կողմից՝ Արեւմտյան Հայաստանում եւ Օսմանյան կայսրության մեջ:

Եւ քանի որ մարդկայնության եւ քաղաքակրթության դեմ կատարված այդ սարսափելի հանցագործության դատապարտումն ու վնասի հատուցումը Միջազգային ընկերակցության կողմից ամբողջությամբ չկատարվեց, ապա ցեղասպանությունը շարունակվեց, շարունակվում է մինչեւ այսօր ընդունելով զանազան այլ ձեւեր, այդ թվում նաեւ որպես մշակութային ցեղասպանություն:

Այս համատեքստում է, որ պետք է ուշադրություն դարձնել քաղաքակրթական այդ ժառանգության հետագա ճակատագրին, որն այսօր հաճախ անվանում են «բնօրրան», նկատի առնելով, որ դա առնչվում է նրանց, ումից սկիզբ է առնում մեր աշխարհի ոգեղենությունը, մարդասիրությունը եւ մշակույթը:

Հայ ժողովրդին պատկանող հնագույն քաղաքակրթության, մշակութային ու հոգեւոր ժառանգության զգալի մասը, ցավոք սրտի, այսօր գտնվում է այն պետության ձեռքում, ով ինքն է իրականացրել չարագործությունը, ով աշխարհին մտածված կերպով ի ցույց է դրել իր բարբարոսական վերաբերմունքը այլ ժողովրդի մշակույթի, այդ արժեքները ստեղծողի նկատմամբ:

Ստիպված ենք արձանագրել, որ տեւական ժամանակ է ինչ Թուրքիայի նեոօսմանական քաղաքականությունը, «զարգացնելով» երիտթուրքերի ավանդույթները, հետեւողական եւ մեթոդաբար շարունակում է ոչնչացնել հայ ժողովրդի մշակութային եւ հոգեւոր ժառանգությունը:

Ցեղասպանության տարիներին, 19-րդ դարի վերջից մինչեւ 20-րդ դարի սկիզբ, բնիկ հայ բնակչության հիմնական մասի ֆիզիկական ոչնչացումից հետո, սկիզբ է առնում հետեւողական մի գործընթաց՝ արմատախիլ անելու այն ամենը, ինչ կար եւ ընդունված էր համարել հայկական:

Անցնող դարի 28 թ.-ից սկսած անվանափոխության է ենթարկվում այն ամենը, ինչ պատմական է ու ազգային Արեւմտյան Հայաստանի տարածքի վրա: Հայկական տեղանունների ավելի քան 90 %-ը օտարված է, Արեւմտյան Հայաստանի աշխարհագրական անվանումները փոփոխված:

Հայ ժողովրդին պատկանող հարյուրավոր ճարտարապետական հուշարձաններ վերածված են մզկիթների: Ավերվում է այն ամենը, ինչ ունի հայկական ծագում եւ կամ առնչված է հայերին, հայկական մշակույթին ու պատմությանը: Հուշարձանները, եկեղեցիները, ճարտարապետության գլուխգործոցները, որպես թիրախներ են գործածվում թուրքական բանակի զինավարժությունների ժամանակ, ինչը վայրենաբարո է ժամանակակից ցանկացած պետության համար, եթե իհարկե խոսք չի գնում ահաբեկչական խմբավորումների վերաբերյալ, ինչպես ԻՊ-ին է: Այն սակավաթիվ եկեղեցիները, որոնք դեռեւս կանգուն են մնացել, գործածվում են որպես ախոռ, պահեստ, կամ բանտ:

Ստեղծվում են նոր եւ կեղծվում այլազան պաշտոնական փաստաթղթեր, որոնք խրախուսում են կեղծ գիտական հրատարակությունների ծնունդը, որտեղ հայոց

պատմությունը եւ մշակույթը կեղծվում է եւ կամ միտումնավոր անտեսվում: Ստեղծված է «տվյալների» մի ողջ համակարգ, այսպես կոչված՝ «օրինական վանդալիզմի», ոսկու անօրինական որոնումների եւ պեղումների: Թուրքիայի կառավարության հովանավորչությամբ՝ «ոսկեխույզներն» առանց բացառության ոչնչացնում են ամեն ինչ: Այն հուշարձանները, որոնք Թուրքիային չեն պատկանում, դրանք մարդկության սեփականությունն են: Նրանց կորուստը անփոխարինելի է: Հայկական հուշարձանների ոչնչացումն ու յուրացումը Հայերի ցեղասպանության շարունակությունն է: Ֆիզիկական ոչնչացմանը հետեւեց մշակութային ցեղասպանությունը:

Բազմաթիվ օրինակներից մեջբերենք մի քանիսը:

Նեմրութ լեռան վրա հայ անտիկ աստվածների պանթեոն է: Այնտեղ են տեղադրված հայոց աստվածների՝ Արամազդի, Միհրի, Վահագնի, Անահիտի, Աստղիկի 8-9 մետրանոց արձանները: Նրանց շարքին Անտիոքոս առաջինի արձանը՝ տեղադրված հայ Երվանդունիների տոհմի այդ արքայի հիշատակին՝ մ.թ.ա. 62 թ.-ին: Այսօր թուրքերը յուրացրել են այդ ամենը եւ ներկայացնում են որպես իրենց սեփականը:

Հայկական լեռնաշխարհում Պորտասարը (Գեբեկլի Թեփե-թուրք.) տաճարական համալիր է, որ ներառում է նաեւ աստղադիտարան: Մեծ եւ հնագույն մեգալիթյան կառույցներից է, շուրջ 12 հազար տարեկան: Պորտասարը մեր ժամանակի ամենակարեւոր հայտնագործություններից է: Դա մարդու ձեռքով կառուցված առաջին տաճարն է: Եւ նա նույնպես թուրքական ձեւով անվանափոխված է:

Անի քաղաքը հայկական «ոսկեդարի» հուշարձան է: Անիի հայկական թագավորության հնագույն մայրաքաղաքը: «1001» եկեղեցիների քաղաքից մնացել են ավերակներ եւ նույնիսկ դրանք վանդալներն ավերում են: Թուրքերն անվանափոխել են Անին Անը-ի եւ ՅՈՒՆԵՍԿՕ-ի միջոցով փորձում են դա ներկայացնել որպես Թուրքիայի մշակութային ժառանգություն:

Նրանք ձեռք են բարձացրել նաեւ բիբլիական արժեքների վրա, հայերի հիմնական խորհրդանիշներից մեկի, Արարատ լեռան, որ անվանափոխել են որպես Աղրը:

Համաձայն 1914 թ. տվյալների հայկական եկեղեցիների ու եկեղեցական համալիրների ընդհանուր թիվն Արեւմտյան Հայաստանում եւ Օսմանյան կայսրության մեջ կազմել է 2549 (այդ թվում IV-V դդ. վաղ քրիստոնեական հուշարձանները): Դրանց մեծ մասը թալանվել, հրկիզվել եւ ավերվել է ցեղասպանության ժամանակ: ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1974 թ. տվյալների համաձայն՝ 1923 թ.-ից հետո պահպանված 913 պատմա-ճարտարապետական հուշարձաններից 464-ը հիմնահատակ ոչնչացվել են, 252-ը ավերակ վիճակում է, 197-ը հիմական վերանորոգման կարիք ունի: Այսօր արդեն գրեթե ոչինչ չի մնացել վերականգնելու, Թուրքիան դրանք բոլորը ծրագրավորված կերպով ոչնչացրել է:

Որպես նեոօսմանականության քաղաքականության ժամանակակից դրսեւորում կարելի է դիտել Սսի Կաթողիկոսական համալիրը կաթողիկոսարանին վերադարձնելու

մերժումը, ինչը նրանք յուրացրել են 20-րդ դարում ցեղասպանությունն իրականացնելու միջոցով:

Թուրքիայի ներկայի քաղաքականությունը հանգեցրել է նրան, որ արեւմտահայերենը հայտնվել է ոչնչացման վտանգի տակ գտնվող լեզուների շարքում, քանի որ Արեւմտյան Հայաստանից բռնագաղթվածները հնարավորություն չունեն պատմական հայրենիք վերադառնալու եւ մայրենին այնտեղ գործածելու ու զարգացնելու, որպես իրենց բնական իրավունքի արտահայտություն:

Թուրքիայի վարած նեոօսմանականության ու ձուլման քաղաքականության հատկանշանական օրինակ է վերաբերմունքը համշենահայերի նկատմամբ, որոնք հիմնականում ենթարկվեցին բռնի մահմեդականացման: Շատերը կորցրին իրենց արմատներն ու ազգային ինքնությունը, չեն ընդունում իրենց հայկականությունը, իրենց անվանում են «հեմշիլներ»: Հմայական աղոթքներ ասելիս հայերենով՝ նրանք համոզված են, թե դրանք թուրքերեն լեզվով են:

Իսկ ճարտարապետական գոհարները... թուրքերը առանց ամոթի արձանագրում են, որպես իրենց ձեռքբերում: Եւ մենք պետք է օգտագործենք բոլոր հնարավորությունները օգնելու մեր համշենահայ եղբայրներին ու քույրերին վերադառնալու իրենց հայկական արմատներին:

Հայկական գորգերը թուրքերը ներկայացնում են իբրեւ իրենցը, նույնիսկ եթե բերում են Հայաստանից եւ կամ կրկնօրինակում են դրանք, անկախ հայկական խորհրդանիշներից, գույներից եւ այլ..., պնդելով թե ներկայացվածը թուրք ժողովրդի ձեռբերումն է:

Նրանք այնքան անսկզբունքային ու անշնորք են, որ մեր հայրենասիրական երգն են յուրացրել՝ «Զարթիր լառ»-ն, աշխարհում միակ օրօրոցայինը, որտեղ մայրը որդուն քնեցնելու փոխարեն արթնացնում է՝ կոչելով պաշտպանել Հայրենիքը, երգ՝ որով մեր ֆիդայիներն ու մարտիկներն են կռվի ելել: Թուրքական ֆուտբոլային ակումբն այն յուրացրել է եւ գործածում է որպես հիմն, բնականաբար փոխելով բառերը թուրքերենով:

Հնագույն հայկական խոհանոցը նույնպես «կողոպտվել» է հարեւանների կողմից, ինչը դյուրին է ապացուցել, եթե անդրադառնանք ակունքներին՝ ուսումնասիրելով, թե ինչից եւ ինչպես է պատրաստված կերակուրը:

Բերենք հացահատիկի օրինակը, թեեւ կարող ենք եւ այլ օրինակների դիմել: Հացահատիկի 3-4 տեսակներ համարվում են բուն հայկական: Հայտնի է, որ հացահատիկի հայրենիքը Հայկական լեռնաշխարհն է: Հայերն են, որ հնուց զբաղվել են հացահատիկի մշակմամբ: Բլղուր, փոխինձ, կորկոտ, ձավար, աճառ... եւ այս ամենը այլազան ձեւերով մշակվելով խմորի հետ օգտագործվում է հայկական խոհանոցում: Բոլոր այն կերակրատեսակները, որոնք թուրքերը եւ այլ հարեւաններ ՅՈՒՆԵՍԿՕ-ի «օժանդակությամբ» ճգնում են յուրացնել, իրականում բուն հայկական ստեղծագործություն են, որովհետեւ ունեն պատրաստության մաքուր հայկական

եղանակ՝ թոնրի մեջ, եւ ունեն հայկական անվանումներ: Այդ ամենը վերաբերում է նաեւ լավաշին ու մատնաքաշին:

Ինչպես կանխագուշակում են շատերը, «քաշիկ» ազգային կերակուրից հետո (քաշել խոսքից), թուրքերը կցանկանան յուրացնել թոնիրը, որը Արեւին երկրպագելու ժամանակներից ի վեր հայերի համար Արեւի խորհրդանիշն է երկրի վրա: Թոնիրն ունի մի քանի գործառույթ, բացի նրանից որ վառարան է կերակուր պատրաստելու, նաեւ տաքացնում է կացարանը, բուժում է հիվանդությունները եւ այլն:

Այն ամենը ինչ ներկայացվեց վերեւում կատարվում է ցուցադրելու համար, որ թուրքերը բնակչության գլխավոր տարրն են Հայկական լեռնաշխարհում: Սակայն որքան էլ ջանան կեղծել իրենց պատմությունը, վճարել ամենատարբեր լոբբիստական կազմակերպություններին, միեւնույնն է դա չի ստացվում անել, պատմությունը հիշում է քոչվորներին, որոնք բռնազավթեցին այլոց հողերը, յուրացրին նրանց ունեցվածքը եւ մշակութային արժեքները:

Թուրքիայի Հանրապետությունը ՅՈՒՆԵՍԿՕ-ի անդամ է: Ժամանակն է ՅՈՒՆԵՍԿՕ-ին եւ այլ միջազգային կազմակերպություններին պահպանելու պատմական արդարության սկզբունքները, իրավունքները, էթիկայի նորմերը եւ ոչ այնպես, ինչպես հիմա՝ գործածելով երկակի սկզբունքներ: Հուսով ենք, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ի եւ այլ միջազգային կազմակերպությունների բարեխիղճ մասնագետները կկասեցնեն շարունակվող վանդալիզմը եւ կսկսեն աշխատել հաճոյք ստանալով իրական պատմագրության ուսումնասիրությունից, այլ ոչ թե մտածածին, կամ նրանց ներկայացված որպես իրական: Դա ոչ միայն Հայ ժողովրդի պատմությունն է, այլեւ համաշխարհային, ողջ մարդկության հոգեւոր մշակութային ժառանգությունը:

Յուլիա Գյուլոյան
Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի)
Մշակույթի հարցերով հանձնաժողովի նախագահ
17.11.2016 թ.

Պետք է օգտագործենք բոլոր միջոցները՝ օգնելու համշենահայերին՝ վերադառնալու իրենց հայկական արմատներին

Համշենահայերի ամենաստվար սփյուռքյան համայնքները գտնվում են Աբխազիայում եւ Ռուսաստանի սեւծովյան ափամերձ շրջաններում: Անշուշտ, համշենցիները դեռեւս կուռ բնակչությամբ ապրում են իրենց պատմական հայրենիքում՝ Համշենում:

Ռուսաստանի հարավային դաշնայն մարզում՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր հյուպատոսության (ք. Դոնի Ռոստով) եւ Սոչիում հյուպատոսության մասնաճյուղի գործունեությունը, ինչպես նաեւ ՀՀ Սփյուռքի նախարարությունը նպաստել են Հայաստանի հետ ռուսաստանաբնակ համշենահայության բազմակողմանի կապերի

ամրապնդմանը: Իրավիճակը, հայտնի իրադարձությունների պատճառով, մի փոքր այլ է Աբխազիայում:

Եթե Ռուսաստանում եւ Աբխազիայում համշենահայերը քրիստոնյաներ են, եւ իրենց համարում են համշենահայության չիսլամացված մասի ժառանգները, ապա բոլորովին այլ պատկեր է բուն Համշենում, որտեղ համշենահայությունը բռնի կերպով իսլամացվել է, շատերը կորցրել են իրենց արմատներն ու ազգային ինքնությունը…

Հետեւաբար, մենք պետք է օգտագործենք բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի օգնենք համշենահայ մեր քույրերին ու եղբայրներին՝ վերադառնալու իրենց հայկական արմատներին:

Այստեղ շատ ու շատ կարեւոր է զանգվածային լրատվության միջոցների դերը:

Ցավոք սրտի, համշենական ԶԼՄ-ներ, ինչպես տպագիր, այնպես էլ էլեկտրոնային, Աբխազիայում, Ռուսաստանում եւ բուն Համշենում չկան, բացի «Ձայն Համշենական» ամսաթերթից ու «Համշենական զրուցարան» հաղորդաշարից (խմբագիր եւ հեղինակ՝ Սերգեյ Վարդանյան), որի հետեւանքով համշենահայերը լիարժեք տեղեկատվություն չեն ստանում իրենց խնդիրների եւ անելիքների վերաբերեալ: Այս իրավիճակի շտկումը պետք է դառնա օրվա գլխաւոր հրամայականը, ինչպես համշենահայության սփյուռքյան կառույցների, այնպես էլ Հայաստանի Հանրապետության համար:

Շատ կարեւոր ենք համարում ժողովրդական դիվանագիտությունը, Աբխազիայում եւ Սոչիում բնակվող համշենահայերի եւ պատմական հայրենիքում բնակվող համշենցիների ուղղակի շփումները: Վերջին տարիներին բարի ավանդույթ է դարձել ճանաչողական փոխադարձ այցելությունները, համատեղ մշակութային միջոցառումների կազմակերպումը եւ այլն:

Անկասկած, մեծ եւ անփոխարինելի է հատկապես հայ կնոջ դերը՝ խաղաղության պահպանման, լեզվի, մշակույթի, ազգային ավանդույթների, կենցաղի եւ ընտանիքի վերականգնման հարցում: Հայ կինը մշտապես եղել է ոչ միայն օջախի պահապանը, այլեւ Հայրենիքի պաշտպանը, Ազատարար-զինվորի Մայրը:

Այս իմաստով մեծ դեր է ստանձնել 2012 թվականին ստեղծված «Համշենահայուհի» կանանց միջազգային միությունը:
Այս կարճ՝ 4-ամյա գործունեության ընթացքում միության կողմից իրականացվել են բազմաթիվ միջոցառումներ, որոնք նպաստել են համշենահայության միջազգային համագործակցությանը: Եվ մենք երախտապարտ ենք ՀՀ սփյուռքի նախարարությանը, անձամբ նախարար տիկին Հրանուշ Հակոբյանին՝ մեր կազմակերպության հանդեպ մշտական ուշադրության, աջակցության եւ բարի խորհուրդների համար:

Համշենահայության կյանքում նշանակալի իրադարձություն կլինի 2017 թվականին Սոչիում եւ Հբխազիայում անցկացվելիք համշենահայության միջազգային համաժողովը՝ «Համշենյանաշխարհ–մենք միասնական ենք» խորագրով, որի շրջանակում տեղի

կունենան կոնֆերանսներ եւ մշակութային տարբեր փառատոներ: Նախատեսվում է, որ միջոցառմանը կմասնակցեն ստեղծագործական խմբեր, մշակության եւ կրթական ոլորտի նշանավոր գործիչներ, պատմաբաններ, քաղաքագետներ, միջազգային ճանաչված լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

Աբողջությամբ պատրաստ է ֆորումի ծրագիրը եւ արդեն իսկ համաձայնեցված՝ Աբխազիայի եւ Ռուսաստանի համապատասխան կառույցների հետ:

Ակնկալում ենք, որ Հայաստանի Հանրապետությունը կաջակցի մեր նախաձեռնությանը եւ ֆորումն իրական տոն եւ ինքնության ճանաչման հարթակ կդառնա համշենահայության համար:

Սաիդա Օհանյան
«Համշենուհի», համշենահայերի կանանց միջազգային միության նախագահ,
Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) պատգամավոր
22.10.2016 թ.

Եւրամիության դիրքորոշումը Հայկական Հարցի լուծման վերաբերյալ

Հայկական Հարցի լուծման վերաբերյալ Եւրամիության դիրքորոշումը, բնականաբար այդ թվում եւ Եւրամիությանը մաս կազմող երկրների, մինչեւ վերջերս, արտահայտվում էր Եւրոպական պառլամենտի «Հայկական Հարցի քաղաքական լուծման մասին» բանաձեւի բովանդակության ու հոդվածների շրջանակներում (18 հունիս 1987 թ.) **(1):**

Գործածում ենք «մինչեւ վերջերս» բառակապակցությունն այն նկատառումով, որ վերջին ժամանակահատվածում կարող էին ի հայտ գալ նոր դիրքորոշումներ: Իսկ եթե դրանք, այնուհանդերձ, ի հայտ չեն եկել տակավին, ապա մեր խնդիրն է հասնել նրան, որ ի նպաստ Հայկական Հարցի վերջնական եւ ամբողջական լուծման, դրանք ի հայտ գան Եւրոպական պառլամենտի (եւ ոչ միայն Եւրախորհրդարանի) դիրքորոշումներում:

Հայերի ցեղասպանության ճանաչման ու դատապարտման Եւրոպական պետությունների որոշումներում հիմնականում նշվում է Հայերի ցեղասպանության ճանաչման ու դատապարտման, բայց ոչ հատուցման հարցերը, ի տարբերություն օրինակ՝ Բոլիվիայի խորհրդարանի երկու պալատների ճանաչման ու դատապարտման բանաձեւի, որտեղ նշվում է ոչ միայն հատուցման, այլեւ այդ հարցում հայ ժողովրդին Բոլիվիայի անվերապահ աջակցության մասին, քանի որ Բոլիվիան, ինչպես նաեւ Եգիպտոսը, սահմանափակված չեն Եւրոպական պառլամենտի ընդունած բանաձեւի շրջանակներում **(2):**

Եւրոպական պառլամենտի վերոհիշյալ բանաձեւում Հայկական Հարցի քաղաքական լուծման Եւրոպական հայեցակարգը շարադրված է հետեւյալ կերպ.

ա) Հայերի կոտորածն ու բռնագաղթը, որ տեղի է ունեցել 1915-1917 թթ., որակվում է որպես ցեղասպանություն համաձայն՝ ՄԱԿ-ի «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու եւ դրա համար պատժի մասին» Կոնվենցիայի (9 դեկտեմբեր 1948 թ.),
բ) հաշվի առնելով, որ տեղի է ունեցել ցեղասպանություն, ներկայի Թուրքայի Հանրապետությունը պարտավոր է ճանաչել ցեղասպանությունը, սակայն առանց դրա համար հատուցման որեւէ հետեւանքի,
գ) եւ երրորդ, Հայկական Հարցի լուծումը Թուրքիայի Հանրապետությունում փոքրամասնությունների իրավունքների, դրանց վերականգման ու իրականացման հարց է, այդպիսի կարգավիճակ ունի:

Եւրոպական պառլամենտի բանաձեւի 2 հոդվածի առաջին պարբերության մեջ նշված է.
«Եւրոպական պառլամենտը...
Գտնում է, որ ողբերգական իրադարձությունները, որ տեղի ունեցան 1915-1917 թվականներին Օսմանյան կայսրության տարածքում հայերի նկատմամբ, հանդիսանում են ցեղասպանություն, համաձայն «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու եւ դրա համար պատժի մասին» Կոնվենցիայի, ընդունված ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից 1948 թվականի դեկտեմբերի 9-ին»:

Եւրոպական պառլամենտի բանաձեւի 2 հոդվածի երկրորդ պարբերության մեջ գրված է.
«Եւրոպական պառլամենտը...
Նշում է միաժամանակ, որ ժամանակակից Թուրքիան պատասխանատու չի կարող համարվել Օսմանյան կայսրության հայ բնակչության ողբերգության համար եւ ամենայն հաստատակամությամբ ընդգծում է, որ պատմական այդ իրադարձությունների ճանաչումը որպես ցեղասպանություն՝ առիթ չի կարող հանդիսանալ քաղաքական, իրավական կամ նյութական որեւէ պահանջի այսօրվա Թուրքիայի նկատմամբ»:

Բանաձեւի 5-րդ հոդվածում փոքրամասնությունների իրավունքների մակարդակին իջեցված պարբերությունը (պարբերություններից մեկը, եթե ոչ գլխավորը) ձեւակերպված է այսպես.
«Նկատի ունենալով տեղի ունեցած (հայ ժողովրդի) ողբերգությունը, միանում է ազգային ինքնատիպությունը զարգացնելու նրա ցանկությանը, երաշխավորելու իր իրավունքները որպես փոքրամասնություն եւ անարգել օգտվելու մարդու եւ քաղաքացիների իրավունքներից, ինչպես որ դրանք սահմանված են Մարդու իրավունքների Եւրոպական կոնվենցիայի դրույթներում ու նրա համապատասխան արձանագրություններում»:

Այսինքն, այդ ամենը հանգեցվում է երկխոսության եւ Թուրքիայի Հանրապետության մեջ փոքրամասնությունների՝ հայերի եւ այլ ազգերի, իրավունքներին, ինչպես նշված է նաեւ բանաձեւի 3-րդ եւ 4-րդ հոդվածներում.
«3. Պահանջում է (Եւրոպական) Խորհրդից ճնշում գործադրել ներկայիս թուրքական կառավարության վրա, որպեսզի վերջինս ճանաչի 1915-1917 թվականների հայերի հանդեպ կազմակերպված ցեղասպանությունը եւ այդպիսով նպաստի քաղաքական երկխոսության հաստատմանը Թուրքիայի եւ հայերի լիազոր պատվիրակների միջեւ:
4. Ելնում է նրանից, որ հայ ժողովրդի դեմ անցյալում երիտթուրքական կառավարության կողմից գործադրած ցեղասպանության մերժումը ներկայիս թուրքական

կառավարության կողմից, Հունաստանի հետ գոյություն ունեցող վիճելի հարցերում միջազգային իրավական նորմերի կիրառումից հրաժարումը, Կիպրոսում թուրքական օկուպացիոն զորքերի պահպանումը, ինչպես նաեւ քրդական իրադարձությունների ժխտումը, այդ երկրում (Թուրքիայում) իսկական պառլամենտար դեմոկրատիայի բացակայությունը, անհատական, հասարակական ու հատկապես կրոնական ազատությունների ոտնահարումը՝ այս ամենը հանդիսանում են անհաղթահարելի արգելքներ Եւրոպական Տնտեսական Համագործակցության կազմի մեջ Թուրքիայի հնարավոր ընդունման հարցի քննարկման համար»:

Ավելորդ չէ ասել, որ դեռեւս 1987 թ. հունիսի 18-ին ընդունված այս դիրքորոշումը չի համապատասխանում Հայկական Հարցի լուծման իրավական - քաղաքական բովանդակությանն ու սկզբունքներին, հատկապես, եթե նկատի առնվի, որ Հայկական Հարցի լուծման ուղղությամբ 1918-20 թթ. արդեն իսկ ընդունվել են որոշումներ, այդ թվում՝ Ռուսաստանի Կառավարության Դեկրետը «Թուրքահայաստանի մասին» («Արեւմտյան Հայաստանի մասին», 11 հունվար 1918 թ.), Հայաստան պետության անկախության դե ֆակտո (de facto) ճանաչումը Փարիզի Վեհաժողովի ժամանակ՝ Դաշնակից Տերությունների Գերագույն Խորհրդի կողմից (19 հունվար 1920 թ.) եւ դե յուրե (de jure) ճանաչումը Դաշնակից Տերությունների Գերագույն Խորհրդի կողմից (11 մայիս 1920 թ.), Սեւրի Խաղաղության պայմանագրի Հայաստանին վերաբերող հոդվածները (10 օգոստոս 1920 թ.), ԱՄՆ 28-րդ Նախագահ Վուդրո Վիլսոնի կայացրած Իրավարար վճիռը (22 նոյեմբեր 1920 թ.) եւ այլ որոշումներ, որոնք սակայն հետագայում շրջանցվել ու մոռացության են մատնվել Եւրոպական պետությունների ու նրանց կառույցների կողմից **(3):**

Ավելին, մեր ժամանակներում, երբ համեմատում ենք Եւրոպական պառլամենտի «Հայկական Հարցի քաղաքական լուծման մասին» բանաձեւը եւ Հայաստանի Հանրապետության եւ Թուրքիայի Հանրապետության միջեւ նախաստորագրված արձանագրությունները, համոզվում ենք, որ արձանագրությունները նույնությամբ կրկնում են բանաձեւի ձեւակերպումները եւ իրավական, քաղաքական ու բովանդակային իմաստով կազմում են բանաձեւի շարունակությունը **(4)**:

Հետեւաբար, այս փաստերից մեկնած, պետք է ասել, որ այն հայկական կառույցներն ու կազմակերպությունները, որոնք հավակնում են Հայոց իրավունքները պաշտպանել Եւրախորհրդարանի եւ կամ Եւրոպական այլ կառույցների հետ համագործակցության միջոցով, պետք է հստակ պատկերացնեն, որ դրանք չեն ներկայացնում Հայկական Հարցի եւ Հայոց իրավունքների պաշտպանության իրական պատկերը եւ, ըստ այդմ, պետք է իմանան, որ խնդիր ունեն Եւրախորհրդարանի եւ Եւրոպական այլ կառույցների դիրքորոշման մեջ փոփոխություն իրականացնել: Այլ կերպ Հայկական Հարցի վերջնական եւ ամբողջական լուծման հնարավոր չէ հանգել եւ շատ ավելի հավանական է կցորդ դառնալ այդ կառույցների ժամանակակից քաղաքականության, որ իրականացվում է Մերձավոր Արեւելքում եւ որն ամենեւին չի բխում տարածաշրջանի ժողովուրդների ու պետությունների անվտանգության ու իրավունքների շահերից **(5):**

Ամեն կերպ պետք է խուսափել կցորդի կարգավիճակում հայտնվելու բախտից եւ գնալ Հայոց բոլոր իրավունքների պաշտպանության ճանապարհով եւ դրա նկատմամբ պետությունների, կողմերի ու կառույցների դիրքորոշման փոփոխության ու ճշգրտման՝ այնպես, ինչպես դա պահանջում է Հայկական Հարցի վերջնական եւ ամբողջական լուծման վերոնշյալ թղթածրարի իրավական – քաղաքական բովանդակությունը (6):

(Շարունակելի՝ ԱՄՆ-ի դիրքորոշումը Հայկական Հարցի լուծման վերաբերյալ)

Տիգրան Փաշաբեզյան
Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Վարչապետ
10.12.2016 թ.

Ծանոթագրություն

1. Տես, Եւրոպական պառլամենտի բանաձեւը «Հայկական Հարցի քաղաքական լուծման մասին», 18 հունիս 1987 թ., «Ուխտ Արարատի» պարբերական, թիվ 1 (19), մարտ-ապրիլ, 2010 թ., էջ 10-11:
2. Տես, Բոլիվիայի խորհրդարանի երկու պալատները ճանաչել են Հայոց ցեղասպանությունը: Խորհրդարանի երկու պալատները «հաստատում են իրենց հավատարմությունը մարդու իրավունքներին, ճշմարտության եւ արդարության արժեքներին, արտահայտում են իրենց զորակցությունը եւ դատապարտում Հայոց ցեղասպանության եւ հայ ժողովրդի դեմ իրականացված մարդկային ծանր հանցագործության ժխտողականության քաղաքականությունը»: 21.04.2015 թ., Orer.am:
3. Տես, «Հայերի ցեղասպանության ճանաչման, դատապարտման եւ հատուցման հարցերի շուրջ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության ռազմավարության մասին», 19.10.2014 թ.:
4. Տես, Հայաստանի Հանրապետության եւ Թուրքիայի Հանրապետության միջեւ նախաստորագրված արձանագրություններ, «Ուխտ Արարատի» պարբերական, թիվ 2 (18), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2009 թ., էջ 8-9:
5. Տես, HDP Եւրոպայի ներկայացուցչութեան կեդրոնին մէջ 17 նոյեմբերին հանդիպում տեղի ունեցած է Արեւմտահայոց Ազգային Համագումարի (ԱԱՀ) պատուիրակութեան եւ Ժողովուրդներու Դեմոկրատական Կուսակցութեան (HDP-ի) ղեկավարութեան եւ Եւրոպայի կառոյցի ներկայացուցիչներուն միջեւ, 17.11.2016 թ., Arevelk.am:
(Արեւմտահայոց Ազգային Համագումարը (ԱԱՀ) պետք չէ շփոթել Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհրդի (ԱՀԱԽ) հետ, հիմնված Շուշիում 2004 թ. - հեղ.)
6. Տես, «Արեւմտյան Հայաստանի հայերի եւ Արեւմտյան Հայաստանի իրավունքների պաշտպանության իրավական-քաղաքական միասնական փաթեթ» ժողովածուն (հայերեն, ռուսերեն կամ անգլերեն), որը կարող եք ձեռք բերել «Նոյյան Տապան» հրատարակչությունում զանգահարելով՝ (+374 60) 2764 62: Հասցեն՝ ՀՀ, Երեւան, Իսահակյան 28: - http://parliament-wa.info/hy/archives/10958

ԱՄՆ-ի դիրքորոշումը Հայկական Հարցի լուծման վերաբերյալ

Թվում է, թե Հայկական Հարցի լուծման վերաբերյալ ԱՄՆ-ի դիրքորոշման հիմքը պետք է կազմեր ԱՄՆ 28-րդ Նախագահ Վուդրո Վիլսոնի 22 նոյեմբեր 1920 թ. կայացրած Իրավարար վճիռը: Սակայն, Հայկական Հարցի լուծման վերաբերյալ ԱՄՆ-ի դիրքորոշումը, մինչեւ վերջերս, դա Եւրոպական պառլամենտի բանաձեւի բովանդակության ու հոդվածների գործնական իրականացումն է Մերձավոր Արեւելքում մի փոքր հավելումով այն իմաստով, որ Արարատ լեռն ու Անի հնաբույր մայրաքաղաքը ենթադրվում է, որ անցնելու են Հայաստանի Հանրապետությանը:

ԱՄՆ-ի դիրքորոշումը Հայկական Հարցի եւ Մերձավորարեւելյան խնդիրների վերաբերյալ ներկայացված է վերջին տասնամյակներում հրապարակված տարբեր հոդվածներում: Դրանցից մեկը ԱՄՆ բանակի պաշտոնաթող սպա Ռալֆ Պիտերսի «Մերձավոր Արեւելքի նոր քարտեզը ըստ արյունակցական կապերի եւ հավատի նմանությունների» հոդվածն է ու կից քարտեզը, որն առավել ամբողջական է արտահայտում ԱՄՆ իշխանությունների վերաբերմունքը վերոնշյալ խնդիրների վերաբերյալ **(1):**

Հայկական պահանջատիրության եւ իրավունքների մասով հոդվածում մասնավորապես ասված է. «Իսկ մի սարսափելի չարագործություն, ինչպիսին է հայերի հանդեպ հոգեւարքի մեջ գտնվող Օսմանյան կայսրության իրականացրած ցեղասպանությունը, երբեք չի կարող փոխհատուցվել տարածքային նվիրատվությամբ»:
Միանգամից աչքի է զարնում այս ձեւակերպման նմանությունը Եւրոպական պառլամենտի բանաձեւի 2-րդ հոդվածի երկրորդ պարբերությանը, որտեղ հիշեցնենք նշված է.
«Եւրոպական պառլամենտը...
«Նշում է միաժամանակ, որ ժամանակակից Թուրքիան պատասխանատու չի կարող համարվել Օսմանյան կայսրության հայ բնակչության ողբերգության համար եւ ամենայն հաստատակամությամբ ընդգծում է, որ պատմական այդ իրադարձությունների ճանաչումը որպես ցեղասպանություն՝ առիթ չի կարող հանդիսանալ քաղաքական, իրավական կամ նյութական որեւէ պահանջի այսօրվա Թուրքիայի նկատմամբ» **(2):**

Ահա թե ինչու, 2009 թ. հոկտեմբերին, երբ Շվեյցարիայում նախաստորագրվում էին Հայաստանի Հանրապետության եւ Թուրքիայի Հանրապետության միջեւ հայտնի եւ այնքան աղմուկ հանած արձանագրությունները՝ այլ պաշտոնատար անձանց շարքին ներկա էր նաեւ ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը:

Ճիշտ է, որպես հավելում՝ Ռալֆ Պիտերսի քարտեզում նշված է, որ Արարատ լեռն ու Անի հնաբույր մայրաքաղաքը անցնելու են Հայաստանի Հանրապետությանը, ինչպես նաեւ տեւական ժամանակ է, ինչ խոսվում է այն մասին, թե ամերիկյան քաղաքական շրջանակներում քննարկվում է իսլամացած հայերի գործոնը տարածաշրջանում: Նկատենք նաեւ, որ 2012 թ. փետրվարից սկսած ամերիկյան պետական շրջանակներում հնչում են ելույթներ ի պաշտպանություն Սիրիայի ու Մերձավոր Արեւելքի հայության **(3,4):**

Սակայն միեւնույնն է, տեսանելի է, որ այս կարգի դիրքորոշումները նույնպես չեն արտահայտում Հայկական Հարցի լուծման թղթածրարի իրավական – քաղաքական ամբողջական եւ իրական բովանդակությունը:

Այնպես որ այստեղ եւս ստիպված ենք կրկնելու, որ Հայկական Հարցի լուծման ուղղությամբ 1918-20 թթ. արդեն իսկ ընդունվել են որոշումներ, այդ թվում՝ Ռուսաստանի Կառավարության Դեկրետը «Թուրքահայաստանի մասին» («Արեւմտյան Հայաստանի մասին, 11 հունվար 1918 թ.), Հայաստան պետության անկախության դե ֆակտո (de facto) ճանաչումը Փարիզի Վեհաժողովի ժամանակ՝ Դաշնակից Տերությունների Գերագույն Խորհրդի կողմից (19 հունվար 1920 թ.) եւ դե յուրե (de jure) ճանաչումը Դաշնակից Տերությունների Գերագույն Խորհրդի կողմից (11 մայիս 1920 թ.), Սեւրի Խաղաղության պայմանագրի Հայաստանին վերաբերող հոդվածները (10 օգոստոս 1920 թ.), ԱՄՆ 28-րդ Նախագահ Վուդրո Վիլսոնի կայացրած Իրավարար վճիռը (22 նոյեմբեր 1920 թ.) եւ այլ որոշումներ, որոնք սակայն հետագայում շրջանցվել ու մոռացության են մատնվել Եւրոպական պետությունների ու նրանց կառույցների կողմից **(5):**

Ուստի, Հայոց իրավունքների պաշտպանության խնդիրներում պետք է նկատի ունենալ, որ այս դաշտում եւս հսկայածավալ աշխատանք կա կատարելու, նաեւ ամերիկյան պետական շրջանակներին հիշեցնելու համար ԱՄՆ 28-րդ Նախագահ Վուդրո Վիլսոնի կայացրած Իրավարար վճռի (ինչպես նաեւ այլ որոշումների) արծարծման ու իրականացման կարեւորությունը հայության կյանքում, դրանով նույնպես նպաստելու համար կայուն խաղաղության ու համագործակցության հաստատմանը Մերձավոր Արեւելքում եւ ամբողջ աշխարհում:

(Շարունակելի՝ Ռուսաստանի Դաշնության դիրքորոշումը Հայկական Հարցի լուծման վերաբերյալ)

Տիգրան Փաշաբեզյան
Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Վարչապետ
11.12.2016 թ.

Ծանոթագրություն

1. Տես, Ռալֆ Պիտերս, «Մերձավոր Արեւելքի նոր քարտեզը ըստ արյունակցական կապերի եւ հավատի նմանությունների» հոդվածն ու քարտեզը, թարգմանությունը եւ նախաբանը «Ազգ» օրաթերթի, 25.08.2006թ.: Blood borders, How a better Middle East would look, By Ralph Peters, All content © 2006, Armed Forces Journal | Terms of Service.

2. Տես, Եւրոպական պառլամենտի բանաձեւը «Հայկական Հարցի քաղաքական լուծման մասին», 18 հունիս 1987 թ., «Ուխտ Արարատի» պարբերական, թիվ 1 (19), մարտ-ապրիլ, 2010 թ., էջ 10-11:

3. Տես, ԱՄՆ Կոնգրեսը ցանկանում է օգնել սիրիահայերին, 02.08.2012 թ., Azatutyun.am:

4. Տես, Կոնգրեսականը կոչ է անում պաշտպանել սիրիահայերին, 10.08.2012 թ., Azatutyun.am**:**

5. Տես, «Արեւմտյան Հայաստանի հայերի եւ Արեւմտյան Հայաստանի իրավունքների պաշտպանության իրավական-քաղաքական միասնական փաթեթ» ժողովածուն (հայերեն, ռուսերեն կամ անգլերեն), որը կարող եք ձեռք բերել «Նոյյան Տապան» հրատարակչությունում զանգահարելով՝ (+374 60) 2764 62: Հասցեն՝ ՀՀ, Երեւան, Իսահակյան 28: http://parliament-wa.info/hy/archives/10958

Ռուսաստանի Դաշնության դիրքորոշումը Հայկական Հարցի լուծման վերաբերյալ

Ռուսաստանի Դաշնության համար Հայկական Հարցի լուծումը, մինչեւ վերջերս, պարզ էր եւ սահմանափակված Մոսկվայի «Ռուս-թուրքական պայմանագրի» դրույթներով (16 մարտ 1921 թ.) **(1):** Մինչեւ ճշմարտության բացահայտման այն պահը, երբ «Գունավոր հեղափոխությունների» հետեւանքով Ռուսաստանը մեկը մյուսի ետեւից դիրքեր կորցրեց Մերձավոր Արեւելքում եւ մնում էր այն վերջնականապես կորցնել, կորցնելով նաեւ Սիրիան: Մինչեւ այն պահը, երբ Մերձավոր Արեւելքում Թուրքիայի Հանրապետության վարած քաղաքականությունը Ռուսաստանի համար համարվում էր չարիքներից փոքրագույնը՝ համեմատած արեւմուտքի պետությունների վարած քաղաքականության: Մինչեւ այն պահը, երբ վերջնականապես պարզ դարձավ, որ Թուրքիան չի հրաժարվելու նեոօսմանական քաղաքականություն վարելուց եւ հավատարիմ է մնալու հատկապես ահաբեկչական ծայրահեղ խմբավորումներին մինչեւ վերջ աջակցելու ու օժանդակելու ծրագրին՝ փորձելով դրանք ծառայեցնել տարածաշրջանային իր ծավալապաշտական ու ագրեսիվ նկրտումներին, այդ թվում՝ ներխուժելու համար Սիրիա եւ Իրաք **(2):**

Այնուհանդերձ, հիշեցնենք Մոսկվայի պայմանագրի այն հիմնական դրույթները, որոնք տասնամյակներ շարունակ սահմանափակեցին ինչպես հայկական իրավունքները պաշտպանելու հայկական կողմի հնարավորությունները, այնպես էլ Մերձավոր Արեւելքում (եւ նրա միջոցով աշխարհում) լիարժեք քաղաքականություն վարելու ռուսական կողմի բոլոր ակնկալիքներն ու պատկերացումները:

Դրանցից առաջինը ձեւակերպված է պայմանագրի հենց 1-ին հոդվածում.
«Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրն սկզբունքորեն համաձայնվում է չճանաչել ոչ մի հաշտության պայմանագիր կամ միջազգային որեւէ այլ ակտեր, եթե Պայմանավորվող կողմերից մյուսին ուժով են հարկադրում ընդունել այդպիսիք: Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Սովետական Հանրապետության կառավարությունը համաձայնվում է չճանաչել Թուրքիային վերաբերվող եւ այսօր Թուրքիայի Ազգային մեծ ժողովը ներկայացնող նրա ազգային կառավարության կողմից չճանաչված որեւէ միջազգային ակտ: Թուրքիա հասկացության տակ սույն պայմանագրում հասկացվում են այն տարածքները, որոնք մտցված են 1920 թվականի հունվարի 28-ի թուրքական Ազգային ուխտի մեջ, որը Կ. Պոլսում մշակել եւ հռչակել է օսմանյան դեպուտատների Պալատը եւ հաղորդել է մամուլին ու բոլոր պետություններին»:

Հավելենք, որ պայմանագրի 16 հոդվածներից եւս մեկը ենթադրվում է, թե առնչվում է Ռուսաստանի շահերին, 5-րդ հոդվածը՝ նեղուցների անարգել օգտագործման

վերաբերյալ, եւ վերջ, մնացած բոլոր հոդվածները կամ ուղղակիորեն չեն առնչվում Ռուսաստանի շահերին, կամ հակասում են դրանց:

Միջազգային լայնածավալ քաղաքականություն իրականացնելու տեսակետից Ռուսաստանի համար շատ մեծ սահմանափակումներ է պարունակում հատկապես պայմանագրի 8-րդ հոդվածը.
«Պայմանավորվող երկու կողմերը պարտավորվում են իրենց տարածքներում արգելել այնպիսի կազմակերպությունների եւ խմբերի առաջացումն ու գոյությունը, որոնք ունեն մյուս երկրի, կամ նրա տարածքի մի մասի կառավարության դերն ստանձնելու հավակնություն, ինչպես նաեւ պարտավորվում է իրեն տարածքում արգելել այնպիսի խմբերի գոյությունը, որոնց նպատակն է պայքարը մյուս երկրի դեմ: Ռուսաստանն ու Թուրքիան փոխադարձության պայմանով ստանձնում են նույնպիսի պարտավորություն նաեւ Կովկասի Սովետական Հանրապետությունների վերաբերմամբ: Համարվում է որոշված, որ սույն հոդվածում հիշատակված թուրքական տարածքի տակ հասկացվում է այն տարածքը, որը գտնվում է Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարության զինվորական եւ քաղաքացիական անմիջական կառավարման ներքո»:

Ավելորդ չէ նշել, որ Թուրքիան երբեք հավատարիմ չի եղել պայմանագրի ոգուն ու տառին, եւ մշտապես գործել է այնպես, ինչպես հարմար է նկատել:

Սակայն ինչպես նշեցինք արդեն, այս հարցում բեկում է մտնում վերջին տասնամյակի ընթացքում՝ Մերձավոր Արեւելքում տեղի ունեցող բուռն իրադարձությունների լույսի ներքո:

Այս իմաստով հատկապես շրջադարձային է 2012 թվականը, երբ եւ Ռուսաստանի, եւ ԱՄՆ-ի քաղաքական շրջանակներն առաջին անգամ սկսում են խոսել Սիրիայի ազգային եւ կրոնական խմբերի, այդ թվում՝ հայերի անվտանգության հարցերի եւ իրավունքների վերաբերյալ:
Մասնավորապես 2012 թ. նոյեմբերի 16-ին Ռուսաստանի Նախագահ Վլադիմիր Պուտինը հայտարարել է. «Պետք է համաձայնության գալ Սիրիայի ազգային խմբերի վերաբերյալ: Մեր գնահատակը հայտնի է, մենք համարում ենք, որ սկզբում պետք է պայմանավորվել ապագայի վերաբերյալ, սկզբում պետք է հասկանալ, թե ինչպես են ապահովվելու զանազան ազգային եւ կրոնական խմբերի օրինական շահերն ու իրավունքները: Եւ ոչ թե հակառակը՝ Ասադին հեռացնել, եւ հետո միայն մտածել, թե նրանց հետ ինչպես վարվել» **(3, 4):**

Սա միայն սկիզբն է, եւ մոտ ապագայում շատ ավելի հստակ է լինելու Ռուսաստանի Դաշնության վարած քաղաքականությունը Մերձավոր Արեւելքի հիմնահարցերում, որտեղ ավելի ու ավելի հստակվելու է նրա կողմնորոշման փոփոխությունը դեպի 1918-1920 թթ. կայացված որոշումներ ու պայմանագրեր, որոնք հաշվի էին առնում տարածաշրջանի բոլոր ժողովուրդների ու պետությունների օրինական իրավունքներն ու շահերը, եւ դրա միջոցով ձգտումը՝ հաստատելու կայուն խաղաղություն Մերձավոր Արեւելքում: Դրանց թվում նկատի ունենալով, անշուշտ, ոչ միայն Ռուսաստանի Կառավարության Դեկրետը «Թուրքահայաստանի մասին» («Արեւմտյան Հայաստանի

մասին», 11 հունվար 1918 թ.), այլեւ Սեւրի Խաղաղության պայմանագիրը (10 օգոստոս 1920 թ.) եւ ԱՄՆ Նախագահ Վուդրո Վիլսոնի Իրավարար վճիռը (22 նոյեմբեր 1920 թ.), ինչպես նաեւ Հայերի ցեղասպանությունը դատապարտող Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի եւ Ռուսաստանի համատեղ հայտարարությունը, որտեղ 1915 թ. ապրիլյան կոտորածները որակեցին որպես «Թուրքիո նոր ոճիրը մարդկության եւ քաղաքակրթության դեմ» (24 մայիս 1915 թ.) **(5)**, Ռուսաստանի Դաշնության Պետդումայի ընդունած հռչակագիրը Հայ ժողովրդի ցեղասպանության դատապարտման մասին (14 ապրիլ 1995 թ.) **(6)**:

Մերձավորարեւելյան տարածաշրջանում եւ դրանից մեկնած ամբողջ աշխարհում լիարժեք քաղաքականություն վարելու եւ մնայուն խաղաղություն հաստատելու այլ տարբերակներ պարզապես չկան, այդ թվում եւ այնպիսի մեծ ու հզոր տերության համար, ինչպիսին Ռուսաստանի Դաշնությունն է:

Տիգրան Փաշաբեզյան
Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Վարչապետ
26.12.2016 թ.

Ծանոթագրություն

1. Տես, Պայմանագիր Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ, 16 մարտ 1921 թ., Մոսկվա: (Ջոն Կիրակոսյան, Ռուբեն Սահակյան, «Հայաստանը միջազգային դիվանագիտության եւ արտաքին քաղաքականության փաստաթղթերում՝ 1828-1923 թթ.», «Հայաստան» հրտ., Երեւան, 1972, էջ 499):
2. Տես, Արմեն Տեր-Սարգսյան. «Հայկական Հարցը եւ Թուրքիայի նեոօսմանական քաղաքականությունը, մարտահրավերներ եւ սպառնալիքներ», զեկույց՝ ներկայացված «Ռեգնում» Լրատվական գործակալության կազմակերպած կոնֆերանսի ժամանակ, 17 նոյեմբեր, 2016 թ., «Նոյյան Տապան» Լրատվական գործակալություն, http://nt.am/am/news/229947///?hayworld/
   Армен Тер-Саркисян: «Армянский Вопрос и неоосманская политика Турции: вызовы и угрозы», http://www.iarex.ru/articles/53289.html,
3. Армен Тер-Саркисян: «Реализация Севрского договора - путь к миру на Ближнем Востоке», ИА РЕГНУМ - https://regnum.ru/news/polit/2206970.html/
4. Տեւ, Сначала нужно договориться о судьбе этнических групп и только потом ставить вопрос об отставке Асада, считает президент РФ, Подробнее на ТАСС, 16 ноября 2012, /http://tass.ru/politika/647924/:
5. Տեւ, ԱՄՆ Կոնգրեսը ցանկանում է օգնել սիրիահայերին, 02.08.2012 թ., Azatutyun.am:
6. Տեւ, «Արեւմտյան Հայաստանի հայերի եւ Արեւմտյան Հայաստանի իրավունքների պաշտպանության իրավական-քաղաքական միասնական փաթեթ» ժողովածուն (հայերեն, ռուսերեն կամ անգլերեն), որը կարող եք ձեռք բերել «Նոյյան Տապան» հրատարակչությունում զանգահարելով՝ (+374 60) 2764 62: Հասցեն՝ ՀՀ, Երեւան, Իսահակյան 28: http://parliament-wa.info/hy/archives/10958
7. Տեւ, Պետական Դումայի հայտարարությունը 1915-1922 թթ. հայ ժողովրդի ցեղասպանության դատապարտման մասին. «Ռուսաստանի Դաշնության Դաշնային

Ժողովի Պետական Դուման հենվելով անհերքելի պատմական փաստերի վրա, որոնք վկայում են Արեւմտյան Հայաստանի տարածքում 1915-1922 թթ. հայերի բնաջնջման մասին, հետեւելով ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու եւ դրա համար պատժի մասին 1948 թ. դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ի ընդունած Կոմվենցիայի ոգուն ու տառին, պատերազմական հանցագործությունների եւ մարդկության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին 1968 թ. նոյեմբերի 26-ի ՄԱԿ-ի ընդունած Կոնվենցիային, ձգտելով վերածնել ռուսական պետության մարդասիրական ավանդույթները, հիշեցնելով, որ Ռուսաստանի նախաձեռնությամբ եվրոպական մեծ տերությունները դեռ 1915 թ. հայ ժողովրդի հանդեպ թուրքական կայսրության գործողությունները որակել են որպես «մարդկության դեմ ուղղված հանցագործություն», նշելով, որ իր պատմական հայրենիքում եղբայրական հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջումը կատարվել է Ռուսաստանի քայքայման համար պայմաններ ստեղծելու նպատակով, դատապարտում է 1915-1922 թթ. հայերի բնաջնջման կազմակերպիչներին, իր կարեկցանքն է հայտնում հայ ժողովրդին եւ ապրիլի 24-ը համարում ցեղասպանության զոհերի հիշատակի օր»:
http://www.genocide-museum.am/arm/states.php/

Աֆրինում Թուրքիայի Հանրապետության զինված ուժերի կողմից իրականացվող ռազմական գործողության վերաբերյալ

Իսկ ի՞նչ իրավունքով են այդ զինված ուժերը այնտեղ

Որոնք էլ լինեն թուրքական կողմի բերած փաստարկերն ու արդարացումները՝ նախկինում Սիրիայի Արաբական Հանրապետության հյուսիսային սահմաններին «Եփրատի վահան», իսկ ներկայումս՝ «Ձիթենու ճյուղ» հորջորջմամբ Թուրքիայի Հանրապետության զինված ուժերի ռազմական գործողությունների ինքնակոչ նպատակների վերաբերյալ, իբր թե՝ «ահաբեկչական խմբավորումների դեմ պայքարի», կամ էլ իբր՝ «անվտանգության գոտու ստեղծման» նույնքան կեղծ արդարացմամբ, միեւնույնն է, մի բան հստակ է. իրականացվել է բացահայտ կամային-քաղաքական որոշում՝ ներխուժում սուվերեն երկրի տարածք: Հետեւությունը միակն է. Թուրքիայի Հանրապետության զինված ուժերն այդ տարածքներում իրավունք չունեին եւ այժմ էլ չունեն գտնվելու…:

Եւ ահա, թե ինչու՛…

-Սան-Ստեֆանոյի (03.03.1878 թ.) եւ Բեռլինի պայմանագրերի (13.06.1878 թ.), ինչպես նաեւ Մայիսյան բարենորոգումների ծրագրի (1895 թ.) պահանջների համաձայն՝ Օսմանյան Թուրքիան պարտավորվում էր բարենորոգումներ իրականացնել Արեւմտյան Հայաստանում եւ Կիլիկիայում: Փոխարենը, թուրքական երեք իրար հաջորդող կառավարություններ՝ օսմանական, երիտթուրքական, քեմալական (1894-1923 թթ. ընթացքում) իրականացրեցին ցեղասպանություն եւ բռնագաղթ Արեւմտյան Հայաստանում եւ Կիլիկիայում:

-Դաշնակիցների եւ Թուրքիայի միջեւ կնքված Մուդրոսի զինադադարի (1918 թ. հոկտեմբերի 30) 16-րդ հոդվածի համաձայն՝ Թուրքիան պարտավորվում էր իրականացնել. «Հեջասի, Ասիրի եւ Եմենի, Սիրիայի եւ Միջագետքի բոլոր կայազորների հանձնումը դաշնակցային հրամանատարությանը..., Թուրքական զորքերի դուրս բերումը Կիլիկիայից»:
-Ռուսաստանի Կառավարությունը ընդունեց Դեկրետ «Թուրքահայաստանի մասին» («Արեւմտյան Հայաստանի մասին»), (11 հունվարի 1918 թ.),
-Կիլիկիայի հայերը 1920 թ. օգոստոսի 4-ին հռչակագիր ընդունեցին Կիլիկիայի անկախության մասին:
-ԱՄՆ 28-րդ նախագահ Վուդրո Վիլսոնի կայացրած Իրավարար վճռի համաձայն՝ թուրքական զինված ուժերը պարտավոր էին 1920 թ. նոյեմբերի 22-ից հետո դուրս գալ Արեւմտյան Հայաստանի չորս վիլայեթներից:
-Իրավար վճռով որոշված տարածքների հարցը Սեւրի խաղաղության դաշնագրի 89-րդ հոդվածում ձեւակերպված է այսպես. «Թուրքիան եւ Հայաստանը, ինչպես եւ Բարձր պայմանավորվող կողմերը, համաձայնվում են Էրզրումի, Տրապիզոնի, Վանի եւ Բիթլիսի վիլայեթներում Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ սահմանատումը թողնել Ամերիկայի Միացյալ Նահանգների որոշմանը եւ ընդունել ինչպես նրա որոշումը, նույնպես եւ այն բոլոր միջոցառումները, որոնք նա կարող է առաջարկել Հայաստանին դեպի ծով ելք տալու եւ հիշյալ սահմանագծին հարող օսմանյան բոլոր տերիտորիաների ապառազմականացման վերաբերյալ»:
-«Արեւմտյան Հայաստանի հայերի եւ Արեւմտյան Հայաստանի մշտական, զինված, դրական չեզոքության մասին» 2011 թ. մարտի 29-ին ընդունված որոշման համաձայն՝ ինչը նշանակում է, որ թուրքական զինված ուժերը իրավունք չունեն գտնվել նվազագույնը Վիլսոնյան Իրավարար վճռով Հայաստանին հատկացված այդ տարածքներում:

Հետեւաբար ժամանակն է ողջ աշխարհի ուշադրությունը հրավիրել Թուրքիայի Հանրապետության լիովին հակաիրավական եւ անօրինական այն բոլոր քայլերին, ըստ որոնց՝ Թուրքիայի Հանրապետության զինված ուժերը
ա) շուրջ 98 տարի բռնազավթված են պահում Արեւմտյան Հայաստանը եւ Կիլիկիան,
բ) այդ նույն բռնազավթված տարածքներից նոր եւ առավել վտանգավոր ագրեսիայի սպառնալիք են ստեղծում տարածաշրջանի ժողովուրդների ու պետությունների համար:

Մերձավոր Արեւելքի ժողովուրդների ու պետությունների ապագան սերտորեն կապված է միջազգային ընկերակցության ռազմաքաղաքական որոշումների ու քայլերի հետ: Վերջին 30 տարիների ընթացքում, ուժային տարբեր կենտրոնների աջակցությամբ, վարելով «նեո-օսմանական» քաղաքականություն եւ հետապնդելով բացառապես սեփական շահեր՝ Թուրքիայի Հանրապետությունը ինքն իրեն հաճույքով ներքաշում էր միջինարեւելյան ռազմաքաղաքական ագրեսիվ ու վտանգավոր հետեւանքներով գործընթացների մեջ: Ըստ այդմ, մինչեւ վերջերս նմանատիպ ծրագրերում բավարարվում էր իսլամական ծայրահեղական խմբավորումներին եւ ահաբեկիչներին աջակցելու ու զինելու, ուղղորդելու, հովանավորելու եւ պատսպարելու… հայտնի չէ, թե էլ ինչ գործողություններով: Սակայն թվացյալ անապացույց այդ ծրագրերին հակառակ այժմ իրադրությունը էապես փոխվել է, ինչի վկայությունն են Սիրիայի Հանրապետության

հյուսիսային տարածքներում վերը նշված հակահիրավական զույգ ռազմական գործողությունները Թուրքիայի Հանրապետության զինված ուժերի կողմից:

Պարզորոշ տեսանելի է թուրքական իշխանությունների շահագրգռությունը՝ մասնակցելու տարածաշրջանի պետությունների մասնատման ու թուլացման գործընթացներին: Իսկ դա իր հերթին նշանակում է, որ ամբողջովին հակահիրավական եւ անօրինական այս գործընթացն այսօր շարունակվում է նոր թափով ու սպառնալիքների եւ մարտահրավերների նոր փաթեթով ու տարածքների ներգրավմամբ: Սակայն վերջին գործողությունները իրականում աշխատում են որպես բումերանգ, եւ առաջացող խնդիրներն այս պարագայում արդեն կարող են վերաբերել ոչ թե Սիրիային, Իրաքին կամ Լիբանանին, այլ հենց Թուրքիայի Հանրապետությանը:

Ու քանի դեռ միջազգային հարաբերությունները շարունակում են կառուցվել կամային-քաղաքական եւ ոչ թե իրավական–քաղաքական հիմքերի վրա՝ Մերձավոր Արեւելքի տարածաշրջանը մնալու է որպես մարդասիրական ճգնաժամերի, ագրեսիաների, բռնագաղթի, բնաջնջումների եւ այլեւայլ հանցագործությունների թիրախ ու թատերաբեմ:

Փաստ է, որ պատմական զարգացման բնականոն ընթացքը ոչ ոք չի կարող կանգնեցնել. անշուշտ փոփոխություններ լինելու են, սակայն դա չի նշանակում, թե այդ ամենը պետք է կատարվի «հրի ու ջրի միջով» ժողովուրդներին անցկացնելու եղանակով:

Լուծումը մեկն է ու միակը:

Վաղուց հասունացել է պահը՝ սկսելու բացառապես իրավական եւ քաղաքական գործընթաց, որի նպատակը թուրքական զավթիչ ուժերի դուրս բերումն է Հայաստանին միջազգային իրավունքով պատկանող բռնագրավված տարածքներից, մասնավորապես՝ Արեւմտյան Հայաստանից եւ Կիլիկիայից: Եվ սա պետք լինի նախաքայլ՝ հարգելու ու իրականացնելու տարածաշրջանի ժողովուրդներին՝ այդ թվում՝ հայերին ու քրդերին 1918-1920 թթ.-ին տրված իրավունքները: Միմիայն այսպես է հնարավոր հաստատել կայուն եւ երկարատեւ խաղաղություն ու խրախուսել համագործակցություն տարածաշրջանի բոլոր ժողովուրդների ու պետությունների միջեւ:

Տիգրան Փաշաբեզյան
Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան) Վարչապետ
30.01.2018 թ.

Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման մի քանի ուղիների մասին

«Հիմնախնդրի քաղաքականացման պատճառով ոչ Մինսկի խմբում, որտեղ շուրջ երկու տասնամյակ ընթանում են ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցությունները, ոչ ՄԱԿ-ում եւ ոչ էլ միջազգային իրավասու մեկ այլ ատյանում մինչ օրս «Ղարաբաղյան հիմնախնդրի իրավական փաթեթ» չի ներկայացված»: (Ալեքսանդր

Մանասյան, «Ղարաբաղյան հակամարտություն. Իրավաքաղաքական փաստերի եւ փաստարկների նվազագույն փաթեթ», «Տիգրան Մեծ» հրտ., Երեւան, 2008, էջ 6)

Հակամարտության խաղաղ կարգավորման նվազագույնը երեք ուղի գոյություն ունի

1. Ղարաբաղյան հակամարտությունը իրականում հայությունը կարգավորել է, ԼՂՀ-ն ազատագրվել է բռնազավթումից եւ 70-ամյա գաղութային լծից:
Հիշեցնենք, որ 1960-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան ընդունեց «Գաղութային երկրներին ու ժողովուրդներին անհապաղ անկախություն տալու մասին» Հռչակագիր: «Գաղութատիրության փլուզումն սկսվեց Ասիայից: 1943-ից գաղութային լծից անկախություն ստացան Սիրան եւ Լիբանանը, 1945-ին գաղութատիրությունը տապալվեց Վիետնամում, հռչակվեց Ինդոնեզիայի անկախությունը… 1947-ին անկախություն նվաճեց Հնդկաստանը: Գաղութատիրությանն ուժեղ հարված հասցրեց չինական հեղափոխության հաղթանակը (1949): Եւրոպատերազմյան առաջին տասնամյակում սուվերեն պետություններ հռչակվեցին Հորդանանը (1946), Ֆիլիպինները (1946), Պակիստանը (1947), Բիրման (1948), Շրի Լանկան (1948), Լիբիան (1951), Կամբոջան (1953), Լաոսը (1953): 1952-ին Եգիպտոսն ազատագրվեց կիսագաղութային վիճակից: 1956-65-ին պետական անկախություն ստացավ Աֆրիկայի, Ասիայի, Օվկիանիայի եւ Լատինական Ամերիկայի ավելի քան 60 երկիր: 1959-ին հաղթանակեց հեղափոխությունը Կուբայում... 1974-ի ապրիլին դեմոկրատական հեղափոխությամբ տապալվեց ֆաշիստական վարչակարգը Պորտուգալիայում, սկիզբ դրվեց գաղութների (Գվինեա-Բիսաու, Մոզամբիկ, Անգոլա) անկախության հռչակմանը…»: Եվ դեռ ավելին՝ «Դեռեւս գաղութային լծի տակ են 20 մլն մարդ՝ Բրիտանական կայսրության (ներառյալ Հարավային Ռոդեզիան), ֆրանսիայի եւ Իսպանիայի գաղութներում եւ կախյալ երկրներում»: (Հայկական Սովետական Հանրագիտարան, Հատոր 2, Երեւան, 1976, էջ 670)

Ինչո՞ւ ենք այսքան մանրամասն ներկայացնում հանրագիտարանային այս տվյալները, որովհետեւ դրանք ավելի քան խոսուն են: Որովհետեւ ԼՂՀ-ն նույնպես ազատագրվել է գաղութային լծից, որ պարտադրվել էր իրեն Ռուսաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի Կովկասյան բյուրոյի 1921թ. հուլիսի 5-ի որոշմամբ:
Ուստի, շատ բնական է, որ ԼՂՀ անկախության ճանաչման ուղիներից մեկը ՄԱԿ-ի Հոգաբարձուների խորհրդին դիմելն է, որը 1960-ական թթ. զբաղվում էր անկախություն ձեռք բերած ժողովուրդների խնդիրներով համաձայն՝ «Գաղութային երկրներին եւ ժողովուրդներին անկախություն տալու մասին» ՄԱԿ-ի 1960-ին ընդունած Հռչակագրի, հաստատելու ԼՂՀ ազատագրումը գաղութային լծից եւ ճանաչելու ԼՂՀ անկախությունը, որը նա ձեռք է բերել Ադրբեջանի Հանրապետության սանձազերծած ագրեսիվ պատերազմում հաղթելու շնորհիվ: (Տես, «Декларация о предоставлении независимости колониальным странам и народам», Генеральная Ассамблея, 947-е пленарное заседание, 14 декабря 1960 года.)

2. Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման ուղիներից մեկ ուրիշը նշում է քաղաքագետ Արա Պապյանը. «Հայ-ադրբեջանական սահմանի վերաբերյալ միակ օրինական փաստաթուղթը Փարիզի վեհաժողովի հատուկ հանձնաժողովի 1920-ի

փետրվարի 24-ի զեկույց-առաջարկն է, որով Ազգերի լիգային էր վերապահված հայ-ադրբեջանական սահմանազատումը: Ուստի, ՄԱԿ-ը՝ որպես Ազգերի լիգայի իրավահաջորդ, եւ մասնավորապես ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը՝ որպես Գլխավոր դաշնակից ուժերի տեղապահ, պարտավորություն ունեն կենսագործել այդ սահմանազատումը՝ հիմք ընդունելով 1920թ. նոյեմբեր-դեկտեմբերի ազգային տեղաբաշխման տվյալները: Ներկա ազգային տեղաբաշխումը չի կարող հիմք հանդիսանալ սահմանազատման համար, քանզի այն առաջացել է Ադրբեջանի հանցավոր հայաթափման՝ էթնիկ զտման, քաղաքականության հետեւանքով, իսկ հանցագործության հետեւանքները չեն կարող առաջացնել իրավունքներ՝ Ex injuria non oritur jus»: (Տես, Արա Պապյան, Հայ-ադրբեջանական սահմանը (փորձաքննություն ըստ միջազգային իրավունքի, «Ուխտ Արարատի», թիվ 2 (16), նոյեմբեր - դեկտեմբեր, 2008, էջ 11):

Իսկ դա նշանակում է, որ երբ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը որպես Ազգերի լիգայի Գլխավոր դաշնակից ուժերի տեղապահի իրավահաջորդ, ՀՀ համապատասխան հայցի դեպքում, իրականացնում է Հայաստան-Ադրբեջան սահմանազատումը՝ ըստ 1920 թ. նոյեմբեր-դեկտեմբերի ազգային տեղաբաշխման տվյալների, ապա ԼՂՀ-ն (ի դեպ, տարածքային ամբողջականությամբ հանդերձ) ընդգրկվում է ՀՀ-ի կազմ եւ, ըստ այդմ, անիմաստ է դառնում ԼՂՀ հակամարտության քաղաքական քննարկումները միջազգային ատյաններում: (Տես, «Գաղութային երկրներին եւ ժողովուրդներին անկախություն տալու մասին» ՄԱԿ-ի 1960-ին ընդունած Հռչակագրի 4-ից 7-րդ հոդվածները)

Հնարավոր է, այս տարբերակը լավագույնն է, որովհետեւ այս դեպքում քննության առարկա է դառնում նաեւ բռնազավթված ու հայաթափված Նախիջեւանի խնդիրը:
Ավելացնենք, որ սույն որոշման իրականացման վերաբերյալ դրույթը ներառված Սեւրի խաղաղության դաշնագրում, որպես 92-րդ հոդված, եւ ձեւակերպված է այսպես.
«Ադրբեջանի եւ Վրաստանի հետ Հայաստանի սահմաններն ըստ պատկանելության կորոշվեն շահագրգռված պետությունների ընդհանուր համաձայնությամբ: Երբ 89–րդ հոդվածում նախատեսված որոշումն արդեն ընդունված կլինի եւ եթե դրանից հետո այս կամ այն շահագրգռված պետությունները չեն կարողանա ընդհանուր համաձայնությամբ որոշել իրենց սահմանագիծը, վերջինս կորոշեն Գլխավոր դաշնակից տերությունները, որոնք դրա հետ մասին պետք է հոգ տանեն սահմանազատումը տեղում գծանշելու մասին»:

3. Նախորդ հրապարակումներում արդեն նշել ենք, որ աշխարհում չկա մի հակամարտություն, որի կարգավորման իրավական տարբերակը գոյություն չունենա: Դրանցից մեկն էլ հակամարտությունների խաղաղ կարգավորման միջազգային ընդունված կարգն ու համաձայնությունն է, որ կոչվում է՝ «Միջազգային բախումների խաղաղ լուծման մասին» Կոնվենցիա, Հաագա, 18 հոկտեմբերի 1907 թ.: (Տես, «Конвенция о мирном рещении международных столкновений», Гаага, 18 октября 1907 года.)

Կոնվենցիան հակամարտության խաղաղ կարգավորման համար նախատեսում է գործողությունների երեք հաջորդական քայլեր եւ փուլեր.

ա) Առաջին փուլում, համաձայն Կոնվենցիայի 2-րդ բաժնի 2-րդ հոդվածի պահանջի, հակամարտող կողմերը պետք է օգտվեն մեկ կամ մեկից ավելի բարեկամ երկրների միջնորդական առաքելության ծառայություններից: Համաձայն Կոնվենցիայի 2-րդ բաժնի 5-րդ հոդվածի պահանջի՝ միջնորդական առաքելությունը համարվում է ավարտված այն պահից, երբ հակամարտող կողմերից մեկը կամ միջնորդը համոզվում է, որ հաշտության առաջարկները չեն ընդունվում հակամարտող կողմերից որեւէ մեկի կողմից:
բ) Երկրորդ փուլում, համաձայն Կոնվենցիայի 3-րդ բաժնի 9-րդ հոդվածի, ստեղծվում է հակամարտության պատճառները հետաքննող հանձնաժողով, որն անցկացնում է հակամարտության պատճառների անաչառ ու բարեխիղճ հետաքննություն եւ իր առաջարկություններն է ներկայացնում հակամարտող կողմերին: Եթե հետաքննող հանձնաժողովի առաջարկները նույնպես չեն ընդունվում հակամարտող կողմերից որեւէ մեկի կողմից, ապա հարցը տեղափոխվում է հաջորդ փուլ:
գ) Երրորդ փուլում, համաձայն Կոնվենցիայի 4-րդ բաժնի 2-րդ գլխի 41-րդ հոդվածի, հարցը ներկայացվում է հատուկ այդ խնդրի համար ստեղծվող միջնորդական դատարան, որի որոշումներն արդեն պարտադիր են հակամարտող կողմերի համար:
Ակնհայտ է, որ Մինսկի խմբի միջնորդական առաքելության ձեւաչափը, համաձայն այս Կոնվենցիայի դրույթների, սպառել է իրեն, որովհետեւ շուրջ 18 տարի է ինչ նրա առաջարկները չեն ընդունվում հակամարտության կողմերից մեկի, հիմնականում՝ Ադրբեջանի կողմից, որը չի հաշտվում այն իրողության հետ, թե ԼՂՀ-ն գաղութային լծից այլեւս ազատագրված է: Ուստի, Մինսկի խումբը պետք է լուծարվի եւ որպես Կոնվենցիայի համապատասխան դրույթի ու պահանջի երկրորդ քայլ՝ ստեղծվի հակամարտության պատճառների անկողմնակալ եւ անաչառ հետաքննություն անցկացնող Միջազգային քննիչ հանձնաժողով:

Բոլոր երեք տարբերակները գործողության մեջ դրվելու իրավունք ունեն եւ արդյունավետ կարող են լինել, որովհետեւ ինչպես արդեն նշվեց, միջազգային իրավահարաբերություններում գոյություն ունեն հակամարտության խաղաղ կարգավորման, նվազագույնը, ներկայացված այս երեք ձեւաչափերն ու տարբերակները, որոնցով տվյալ դեպքում կարող են եւ պարտավոր են առաջնորդվել եւ՝ հակամարտող կողմերը, եւ՝ միջնորդները… Եվ բոլոր նրանք, ովքեր կամ չեն ցանկանում հակամարտության խաղաղ կարգավորումը, կամ շրջանցում են կարգավորման իրավական միջոցներն ու մեխանիզմները, իրականում հրահրում են նոր պատերազմ եւ ցեղասպանություն…

Տիգրան Փաշաբեզյան
Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Վարչապետ
12.12.2017 թ.

«Մեծ Մերձավոր Արեւելք» ծրագրի նոր զարգացումները. քրդերի հանրաքվեն Իրաքում եւ Հայկական Հարցը

Շուրջ 30 տարի է ինչ արեւմուտքի կողմից գործողության մեջ է դրված «Մեծ Մերձավոր Արեւելք» քաղաքական ծրագիրը: Դրա վերաբերյալ հրապարակումները, քարտեզներն ու

հոդվածները հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու այն մասին, որ ծրագրի իրականացման հետեւանքում, տարածաշրջանում գոյություն ունեցող պետությունների մասնատման հեռանկարում, առաջանալու են ազգային, կրոնական, պետական նոր միավորումներ:

Ըստ այդմ, բնականաբար, շատ է խոսվում տարածաշրջանի բնիկների, ազգային - կրոնական փոքրամասնությունների իրավունքների մասին: Ավելին, քայլեր են արվում այդ իրավունքները կյանքի կոչելու, ինչպես նաեւ դրանց իրավաչափություն հաղորդելու ուղղությամբ: Այդ քայլերից է 2017 թ. սեպտեմբերի 25-ին Իրաքի հյուսիսում քրդերի անկախության վերաբերյալ կազմակերպված հանրաքվեի անցկացումը:

Այդ հանրաքվեն, ինչպես նաեւ տարածաշրջանի ժողովուրդների, բնիկների ու ազգային – կրոնական փոքրամասնությունների իրավունքների խնդիրը միայն լոկալ նշանակության հարցեր չեն, դրանք վերաբերում են բոլորին:
Ուստի բնական հարցադրում է առաջանում, թե ինչպես է կարգավորվելու օրինակ հայերի, քրդերի, ասորիների, ալեւիների, թուրքերի… ապագան վերոնշյալ ծրագրի եւ տարածաշրջանի խնդիրների վերջնական կարգավորման ենթատեքստում, եթե այդպիսի մի հանգուցալուծում հնարավոր է առաջիկայում:
Այդ իմաստով անմիջապես տեսանելի է երկու երեւույթի գործարկում.
ա/ իրավունքների ձեւակերպում ու իրավաչափության հաղորդում դրանց տարածաշրջանի մի քանի ժողովուրդների համար,
բ/ հայ ժողովրդին տրված իրավունքների շրջանցում, անտեսում:

Տեղին է հիշել, որ հայ ժողովրդի իրավունքները ճանաչվել են 1918 – 20 թթ. ընթացքում, ճանաչվել են սակայն չեն իրականացվել:
Դրանցից հիշենք 1918 թ. Ռուսաստանի Կառավարության դեկրետը «Թուրքահայաստանի մասին», Սեւրի խաղաղության պայմանագրի Հայաստանին վերաբերող հոդվածները, ԱՄՆ 28-րդ նախագահ Վուդրո Վիլսոնի Իրավարար վճիռը Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ սահմանի վերաբերյալ:
Սեւրի խաղաղության պայմանագրով Քրդստանին տրվում էր ինքնավարություն, պայմանագրի 62-րդ հոդվածում նշված էր. «Կոստանդնուպոլսում գտնվող եւ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի ու Իտալիայի կողմից նշանակված երեք հոգուց բաղկացած հանձնաժողովը վեց ամսվա ընթացքում կպատրաստի մի կանոնակարգ գերակշիռ քուրդ բնակչություն ունեցող այն շրջանների ինքնավարության վերաբերյալ, որոնք ընկած են Եփրատից արեւելք եւ Հայաստանի հարավային սահմանից հարավ»:
Ուստի բնական կլիներ, եթե շրջանառվող այլ թեմաներին զուգահեռ խոսվեր, արծարծվեր նաեւ հայ ժողովրդին տրված իրավունքների խնդիրը, որն այս պահին արծարծել է Թուրքիայի Հանրապետությունում հրատարակվող «Cumhuriyet» պարբերականը: Վերջինս նշում է. «Երկարաշունչ տեսանելի հեռանկարում Անկարան չունի այլ ընտրություն, քան ճանաչելու Քրդստանի անկախությունը, անցնելու Հայկական Հարցի լուծմանը, իսկ Ադրբեջանը՝ ճանաչելու Լեռնային Ղարաբաղի անկախությունը»:

Հետեւաբար կարելի հաստատագրել, որ հայ ժողովրդի ապագան Հայկական Հարցի վերջնական եւ ամբողջական կարգավորման հետ է կապված, այդ թվում, Արեւմտյան

Հայաստանի Հանրապետության հաստատմամբ՝ Արեւմտյան Հայաստանում: Քրդերի ապագան Քրդական Հարցի վերջնական կարգավորման, Սեւրի խաղաղության պայմանագրի հոդվածների իրականացման մեջ է: Ժամանակակից Թուրքիայի Հանրապետության ապագան, ուղղակիորեն կապված է վերոնշյալ երկու խնդիրների վերջնական կարգավորման հետ: Թուրքիայի Հանրապետության համար Հայկական Հարցի լուծման եւ քրդերի իրավունքի, ըստ Սեւրի խաղաղության պայմանագրի, իրականացման գործընթացներն անկասելի են, որոնք անկասկած բերելու են քաղաքակրթական հանգուցալուծման՝ ի օգուտ տարածաշրջանում ապրող բոլոր ազգերի ու ժողովուրդների:

Քեմալականները 1920-ական թթ. Թուրքիայի համար ընտրելով զարգացման դեմոկրատական ուղին, ձեռք բերեցին տնտեսական ու քաղաքական որոշակի հաջողություններ պետության զարգացման համար: Այդ ընտրությունը, սակայն, այլեւս չի կարող ինքնաբավ աշխատել ու զարգանալ, քանի որ անմիջականորեն մի կողմից առնչվում է պետության մեջ քաղաքական ու քաղաքացիական նոր գործընթացներին, մյուս կողմից՝ երկրում ու տարածաշրջանում առկա մի քանի հարյուրամյակ պարբերաբար չկարգավորված Հայկական Հարցին ու դրան զուգահեռ ընթացող Քրդական Հարցին:

Ստացվում է Թուրքիայի Հանրապետությունը, նույնիսկ երկկողմանի ուժգին ցանկության դեպքում, չի կարող մաս կազմել ոչ եւրոպական ինտեգրման գործընթացներին եւ ոչ էլ եւրասիական, որովհետեւ երկու դեպքում էլ վճռական դերակատարություն են ձեռք բերելու չկարգավորված վերոնշյալ երկու հարցերը: Այնպես որ, այդ երկու խնդիրները շրջանցելու ձգտումն ու ծրագրերը՝ իրականում Թուրքիայի Հանրապետության զարգացումը խոչընդոտելու ծրագրեր են: Մենք արդեն նշել ենք, որ Ֆրանսիայի Սահմանադրական դատարանը ճիշտ նույն կերպ վարվեց, երբ խոչընդոտեց Հայերի ցեղասպանության ժխտողականության քրեականացման օրինագծի հաստատումը Ֆրանսիայի Սենատում, դրանով խոչընդոտելով Թուրքիայի Հանրապետության զարգացման եւս մեկ հնարավորություն:

Քաղաքակրթական զարգացմանը այլընտրանք չկա:

Այդպես է եւ՛ Հայաստանի, եւ՛ քրդերի, եւ՛ Թուրքիայի Հանրապետության պարագային: Որքան արագ ընդդիմադիր կողմերը հասկանան եւ ընկալեն հիմնախնդրի բուն էությունը, այդքան քիչ կտառապեն տարածաշրջանում ապրող բոլոր ժողովուրդները:

Արմեն Տեր-Սարգսյան
Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Նախագահ
05.12.2017

Ռուսաստանի Կառավարության «Թուրքահայաստանի մասին» («Արեւմտյան Հայաստանի մասին») Դեկրետի 100-րդ տարեդարձի կապակցությամբ

1918-1920 թթ.-ին Հայկական Հարցի կարգավորման ենթատեքստում հայերի իրավունքների վերաբերյալ կայացված միջազգային որոշումների մեջ կարեւոր նշանակություն ունի 1918թ. հունվարի 11-ին Ռուսաստանի Կառավարության ընդունած Դեկրետը «Թուրքահայաստանի մասին» («Արեւմտյան Հայաստանի մասին»):

Լրանում է Դեկրետի 100-րդ տարեդարձը եւ ինչպես մի շարք այլ որոշումների պարագայում, այս որոշումը նույնպես ընդունվել է, սակայն ցավոք առ այսօր չի իրականացվել, թեեւ դրանից Դեկրետի նշանակությունը հայ ժողովրդի իրավունքների մասով Հայաստանի նկատմամբ, բնավ չի նվազում:

Դեկրետում գործածված են «Թուրքահայաստան», «Թուրքահայաստանի հայեր» ձեւակերպումները, սակայն մենք հասկանալի պատճառներով գործածելու ենք «Արեւմտյան Հայաստան» եւ «Արեւմտյան Հայաստանի հայեր» ձեւակերպումները, որոնք ճշգրիտ են ազգային, պատմական, իրավական, քաղաքական, մշակութային ու քաղաքակրթական իմաստներով:

Միջազգային իրավունքի վերընթերցման եւ հնարավոր տեսական բնույթի հետադարձ կիրարկման իմաստով, սույն Դեկրետը Արեւմտյան Հայաստանի հայերի իրավունքների մասով անդրադարձել է մի քանի կարեւոր հարցերի, որոնց թվում որպես հիմնական իրավական պահանջներ մեջբերենք՝
-Ճանաչելով Արեւմտյան Հայաստանի հայերի «ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչեւ անկախություն»,
-«ռուսական զորքերի դուրսբերումը եւ անհապաղ հայ ազգային միլիցիայի բանակի ստեղծումը՝ Արեւմտյան Հայաստանի բնակիչների անձնական եւ նյութական անվտանգությունն ապահովելու նպատակով»:
-«Հայ փախստականների, ինչպես նաեւ տարբեր երկրներում սփռված հայ գաղթականների՝ անխոչընդոտ վերադարձը Արեւմտյան Հայաստան»:

Ինչպես տեսնում ենք Միջազգային Իրավունքի տեսանկյունից սույն Դեկրետում նշված որոշումները առավել քան արդիական են եւ դա է պատճառը, որ Արեւմտյան Հայաստանի հայերի իրավունքների պաշտպանության գործում ու գործընթացում Սեւրի խաղաղության պայմանագրին ու ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի իրականացրած Իրավարար վճռին զուգահեռ կարեւորում ենք Դեկրետի թե՛ պատմական, թե՛ իրավական ու քաղաքական նշանակությունը մեր ժամանակներում:

Ըստ երեւույթին Ռուսաստանի Կառավարությունը նույնպես մեծ նշանակություն է տվել փաստաթղթին, քանի որ 1918 թ. հուլիսի 10–ին այն ընդգրկել է Ռուսաստանի առաջին Սահմանադրության մեջ, 6-րդ հոդվածում:

Արեւմտյան Հայաստանի Հանրապետությունը (Հայաստան) ըստ արժանվույն բարձր գնահատելով Ռուսաստանի Կառավարության ընդունած «Թուրքահայաստանի մասին» («Արեւմտյան Հայաստանի մասին») Դեկրետի պատմական նշանակությունը եւ արդիականությունը 100-ամյա հոբելյանին նվիրված կազմակերպում է միջազգային համաժողովներ եւ հեռուստակամուրջ՝ «Մոսկվա – Երեւան - Սանկտ Պետերբուրգ –

Փարիզ - Դոնի Ռոստով – Լոս Անջելես - Վոլգոգրադ – Բեռլին – Սոչի – Ստոկհոլմ - Երուսաղեմ»՝ քաղաքական գործիչների, ազգային խորհրդարանների պատգամավորների, կուսակցությունների ներկայացուցիչների, առաջատար հասարակական գործիչների գիտնականների, պատմաբանների, վերլուծական կենտրոնների մասնակցությամբ:

Հավելենք նաեւ, որ Հայկական Հարցի վերջնական լուծման եւ Մերձավոր Արեւելքում կայուն խաղաղություն հաստատելու համար անհրաժեշտ է կյանքի կոչել եւ իրականացնել, ինչպես Սեւրի Խաղաղության պայմանագրի եւ ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի Իրավարար վճռի, այնպես էլ Ռուսաստանի Կառավարության ընդունած «Թուրքահայաստանի մասին» («Արեւմտյան Հայաստանի մասին») այս պատմական Դեկրետի հոդվածները Հայաստանի վերաբերյալ:

Տիգրան Փաշաբեզյան
Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Վարչապետ
11.01.2018 թ.

2016 թ. ապրիլի եւ 2018 թ. ապրիլի մասին
(հայության համաշխարհային համախմբման նոր ճանապարհի մասին)

Հայությունը կրկին համաշխարհային համախմբան հայտ է ներկայացրել: Խոսքն այստեղ, առաջին հերթին, քաղաքակրթական համախմբան մասին է: Խոսքն այստեղ ազգի ազատ գոյության, ապրելու, ապագա ունենալու կամքի ու իրավունքի մասին է:

Հայտ է ներկայացրել այն պահից, երբ հակառակ տասնամյակներ ձգվող միջազգային հիմնական դերակատարների չքմեղանքին, թե իբր տարբեր պատճառներով հնարավոր չի եղել կյանքի կոչել ու իրականացնել Ռուսաստանի Կառավարության ընդունած «Թուրքահայաստանի մասին» («Արեւմտյան Հայաստանի մասին») Դեկրետի, Կիլիկիայի հայերի անկախության, Սեւրի խաղաղության պայմանագրի Հայաստանին վերաբերող հոդվածների, ԱՄՆ 28-րդ նախագահ Վուդրո Վիլսոնի կայացրած Իրավարար վճռի հոդվածները, պահանջներն ու խոստումները… Հակառակ այդ ամենին, հեռավոր 1973 թվականին Գուրգեն Յանիկյանը ազդարարեց հայության գոյություն ունենալու կամքի ու իրավունքի մասին:

Հայտ է ներկայացրել այն պահից, երբ 1988 թվականի փետրվարին եւ դրանից հետո տեղի ունեցած հայերի նոր ցեղասպանության ու բռնագաղթ կազմակերպելու ու իրականացնելու, շրջափակման, ագրեսիայի ու այլատյացության իրողություններին ու փորձերին հակադրեց Արցախյան հաղթական ազատամարտն ու այդպիսով ազդարարեց հայության զարգանալու, միասնաբար ապրելու կամքի ու իրավունքի մասին:

Հայտ է ներկայացրել այն պահից, երբ հակառակ 2016 թվականի ապրիլին Արցախի Հանրապետության սահմանների վրա մանրակրկիտ նախապատրաստված ու ծրագրված ագրեսիայի ու պատերազմի սանձազերծման, դրա ընթացքում իրականացված

սահմոկեցուցիչ հանցագործությունների՝ իր երիտասարդների կյանքի գնով պաշտպանել է Հայրենիքի սահմաններն ու հայրենի ժողովրդին:

Հայտ է ներկայացրել այն պահից, երբ 2018 թվականի ապրիլին հայության նոր սերունդը ազդարարել է սերիալների ժամանակաշջանի ավարտի մասին, դրա ավարտի՝ ազգային, հոգեւոր, մշակութային կյանքում ու կենսագործունեության մեջ, դրա ավարտի մասին հասարակական, քաղաքական կյանքում եւ ազդարարել է ապագա ունենալու կամքի ու իրավունքի մասին:

Բոլորովին պատահական չէ, որ այդ մասին ազդարարում է նոր սերունդը: Եւ այս իրողությունը արժե որ նկատեն եւ բարեկամները, եւ հակառակորդները եւ նրանցից յուրաքանչյուրը դրանից բխող համարժեք եզրահանգումներ անի:

Սերիալների ժամանակաշրջանը ավարտվում է, այդ թվում՝ հասարակական, քաղաքական, հոգեւոր, մշակութային կյանքում ու կենսագործունեության մեջ… Դա քաղաքակրթական անցում է՝ իր տարողությամբ ու ընդգրկումով, բովանդակությամբ ու խորությամբ: Ովքեր չեն հասկանում դրա իմաստը, կհայտնվեն լուսանցքում:

Այդ մասին է ազդարարում նոր սերունդը 2016 թ. ապրիլին եւ 2018 թ. ապրիլին: Ինչն էլ վկան է հայության համաշխարհային համախմբան՝ ազատ գոյության, զարգանալու ու ապագայի նպատակադրումների իրականացման կամքի ու իրավունքի:

Ռադիկ Խամոյան
Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Նախագահ
23 ապրիլ 2018 թ.

1988-ի շարժման եւ 2018-ի շարժման մասին
(եթե 1988-ի շարժումը ազատագրեց Արցախը, ապա 2018-ի շարժումը ազատագրելու է հայությունն ու Հայաստանը)

Եթե Գուրգեն Յանիկյանը եւ նրան շարունակած Զինյալ-ազատագրական պայքարը (1973 թ., 1975-1985 թթ.) բազում հաջողություններ արձանագրելուց զատ, ազատագրեցին սփյուռքի հայությանը տասնամյակների կարծրատիպերից ու կաղապարված մտածողությունից, եթե 1988-ի շարժումը ազատագրեց Արցախը (1988-1994 թթ.), ապա 2018-ի համազգային համախմբումն ու շարժումը ազատագրելու է հայությունն ու Հայաստանը (2016 թ. ապրիլ, 2018 թ. ապրիլ):

Քաղաքակրթական այս շարժումը, որ ձեւավորեց ու իրականացրեց հայության նոր սերունդը, որին միացան նաեւ սփյուռքի մեր հայրենակիցների հոծ զանգվածները, հիմնականում նոր սերնդի վառ հայրենասեր ու ընդգծված ազատատենչ աղջիկներն ու տղաները, պարման-պարմանուհիները, չունի այլընտրանք, քան հաղթական ավարտի արձանագրումը:

Այս իրողությունն արդեն ընդունել են եւ մեր բարեկամները, եւ նույնիսկ հակառակորդները (թե ներսում, թե դրսում): Մնացած կողմերը (եւ ներսից, եւ դրսից), որոնք դեռ շարունակում են համառել, հաշված օրեր անց հարկադրաբար գիտակցելու են, թե որքան ավելորդ ու անտեղի էին բոլոր «ջանքներն ու միջոցները», որոնք վատնեցին անտեղի՝ նույնիսկ դրսի օգնությամբ, արգելափակելու հայության քաղաքակրթական սլացքի ճանապարհը:

Նշենք վերստին, որ եթե 1988-ի շարժումը ազատագրեց Արցախը, ապա 2018-ի շարժումը ազատագրելու է հայությունն ու Հայաստանը… Իրականում հայությունն արդեն ազատագրվել է:

Ուստի մնում է ոչ միայն արձանագրել հաղթանակը, այլեւ վճռականությամբ ու նորոգված ապրել հասարակական, քաղաքական, մշակութային, հոգեւոր, բոլոր ոլորտներում՝ իրավունքի եւ օրինականության հիմքերով գործելով ազգային–պետական նշանակության բոլոր ոլորտներում, քանի որ դա իրապես ազատ, անկախ ու ինքնիշխան Հայաստանի եւ ազատագրված հայության կենսագործունեության առաջընթացի անկասելի միակ ուղին է:

Արմեն Տեր-Սարգսյան
Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Նախագահ
28 ապրիլ 2018 թ.

2018-ի շարժման մասին
(հայության հանդուրժողականությունը պետք չէ շփոթել հնազանդության հետ)

Հայությունը ավելի քան հիսուն տարի հանդուրժեց իր իրավունքների անտեսումը, կեղծիքն ու սուտը, համամարդկային խղճի ու բարոյականության տասնամյակների բռնաբարումն ու լլկումը, մինչեւ որ վերջապես Գուրգեն Յանիկյանն ու նրան շարունակած Զինյալ-ազատագրական պայքարը (1973 թ., 1975-1985 թթ.) քանդեցին ստի, կեղծիքի ու անբարոյականության բոլոր տեսակի պատնեշները:

Արցախահայությունը ավելի քան 70 տարի ապրեց ադրբեջանական իշխանությունների օկուպացիայի, հալածանքների, ճնշման ու բռնակալության, այլատյացության պայմաններում, մինչեւ որ վերջապես Արցախյան ազատագրական պայքարը կտրեց մեկ հարյուրամյակից ավելի երկարող Հայերի ցեղասպանություն իրականացնելու ծրագրի շղթան ու ազատություն պարգեւեց Արցախին (1988-1994 թթ.):

Հայաստանի Հանրապետության հայությունը ավելի քան երեսուն տարի բազում զրկանքների տոկաց, բազմաթիվ օրինախախտումներ ու վիրավորանքներ հանդուրժեց՝ ազատ, անկախ ու ինքնիշխան Հայաստանի երազով, մինչեւ որ նոր սերունդը, նախ եւ առաջ, ամուր կանգնեց Արցախի ու ՀՀ-ի սահմանների ու հայրենի ժողովրդի պաշտպանության դիրքերում (2016 թ. ապրիլ) եւ ապա՝ ազատ ապրելու, զարգանալու եւ ապագա ունենալու քաղաքակրթական հայտ ներկայացրեց (2018 թ. ապրիլ):

Այլեւս անհերքելի փաստ է, որ հայության հանդուրժողականությունը պետք չէր շփոթել հնազանդության հետ:

Հայության եւ Հայաստանի քաղաքակրթական հայտը ներկայացված է. Հայաստանի Հանրապետությունում, տարածաշրջանում եւ այլուր համամարդկային արժեքների վրա հիմնված որակապես նոր երկխոսություն ու համագործակցություն հաստատելու հրավերն է բարձրաձայնված, ինչը ենթադրում է իրավունքի եւ օրինականության հիմքերով նոր միջազգային համակեցության իրականացում, այդ թվում՝ հայության բոլոր արդար իրավունքները կյանքի կոչելու միջոցով:

Տիգրան Փաշաբեզյան
Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Վարչապետ
30 ապրիլ 2018 թ.

Հայաստան - Արցախ - Սփյուռք եռամիասնության պակասող չորրորդ բաղադիրչը

Հայաստան - Արցախ - Սփյուռք 25-ամյա համագործակցությունը բավական լուրջ հաջողություններ է արձանագրել ՀՀ պետականության ամրապնդման, Արցախի հայության ազատ ապրելու եւ ինքնորոշման իրավունքի պաշտպանության, Արցախի ու ՀՀ-ի անվտանգության ու պաշտպանության բաղադրիչի բարձրացման, Հայաստանի ու Արցախի տնտեսության, կրթության, առողջապահության, մշակույթի ոլորտներում կատարված կարեւոր ներդրումների եւ աջակցության, Հայաստանի ու Արցախի ենթակառուցվածքների վերականգնման ու զարգացման, ներքին սոցիալական ճնշման թուլացման եւ այլ ոլորտներում, որոնք նույնիսկ դժվար է ամբողջությամբ թվարկել:
Սակայն ընդհանուր տեսլականի անորոշությունը, ընդհանուր համահայկական օրակարգի բացակայությունը խիստ դանդաղեցնում, իսկ երբեմն էլ գրեթե լիովին արժեզրկում են արձանագրված առաջընթացը:
Միայն համահայկական օրակարգի կամ ազգային զարգացման ծրագրի առկայությունը կարող է կանոնակարգել եւ ներդաշնակության բերել հայության տարբեր հատվածների գործունեությունը՝ հնարավորություն տալով հայությանը ոչ թե լոկ գոյատեւել, այլեւ հաղթանակներ գրանցել:
Նշենք, որ Հայկական Հարցի սկզբնավորումից (1878 թ.) եւ Հայերի ցեղասպությունից (1894–1923 թթ.) հետո ընկած ժամանակահատվածում Հայկական Հարցի վերջնական կարգավորման նոր օրակարգ (համազգային ծրագիր) չի ձեւավորվել, բացառությամբ 1973-1985 թթ. նորագույն զինյալ-ազատագրական պայքարի գործունեության ու ծրագրի: Փոխարենը՝ արտերկրի հայության օրակարգում տեղական համայնքների կազմավորման, հայապահպանության, Հայերի ցեղասպանության ճանաչման եւ Խորհրդային Հայաստանի Հանրապետության ապագայի հետ կապված խնդիրներն էին: Խորհրդային Հայաստանի Հանրապետության օրակարգում Խորհրդային Հայաստանի Հանրապետության վերածննդի ու զարգացման, հայրենադարձության խնդիրներն էին: Հայաստանի Հանրապետության օրակարգում Արցախի հայության, Արցախի եւ

Հայաստանի Հանրապետության անվտանգության, ագրեսիայի ու շրջափակման հաղթահարման, ինքնորոշման իրավունքի, ազատության եւ անկախության հաստատման ու պահպանման խնդիրներն են:
Եվ ինչպես 1980-ի վերջերին եւ 1990-ի սկզբներին հայ հասարակական-քաղաքական միտքը, մեծ հաշվով, պատրաստ չէր Հայաստանի Հանրապետության անկախության վերահաս իրողությանը, այնպես էլ այսօր այն պատրաստ չէ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (այդ թվում՝ Կիլիկիայի) անկախության անկասելի վերահաս իրողությանը:
Մինչդեռ հենց այս վերջին հարցն է, որ անկյունաքարային նշանակություն ունի հայության մյուս հատվածների թերի օրակարգերի ոչ լիովին կատարման համար:
Նախ եւ առաջ պետք է ընդունել, որ մենք գործ ունենք ոչ թե եռամիասնության, այլ քառամիասնության անհրաժեշտության հետ: Բանն այն է, որ Մերձավոր Արեւելքում եւ հարակից տարածքներում առկա ժամանակակից մարտահրավերների պայմաններում Մերձավոր Արեւելքի հայ համայնքների կենսագործունեությունն այժմ էապես տարբերվում է ավանդական Սփյուռք հասկացության կյանքի ու գործունեության բնականոն ընթացքից եւ ստանում է բոլորովին նոր սպառնալից իրողություն եւ հնչեղություն:
Մեզ՝ հայերիս համար իրավիճակը նոր չէ այն իմաստով, որ մերձավորարեւելյան մարտահրավերները մեզ համար սկսվել են դեռեւս 1975 թ. Լիբանանյան քաղաքացիական պատերազմի սկզբնավորումից ի վեր, ինչի արդյունքում Լիբանանի երբեմնի բարգավաճ 300 հազարանոց հայ համայնքն այսօր նվազել է մինչեւ 60 հազարի, դրա բացասական բոլոր հետեւանքներով հանդերձ: Վերջին տասնամյակներին Իրաքի 20 հազարանոց հայ համայնքը նվազել է մինչեւ չնչին ցուցանիշների, եթե այդպիսի ցուցանիշ դեռ կա: Սիրիայի 300 հազարանոց բարգավաճ համայնքը նվազել է մինչեւ մի քանի տասնյակ հազարի: Իրադարձությունների նման զարգացման եւ մարտահրավերների այսպիսի բարձր մակարդակի պահպանման պայմաններում հայտնի չէ, թե ինչ ճակատագրի են արժանանալու ոչ միայն Մերձավոր Արեւելքի մյուս հայ համայնքները, այլեւ Արեւմտյան Հայաստանում ապրող հայերը նույնպես:
Ուստի՝

- նկատի առնելով վերջին տասնամյակներին Մերձավոր Արեւելքում եւ հարակից տարածքներում առկա նոր իրողություններն ու մարտահրավերները,
- նկատի առնելով այն հանգամանքը, որ Մերձավոր Արեւելքում ապրող հայությունն իրականում 1894-1923 թթ. հայության նկատմամբ իրականացված ցեղասպանության ու բռնագաղթի հետեւանքով այնտեղ հաստատված հավաքականություն է,
- նկատի առնելով, որ Մերձավոր Արեւելքում ապրող հայությունը Բնօրրան Հայրենիք վերադառնալու իրավունք ունի այն պայմաններով, ինչպես դրանք նշված են 1918-1920 թթ. կայացված մի շարք որոշումներում, այդ թվում՝ Ռուսաստանի Կառավարության Դեկրետում «Տաճկահայաստանի մասին» (Արեւմտյան Հայաստանի մասին), Սեւրի խաղաղության պայմանագրում, ԱՄՆ 28-րդ Նախագահ Վուդրո Վիլսոնի կայացրած Իրավարար վճռում՝ Հայաստանի եւ Թուրքիայի սահմանի վերաբերյալ եւ այլ որոշումներում ու փաստաթղթերում,
- նկատի առնելով, որ Մերձավոր Արեւելքում եւ Արեւմտյան Հայաստանում (ԱՀ) ապրող հայությունը ապրելու, զարգանալու եւ ապագա ունենալու իրավունք ունի,

ինչպես դա սահմանված է միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներով ու նորմերով,
պետք է Մերձավոր Արեւելքում եւ Արեւմտյան Հայաստանում ապրող հայությանը դիտել որպես Հայաստան - Արցախ - Սփյուռք եռամիասնության չորրորդ բաղադրիչ: Ընդ որում, համահայկական օրակարգը պետք է ձեւավորվի այնպես, որ նրանից դուրս չմնան հայության այս կամ այն հատվածների կենսական շահերին առնչվող խնդիրները: Մինչդեռ մինչ այժմ հենց այդպես էլ արվել է, եւ գուցե հենց դա է այդ օրակարգերում ընդգրկված խնդիրների չլուծման պատճառը. . .
Օրինակները բազմաթիվ են, բայց մեր խոսքը հասկանալի դարձնելու համար մի քանի օրինակ բերենք.

- Անկախության գաղափար՝ առանց մշակելու, թե անկախության հասնելուց հետո զարգացման ինչ ճանապարհ պետք է ընտրել:
- Հայապահպանության խնդիրներ՝ առանց ներգաղթի կամ գոնե հայության համահավաք ու ամբողջական ապրելու ծրագրի:
- Արցախի ազատագրում՝ առանց դիվանագիտական եւ իրավական ճանապարհով կատարվածի ամրապնդման մշակումների, կամ բանակցությունների Արցախի հակամարտության կարգավորման շուրջ, առանց ադրբեջանահայության տարրական իրավունքների պաշտպանությունն հաշվի առնելու. . .
- Եւ վերջապես Արեւմտյան Հայաստանի խնդիրը համահայկական օրակարգից դուրս թողնելու հարյուրամյա գործելակերպի. . .

Եթե վերը նշված մասերից երեքի օրակարգերի ձեւավորման դեպքում (ՀՀ, ԱՀ, Սփյուռք) մենք գործ ունենք գործողությունների անհամաձայնեցվածության, ոչ շատ հստակ ձեւակերպված նպատակադրումների, գաղափարական անորոշությունների, անհեռատես լուծումների կամ պարզապես սխալների հետ, ապա Արեւմտյան Հայաստանի խնդիրը պարզապես գրեթե բացակայում է օրակարգից:
Շատերի համար Արեւմտյան Հայաստանը համարվում է կորսված տարածք, եւ քչերը գիտեն, որ Հայաստան պետությունը որպես Հայկական պետություն ճանաչվել է Փարիզի վեհաժողովի կողմից դեռեւս 1920 թ.-ի հունվարի 19-ին: Շատերը չեն կարեւորում 1920-ին կայացված այն կարեւոր որոշումները, ըստ որի՝ Հայաստան պետության սահմանը Թուրքիայի հետ սահմանագծվել է ԱՄՆ 28-րդ նախագահ Վուդրո Վիլսոնի կողմից կայացված Իրավարար վճռով եւ որ այդ որոշումները առկա են Սեւրի պայմանագրի Հայաստանին վերաբերող հոդվածներում:
Ըստ էության, առ այսօր նույն միջազգային իրավա-քաղաքական դաշտում կայացված եւ գործող այդ որոշումները բավարար են, որպեսզի արդեն իսկ գոյություն ունենա Արեւմտյան Հայաստանի Հանրապետությունը (Հայաստան պետությունը):
Գոյություն ունեցող հակափաստարկն այն է, որ եթե ցեղասպանության հետեւանքով հայերն այդ տարածքներում չեն ապրում, ուրեմն Հայաստան պետության վերաբերյալ կայացված որոշումները կորցրել են իրենց այժմեականությունը: Սակայն այնտեղ ապրում են ազգային ինքնությունից հեռացած հայեր (Արեւմտյան Հայաստանի հայությունը տարբեր ուսումնասիրությունների համաձայն 1 միլիոնից մինչեւ 3 մլն, 5-ից մինչեւ 7-10 մլն է կազմում Արեւմտյան Հայաստանում ու Կիլիկիայում եւ նրանց հարակից տարածքներում), որոնք վերադառնում եմ իրենց ինքնությանը եւ, բացի դրանից, այնտեղ ապրում են այլ ժողովուրդներ եւս, որոնց իրավունքները նույնպես ոտնահարվում են առ այսօր: Հետեւաբար, Արեւմտյան Հայաստանի Հանրապետության

(Հայաստան պետության) հաստատումը Վիլսոնյան իրավարար վճռով որոշված սահմաններում նորից դառնում է այժմեական եւ կարող է տարածաշրջանում համընդհանուր խաղաղության եւ խաղաղ համագործակցության հաստատման բանալի ծառայել:
Այս տեսակետն են պաշտպանում 2004 եւ ապա 2013 թթ. Արեւմտյան Հայաստանի Հանրապետության ձեւավորած պետական կառույցները, այդ թվում՝ հաշվի առնելով Արեւմտյան Հայաստանի պետական կառույցներում առկա ներուժը (նախագահի ինստիտուտ, կառավարություն, խորհրդարան), ինչպես նաեւ Արեւմտյան Հայաստանի հայերի պաշտպանության ուժերի ձեւավորման գործընթացը: Հիշեցնենք, որ 2013-ին ամբողջ աշխարհում համացանցի միջոցով անցկացված խորհրդարանական ընտրություններին մասնակցեցին շուրջ 18 հազար քաղաքացիներ, աշխարհի 41 երկրներից, որոնք ընտրեցին 64 պատգամավոր:
Մեր կարծիքով, սա հենց այն պահանջված ձեւաչափն է, որը մինչ այժմ որեւէ կերպ չի գործածվել, եւ դատելով մի շարք կարեւոր պետությունների կողմից այս կառույցի նկատմամբ դրսեւորվող անթաքույց հետաքրքրությունից, պարզ է, որ հենց այս ձեւաչափն է միակ իրականն ու գործունը Հայկական Հարցի վերջնական եւ ամբողջական կարգավորման համար:
Եթե համեմատենք հայության տարբեր հատվածների կողմից առաջարկվող առաջնահերթ խնդիրները, ապա կտեսնենք, որ ընդհանուր հարցերի առկայության պարագայում դրանք իրարից խիստ տարբերվում են. . .
Հայաստանի Հանրապետություն.
- Ներքաղաքական արդար եւ համաժողովրդական հավանության արժանացած համակարգի ստեղծում,
- Պաշտպանողանակության բարձրացում,
- Պետության ձեւի, սոցիալական կարգի տեսլականի ստեղծում եւ իրագործում,
- Խառը սեփականության տնտեսության ստեղծում,
- Ընտրական համակարգի արմատական բարելավում,
- Արդարադատության համակարգի արմատական բարելավում:

Արցախի Հանրապետություն.
- Միջազգային ճանաչում,
- Պաշտպանական ուժերի հզորացում,
- Ինքնիշխանության պահպանում,

Արեւմտյան Հայաստանի Հանրապետություն (Հայաստան պետություն).
- Հայաստան պետության Ճանաչման վերականգնում,
- Արեւմտյան Հայաստանի հայերի պաշտպանության ուժերի ձեւավորման գործընթաց,
- Ինքնության վերադարձ եւ հայապահպանում:

Սփյուռք.
- Ինքնակառավարման համակարգի ստեղծում,
- Կրթության եւ հայապահպանության հարցերի լուծում,
- Հայկական ինքնության վերադարձ եւ հայապահպանում:

Հայությունը պետք է կարողանա իր մեջ ներուժ գտնել եւ այս խնդիրները միասնական օրակարգ դարձնել եւ համագործակցության մեխանիզմներ ստեղծելով միասնաբար

լուծել, այլ ոչ թե ամեն մեկ հատվածին միայնակ թողնել իր խնդիրների հետ դեմ հանդիման։

Տիգրան Հարությունյան
Փիլիսոփայական գիտությունների թեկնածու,
«Նոյյան Տապան» լրատվական–վերլուծական կենտրոնի հիմնադիր տնօրեն,
Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) պատգամավոր
14.04.2018 թ.

«Կասպից Արեւմուտքում խաղաղության հաստատման հիմքերն ու ռեսուրսները»

Մեծ Մերձաւոր Արեւելքի բնիկ ժողովուրդներու համագումարը որպես տարածաշրջանային խաղաղության գործիք

Բնականաբար Մեծ Մերձաւոր Արեւելքի տարածաշրջանը, ինչպէս վաղ ժամանակներուն եղած է շրջանային եւ միջազգային ուժերու համար շատ կարեւոր աշխարհատարածք, երբ եղած է երկրագործութեան հիմնական տարածք, ընկալուած է որպէս սնունդի ռեսուրս, ինչպէս նաեւ առեւտուրի ճամբայ, նաեւ մշակոյթներու փոխհարաբերութեանց ու արշաւանքներու ճամբայ, միշտ եղած է, ինչպէս այսօր, գերպետութիւններու միջազգային ուժերու հետաքրքրութեան կեդրոն եւ շահերու բախման աղբիւր: Այդ պատճառով հակամարտող գերուժերը, միջազգային ուժերը, իրենց շահերը պաշտպանելու համար ունեցած են իրենց կողմնակիցները շրջանին մէջ՝ կամ համայնքային, կամ ազգային եւ կամ կրօնական դրութեամբ, եւ այդ հակամարտութեանց բեմ եղած է շրջանը, ինչպէս որ տեսանք շատ մօտիկ անցեալին եւ տակաւին նոյն խնդիրներուն մէջ ենք:

Մեծ Մերձաւոր Արեւելքի բնիկ ժողովուրդներու համագումարը, որ նպատակ ունի խաղաղ միջոցներով լուծելու շրջանի հակամարտութիւները, պիտի փորձէ նաեւ միջազգային ուժերէ դրական տրամադրուած հեղինակութիւններ ներառել համագումարի նախաձեռնութեան մէջ, որպէսզի համագումարը ունենայ դրական ուժի կարելիութիւններ: Ան նաեւ կը միտի ըլլալ բարձր մակարդակի, այսինքն՝ շրջանի համայնքապետերու մակարդակով, նախագահներու մակարդակով, որպէսզի իր ծանրակշիռ ներդրումը ունենայ շրջանի խնդիրները լուծելու հարցերու մէջ: Մենք՝ հայերս ըլլալով եւ շրջանի, եւ աշխարհի բոլոր երկիրներուն մէջ, կարեւոր դեր ունինք միացնելու այս ժողովուրդներու, այս ուժերու կամքը այս համագումարին, որպէսզի կարենանք մեր շահերը եւ մեր իրաւունքները վերականգնել եւ մեր իրաւունքներու վերականգնումով ըլլալ խաղաղութեան պատգամաբերը շրջանին մէջ, եւ ընդհանրապէս բոլոր երկիրներուն համար: Ատոր համար ընտրուած վայրը՝ Պէյրութը պիտի ունենայ մեծ կարեւորութիւն ապագայի անցուդարձերուն վրայ: Ասի ուրեմն առիթ մըն է կամ դրական ուղութեամբ շարժելու, կամ ալ մնալու այն խնդիրներուն մէջ, որ այսօր կան եւ աւելի վատթարանալու տուեալներ ունին շրջանին մէջ:

Այս համագումարի յաջողութեամբ՝ մենք բնիկները եւ փոքրամասնութիւնները ապահոված կըլլանք, մեր իրաւունքները ապահոված կըլլանք, մեր գոյութիւնը շրջանին մէջ, ապա թէ ոչ, եթէ հակառակ ուղղութեամբ շարժի շրջանը եւ միջազգային ուժերը, բնիկները եւ փոքրամասնութիւնները նոր սպառնալիքներու առջեւ պիտի կանգնին շրջանին մէջ, եւ նմանապէս մենք պիտի ունենանք ապագային լուրջ խնդիրներ մեր սահմաններուն վրայ:

Յուսանք, որ այս համագումարը արագ իրականութիւն կը դառնայ եւ շատ արագ դրական արդիւնքներ կ'արձանագրէ:

Նարեկ Աբրահամեան
Լիբանանի Հանրապետութեան պաշտօնաթող գեներալ,
Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Պաշտպանութեան, ներքին գործերու եւ ազգային անվտանգության հարցերու մշտական յանձնաժողովի նախագահ

29 նոյեմբեր 2018 թ.
Մայր Աթոռ Սբ. Էջմիածին

ԳԼՈՒԽ VIII

ԱՐԵՒՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄՆԵՐԸ ՈՒՂՂՎԱԾ ՄԱԿ-ԻՆ ԵՒ ՄԱԿ-Ի ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՄՇՏԱԿԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ (2018 - 2019 թթ.)

Միջազգային առավել կարեւոր այն Պայմանագրերի, Կոնվենցիաների, Հռչակագրերի եւ Կանոնադրությունների ցանկը, որոնք ճանաչել, միացել եւ վավերացրել է Արեւմտյան Հայաստանի Հանրապետությունը (Հայաստան)

(2018 թվականի մարտի 28-ի դրությամբ)

№	Միջազգային Պայմանագրերի, Կոնվենցիաների, Հռչակագրերի եւ Կանոնադրությունների անվանումները
1	Սեւրի խաղաղության պայմանագիր, ստորագրված 10 օգոստոս 1920 թ.
2	«Ծովային իրավունքի մասին» Կոնվենցիա, ստորագրված 10 դեկտեմբերի 1982 թ.՝ Մոնտեգո-Բեյ քաղաքում, եւ 29 հուլիսի 1994 թ. համաձայնության «Ծովային Իրավունքի մասին» ՄԱԿ-ի Կոնվենցիայի XI մասի իրականացման վերաբերյալ»
3	«Պետությունների իրավունքների եւ պարտականությունների մասին» Կոնվենցիա (ստորագրված 26 դեկտեմբեր 1933 թ., Համաամերիկյան պետությունների 7-րդ միջազգային համաժողովում (Մոնտեվիդեոյի Կոնվենցիա), որպես պետությունների իրավունքներ եւ պարտականություններ
4	«Գաղութացված երկրներին եւ ժողովուրդներին անկախություն շնորհելու մասին» Հռչակագիր, ընդունված ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից 14 դեկտեմբերի 1960 թ.
5	«Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու եւ պատժելու մասին» ՄԱԿ-ի Կոնվենցիա, ընդունված ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից 9 դեկտեմբերի 1948թ.
6	«Պատերազմական հանցագործությունների եւ մարդկության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին» ՄԱԿ-ի Կոնվենցիա, ընդունված ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից 26 նոյեմբերի 1968 թ.
7	«Զարգացման իրավունքի մասին» Հռչակագիր, ընդունված ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից 4 դեկտեմբերի 1986 թ.
8	Մարդու Իրավունքների Համընդհանուր Հռչակագիր, ընդունված ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից 10 դեկտեմբերի 1948 թ.
9	«Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» Վիեննայի Կոնվենցիա, ընդունված 23 մայիսի 1969 թ.
10	«Միջազգային հակամարտությունների խաղաղ կարգավորման մասին» Կոնվենցիա, ընդունված Հաագայում (Նիդերլանդներ), 18 Հոկտեմբերի1907 թ.
11	«Չեզոք պետությունների եւ անձանց իրավունքների եւ պարտավորությունների

	մասին ցամաքային պատերազմի ժամանակ» Կոնվենցիա, ընդունված Հաագայում (Նիդերլանդներ), 18 հոկտեմբեր 1907 թ.
12	«Չեզոք պետությունների եւ անձանց իրավունքների եւ պարտավորությունների մասին ծովային պատերազմի ժամանակ» Կոնվենցիա, ընդունված Հաագայում (Նիդերլանդներ), 18 հոկտեմբեր 1907 թ.
13	«Զինված հակամարտության դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին» Հաագայի Կոնվենցիա՝ ստորագրված 1954 թվականի մայիսի 14-ին Հաագայում, Նիդերլանդներ, Հաագայի Կոնվենցիայի Առաջին արձանագրություն՝ 14 մայիսի 1954 թ., ուժի մեջ մտած 7 օգոստոսի 1956 թ. եւ Հաագայի Կոնվենցիայի Երկրորդ արձանագրություն «Զինված հակամարտությունների դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին» 1954 թ., ընդունված Դիվանագիտական համաժողովում՝ 26 մարտի 1999 թ.
14	«Զինված հակամարտության դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին» Հաագայի Կոնվենցիան՝ ստորագրված 1954 թվականի մայիսի 14-ին Հաագայում, Նիդերլանդներ, Հաագայի Կոնվենցիայի Առաջին արձանագրությունը՝ 14 մայիսի 1954 թ., ուժի մեջ մտած 7 օգոստոսի 1956 թ.
15	«Զինված հակամարտության դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին» Հաագայի Կոնվենցիայի Երկրորդ արձանագրությունը, 1954 թ., ընդունված Դիվանագիտական համաժողովում՝ 26 մարտի 1999 թ.
16	«Բնիկ ժողովուրդների իրավունքների մասին» Հռչակագիր, ընդունված ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից 13 սեպտեմբերի 2007 թ.
17	«Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին» ՄԱԿ-ի Կոնվենցիա, 18 դեկտեմբեր 1979 թ.
18	«Կանանց նկատմամբ խտրականության վերացման մասին» Հռչակագիր, ընդունված ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից 7 նոյեմբերի 1967 թ.
19	«Երեխայի իրավունքների մասին» Կոնվենցիա, ընդունված ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից 20 նոյեմբերի 1989 թ.
20	«Ռասայական խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին» Կոնվենցիա, ընդունված ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից 21 դեկտեմբերի 1965թ.
21	«Ռասայական խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին» Հռչակագիր, ընդունված Գլխավոր Ասամբլեայի կողմից 20 նոյեմբերի 1963 թ.
22	«Ռասայի եւ ռասայական նախապաշարմունքների մասին» ՄԱԿ-ի Կրթության, գիտության եւ մշակույթի կազմակերպության Հռչակագիր (ՅՈՒՆԵՍԿՕ), ընդունված Գլխավոր կոնֆերանսի կողմից 27 նոյեմբերի 1978 թ.
23	«Կրոնի կամ համոզմունքի հիման վրա անհանդուրժողականության եւ խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին» Հռչակագիր, ընդունված ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից 25 նոյեմբերի 1981 թ.
24	«Ազգային կամ էթնիկ, կրոնական եւ լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների մասին» Հռչակագիր, ընդունված ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից 18 դեկտեմբերի 1992 թ.

25	«Ապարտեիդի հանցագործությունն արգելելու եւ պատժելու մասին» Կոնվենցիա, ընդունված Գլխավոր Ասամբլեայի կողմից 30 նոյեմբերի 1973 թ.
26	ՄԱԿ-ի Կանոնադրություն, ստորագրված 26 հունիսի 1945 թ. Սան Ֆրանցիսկոյի ՄԱԿ-ի կոնֆերանսում, ուժի մեջ մտած 24 հոկտեմբերի 1945 թ.
27	«Ազգային եւ միջազգային մակարդակով իրավունքի գերակայության մասին» Հռչակագիր, ընդունված Գլխավոր Ասամբլեայի կողմից 24 սեպտեմբերի 2012 թ.
28	«Փախստականների կարգավիճակի մասին» Կոնվենցիա, ընդունված Փախստականների եւ քաղաքացիություն չունեցող անձանց լիազորված ներկայացուցիչների կարգավիճակի կոնֆերանսի կողմից 28 հուլիսի 1951 թ., գումարված ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 14 դեկտեմբերի 1950 թ. № 429 (V) բանաձեւի համաձայն
29	«Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին» Միջազգային դաշնագիր, ընդունված Գլխավոր Ասամբլեայի կողմից 16 դեկտեմբերի 1966 թ.
30	«Տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքների մասին» Միջազգային դաշնագիր, ընդունված ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից 16 դեկտեմբերի 1966 թ.
31	«Փախստականների եւ գաղթականների վերաբերյալ» ՄԱԿ-ի Նյու Յորքի Հռչակագիր, ընդունված Գլխավոր Ասամբլեայի կողմից 19 սեպտեմբերի 2016 թ.
32	ՄԱԿ-ի Հազարամյակի Հռչակագիր, ընդունված ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից 8 սեպտեմբերի 2000 թ.
33	ՄԱԿ-ի Արդարադատության Միջազգային Դատարանի Կանոնադրության՝ հիմնադրված ՄԱԿ-ի Կանոնադրությամբ, ընդունված 26 հունիսի 1945 թ., որպես ՄԱԿ-ի հիմնական դատական մարմին
34	Միջազգային Կարմիր խաչի եւ Կարմիր մահիկի շարժման խարտիան, Ընդունված Ժնեւի 25-րդ Կարմիր խաչի միջազգային համաժողովում 1986 թ. հոկտեմբերին
35	ՄԱԿ-ի Կրթության, գիտության եւ մշակույթի հարցերով կազմակերպության Կանոնադրությունը (ՅՈՒՆԵՍԿՕ) ընդունված Լոնդոնում 1945 թ. նոյեմբերի 16-ին, ուժի մեջ է մտել 1946 թ. նոյեմբերի 4-ին
36	«Ժողովուրդների խաղաղության իրավունքի մասին» Հռչակագիրը ընդունված ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1984 թ. նոյեմբերի 12-ին
37	«Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եւրոպական Կոնվենցիա, թիվ 11 եւ 14 արձանագրությունների փոփոխությամբ եւ լրացումներով, Հռոմ, 4 նոյեմբերի 1950 թվական
38	«Միջուկային զենքերի չտարածման մասին» պայմանագիր, ընդունված ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից 1968 թ. հունիսի 12-ին
39	«Քիմիական զենքի մշակման, արտադրության, պահեստավորման եւ դրանց ոչնչացման արգելման մասին» Կոնվենցիա, ընդունված 1993 թ հունվարի 13-ին
40	«Կոռուպցիայի դեմ» Կոնվենցիա, ընդունված ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից 31 հոկտեմբերի 2003 թ.
41	«Բռնությամբ անհետացած բոլոր անձանց պաշտպանության մասին» Հռչակագիր, ընդունված Գլխավոր Ասամբլեայի կողմից 18 դեկտեմբերի 2012 թ.

ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արեւմտյան Հայաստանի Հանրապետությունը (Հայաստան) դիմել է ՄԱԿ-ին կյանքի կոչելու եւ իրականացնելու Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան) հաստատումը ԱՄՆ 28-րդ Նախագահ Վուդրո Վիլսոնի Իրավարար վճռով սահմանազատված տարածքի վրա

Ամփոփելով 2011-2018 թթ Արեւմտյան Հայաստանի հայերի իրավունքների պաշտպանության ոլորտում իրականացված աշխատանքները, այդ թվում՝1918-1920 թթ. ընթացքում հայ ժողովրդին տրված իրավունքների վերաբերյալ իրավական – քաղաքական միասնական փաթեթը, որը չորս լեզուներով՝ արեւելահայերեն-արեւմտահայերեն, անգլերեն, ռուսերեն, թուրքերեն, տեղադրված է կառավարության եւ խորհրդարանի http://gov-wa.info, http://parliament-wa.info/ կայքերում, «Իրավական փաթեթ» բաժնում:

Ամբողջացնելով Արեւմտյան Հայաստանի հայերի իրավունքների պաշտպանության ոլորտում կատարված օրենսդրական աշխատանքները եւ դրա արդյունքում ձեւավորված իրավական – քաղաքական – օրենսդրական դաշտը, որի եզրափակիչ մասն է Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագծի համաժողովրդական քննարկումը, հանրաքվեն եւ դրա արդյունքներով Սահմանադրության ընդունումը:

Ընդունելով, որ Արեւմտյան Հայաստանի հայերի պետականաշինության ոլորտում իրականացված աշխատանքներն ավարտված են. ձեւավորված են Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան) նախագահի ինստիտուտը, կառավարությունը, խորհրդարանը եւ դրանց իրավաչափության ապահովման գործընթացներն ավարտված են:

Նկատի առնելով, որ Արեւմտյան Հայաստանի Հանրապետությունը (Հայաստան) ճանաչել, միացել եւ վավերացրել է առավել կարեւոր Հռչակագրերը, Կոնվենցիաները, Միջազգային պայմանագրերը, այդ թվում՝ ՄԱԿ-ի Կանոնադրությունը, Մարդու Իրավունքների Համընդհանուր Հռչակագիրը, «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու եւ դրա համար պատժի մասին», «Պատերազմի հանցագործությունների եւ մարդկության դեմ հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին», «Գաղութացված երկրներին անկախություն շնորհելու մասին», «Պետությունների իրավունքների եւ պարտականությունների մասին» Կոնվենցիաները, Սեւրի խաղաղության պայմանագիրը, «Ռասայական խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին» Հռչակագիրը, «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» Վիեննայի կոնվենցիան եւ այլ…

Հաշվի առնելով, որ հայ ժողովրդի իրավունքների պաշտպանության գործընթացում եկել է նոր փուլ թեւակոխելու ժամանակը:

Որպես միջազգային իրավունքի սուբյեկտ՝ հանդիսանալով 20-րդ դարի 20-ական թթ. Հայաստան պետության անխզելի շարունակողը (continuity) Արեւմտյան Հայաստանի

Հանրապետությունը (Հայաստան) ստանձնել է Հայաստան պետության բոլոր իրավունքներն ու պարտականությունները
եւ համաձայն՝ «Պետությունների իրավունքների եւ պարտականությունների մասին» Կոնվենցիայի (Մոնտեվիդեոյի Կոնվենցիա) տիրապետում է անհրաժեշտ հատկանիշների՝ ա) մշտական բնակչություն, բ) որոշակի տարածք, գ) կառավարություն, դ) այլ պետությունների հետ հարաբերությունների մեջ մտնելու ունակություն,
հայտարարել է իր մշտական, դրական, զինված չեզոքությունը:

Արեւմտյան Հայաստանի Հանրապետությունը (Հայաստան) որոշում է կայացրել դիմել ՄԱԿ-ին անդամակցության, ինչպես նաեւ ԱՄՆ 28–րդ նախագահ Վուդրո Վիլսոնի 1920 թ. նոյեմբերի 22–ին կայացրած Իրավարար վճիռը կյանքի կոչելու, իրականացնելու Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան պետության) հաստատումը Իրավարար վճռով սահմանազատված տարածքի վրա:

Համապատասխան դիմումնագրերը 2018 թ. մայիս ամսին ուղարկվել են ՄԱԿ:

Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան) Լրատվական Ծառայություն
4 հունիս 2018 թ.

Դ Ի Մ Ո Ւ Մ

ԱՄՆ 28–րդ նախագահ Վուդրո Վիլսոնի 1920 թ. նոյեմբերի 22–ին կայացրած Իրավարար վճիռը կյանքի կոչելու եւ իրականացնելու մասին, որի ամբողջական անվանումն է՝ «Ամերիկայի Միացեալ Նահանգների նախագահի որոշումը Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ սահմանի, Հայաստանի դեպի ծով ելքի եւ հայկական սահմանին հարակից թուրքական տարածքի ապառազմականացման վերաբերյալ»

(Ստորեւ ներկայացված դիմումը ՄԱԿ-ի Գլխավոր Քարտուղարին ուղարկված դիմումնագրի կրճատված ու համառոտագրված տարբերակն է)

Հաշվի առնելով, որ Արեւմտյան Հայաստանի Հանրապետությունը (Հայաստան պետություն),
- ամբողջությամբ ընդունում է Միավորված Ազգերի Կազմակերպության կանոնադրական նպատակներն ու խնդիրները,
- ընդունել ու վավերացրել է Միավորված Ազգերի Կազմակերպության Կանոնադրությունը,
- որպես միջազգային իրավունքի սուբյեկտ՝ հանդիսանալով 20-րդ դարի 20-ական թթ. Հայաստան պետության անխզելի շարունակողը (continuity) եւ որպես Արեւմտյան Հայաստանի Հանրապետություն (Հայաստան պետություն) ստանձնել է Հայաստան պետության բոլոր իրավունքներն ու պարտականությունները,
- ընդունել, միացել եւ վավերացրել է առավել կարեւոր միջազգային Պայմանագրերը, Կոնվենցիաներն ու Հռչակագրերը; (Ցանկը ներկայացվում է կից)

Հաշվի առնելով հարցի նախապատմությունը, երբ՝

- 1919 թ. սկզբին Փարիզում հրավիրվել է Հայ ազգային համագումար, որի կարեւոր ձեռնարկներից մեկը եղել է «Ամբողջական Հայաստանի պատվիրակության» ընտրությունը՝ Պողոս Նուբարի ու Ավետիս Ահարոնյանի համանախագահությամբ եւ նախապես պատրաստված ու 1919 թ. փետրվարի 12–ին Փարիզի հաշտության կոնֆերանսին ներկայացված հայկական պահանջների համատեղ հուշագրի վավերացումը, որը հիմնավորում էր հայկական անկախ պետության ստեղծման անհրաժեշտությունը եւ ճշտում նրա տարածքը Արեւմտյան Հայաստանի յոթ վիլայեթների (ներառյալ Տրապիզոնը), Հայաստանի Հանրապետության եւ Կիլիկիայի միացմամբ:
- Միացյալ պատվիրակությունը փետրվարի 26-ին ներկայացավ Տասի խորհրդի նիստին՝ կրկնելով հուշագրի հիմնական պահանջները: Պատվիրակությանն ընդունեց (1919 թ. ապրիլի 17-ին) նաեւ ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնը եւ հավաստիացրեց, որ հնարավոր ամեն ինչ կանի հայերի տարածքային պահանջները պաշտպանելու համար:
- Հայկական միացյալ պատվիրակության ներկայացրած պահանջներին ի պատասխան Դաշնակիցների Գերագույն Խորհուրդը 1920 թ. հունվարի 19-ին կայացրել է հետեւյալ որոշումը եւ «Դե ֆակտո» ճանաչել է Հայկական պետությունը.

1) Հայկական պետության կառավարությունը ճանաչվում է, որպես կառավարություն,

2) այս որոշումը չի կանխորոշում Հայկական պետության սահմանների հարցը:

Ինչպես նաեւ՝

- հակառակ մարդկային բարոյականության եւ ցանկացած իրավունքի՝ ճանաչելու Հայոց իրավունքները բնօրրան հայրենիքի նկատմամբ, Թուրքիայի իրարհաջորդ կառավարություններ՝ սուլթանական, երիտթուրքական եւ քեմալական, 1894-1923 թթ. իրականացրել են Հայերի ցեղասպանություն եւ բռնագաղթ, որի միջոցով աննախադեպ փոփոխել են ազգագրական պատկերը տարածաշրջանում, իսկ հետեւանքում կրճատելով հայերի թիվը բռնազավթված տարածքներում, որպես «հավելավճար» իրենց հանցագործությունների՝ խախտել են ազգությունների միջեւ բնականոն հարաբերակցությունը՝ Արեւմտյան Հայաստանում,
- որ արդեն 98 տարի է ինչ Թուրքիայի Հանրապետությունը բռնազավթված է պահում Արեւմտյան Հայաստանի տարածքը,
- որ Հայերի ցեղասպանությունը առաջինը դատապարտեցին Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան եւ Ռուսաստանը 1915 թ. մայիսի 24-ին այն որակելով, որպես «Հանցագործություն՝ մարդկայնության դեմ», տեղեկացնելով, որ դրա «կազմակերպիչներն ու իրականացնողները ենթակա են լինելու քրեական պատասխանատվության»,
- որ Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) իրավասությունը տարածվում է ինչպես Արեւմտյան Հայաստան պետության քաղաքացիների, այնպես էլ Արեւմտյան Հայաստանի բռնագրավված երկրամասի՝ Արեւմտյան Հայաստանի իրավական (de jure) եւ փաստական (de facto) տարածքների վրա:

Համաձայն հետեւյալ իրավական փաստաթղթերի՝

- Ռուսաստանի Կառավարության Դեկրետի (Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդ) «Թուրքահայաստանի մասին» («Արեւմտյան Հայաստանի մասին»), 11 հունվար 1918 թ.,

- Դաշնակից Տերությունների Գերագույն Խորհրդի կողմից դե ֆակտո (de facto) Հայաստան պետության անկախության ճանաչման, Փարիզի Վեհաժողովի ժամանակ, 19 հունվար 1920 թ.:
- Դաշնակից Տերությունների Գերագույն Խորհրդի կողմից դե յուրե (de jure) Հայաստան պետության անկախության ճանաչման, Փարիզ, 11 մայիս 1920 թ.,
- Կիլիկիայի հայերի ընդունած «Կիլիկիայի անկախության մասին» Հռչակագրի, 4 օգոստոս 1920 թ.:
- Սեւրի խաղաղության պայմանագրի, 10 օգոստոս 1920 թ.,
- ԱՄՆ 28-րդ նախագահ Վուդրո Վիլսոնի կայացրած Իրավարար վճռի, որի ամբողջական անվանումն է՝ «Ամերիկայի Միացեալ Նահանգների նախագահի որոշումը Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ սահմանի, Հայաստանի դեպի ծով ելքի եւ հայկական սահմանին հարակից թուրքական տարածքի ապառազմականացման վերաբերյալ», 22 նոյեմբեր 1920 թ.:

Նկատի առնելով, որ՝
- ՄԱԿ-ի «Բնիկ ժողովուրդների իրավունքների մասին» Հռչակագրի (13.09.2007 թ.) հոդվածների դրույթների ու սկզբունքների համաձայն՝ ձեւավորվել է Արեւմտյան Հայաստանի հայերի ինքնության եւ քաղաքացիության ինստիտուտը,
- Մարդու Իրավունքների Համընդհանուր Հռչակագրի (10.12.1948 թ.) 21-րդ հոդվածի համաձայն՝ ձեւավորվել են Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան պետություն) բացարձակապես իրավաչափ (legitim) պետական իշխանության մարմինները. ազգային ժողովը (խորհրդարանը), կառավարությունը, նախագահի ինստիտուտը: 2013 թ. ամբողջ աշխարհում, առաջին անգամ, համացանցի միջոցով անցկացվել են խորհրդարանական ընտրություններ, աշխարհի 41 երկրներում, համաձայն համընդհանուր եւ հավասար ընտրական իրավունքի, ազատ եւ գաղտնի քվեարկությամբ, ընտրվել է ազգային ժողովի 64 պատգամավոր,
- որ Արեւմտյան Հայաստանի Հանրապետությունը (Հայաստան) համապատասխան օրենքների ընդունումով՝ ընդունել, միացել եւ վավերացրել է ՄԱԿ-ի Կանոնադրությունը եւ բոլոր առավել կարեւոր միջազգային Պայմանագրերը, Կոնվենցիաներն ու Հռչակագրերը:

Նկատի առնելով, որ՝
- Հայաստանի առաջին Հանրապետությունը եւ երկրորդ Հանրապետությունը ագրեսիայի եւ պարտադրանքի պայմաններում հրաժարվել են (Ալեքսանդրապոլի պայմանագիր, 02.12.1920 թ. եւ Կարսի պայմանագիր 13.10.1921 թ.) Հայկական միասնական պահանջների համեմատ 1920 թ. հայ ժողովրդին եւ հայկական պետությանը (Հայաստան պետություն) տրված իրավունքներից, հարկադրված լինելով մնալ միայն Հայաստանի Հանրապետության, այլ կերպ ասած՝ Արեւելյան Հայաստանի եւ Արեւելյան Հայաստանի հայերի իրավունքների ու իրավասությունների շրջանակներում:

Նկատի առնելով, որ՝
- Մերձավոր Արեւելքում ոչ մի կերպ չեն դադարում զինյալ հակամարտությունները,

- Սեւրի խաղաղության պայմանագրի բոլոր կետերի իրականացումը կարող է վճռական քայլ հանդիսանալ Մերձավոր Արեւելքում իրական խաղաղության ու համագործակցության հաստատման,
- Սեւրի խաղաղության պայմանագրով են հաստատվել Մերձավոր Արեւելքի պետությունների սահմանները, այդ թվում՝ Հայաստան պետության սահմանը, որի վերաբերյալ կայացվել է նաեւ ԱՄՆ 28-րդ Նախագահ Վուդրո Վիլսոնի Իրավար վճիռը, որը սակայն մինչեւ այսօր կյանքի չի կոչվել:

Նկատի առնելով, որ՝
- Արեւմտյան Հայաստանի հայերը, ինչպես ցանկացած ազգ աշխարհում՝ ապրելու, զարգանալու եւ ապագա ունենալու իրավունք ունեն, ինչը նշանակում է, որ նրանք իրավունք ունեն պահանջելու սեփական պետության հաստատումը Բնօրրան Հայրենիքում՝ Արեւմտյան Հայաստանում,
- Արեւմտյան Հայաստանի հայերը եւ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան պետություն) պետական կառույցները հայտ են ներկայացնում ստանձնելու Սեւրի խաղաղության պայմանագրով եւ ԱՄՆ 28-րդ Նախագահ Վուդրո Վիլսոնի կայացրած Իրավարար վճռով հայ ժողովրդին տրված իրավունքների պաշտպանությունն ու դրանց իրականացումը կյանքում, հանդես գալով որպես 1920 թ. դե ֆակտո եւ դե յուրե ճանաչված Հայկական պետության՝ Հայաստան պետության շարունակող (continuity) պետություն:

Դիմում ենք Ձեզ կյանքի կոչելու եւ իրականացնելու Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան պետության) հաստատումը ԱՄՆ 28-րդ նախագահ Վուդրո Վիլսոնի Իրավարար վճռով սահմանազատված տարածքի վրա:

Սույն դիմումը՝ «ԱՄՆ 28–րդ Նախագահ Վուդրո Վիլսոնի 1920 թ. նոյեմբերի 22–ին կայացրած Իրավարար վճռի իրականացման մասին», ընդունված է Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Կառավարության եւ Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) կողմից Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 1-ին գումարման 7-րդ նստաշրջանում, 29-ը մայիսի 2018 թ.:
(7-րդ նստաշրջանի Արձանագրության քաղվածքը կցվում է)

Ռադիկ Խամոյան
Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Նախագահ

Տիգրան Փաշաբեզյան
Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Վարչապետ

Արմեն Տեր-Սարգսյան
Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) Նախագահ
29 մայիս 2018 թ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտի 100-ամյակի կապակցությամբ՝ ուղղված Սեւրի Խաղաղության պայմանագիրը ստորագրած պետություններին

Իրավամբ, Սեւրի Խաղաղության պայմանագիրը ստորագրած, Եւրոպայի ու Մերձավոր Արեւելքի ժողովուրդներն ու պետությունները կարող են հանդիսավոր կերպով նշել Առաջին համաշխարհային պատերազմի ավարտի 100-ամյակը:

Չէ որ համաշխարհային այդ աղետը միլիոնավոր կյանքեր էր խլել ու հազարավոր բնակավայրեր ավերակների վերածել՝ Եվրոպայում, Մերձավոր Արեւելքում, այդ թվում՝ 1,5 միլիոնից ավելի հայերի կյանքեր խլել ու ավերակի վերածել Արեւմտյան Հայաստանն ու Կիլիկիան: Պատերազմը շուտուփույթ ավարտին հասցնելու գործում նշանակալի դեր ունեցավ նաեւ հայ զինվորն ու սպան, թե՛ կանոնավոր բանակներում եւ թե՛ կամավորական ուժերում, քաջաբար կռվելով արեւմտյան ու արեւելյան ճակատներում:

Սակայն ընդունենք, որ այս նշանակալի իրադարձության 100-ամյակի տոնական տրամադրությունը իրականում խամրում է Մերձավոր Արեւելքում տեղի ունեցող զինված հակամարտությունների, քաոսի ու մարդկայնության դեմ իրականացված նոր հանցագործությունների հենքին:

Ի՞նչն է պատճառը: Չէ՞ որ Առաջին համաշխարհային պատերազմի ավարտի ամփոփիչ փաստաթուղթը՝ Սեւրի Խաղաղության պայմանագիրը, խաղաղության պայմանագիր է: Ինչո՞ւ պայմանագիրը չի ապահովում տեւական ու կայուն խաղաղություն տարածաշրջանում:

Միգուցե արժե դադար առնել ու խոստովանել, որ այո՛, թեեւ պատերազմն ավարտվել է 100 տարի առաջ, սակայն նրա ամփոփիչ արդյունքների վերաբերյալ կայացված որոշումների մեկ կարեւոր բաժինը, այդ թվում՝ Սեւրի Խաղաղության պայմանագրով եւ Վելսոնի Իրավարար վճռով, մինչեւ այսօր չի իրականացվել, մասնավորապես, հայ ժողովրդի եւ Մերձավոր Արեւելքի բնիկ այլ ժողովուրդների՝ քրդերի, հույների, ասորիների... իրավունքների մասով:

Որովհետեւ ժամանակին թույլ տրված այդ խոշոր սխալը իրականում պատանդի կարգավիճակում է պահել հակամարտող կողմերին, նրանց երկրներն ու սերունդները եւ հիսուն տարին մեկ նոր ուժով է բորբոքվել հակամարտությունն ու դիմակայությունը, պատերազմն ու քաոսը՝ Բալկաններում, Մերձավոր Արեւելքում, Կովկասում:

Միգուցե արժե խոստովանել, որ միանգամայն ճիշտ էր զորավար Հարբորդի ԱՄՆ Սենատ ներկայացրած եզրակացությունը, թե՝ «Նախընտրելի է միլիոններ ծախսել հոգատարութեան, քան թէ միլիառներ՝ ապագայ պատերազմներուն»:

Ներկայի համառ իրողությունը հենց դա է, որ Եւրոպայում ու Մերձավոր Արեւելքում եւ ոչ մի պետություն ու ժողովուրդ անմասն չի մնալու ներկայի ու ապագայի

սպառնալիքներից, եթե չընտրվի գոյություն ունեցող խնդիրների ու սպառնալիքների խաղաղ կարգավորման եւ ժողովուրդների իրավունքների հաստատման ճանապարհը:

Մերձավոր Արեւելքի ժողովուրդների ու պետությունների միջեւ կայուն խաղաղություն եւ իրական համագործակցություն հաստատելու համար վերջապես պետք է կյանքի կոչել եւ իրականացնել այն բոլոր որոշումները, որոնք կայացվեցին 1920 թ. Փարիզի Վեհաժողովի կողմից, այդ թվում՝ հայ ժողովրդի իրավունքների մասով:

Ռադիկ Խամոյան
Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան) Նախագահ

10.11.2018 թ.

ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Դիմումը ՄԱԿ-ին

Արեւմտյան Հայաստանի եւ Կիլիկիայի տարածքների ապառազմականացման, այնտեղից Թուրքիայի Հանրապետության բռնազավթիչ ուժերը դուրս բերելու վերաբերյալ

Արեւմտյան Հայաստանի Հանրապետությունը (Հայաստան) հանդես է եկել «Արեւմտյան Հայաստանի եւ Կիլիկիայի տարածքների ապառազմականացման, այնտեղից Թուրքիայի Հանրապետության բռնազավթիչ ուժերը դուրս բերելու վերաբերյալ» իրավական-քաղաքական գործընթաց սկսելու դիմում - առաջարկով:

Նշյալ դիմումնագիրը 2018 թ. նոյեմբեր ամսին ուղարկվել է ՄԱԿ:

Հիշեցնենք, որ սույն դիմումնագիրը թվով երրորդն է, նախապես 2018 թ: մայիսին, Արեւմտյան Հայաստանի Հանրապետությունը (Հայաստան) որոշում էր կայացրել եւ դիմել էր ՄԱԿ՝ անդամակցության, ինչպես նաեւ ԱՄՆ 28–րդ նախագահ Վուդրո Վիլսոնի 1920 թ. նոյեմբերի 22–ին կայացրած Իրավարար վճիռը կյանքի կոչելու, իրականացնելու Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան պետության) հաստատումը Իրավարար վճռով սահմանազատված տարածքի վրա:

Ստորեւ ներկայացված դիմումը 2018 թվականի նոյեմբերին ՄԱԿ ուղարկված դիմումնագրի կրճատված ու համառոտագրված տարբերակն է:

Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան) Լրատվական Ծառայություն
22 նոյեմբեր 2018 թ.

Դ Ի Մ Ո Ւ Մ

Արեւմտյան Հայաստանի եւ Կիլիկիայի տարածքների ապառազմականացման, այնտեղից Թուրքիայի Հանրապետության բռնազավթիչ ուժերը դուրս բերելու վերաբերյալ

(Ստորեւ ներկայացված դիմումը ՄԱԿ-ի Գլխավոր Քարտուղարին ուղարկված դիմումնագրի կրճատված ու համառոտագրված տարբերակն է)

Նկատի առնելով, որ
Ըստ 1918 թ. հոկտեմբերի 30–ին Դաշնակիցների եւ Թուրքիայի միջեւ Լեմնոս կղզու Մուդրոս նավահանգստում կնքված զինադադարի փաստաթղթի 16–րդ հոդվածի նախատեսվում էր. «Հեջասի, Ասիրի եւ Եմենի, Սիրիայի եւ Միջագետքի բոլոր կայազորների հանձնումը դաշնակցային հրամանատարությանը... Թուրքական զորքերի դուրս բերումը Կիլիկիայից», եւ
ըստ նույն փաստաթղթի 24–րդ հոդվածի՝ «Հայկական վիլայեթներից (որեւէ) մեկում անկարգություններ ծագելու դեպքում, դաշնակիցները իրենց վերապահում են նրա մի մասը գրավելու իրավունքը»:

Նկատի առնելով, որ
- ԱՄՆ 28-րդ նախագահ Վուդրո Վիլսոնի կայացրած Իրավարար վճռի համաձայն՝ թուրքական զինված ուժերը պարտավոր էին 1920 թ. նոյեմբերի 22-ից հետո դուրս գալ Արեւմտյան Հայաստանի չորս վիլայեթներից:
- Իրավար վճռով որոշված տարածքների հարցը Սեւրի խաղաղության դաշնագրի 89-րդ հոդվածում ձեւակերպված է այսպես. «Թուրքիան եւ Հայաստանը, ինչպես եւ Բարձր պայմանավորվող կողմերը, համաձայնվում են Էրզրումի, Տրապիզոնի, Վանի եւ Բիթլիսի վիլայեթներում Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ սահմանատումը թողնել Ամերիկայի Միացյալ Նահանգների որոշմանը եւ ընդունել ինչպես նրա որոշումը, նույնպես եւ այն բոլոր միջոցառումները, որոնք նա կարող է առաջարկել Հայաստանին դեպի ծով ելք տալու եւ հիշյալ սահմանագծին հարող օսմանյան բոլոր տարածքների ապառազմականացման վերաբերյալ»:
- «Արեւմտյան Հայաստանի հայերի եւ Արեւմտյան Հայաստանի մշտական, զինված, դրական չեզոքության մասին» 2011 թ. մարտի 29-ին ընդունված որոշման համաձայն՝ ինչը նշանակում է, որ թուրքական զինված ուժերը իրավունք չունեն գտնվել նվազագույնը Վիլսոնյան Իրավարար վճռով Հայաստանին հատկացված այդ տարածքներում:

Ինչպես նաեւ նկատի առնելով հարցի նախապատմությունը, երբ
Հայկական Հարցի սկզբնավորումից՝ 1878–ից ի վեր, ճիշտ է այն արդարացի լուծման տակավին չի հանգել, սակայն նույն այդ գործընթացի արդյունքում ձեւավորվել է Հայկական Հարցի արդարացի լուծման եւ հայ–թուրքական հարաբերությունների խաղաղ, քաղաքակիրթ, արդյունավետ եւ վերջնական կարգավորման իրավական–քաղաքական պատկառելի փաթեթ:

Նկատի առնելով, որ

Ինչ էլ լինեն թուրքական կողմի բերած փաստարկերն ու արդարացումները՝ նախկինում Սիրիայի Արաբական Հանրապետության հյուսիսային սահմաններին «Եփրատի վահան», ներկայումս՝ «Զիթենու ճյուղ» հորջորջմամբ Թուրքիայի Հանրապետության զինված ուժերի ռազմական գործողությունների ինքնակոչ նպատակների վերաբերյալ, իբր թե՝ «ահաբեկչական խմբավորումների դեմ պայքարի», կամ էլ իբր՝ «անվտանգության գոտու ստեղծման» նույնքան կեղծ արդարացմամբ, այդ թվում՝ նույնպիսի հորինված մի պատճառաբանությամբ ներխուժումը Իրաքի Հանրապետության հյուսիսային տարածքներ, ներխուժումը Կիպրոսի Հանրապետության հյուսիսային տարածքներ, Կիպրոսի Հանրապետության մասնատումը, երկրի հյուսիսային տարածքների բռնազավթումը եւ այնտեղ անօրինական Կիպրոսի Հյուսիսային Հանրապետության հաստատումը, միեւնույնն է, մի բան հստակ է. իրականացվել է բացահայտ կամային-քաղաքական որոշում՝ ներխուժում սուվերեն երկրների տարածք: Հետեւությունը միակն է. Թուրքիայի Հանրապետության զինված ուժերն այդ տարածքներում իրավունք չունեին եւ այժմ էլ իրավունք չունեն գտնվելու…:

Հետեւաբար ժամանակը հասունացել է
ողջ քաղաքակիրթ աշխարհի ուշադրությունը հրավիրել Թուրքիայի Հանրապետության լիովին հակահիրավական եւ անօրինական այն բոլոր քայլերի վրա, ըստ որի՝ Թուրքիայի Հանրապետության զինված ուժերը
ա) շուրջ 98 տարի բռնազավթված են պահում Արեւմտյան Հայաստանը եւ Կիլիկիան,
բ) այդ նույն բռնազավթված տարածքներից նոր եւ առավել վտանգավոր ագրեսիայի սպառնալիքներ են ստեղծում Մեծ Մերձավոր Արեւելքի ու Եւրոպայի ժողովուրդների ու պետությունների համար:

Ինչպես նաեւ հաշվի առնելով, որ
- հակառակ մարդկային բարոյականության եւ իրավունքի՝ ճանաչելու Հայոց իրավունքները բնօրրան հայրենիքի նկատմամբ, Թուրքիայի իրարհաջորդ կառավարություններ՝ սուլթանական, երիտթուրքական եւ քեմալական, 1894-1923 թթ. իրականացրել են Հայերի ցեղասպանություն եւ բռնագաղթ, որի միջոցով աննախադեպ փոփոխել են ազգագրական պատկերը տարածաշրջանում, իսկ հետեւանքում կրճատելով հայերի թիվը բռնազավթված տարածքներում, որպես «հավելավճար» իրենց հանցագործությունների՝ խախտել են ազգությունների միջեւ բնականոն հարաբերակցությունը՝ Արեւմտյան Հայաստանում,
- որ արդեն 98 տարի է ինչ Թուրքիայի Հանրապետությունը բռնազավթված է պահում Արեւմտյան Հայաստանի տարածքը,
- որ Հայերի ցեղասպանությունը առաջինը դատապարտեցին Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան եւ Ռուսաստանը 1915 թ. մայիսի 24-ին այն որակելով, որպես «Հանցագործություն՝ մարդկայնության դեմ», տեղեկացնելով, որ դրա «կազմակերպիչներն ու իրականացնողները ենթակա են լինելու քրեական պատասխանատվության»,
- հետագայում աշխարհի առաջադեմ շատ պետություններ ճանաչեցին ու դատապարտեցին թուրքական իշխանությունների հրեշավոր հանցագործությունները: Ճանաչման ու դատապարտման այդ գործընթացը շարունակվում եւ այսօր: Հատկանշական է, որ նույնիսկ թուրքական պետությունը Կոստանդնուպոլսի ռազմական հատուկ ատյանում 1919-20 թթ. իրականացրեց երիտթուրքական կառավարության

պարագլուխների դատավարությունը, նրանցից շատերի համար մահվան դատավճիռներ արձակելով,

- որ համաձայն Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) ձեւավորման մասին հռչակագրի՝ 25 մայիս 2013 թ., Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) իրավասությունը տարածվում է ինչպես Արեւմտյան Հայաստան պետության քաղաքացիների, այնպես էլ Արեւմտյան Հայաստանի բռնագրավված երկրամասի՝ Արեւմտյան Հայաստանի իրավական (de jure) եւ փաստական (de facto) տարածքների վրա:

Համաձայն հետեւյալ իրավական փաստաթղթերի՝

- Ռուսաստանի Կառավարության Դեկրետի «Թուրքահայաստանի մասին» («Արեւմտյան Հայաստանի մասին»), 11 հունվար 1918 թ.,
- Դաշնակից Տերությունների Գերագույն Խորհրդի կողմից դե ֆակտո (de facto) Հայաստան պետության անկախության ճանաչման, Փարիզի Վեհաժողովի ժամանակ, 19 հունվար 1920 թ.,
- Դաշնակից Տերությունների Գերագույն Խորհրդի կողմից դե յուրե (de jure) Հայաստան պետության անկախության ճանաչման, Փարիզ, 11 մայիս 1920 թ.,
- Կիլիկիայի հայերի ընդունած «Կիլիկիայի անկախության մասին» Հռչակագրի, 4 օգոստոս 1920 թ.,
- Սեւրի խաղաղության պայմանագրի, 10 օգոստոս 1920 թ.,
- ԱՄՆ 28-րդ Նախագահ Վուդրո Վիլսոնի կայացրած Իրավարար վճռի, որի ամբողջական անվանումն է՝ «Ամերիկայի Միացեալ Նահանգների նախագահի որոշումը Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ սահմանի, Հայաստանի դեպի ծով ելքի եւ հայկական սահմանին հարակից թուրքական տարածքների ապառազմականացման վերաբերյալ», 22 նոյեմբեր 1920 թ.:

Հիմք ընդունելով՝

- ՄԱԿ-ի Կանոնադրությունը, 26.06.1945 թ.,
- Մարդու Իրավունքների Համընդհանուր Հռչակագիրը, 10.12.1948 թ.,
- «Պետությունների իրավունքների եւ պարտականությունների մասին» Կոնվենցիան (ստորագրված 26 դեկտեմբեր 1933 թ., համամերիկյան պետությունների 7-րդ միջազգային համաժողովում (Մոնտեվիդեոյի Կոնվենցիա), որպես պետությունների իրավունքներ եւ պարտականություններ ճանաչելու մասին,
- «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու եւ դրա համար պատժի մասին» ՄԱԿ-ի Կոնվենցիան, 9 դեկտեմբերի 1948 թ.,
- «Պատերազմի հանցագործությունների եւ մարդկության դեմ հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին» ՄԱԿ-ի Կոնվենցիան, 26-ը նոյեմբերի 1968 թ.,
- «Գաղութացված երկրներին անկախություն շնորհելու մասին» ՄԱԿ-ի Կոնվենցիան, 14.12.1960 թ.,
- «Ռասայական խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին» Հռչակագիրը, 20.11.1963 թ.,
- «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» («Վիեննայի կոնվենցիան»), 23.05.1969 թ.,

- «Բնիկ ժողովուրդների իրավունքների մասին» ՄԱԿ-ի Հռչակագիրը, 13.09.2007 թ.,
- «Խաղաղության ժողովուրդների իրավունքի մասին» ՄԱԿ-ի Հռչակագիրը, 12.10.1984 թ.,
- «Զարգացման իրավունքի մասին» Հռչակագիրը, 04.12.1986 թ.,
- «Ազգային կամ էթնիկ, կրոնական եւ լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների մասին» Հռչակագիրը, 18.12.1992 թ.,
- «Ազգային եւ միջազգային մակարդակներում ՄԱԿ-ի իրավունքի գերակայության մասին» Հռչակագիրը, 24.09.2012 թ.:

Հիմնվելով,
- Արեւմտյան Հայաստանի հայերի ինքնության ու քաղաքացիության ինստիտուտի վրա ըստ՝ «Բնիկ ժողովուրդների իրավունքների մասին» ՄԱԿ-ի Հռչակագրի, 13.09.2007 թ.,
- Արեւմտյան Հայաստանի հայերի Ազգային Խորհրդի «Արեւմտյան Հայաստանի հայերի ինքնորոշման իրավունքի մասին» Հռչակագրի. 17.12.2004 թ.,
- Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհրդի «Արեւմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարություն կազմելու մասին» Հռչակագրի, 04.02.2011 թ.,
- Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհրդի եւ Արեւմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարության «Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) ձեւաւորման մասին» Հռչակագրի, 24.05.2013 թ.,
- Արեւմտյան Հայաստանի 1-ին գումարման Ազգային ժողով (Խորհրդարան) ձեւավորելու մասին Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) Որոշման, 16.12.2013 թ., եւ Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման պատգամավորների ընտրությունների մասին Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) Որոշման, 14.09. 2018 թ.,
- Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Օրենքի «Արեւմտյան Հայաստանի պետական կառուցվածքի, Ազգային ժողովի (Խորհրդարանի) պատգամավորների կարգավիճակը եւ Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) կանոնակարգի մասին», 21 հունվարի 2014 թ.,
- Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Նախագահի Հրամանագրի (թիվ 12), «Որոշում՝ հիշեցում, Արեւմտյան Հայաստանի Հանրապետության վերաբերյալ, որը հանդիսանում է 1920 թ.-ի Հայկական պետության շարունակողը», 23.02.2014 թ.,
- Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Նախագահի «Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան) Սահմանադրության նախագիծը պատրաստելու մասին» Հրամանագրի, 09.05.2016 թ.,
- Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհրդի «Արեւմտյան Հայաստանի հայերի մշտական, զինյալ, դրական չեզոքության մասին» Որոշման, 29.03.2011 թ.,
- Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհրդի «Արեւմտյան Հայաստանի հայերի ինքնապաշտպանության ուժերի ստեղծման մասին» Հրամանագրի, 26.12.2012 թ.,
- «Արեւմտյան Հայաստանի հայերի Պաշտպանության ուժեր կազմավորելու վերաբերյալ» Որոշման, ընդունված Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) կողմից, 10 հունվարի 2018 թ.:

Նկատի առնելով, որ՝

- Մերձավոր Արեւելքում ոչ մի կերպ չեն դադարում զինյալ հակամարտությունները,
- Սեւրի խաղաղության պայմանագրի բոլոր կետերի իրականացումը կարող է վճռական քայլ հանդիսանալ Մերձավոր Արեւելքում իրական խաղաղության ու համագործակցության հաստատման,
- Սեւրի խաղաղության պայմանագրով են հաստատվել Մերձավոր Արեւելքի պետությունների սահմանները, այդ թվում՝ Հայաստան պետության սահմանը, որի վերաբերյալ կայացվել է նաեւ ԱՄՆ 28-րդ Նախագահ Վուդրո Վիլսոնի Իրավար վճիռը, որը սակայն մինչեւ այսօր կյանքի չի կոչվել:
- Հայկական Հարցի լուծման նպատակով հիմնական որոշումները կայացվել են, սակայն առ այսօր չեն իրականացվել: Կարելի է ընդգծել, որ դրանց իրականացման ժամանակը հասունացել է: Եվ ներկայի համառ իրականությունն այն է, որ Մերձավոր Արեւելքում եւ ոչ մի պետություն եւ ժողովուրդ անմասն չի մնալու ներկայի ու ապագայի սպառնալիքներից, եթե նրանցից ամեն մեկն իր կարգին չընտրի գոյություն ունեցող խնդիրների ու հակամարտությունների խաղաղ կարգավորման իրավական–քաղաքական ճանապարհը:
- Բոլոր ոչ իրավական, այսինքն՝ կամային քաղաքական որոշումները պատանդի կարգավիճակում են պահելու հակամարտող կողմերին, նրանց երկրներն ու սերունդները եւ հիսուն տարին մեկ նոր ուժով է բորբոքվելու հակամարտությունն ու դիմակայությունը, պատերազմն ու քաոսը՝ Բալկաններում, Մերձավոր Արեւելքում, Կովկասում, Աֆղանստանում:

Նկատի առնելով, որ՝
- Արեւմտյան Հայաստանի հայերը, ինչպես ցանկացած ազգ աշխարհում՝ ապրելու, զարգանալու եւ ապագա ունենալու իրավունք ունեն, ինչը նշանակում է, որ նրանք իրավունք ունեն պահանջելու սեփական պետության հաստատումը Բնօրրան Հայրենիքում՝ Արեւմտյան Հայաստանում,
- Արեւմտյան Հայաստանի հայերը եւ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան պետություն) պետական կառույցները հայտ են ներկայացնում ստանձնելու Սեւրի խաղաղության պայմանագրով եւ ԱՄՆ 28-րդ Նախագահ Վուդրո Վիլսոնի կայացրած Իրավարար վճռով հայ ժողովրդին տրված իրավունքների պաշտպանությունն ու դրանց իրականացումը կյանքում, հանդես գալով որպես 1920 թ. դե ֆակտո եւ դե յուրե ճանաչված Հայկական պետության՝ Հայաստան պետության շարունակող (continuity) պետություն:

Նկատի առնելով,
-Միավորված Ազգերի Կազմակերպությանը Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան պետության) անդամակցության վերաբերյալ դիմումը, 25 մայիս 2018 թ.:
-Միավորված Ազգերի Կազմակերպությանը Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան պետության) դիմումը՝ կյանքի կոչելու եւ իրականացնելու Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան պետության) հաստատումը ԱՄՆ 28-րդ նախագահ Վուդրո Վիլսոնի Իրավարար վճռով սահմանազատված տարածքի վրա, 29 մայիս 2018 թ.:

Դիմում ենք Ձեզ հետեւյալ առաջարկությամբ.

Իրավական - քաղաքական գործընթաց սկսել Արեւմտյան Հայաստանի եւ Կիլիկիայի տարածքների ապառազմականացման, այնտեղից Թուրքիայի Հանրապետության բռնազավթիչ ուժերը դուրս բերելու նպատակով,
հիմք ընդունելով ԱՄՆ 28–րդ նախագահ Վուդրո Վիլսոնի 1920 թ. նոյեմբերի 22–ին կայացրած Իրավարար վճիռը՝ «Ամերիկայի Միացեալ Նահանգների նախագահի որոշումը Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ սահմանի, Հայաստանի դեպի ծով ելքի եւ հայկական սահմանին հարակից թուրքական տարածքների ապառազմականացման վերաբերյալ»,
այդ թվում՝ հաշվի առնելով «Արեւմտյան Հայաստանի հայերի եւ Արեւմտյան Հայաստանի մշտական, զինյալ, դրական չեզոքության մասին» 29 մարտ 2011 թ. որոշումը:

Սույն դիմումի մասին որոշումը՝
Արեւմտյան Հայաստանի եւ Կիլիկիայի տարածքների ապառազմականացման, այնտեղից Թուրքիայի Հանրապետության բռնազավթիչ ուժերը դուրս բերելու վերաբերյալ,
ընդունված է Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Կառավարության եւ Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) կողմից Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման 1-ին նստաշրջանում, 28-ը սեպտեմբեր 2018 թ.:

Ռադիկ Խամոյան
Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան) Նախագահ

Տիգրան Փաշաբեզյան
Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան) Վարչապետ

Արմեն Տեր-Սարգսյան
Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) Նախագահ

20 նոյեմբեր 2018 թ.

ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արեւմտյան Հայաստանի Հանրապետությունը (Հայաստան) դիմել է ՄԱԿ՝ Հայաստան պետության եւ Ադրբեջանի Հանրապետության միջեւ սահմանազատումն իրականացնելու վերաբերյալ առաջարկով

Սեւրի խաղաղության պայմանագրի կնքման 99-րդ տարեդարձի նախօրյակին Արեւմտյան Հայաստանի Հանրապետությունը (Հայաստան) դիմում է հղել ՄԱԿ՝ Հայաստան պետության եւ Ադրբեջանի Հանրապետության միջեւ սահմանազատումն իրականացնելու վերաբերյալ, առաջարկելով՝ այս հարցում հաշվի առնել Փարիզի խաղաղության վեհաժողովի Հայաստան պետության սահմանները որոշող Հատուկ հանձնաժողովի 1920 թ. փետրվարի 24-ի զեկույց-առաջարկը:

Սեւրի խաղաղության պայմանագրի Հայաստանին վերաբերող հոդվածների կյանքի կոչումն ու իրականացումը վճռական քայլ է հայ ժողովրդի իրավունքների կայացման եւ Հայկական Հարցի վերջնական եւ արդարացի կարգավորման գործում:

Սույն դիմումնագիրը թվով չորրորդն է: Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան) պետական կառույցները 2018 թ.-ին որոշում են կայացրել եւ դիմել ՄԱԿ՝
ա) ՄԱԿ-ին անդամակցության,
բ) ԱՄՆ 28–րդ նախագահ Վուդրո Վիլսոնի 1920 թ. նոյեմբերի 22–ին կայացրած Իրավարար վճիռը կյանքի կոչելու, իրականացնելու Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան պետության) հաստատումը Իրավարար վճռով սահմանազատված տարածքի վրա,
գ) Արեւմտյան Հայաստանի եւ Կիլիկիայի տարածքների ապառազմականացման, այնտեղից Թուրքիայի Հանրապետության բռնազավթիչ ուժերը դուրս բերելու վերաբերյալ:

Նշյալ դիմումնագրերը 2018 թ. մայիս, նոյեմբեր եւ 2019 թ. օգոստոս ամիսներին ուղարկվել են ՄԱԿ:

Հայ ժողովրդի իրավունքների վերաբերյալ միջազգային իրավասու ատյաններին դիմելու գործընթացը հնարավոր է դարձել հետեւյալ քայլերի իրականացումից հետո:

Արեւմտյան Հայաստանի հայերի պետականաշինության ոլորտում ձեռնարկված աշխատանքների շնորհիվ ձեւավորվել են Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան) նախագահի ինստիտուտը, կառավարությունը, խորհրդարանը եւ դրանց իրավաչափության ապահովման գործընթացներն ավարտվել են:

«Արեւմտյան Հայաստանի հայերի իրավունքների պաշտպանության իրավական-քաղաքական միասնական փաթեթ» ժողովածուն ներկայացվել է հանրությանը հինգ լեզուներով՝ արեւելահայերեն — արեւմտահայերեն, անգլերեն, ռուսերեն, թուրքերեն, ֆրանսերեն, որոնք տեղադրված են կառավարության եւ խորհրդարանի http://gov-wa.info, http://parliament-wa.info/ պաշտոնական կայքերում, «Իրավական փաթեթ» բաժիններում:
Արեւմտյան Հայաստանի հայերի իրավունքների պաշտպանության ոլորտում կատարված օրենսդրական աշխատանքների արդյունքում ձեւավորվել է իրավական – քաղաքական – օրենսդրական դաշտ, որի եզրափակիչ մասն է լինելու Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան) Սահմանադրության նախագծի համաժողովրդական քննարկումը, հանրաքվեն եւ դրա արդյունքներով Սահմանադրության ընդունումը:

Արեւմտյան Հայաստանի Հանրապետությունը (Հայաստան) ճանաչել, միացել եւ վավերացրել է առավել կարեւոր Միջազգային պայմանագրերը, Հռչակագրերը, Կոնվենցիաները:

Հայ ժողովրդի իրավունքների պաշտպանության ոլորտում վերջապես եկել է նոր գործընթաց սկսելու ժամանակը, որն էլ իրականացվում է այսօր:

Դիմումնագրերը պատրաստելիս հաշվի են առնվել հայ պատմաբանների եւ իրավագետների ուսումնասիրությունները, հետազոտությունները, հրատարակություն-ները, այդ թվում՝ Ջոն Կիրակոսյանի, Ռուբեն Սահակյանի, Մկրտիչ Ներսիսյանի, Յուրի Բարսեղովի, Ալեքսանդր Մանասյանի, Արա Պապյանի, ինչպես նաեւ «Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիր, կարգավորման ուղիներ» փաստաթղթերի ժողովածուի նյութերը:

Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան) ՄԱԿ-ին ուղղված դիմումնագիրը «Հայաստան պետության եւ Ադրբեջանի Հանրապետության միջեւ սահմանազատման վերաբերյալ» առաջիկա օրերին կհրապարակվի:

Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան) Լրատվական Ծառայություն
08.08.2019 թ.

Դ Ի Մ Ո Ւ Մ

Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան) դիմումը ուղղված ՄԱԿ-ին Հայաստան պետության եւ Ադրբեջանի Հանրապետության միջեւ սահմանի (սահմանազատման) վերաբերյալ

(Ստորեւ ներկայացված դիմումը 2019 թվականի օգոստոսի 7-ին ՄԱԿ-ին ուղարկված դիմումնագրի կրճատված ու համառոտագրված տարբերակն է)

Դիմում ենք Ձեզ՝ իրականացնելու Հայաստան պետության եւ Ադրբեջանի Հանրապետության միջեւ սահմանազատումը, նկատի առնելով այս հարցում Փարիզի խաղաղության վեհաժողովի Հայաստանի սահմանները որոշող Հատուկ հանձնաժողովի 1920 թ.-ի փետրվարի 24-ի զեկույցն ու առաջարկները, ճանաչելով Արեւմտյան Հայաստանի Հանրապետությունը (Հայաստան պետություն), որպես Հայաստան պետության շարունակող պետություն, ինչպես նաեւ սույն դիմումի մեջ ներկայացված այլ իրավական քաղաքական փաստեր, իրողություններ ու հիմնավորումներ:

Նկատի առնելով հարցի նախապատմությունը, երբ՝

- 1919 թ. սկզբին Փարիզում հրավիրվել է Հայ ազգային համագումար, որի կարեւոր որոշումներից են՝ «Հայ ազգային միացյալ պատվիրակության» («Ամբողջական Հայաստանի պատվիրակության») ընտրությունը՝ Պողոս Նուբարի ու Ավետիս Ահարոնյանի համանախագահությամբ եւ նախապես պատրաստված ու 1919 թ. փետրվարի 12–ին Փարիզի խաղաղության վեհաժողովին ներկայացված հայկական պահանջների համատեղ հուշագրի վավերացումը, որը հիմնավորում էր հայկական անկախ պետության ստեղծման անհրաժեշտությունը եւ ճշտում նրա տարածքը Արեւմտյան Հայաստանի յոթ վիլայեթների (ներառյալ Տրապիզոնը), Հայաստանի Հանրապետության եւ Կիլիկիայի միացմամբ:

- 1919 թ. փետրվարի 26-ին Հայ ազգային միացյալ պատվիրակությունը ներկայացավ Տասի խորհրդի նիստին՝ կրկնելով հուշագրի հիմնական պահանջները: Իսկ 1919 թ. ապրիլի 17-ին ԱՄՆ 28-րդ նախագահ Վուդրո Վիլսոնը Միացյալ պատվիրակության հետ հանդիպման ժամանակ հավաստիացրեց, որ հնարավոր ամեն ինչ կանի հայերի տարածքային պահանջները պաշտպանելու համար:
- ԱՄՆ 28-րդ նախագահ Վուդրո Վիլսոնը 22 նոյեմբերի 1920 թ.-ին Դաշնակից տերությունների Գերագույն խորհրդի նախագահին ուղղված նամակում իր կողմից կայացված Իրավարար վճռի վերաբերյալ շեշտում էր, որ անհրաժեշտ է հաշվի առնել, որ Հայաստանի նորաստեղծ պետությունը, անշուշտ, ներառելու է նաեւ նախկին Ռուսաստանի անդրկովկասյան հայկական մարզերի մի մեծ բաժինը:
- Հայ ազգային միացյալ պատվիրակության ներկայացրած պահանջներին ի պատասխան Դաշնակիցների Գերագույն Խորհուրդը 1920 թ. հունվարի 19-ին կայացրել է հետեւյալ որոշումը եւ «դե ֆակտո» ճանաչել է Հայկական պետությունը.
ա/ Հայկական պետության կառավարությունը ճանաչվում է, որպես կառավարություն,
բ/ Այս որոշումը չի կանխորոշում Հայկական պետության սահմանների հարցը:
- 1920 թ. հունվարի 27-ին Փարիզի խաղաղության վեհաժողովի քարտուղարությունը այս երկու որոշումները պաշտոնապես ներկայացրել է Հայ ազգային միացյալ պատվիրակությանը:
- 1920 թ. մայիսի 11-ին թուրքական պատվիրակությունը հրավիրվել է Փարիզի խաղաղության վեհաժողով, որտեղ նրան ներկայացվել են «Խաղաղության պայմանները»: Դաշնակից Ուժերի մեջ էր նաեւ Հայկական պետության պատվիրակությունը: «Խաղաղության Պայմանների» նախաբանում, որը հետագայում դարձել է Սեւրի Դաշնագրի նախաբանը, Հայաստանը նշված է Դաշնակից տերությունների շարքում: Այսպիսով Հայկական պետությունը ճանաչվել է նաեւ «դե յուրե»:

Հայաստան պետության եւ Ադրբեջանի Հանրապետության միջեւ սահմանի՝ սահմանազատման հարցը:

- Փարիզի խաղաղության վեհաժողովում (1919-1920 թթ.) Հայաստանի սահմանները որոշող հատուկ հանձնաժողովը 1920 թ. փետրվարի 24-ին ներկայացրել է «Զեկույց եւ առաջարկներ Հայաստանի սահմանները որոշող հանձնաժողովի» փաստաթուղթը, որի տակ դրված են Ազգերի լիգայի Խորհրդի անդամ երկրների՝ Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի, Իտալիայի եւ Ճապոնիայի, լիազոր ներկայացուցիչների ստորագրությունները: Սույն զեկույցում հստակեցված են սահմանազատման սկզբունքները Հայաստան պետության եւ Ադրբեջանի Հանրապետության, Հայաստան պետության Վրաստանի Հանրապետության միջեւ, որտեղ նշված է. «Ինչ վերաբերում է Հայաստան պետության եւ Վրաստանի, ինչպես նաեւ Ադրբեջանի սահմանին, ապա Հանձնաժողովը գտնում է, որ ներկայումս նախընտրելի է սպասել վերոնշյալ սահմանների հստակեցման վերաբերյալ այնպիսի համաձայնության արդյունքներին, որոնց երեք հանրապետություններն իրենք կհանգեն պայմանագրերի մեջ: Այն դեպքում, եթե սույն հանրապետություններն իրենց սահմանների վերաբերյալ չեն հանգի որեւէ համաձայնության, ապա հարցը պետք է փոխանցվի Ազգերի լիգայի իրավարարությանը, որը կստեղծի Միջդաշնակցային Հանձնաժողով՝ տեղում որոշելու վերոնշյալ սահմանները՝ հաշվի առնելով, որպես սկզբունք, ազգագրական տվյալները»:

- Զեկույցում առաջարկված սկզբունքներն ու դրույթները ներառվել են Սեւրի խաղաղության պայմանագրի (10 օգոստոսի, 1920 թ.) մեջ, որտեղ 92-րդ հոդվածում նշված է. «Հայաստանի եւ Ադրբեջանի, ինչպես նաեւ Վրաստանի, միջեւ սահմանները կորոշվեն շահագրգիռ երկրների ուղղակի համաձայնության միջոցով: Այն դեպքում, երբ շահագրգիռ երկրները մինչեւ 89-րդ հոդվածում հիշատակված որոշման օրը չեն կարողանա համաձայնությամբ որոշել սահմանները, ապա խնդրո առարկա սահմանը կորոշվի Գլխավոր դաշնակից ուժերի կողմից, որոնք էլ տեղում կիրականացնեն նաեւ սահմանանշումը»:
- Նշյալ փաստաթուղթն ընդգրկվել է նաեւ ԱՄՆ 28-րդ նախագահ Վուդրո Վիլսոնի Իրավարար վճռի (22 նոյեմբերի, 1920 թ.) Ամբողջական զեկույցի մեջ, որպես 1-ին հավելվածի 2-րդ փաստաթուղթ:
- Հայաստանի սահմանները որոշող հատուկ հանձնաժողովի զեկույց-առաջարկի սկզբունքները չեն իրականացվել Հարավային Կովկասի բոլոր երեք երկրների խորհրդայնացման պատճառով, որի հետեւանքում նրանք դադարել են լինել միջազգային իրավունքի սուբյեկտներ:
- Հարավային Կովկասում սահմանների հարցը, կարող է եւ պետք է լուծվի միայն միջազգային իրավունքի հիման վրա:
- Ներկայի Միջին Արեւելքի, Հյուսիսային Աֆրիկայի եւ Եվրոպայի պետությունների քաղաքական քարտեզը ձեւավորվել է Փարիզի խաղաղության վեհաժողովի (1919-1920 թթ.) որոշումների, սկզբունքների եւ առաջարկների հիման վրա:
- Հայաստան պետության եւ Ադրբեջանի Հանրապետության, Հայաստան պետության եւ Վրաստանի Հանրապետության սահմանների վերաբերյալ միջազգային հանրության ընդունած միակ օրինական փաստաթուղթը Փարիզի խաղաղության վեհաժողովի (1919-1920 թթ.) Հայաստան պետության սահմանները որոշող հանձնաժողովի 1920 թ.-ի փետրվարի 24-ի զեկույց-առաջարկն է:
- Ըստ Հայաստանի սահմանները որոշող հատուկ հանձնաժողովի 1920 թ.-ի փետրվարի 24-ի զեկույց-առաջարկի՝ Ազգերի լիգային էր վերապահված Հայաստան պետության եւ Ադրբեջանի Հանրապետության, Հայաստան պետության եւ Վրաստանի Հանրապետության միջեւ սահմանազատումը, որպես հիմք ընդունելով 1920 թ. նոյեմբեր-դեկտեմբերի ազգային տեղաբաշխման տվյալները:

Ղարաբաղյան հակամարտության՝ Արցախի եւ Արցախի հայերի հարցի բուն էությունը:
- Ղարաբաղյան համակարտությունը սոսկ հայ - ադրբեջանական հակամարտության հարց չէ, ինչպես շատ դեպքերում փորձում են ներկայացնել: Իրականում Լեռնային Ղարաբաղի հարցը, իսկ ավելի ճշգրիտ Արցախի եւ Արցախի հայերի հարցը, Հայկական Հարցի մի շատ կարեւոր բաղկացուցիչ մասն է:
- Արցախի եւ Արցախի հայերի պայքարը, պայքար է՝ Ադրբեջանի Հանրապետության սանձազերծած ցեղասպանական քաղաքականության դեմ, պայքար է՝ գոյատեւելու, ինքնորոշման իրավունքի համաձայն՝ ազատորեն տնօրինելու զարգացման սեփական ճակատագիրը:
- Ադրբեջանի Հանրապետությունը 1918-1920 թթ. սկսած մասնակցում է եւ կամ ինքնուրույն է իրականացնում Հայերի ցեղասպանության ու բռնագաղթի քաղաքականություն: Այն՝ ինչ 1894-1923 թթ.-ից եւ դրանից հետո մինչեւ այսօր իրականացնում են թուրքական իրար հաջորդող կառավարությունները՝ օսմանական,

երիտթուրքական, քեմալական... Ըստ էության, կարող ենք փաստել, որ Հայերի ցեղասպանությունը շարունակվում է նաեւ Ադրբեջանի Հանրապետության իշխանությունների կողմից։

- Հայկական Հարցին արդարացի լուծում տալու նպատակով կարեւոր եւ հիմնարար որոշումներ է կայացրել Փարիզի խաղաղության վեհաժողովը 1919-1920 թթ., որոնք 1920-ական թթ. ձեւակերպվեցին որպես կարեւոր միջազգային պայմանագրեր եւ որոշումներ։ Դրանցից են՝

- Փարիզի խաղաղության վեհաժողովի Հայաստանի սահմանները որոշող հատուկ հանձնաժողովի 1920 թ.-ի փետրվարի 24-ի զեկույց-առաջարկը,
- Սեւրի խաղաղության պայմանագրի Հայաստանին վերաբերող 88-ից 93-րդ հոդվածները, 10 օգոստոսի, 1920 թ.,
- ԱՄՆ 28-րդ նախագահ Վուդրո Վիլսոնի 1920 թ.-ի նոյեմբերի 22-ին կայացրած Իրավարար վճիռը Հայաստանի եւ Թուրքիայի սահմանի վերաբերյալ, որի ամբողջական անվանումն է՝ «Ամերիկայի Միացեալ Նահանգների նախագահի որոշումը Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ սահմանի, Հայաստանի դեպի ծով ելքի եւ հայկական սահմանին հարակից թուրքական տարածքի ապառազմականացման վերաբերյալ»։

Այս որոշումները Փարիզի խաղաղության վեհաժողովում 1919-1920 թթ. կայացվել են, սակայն չեն իրականացվել։ Մինչդեռ, Արցախի եւ Արցախի հայերի հարցի վերջնական ու արդարացի կարգավորումը հնարավոր է Հայկական Հարցի վերջնական ու արդարացի կարգավորման շրջանակներում, կյանքի կոչելով եւ իրականացնելով Փարիզի խաղաղության վեհաժողովում ընդունված որոշումները, այդ թվում՝ Հայաստան պետության եւ Ադրբեջանի Հանրապետության միջեւ սահմանազատման վերաբերյալ։

Հայաստանի Հանրապետության կարգավիճակը։

- Հայաստանի Հանրապետությունը այս պահին դժվարանում է Ղարաբաղյան հակամարտության կարգավորման համար որպես ճանապարհ ընտրել Հայկական Հարցի լուծման տարբերակը եւ սույն դիմումնագրի II-րդ պարագրաֆի 2-րդ հոդվածում նշված հակամարտության կարգավորման տարբերակը մի քանի պատճառներով։ Նշենք դրանք։

- Հայաստանի առաջին Հանրապետությունը եւ Հայաստանի երկրորդ Հանրապետությունը ագրեսիայի եւ պարտադրանքի պայմաններում (Ալեքսանդրապոլի պայմանագիր, 02.12.1920 թ. եւ Կարսի պայմանագիր 13.10.1921 թ.) ստիպված են եղել դուրս գալ Հայկական միասնական պահանջների համեմատ 1920 թ. հայ ժողովրդին եւ Հայկական պետությանը (Հայաստան պետություն) տրված իրավունքների շրջանակից, հարկադրված լինելով մնալ միայն Հայաստանի Հանրապետության, այլ կերպ ասած՝ Արեւելյան Հայաստանի եւ Արեւելյան Հայաստանի հայերի իրավունքների ու իրավասությունների շրջանակներում։

- Հայաստանի երրորդ Հանրապետությունը իր նախագահների պաշտոնական հայտարարությունների միջոցով կրկնել է, որ դուրս է մնում Հայկական միասնական պահանջների համաձայն հայ ժողովրդին եւ Հայկական պետությանը (Հայաստան պետություն) 1918-1920 թթ. տրված իրավունքների շրջանակից եւ հարկադրված է մնալ Հայաստանի Հանրապետության, այլ կերպ ասած՝ Արեւելյան Հայաստանի եւ Արեւելյան Հայաստանի հայերի իրավունքների ու իրավասությունների շրջանակներում, եւ այդ

հարցի հետապնդման գործը փոխանցում է հայ ժողովրդին՝ հայկական լայն շրջանակներին։
- Ոչ պակաս կարեւոր խոչընդոտ է ռազմա – քաղաքական եւ դրա հետեւանքով առաջացած սոցիալ-տնտեսական դժվարին այն իրավիճակը, որի մեջ 1988 թ.-ից հետո հայտնվել է Հայաստանի Հանրապետությունը։ Այն է՝ գրեթե ամբողջական շրջափակում, պատերազմական իրավիճակ սահմանամերձ գոտիներում ու Ղարաբաղում եւ այլ։
- Այնուհանդերձ, լինելով Հայաստանի առաջին Հանրապետության իրավահաջորդը, լինելով Ղարաբաղի հայերի ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անվտանգության գլխավոր երաշխավորը, վերը նշված պատճառներով Հայաստանի Հանրապետությունը դժվարություն ունի հանդես գալու Ղարաբաղյան հակամարտությունը, որպես Հայկական Հարցի մի շատ կարեւոր բաղադրիչ՝ Հայկական Հարցի լուծման միջոցով կարգավորելու դիրքերից։
- Ընդ որում, մի շարք փաստեր եւ իրողություններ հուշում են, որ Հայաստանի Հանրապետության շուրջ ռազմա - քաղաքական իրավիճակը մեթոդաբար միտումնավոր կերպով է սրվում թույլ չտալու համար Հայաստանի Հանրապետությանը զբաղվելու Հայկական Հարցի վերջնական ու արդարացի լուծման խնդրով, այդ թվում եւ դրա միջոցով Ղարաբաղյան հակամարտության արդարացի ու վերջնական կարգավորման հարցով։
- Սակայն դա չի նշանակում, որ Հայոց ցեղասպանության հետեւանքով աշխարհով մեկ սփռված հայերը կարող են հաշտվել Հայաստանի Հանրապետությանը ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը պարտադրված այս իրողությամբ։ Ճիշտ հակառակը։ Աշխարհով մեկ սփռված հայերը, որոնք շատ ավելի մեծ թիվ են կազմում, քան Հայաստանի Հանրապետության ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մեջ ապրող իրենց հայրենակիցները, ընտրել են եւ ընտրում են Միջազգային հանրության կողմից 1918-1920 թթ. Հայկական Հարցի վերջնական եւ արդարացի կարգավորման նպատակով հայ ժողովրդին ու Հայաստան պետությանը տրված միասնական իրավունքներին տեր կանգնելու ուղին։

Արցախի Հանրապետության (Լեռնային Ղարաբաղի Հանրապետության) կարգավիճակը։
- 1920 թ.-ի ապրիլի 28-ին եւ դեկտեմբերի 2-ին 11-րդ Կարմիր Բանակի ներխուժման հետեւանքով խորհրդայնացվեցին Ադրբեջանի եւ Հայաստանի, իսկ 1921 թ.-ի փետրվարի 25-ին Վրաստանի Հանրապետությունը։ Նույն թվականին «Վիճելի տարածքների» նկատմամբ ունեցած հավակնություններից հրաժարվելու մասին Խորհրդային Ադրբեջանի հայտարարության եւ Խորհրդային Հայաստանի ու Խորհրդային Ադրբեջանի կառավարությունների միջեւ համաձայնագրի հիման վրա՝ 1921 թ. հունիսին Խորհրդային Հայաստանը Արցախը (Լեռնային Ղարաբաղը) հայտարարեց իր անբաժանելի մասը։ Միացման ակտը ողջունեցին ինչպես միջազգային հանրությունը, այնպես էլ նորաստեղծ Խորհրդային Ռուսաստանը։ Այն ամրագրվեց Ազգերի լիգայի ժողովի 1920 թ.-ի դեկտեմբերի 18-ի բանաձեւում, ինչպես նաեւ Ազգերի լիգայի գլխավոր քարտուղարի՝ Ազգերի լիգայի անդամ-պետություններին ուղղված տեղեկանք-նոտայում եւ Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի նախարարության իշխանության բարձրագույն մարմնին Խորհուրդների XI նստաշրջանին ուղղված 1920-1921 թթ. տարեկան զեկույցում։

- 1921 թ.-ի հուլիսի 5-ին Ռուսաստանի Կոմունիստական Կուսակցության Կովկասյան Բյուրոյի նիստը, արհամարհելով Ազգերի լիգայի համապատասխան որոշումը եւ Արցախի ժողովրդի կարծիքը՝ որպես Խորհրդային Հայաստանի եւ Խորհրդային Ադրբեջանի միջեւ սահմանների որոշման ժողովրդավարական գործիք, ի հակադրություն միացման բանաձեւի, արարողակարգային խախտումներով՝ անօրինական որոշում ընդունեց Խորհրդային Հայաստանից Արցախի բռնի անջատման մասին՝ Խորհրդային Ադրբեջանի կազմում լայն իրավասություններով ազգային ինքնավարություն կազմավորելու պայմանով: Այսպիսով, պատմական հայկական ու հայաբնակ տարածքների մեծ մասը հանձնվեց Խորհրդային Ադրբեջանին:
- 1923 թ. հուլիսի 7-ին Ադրբեջանի Հանրապետության իշխանությունների անօրինական որոշումով Արցախը մասնատվեց. նրա մի հատվածի վրա ստեղծվեց Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը (ԼՂԻՄ), իսկ Դաշտային Ղարաբաղի տարածքները անցան Ադրբեջանի Հանրապետության ուղիղ ենթակայության տակ: Միաժամանակ արհեստական կեչպով կազմավորվեց Կարմիր Քուրդիստանը: Վերջինիս ստեղծման նպատակը Խորհրդային Հայաստանի եւ ԼՂԻՄ-ի միջեւ ցամաքային կապի վերացումն էր: 1929 թվականին Կարմիր Քուրդիստանը վերացվեց, եւ տարածքն ուղղակիորեն մտցվեց Ադրբեջանական ԽՍՀ կազմի մեջ:
- 1988 թ. փետրվարի 20-ին ԼՂԻՄ մարզային եւ շրջանային ժողովրդական պատգամավորների խորհուրդների համատեղ արտահերթ նստաշրջանը որոշում կայացրեց՝ դիմելով Ադրբեջանի ԽՍՀ Գերագույն խորհրդին, նրա կազմից դուրս գալու մասին, եւ Հայաստանի ԽՍՀ Գերագույն խորհրդին՝ իր կազմում ընդգրկելու վերաբերյալ, իսկ ԽՍՀՄ-ին՝ այդ խնդրանքը բավարարելու կոչով, հիմնված նման տիպի վիճահարույց հարցերի լուծման համար նախատեսված բոլոր իրավական նորմերի ու նախադեպերի վրա:
- Սակայն ժողովրդավարական կամարտահայտման ու ամեն ինչ քաղաքակիրթ ճանապարհով կարգավորելու քայլին հաջորդեց հայ բնակչության դեմ ուղղված բռնության ալիքը, հայ ժողովրդի իրավունքների համատարած ոտնահարումը, հայ բնակչության բռնի տեղահանումը, ամբողջական շրջափակումը եւ այլն: Սկսվեցին ԼՂԻՄ-ից հարյուրավոր կիլոմետրեր հեռավորության վրա գտնվող Ադրբեջանի Հանրապետության քաղաքների՝ Սումգայիթի, Բաքվի, Կիրովոբադի, Շամխորի հայ բնակչության ջարդերն ու զանգվածային սպանությունները, արդյունքում հարյուրավոր մարդիկ զոհվեցին ու վիրավորվեցին: Ադրբեջանի Հանրապետության 500 հազար հայ քաղաքացի փախստական դարձավ: Այսինքն, Ադրբեջանի Հանրապետության իշխանությունների կողմից կազմակերպվեց ու գործադրվեց իրական ցեղասպանություն ու բռնագաղթ հանրապետության տարածքում ապրող բնիկ հայերի նկատմամբ:
- 1991 թ. սեպտեմբերի 2-ին ԼՂԻՄ մարզային խորհրդի եւ Շահումյանի շրջանի ժողովրդական պատգամավորների խորհրդի համատեղ նիստում նախկին ԼՂԻՄ եւ Շահումյանի շրջանի սահմաններում հռչակվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:
- 1991 թ. դեկտեմբերի 10-ին Լեռնային Ղարաբաղ Հանրապետությունում միջազգային դիտորդների ներկայությամբ հանրաքվե անցկացվեց, որտեղ մասնակցեց ձայն ունեցող բնակչության 80 տոկոսը, քվեարկողների մեծ մասը՝ 99,89 տոկոսը, արտահայտվեց անկախության օգտին:

- 1992 թ. հունվարի 6-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն Խորհուրդը ընդունեց հռչակագիր «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անկախության մասին»:
- 2006 թ. դեկտեմբերի 10-ի հանրաքվեով ընդունվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առաջին Սահմանադրությունը:
- 2017 թ. փետրվարի 20-ին անցկացված հանրաքվեով ընդունվեց Արցախի Հանրապետության Սահմանադրությունը նոր խմբագրմամբ:
- 1992 թ.-ի օգոստոսի 11-ին ԱՄՆ Կոնգրեսը բանաձեւ ընդունեց՝ դատապարտելով Ադրբեջանի Հանրապետության իշխանությունների գործողություններն ու արգելելով ԱՄՆ վարչակազմին կառավարական մակարդակով աջակցել այդ պետության տնտեսական զարգացմանը (Ազատության աջակցության ակտ, 907-րդ ուղղում):
- 1994 թ.-ի մայիսի 5-ին Ռուսաստանի, Ղրղզստանի եւ ԱՊՀ Միջխորհրդարանական վեհաժողովի միջնորդությամբ Ղրղզստանի մայրաքաղաք Բիշքեկում Ադրբեջանի Հանրապետությունը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը ու Հայաստանի Հանրապետությունը ստորագրեցին Բիշքեկի արձանագրությունը, որի հիման վրա մայիսի 12-ին նույն կողմերի միջեւ ստորագրվեց Հրադադարի մասին պայմանագիրը, որը հրադադարի շարունակական խախտումներով հանդերձ որոշ չափով պահպանվեց մինչեւ Ադրբեջանի Հանրապետության սանձազերծած նոր ագրեսիան՝ 2016 թ.-ի ապրիլյան քառօրյա պատերազմը:
- 1992 թ.-ին Ղարաբաղյան հակամարտության կարգավորման նպատակով ստեղծվեց ԵԱՀԿ Մինսկի խումբը, որի շրջանակում իրականացվում է Ղարաբաղյան կարգավորմանն ուղղված բանակցային գործընթացը:

Արցախի եւ Նախիջեւանի հիմնահարցերի արդարացի ու վերջնական կարգավորման խոչընդոտները Ադրբեջանի Հանրապետության կողմից:
- Պետք է նշել, որ Ղարաբաղյան հակամարտության միջնորդական առաքելությունը՝ ԵԱՀԿ Մինսկի խումբը, որը ստեղծվել է 1992 թ.-ին, մինչեւ այսօր չի կարողացել էական հաջողություն արձանագրել, որովհետեւ՝
- Հիմնախնդրի քաղաքականացման պատճառով ոչ ԵԱՀԿ Մինսկի խմբում, որտեղ ընթանում են Ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցությունները, ոչ ՄԱԿ-ում եւ ոչ էլ միջազգային իրավասու մեկ այլ ատյանում մինչ օրս Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման իրավական փաթեթ չի ներկայացվել:
- ԵԱՀԿ Մինսկի խումբն իր միջնորդական առաքելության ողջ ընթացքում, իր կամքից ու ցանկությունից անկախ, առեւտրի առարկա է դարձրել հայերին պատկանող բուն հայրենիքի տարածքները: Խոսքը վերաբերում է առաջին հերթին ազատագրված տարածքներին, որոնք իրականում հայերի հայրենիքին մաս կազմող տարածքներ են:
- Ադրբեջանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության ենթակայության ներքո Արցախը հայտվել է կուսակցական մարմնի՝ Ռուսաստանի կոմունիստական կուսակցության կովկասյան բյուրոյի 1921 թ. հուլիսի 5-ի որոշմամբ: Ակնհայտ է, որ եւ՛ ներպետական եւ՛ միջազգային իրավունքի տեսանկյունից այս որոշումն անօրինական է եւ անվավեր, քանի որ ցանկացած մարմին կարող է որոշումներ կայացնել միմիայն այն հարցերի վերաբերյալ, որոնց համար կառույցն ունի համապատասխան լիազորություններ: Ռուսաստանի կոմունիստական կուսակցության կովկասյան բյուրոյին նման լիազորություններ վերապահված չէր: Ակնհայտ է, որ կովկասյան բյուրոն

գերազանցել է իր լիազորությունների շրջանակը: Միջազգային իրավունքը նման լիազորություններ չի վերապահում կուսակցական մարմիններին, եթե նույնիսկ այդ կուսակցությունները կառավարող կուսակցություններ են:
- Նախիջեւանի հայկական մարզն իր հերթին Ադրբեջանի Հանրապետության խնամակալությանն է հանձնվել 1921 թ.-ի մարտի 16-ի Մոսկվայի (հոդված 3) եւ 1921 թ.-ի հոկտեմբերի 13-ի Կարսի (հոդված 5) անօրինական պայմանագրերով, արդեն որպես Նախիջեւանի Ինքնավար Մարզ, խնամակալությունը մի երրորդ պետության չզիջելու պայմանով: 1924 թ. փետրվարի 9-ին Ադրբեջանի Հանրապետության մի նոր ապօրինի որոշման համաձայն այն վերանվանվել է Նախիջեւանի Սոցիալիստական Սովետական Ինքնավար Հանրապետություն, այսպիսով դուրս բերելով մարզը պայմանագրերով սահմանված խնամակալության կարգավիճակից:
- Ադրբեջանի Հանրապետությունն իր ստեղծման օրից՝ 1918 թ.-ից, իրականացնում է Հայերի ցեղասպանության ու բռնագաղթի ծրագիր:
- Ադրբեջանի Հանրապետությունը 1988 թ.-ի փետրվարից սկսած իրականացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության եւ Հայաստանի Հանրապետության ամբողջական շրջափակումը, որին 1993 թ.-ից միացել է նաեւ Թուրքիայի Հանրապետությունը շրջափակելով Հայաստանի Հանրապետությանը:
- Ադրբեջանի Հանրապետությունը լսել անգամ չի ուզում Արցախի հայերի ազատ ինքնորոշվելու իրավունքի եւ ազատ ապրելու մասին, բազմիցս հայտարարելով որ չի ճանաչելու Արցախի Հանրապետության անկախությունը:
- Ադրբեջանի Հանրապետությունը իր գոյության ողջ ընթացքում եւ մանավանդ 1988-ից ի վեր վարում է բացահայտ հայատյաց պետական քաղաքականություն եւ այդ պայմաններում միջնորդական առաքելությունը բնականաբար չի կարող հաջողություն ունենալ:
- Ադրբեջանի Հանրապետությունը 2016 թ. ապրիլին, հակառակ 1994 թ. մայիսին կնքված զինադադարի պահանջների, ձեռնարկել է նոր ագրեսիա ու քառորյա պատերազմ Արցախի Հանրապետության ու Արցախի հայության նկատմամբ՝ իրականացնելով պատերազմական նոր հանցագործություններ:
- Ադրբեջանի Հանրապետությունը իրականացրել է Նախիջեւանի հայության բռնագաղթը, ինչը սպառնում էր եւ սպառնում է նաեւ Արցախի հայությանը: Վիճակագրական տվյալների համաձայն 1917 թ. Նախիջեւանում բնակվում էր 53,9 հզ. հայ (ամբողջ բնակչության գրեթէ կեսը), 1926 թ. հայերի թիվը նվազել է մինչեւ 11,2 հզ.: Ադրբեջանի Հանրապետության իշխանությունների հալածանքները հայերի նկատմամբ նոր ուժով է դրսեւորվել հատկապես 1960-80-ական թթ., ինչի հետեւանքով շարունակել է նվազել հայերի թիվը Նախիջեւանում: Վերջին հայերը Նախիջեւանից բռնագաղթել են 1988 թ.-ին Ադրբեջանի Հանրապետության կողմից Սումգայիթում կազմակերպված հայերի կոտորածներից հետո:
- Ադրբեջանի Հանրապետությունը բռնազավթել է մի շարք հայկական տարածքներ, Հայաստանի Հանրապետության տարածքից Արծվաշենը, Արցախի երկրամասից Շահումյանի շրջանը, Մարտունու, Մարտակերտի շրջանների, Գետաշենի ենթաշրջանի զգալի տարածքներ, Գարդմանը. այդ թվում՝ հայազգի 2 մարշալների եւ 12 գեներալների ծննդավայր լեգենդար Չարդախլու գյուղը:
- Թուրքիայի Հանրապետությունը բռնազավթված է պահում Արեւմտյան Հայաստանը, Հայկական Կիլիկիան, հակառակ Կիլիկիայի անկախության մասին հռչակագրի (4

օգոստոս 1920 թ.) եւ ԱՄՆ 28-րդ նախագահ Վուդրո Վիլսոնի կայացրած Իրավարար վճռի (22 նոյեմբեր 1920 թ.)։

- Ադրբեջանի Հանրապետությունը իրականացնում է հայկական ժառանգության բնաջնջումը բռնազավթված տարածքներում եւ դրա ցայտուն օրինակներից են Ադրբեջանի Հանրապետության, Արցախի ու Նախիջեւանի տարածքներում 89 միջնադարյան հայկական եկեղեցիների, 5480 խաչքարերի եւ 22700 գերեզմանաքարերի ոչնչացման փաստերը, այդ թվում Ագուլիսի 400 խաչքարերի եւ 2005 թ.-ին աշխարհում խոշորագույն, միջնադարյան, Ջուղայի հազարավոր ինքնատիպ ու հնամյա խաչքարերի ոչնչացումը Նախիջեւանում։
- Հետեւաբար, Հարավային Կովկասում նույնպես կայուն եւ երկարատեւ խաղաղություն հաստատելու միակ ճանապարհը ՄԱԿ-ի կողմից, որպես Ազգերի Լիգայի իրավահաջորդ, Հայաստան պետության եւ Ադրբեջանի Հանրապետության միջեւ սահմանազատում իրականացնելն է՝ հիմնվելով Փարիզի խաղաղության վեհաժողովի Հայաստան պետության սահմանները որոշող հատուկ հանձնաժողովի 1920 թ. փետրվարի 24-ի զեկույց-առաջարկի եւ 1920 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների ազգային տեղաբաշխման տվյալների հիման վրա։

Նկատի առնելով տարածաշրջանում գոյություն ունեցող ռազմա-քաղաքական իրավիճակը, ըստ որի՝

- Մերձավոր Արեւելքում եւ Հարավային Կովկասում ոչ մի կերպ չեն դադարում զինյալ հակամարտությունները,
- Սեւրի խաղաղության պայմանագրի բոլոր կետերի իրականացումը կարող է վճռական քայլ հանդիսանալ Մերձավոր Արեւելքում եւ Հարավային Կովկասում իրական խաղաղության ու համագործակցության հաստատման,
- Սեւրի խաղաղության պայմանագրով են հաստատվել Մերձավոր Արեւելքի, Հյուսիսային Աֆրիկայի եւ Եվրոպայի պետությունների սահմանները, այդ թվում՝ Հայաստան պետության սահմանը, որի վերաբերյալ կայացվել է նաեւ ԱՄՆ 28-րդ Նախագահ Վուդրո Վիլսոնի Իրավարար վճիռը, որը սակայն մինչեւ այսօր կյանքի չի կոչվել։
- Ըստ էության կարելի է ընդգծել, որ Հայկական Հարցի լուծման նպատակով հիմնական որոշումները կայացվել են, սակայն առ այսօր չեն իրականացվել։ Կարելի է ընդգծել, որ դրանց իրականացման ժամանակը հասունացել է։ Եվ ներկայի համառ իրականությունն այն է, որ Մերձավոր Արեւելքում եւ ոչ մի պետություն եւ ժողովուրդ անմասն չի մնալու ներկայի ու ապագայի սպառնալիքներից, եթե նրանցից ամեն մեկն իր կարգին չընտրի գոյություն ունեցող խնդիրների ու հակամարտությունների խաղաղ կարգավորման իրավական–քաղաքական ճանապարհը։ Բոլոր ոչ իրավական, կամային քաղաքական որոշումները պատանդի կարգավիճակում են պահելու հակամարտող կողմերին, նրանց երկրներն ու ապագա սերունդները եւ հիսուն տարին մեկ նոր ուժով է բորբոքվելու հակամարտությունն ու դիմակայությունը, պատերազմն ու քաոսը՝ Բալկաններում, Մերձավոր Արեւելքում, Կովկասում, Աֆղանստանում։

Համաձայն Հայկական Հարցի լուծմանը վերաբերող հետեւյալ իրավական փաստաթղթերի՝

- Ռուսաստանի Կառավարության Դեկրետի (Ռուսաստանի Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդ) «Թուրքահայաստանի մասին» («Արեւմտյան Հայաստանի մասին»), 11 հունվար 1918 թ.,
- Դաշնակից Տերությունների Գերագույն Խորհրդի կողմից դե ֆակտո (de facto) Հայաստան պետության անկախության ճանաչման, Փարիզի Վեհաժողովի ժամանակ, 19 հունվար 1920 թ.,
- Դաշնակից Տերությունների Գերագույն Խորհրդի կողմից դե յուրե (de jure) Հայաստան պետության անկախության ճանաչման, Փարիզ, 11 մայիս 1920 թ.,
- Կիլիկիայի հայերի ընդունած «Կիլիկիայի անկախության մասին» Հռչակագրի, 4 օգոստոս 1920 թ.,
- ԱՄՆ Սենատում կայացած 29 մայիս - 1 հունիս 1920 թ. Հայաստանի մանդատի քննարկումների, ինչը նշանակում է, որ ԱՄՆ-ն դե ֆակտո (de facto) ճանաչել է Հայաստան պետության իրավունքն ու տիտղոսը հայկական տարածքների նկատմամբ եւ դրանով չեղյալ է համարել այդ տարածքների նկատմամբ Օսմանյան կայսրության իրավունքն ու տիտղոսը,
- Սեւրի խաղաղության պայմանագրի, 10 օգոստոս 1920 թ.,
- ԱՄՆ 28-րդ նախագահ Վուդրո Վիլսոնի կայացրած Իրավարար վճռի, որի ամբողջական անվանումն է՝ «Ամերիկայի Միացեալ Նահանգների նախագահի որոշումը Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ սահմանի, Հայաստանի դեպի ծով ելքի եւ հայկական սահմանին հարակից թուրքական տարածքի ապառազմականացման վերաբերյալ», 22 նոյեմբեր 1920 թ.:

Հիմք ընդունելով հետեւյալ միջազգային փաստաթղթերը՝
- ՄԱԿ-ի Կանոնադրությունը, 26.06.1945 թ.,
- Մարդու Իրավունքների Համընդհանուր Հռչակագիրը, 10.12.1948 թ.,
- «Պետությունների իրավունքների եւ պարտականությունների մասին» Կոնվենցիան (ստորագրված 26 դեկտեմբեր 1933 թ., համամերիկյան պետությունների 7-րդ միջազգային համաժողովում (Մոնտեվիդեոյի Կոնվենցիա), որպես պետությունների իրավունքներ եւ պարտականություններ ճանաչելու մասին,
- «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու եւ դրա համար պատժի մասին» ՄԱԿ-ի Կոնվենցիան, 9 դեկտեմբերի 1948 թ.,
- «Պատերազմի հանցագործությունների եւ մարդկության դեմ հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին» ՄԱԿ-ի Կոնվենցիան, 26-ը նոյեմբերի 1968 թ.,
- «Գաղութացված երկրներին անկախություն շնորհելու մասին» ՄԱԿ-ի Կոնվենցիան, 14.12.1960 թ.,
- «Ռասայական խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին» Հռչակագիրը, 20.11.1963 թ.,
- «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» («Վիեննայի կոնվենցիան»), 23.05.1969 թ.,
- «Բնիկ ժողովուրդների իրավունքների մասին» ՄԱԿ-ի Հռչակագիրը, 13.09.2007 թ.,
- «Խաղաղության ժողովուրդների իրավունքի մասին» ՄԱԿ-ի Հռչակագիրը, 12.10.1984 թ.,
- «Զարգացման իրավունքի մասին» Հռչակագիրը, 04.12.1986 թ.,

- «Ազգային կամ էթնիկ, կրոնական եւ լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների մասին» Հռչակագիրը, 18.12.1992 թ.,
- «Ազգային եւ միջազգային մակարդակներում ՄԱԿ-ի իրավունքի գերակայության մասին» Հռչակագիրը, 24.09.2012 թ.:

Հիմնվելով Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան պետության) ընդունած որոշումներին՝
- Արեւմտյան Հայաստանի հայերի ինքնության ու քաղաքացիության ինստիտուտի վրա ըստ՝ «Բնիկ ժողովուրդների իրավունքների մասին» ՄԱԿ-ի Հռչակագրի, 13.09.2007 թ.,
- Արեւմտյան Հայաստանի հայերի Ազգային Խորհրդի «Արեւմտյան Հայաստանի հայերի ինքնորոշման իրավունքի մասին» Հռչակագրի. 17.12.2004 թ.,
- Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհրդի «Արեւմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարություն կազմելու մասին» Հռչակագրի, 04.02.2011 թ.,
- Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհրդի եւ Արեւմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարության «Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) ձեւաւորման մասին» Հռչակագրի, 24.05.2013 թ.,
- Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Օրենքի «Արեւմտյան Հայաստանի պետական կառուցվածքի, Ազգային ժողովի (Խորհրդարանի) պատգամավորների կարգավիճակը եւ Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) կանոնակարգի մասին», 21.01.2014 թ.,
- Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Նախագահի Հրամանագրի (թիվ 12), «Որոշում՝ հիշեցում, Արեւմտյան Հայաստանի Հանրապետության վերաբերյալ, որը հանդիսանում է 1920 թ.-ի Հայկական պետության շարունակողը», 23.02.2014 թ.,
- Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Նախագահի «Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան) Սահմանադրության նախագիծը պատրաստելու մասին» Հրամանագրի, 09.05.2016 թ.,
- Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհրդի «Արեւմտյան Հայաստանի հայերի մշտական, զինյալ, դրական չեզոքության մասին» Որոշման, 29.03.2011 թ.,
- Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհրդի «Արեւմտյան Հայաստանի հայերի ինքնապաշտպանության ուժերի ստեղծման մասին» Հրամանագրի, 26.12.2012 թ.,
- «Արեւմտյան Հայաստանի հայերի Պաշտպանության ուժեր կազմավորելու վերաբերյալ» Որոշման, ընդունված Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) կողմից, 10.01.2018 թ.:

Նկատի առնելով Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան պետություն) ձեւավորման իրավա-քաղաքական հիմքերը.
- ՄԱԿ-ի «Բնիկ ժողովուրդների իրավունքների մասին» Հռչակագրի (13.09.2007 թ.) հոդվածների դրույթների ու սկզբունքների համաձայն՝ ձեւավորվել է Արեւմտյան Հայաստանի հայերի ինքնության եւ քաղաքացիության ինստիտուտը:
- Մարդու Իրավունքների Համընդհանուր Հռչակագրի (10.12.1948 թ.) 21-րդ հոդվածի համաձայն՝ ձեւավորվել են Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան պետություն) բացարձակապես իրավաչափ (legitim) պետական իշխանության մարմինները. ազգային ժողովը (խորհրդարանը), կառավարությունը, նախագահի ինստիտուտը:

- 2013 թ. նոյեմբերին ամբողջ աշխարհում, առաջին անգամ, համացանցի միջոցով անցկացվել են Խորհրդարանի ընտրություններ, աշխարհի 41 երկրներում, միասնական ցուցակով ընտրել են Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 64 պատգամավոր։ 2018 թ. սեպտեմբերի 1-5-ը կայացել են Խորհրդարանի 2-րդ գումարման ընտրություններ, որին մասնակցել են 51.505 ընտրող 47 երկրից եւ միասնական ցուցակով ընտրել Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 101 պատգամավոր։
- Արեւմտյան Հայաստանի Հանրապետությունը (Հայաստան պետություն) համապատասխան օրենքների ընդունումով՝ ընդունել, միացել եւ վավերացրել է ՄԱԿ-ի Կանոնադրությունը եւ բոլոր առավել կարեւոր միջազգային Պայմանագրերը, Կոնվենցիաներն ու Հռչակագրերը։

Նկատի առնելով Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան պետություն) ՄԱԿ-ին ուղղված հետեւյալ դիմումնագրերը.
- Միավորված Ազգերի Կազմակերպությանն ուղղված Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան պետության) դիմումը՝ Միավորված Ազգերի Կազմակերպությանն անդամակցելու վերաբերյալ, 25 մայիս 2018 թ.։
- Միավորված Ազգերի Կազմակերպությանն ուղղված Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան պետության) դիմումը՝ կյանքի կոչելու եւ իրականացնելու Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան պետության) հաստատումը ԱՄՆ 28-րդ նախագահ Վուդրո Վիլսոնի Իրավարար վճռով սահմանազատված տարածքի վրա, 29 մայիս 2018 թ.։
- Միավորված Ազգերի Կազմակերպությանն ուղղված Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան պետության) դիմումը՝ Արեւմտյան Հայաստանի եւ Կիլիկիայի տարածքների ապառազմականացման, այնտեղից Թուրքիայի Հանրապետության բռնազավթիչ ուժերը դուրս բերելու վերաբերյալ, 20 նոյեմբեր 2018 թ.։
- Սույն դիմումնագրերը իրականում վերաբերում են հայ ժողովրդի իրավունքների մասով միջազգային հանրության արդեն իսկ կայացված որոշումներին, որոնք կայացվել են, սակայն մինչեւ օրս կյանքի չեն կոչվել։

Նկատի առնելով հայ ժողովրդի համապարփակ իրավունքներն աշխարհում, ըստ որի՝
- Հայ ժողովուրդը, ինչպես ցանկացած ժողովուրդ աշխարհում՝ ապրելու, զարգանալու եւ ապագա ունենալու իրավունք ունի, ինչը նշանակում է, որ նա իրավունք ունի պահանջելու սեփական պետության հաստատումը Բնօրրան Հայրենիքի տարածքում՝ Հայկական լեռնաշխարհում, Հայաստանում,
- Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան պետություն) պետական կառույցները հայտ են ներկայացնում ստանձնելու Սեւրի խաղաղության պայմանագրով եւ ԱՄՆ 28-րդ Նախագահ Վուդրո Վիլսոնի կայացրած Իրավարար վճռով հայ ժողովրդին տրված իրավունքների պաշտպանությունն ու դրանց իրականացումը կյանքում, այդ թվում՝ Հայաստան պետության եւ Ադրբեջանի Հանրապետության միջեւ սահմանազատման հարցով, հանդես գալով որպես 1920 թ. «դե ֆակտո» եւ «դե յուրե» ճանաչված Հայկական պետության՝ Հայաստան պետության շարունակող (continuity) պետություն։

Դիմում ենք Ձեզ՝ իրականացնելու Հայաստան պետության եւ Ադրբեջանի Հանրապետության միջեւ սահմանազատումը.
նկատի առնելով Փարիզի խաղաղության վեհաժողովի (1919-1920 թթ.) Հայաստան պետության սահմանները որոշող Հատուկ հանձնաժողովի 1920 թ.-ի փետրվարի 24-ի զեկույցն ու առաջարկները,
նկատի առնելով, որ Հայաստան պետության եւ Ադրբեջանի Հանրապետության, ինչպես նաեւ Վրաստանի Հանրապետության սահմանների վերաբերյալ միջազգային հանրության ընդունած միակ օրինական փաստաթուղթը հանդիսանում է Փարիզի խաղաղության վեհաժողովի (1919-1920 թթ.) Հայաստան պետության սահմանները որոշող հանձնաժողովի 1920 թ.-ի փետրվարի 24-ի զեկույց-առաջարկը,
նկատի առնելով, որ ըստ Փարիզի խաղաղության վեհաժողովի Հայաստան պետության սահմանները որոշող հատուկ հանձնաժողովի 1920 թ.-ի փետրվարի 24-ի զեկույց-առաջարկի՝ Ազգերի լիգային էր վերապահված Հայաստան պետության եւ Ադրբեջանի Հանրապետության սահմանազատումը՝ հիմք ընդունելով 1920 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների ազգային տեղաբաշխման տվյալները,
ճանաչելով Արեւմտյան Հայաստանի Հանրապետությունը (Հայաստան պետություն), որպես Հայաստան պետության (Հայկական պետության) շարունակող (continuity) պետություն:

Սույն դիմումի մասին որոշումը՝
«Հայաստան պետության եւ Ադրբեջանի Հանրապետության միջեւ սահմանի (սահմանազատման) վերաբերյալ»,
ընդունվել է Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) եւ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան պետություն) Կառավարության համատեղ նիստում, 17-ը հուլիսի 2019 թ.:

Ռադիկ Խամոյան
Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան) Նախագահ

Տիգրան Փաշաբեզյան
Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան) Վարչապետ

Արմեն Տեր-Սարգսյան
Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) Նախագահ

07 օգոստոս 2019 թ.

Բաց նամակ ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլխավոր տնօրենին, տիկին Օդրէ Ազուլէ-ին

Հարգելի տիկին Օդրէ Ազուլէ

Թույլ տվեք Ձեզ հայտնել իմ խորին հարգանքը եւ մեկ անգամ եւս հաստատել, որ Արեւմտյան Հայաստանի Հանրապետությունը 2018 թվականի մարտի 20-ին ճանաչել ու վավերացրել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Կանոնադրությունը, ամբողջովին ընդունում է կազմակերպության հայտարարած սկզբունքներն ու նպատակները, այն է. «…նպաստել խաղաղության եւ անվտանգության պահպանմանը զարկ տալով միջազգային համագործակցությանը կրթության, գիտության եւ մշակույթի բնագավառներում բարեփոխումների իրականացման միջոցով, նպատակ ունենալով ՄԱԿ-ի Կանոնադրությամբ հռչակված հիմնարար ազատությունների հետ մեկտեղ մեծացնել համընդհանուր հարգանքը արդարության, օրենքի ուժի, մարդու իրավունքների նկատմամբ, ՄԱԿ-ի Կանոնադրությամբ հռչակված մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների ապահովման, բոլոր ժողովուրդների համար, առանց ռասայի, սեռի, լեզուի կամ կրոնի տարբերակման»:

Հարգանքով եմ վերաբերվում Ձեզ եւ Ձեր աշխատանքին: Ձեր շնորհիվ իրականացվում են շատ կարեւոր աշխատանքներ պահպանելու համար մարդկության մշակութային, թե նյութական, եւ թե ոչ նյութական ժառանգությունը:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի ընդունած կոնվենցիաների շնորհիվ միջազգային հանրությունը միավորվում է հասնելու համար ընդհանուր նպատակների, պահպանելու մարդկության մշակութային ժառանգությունը:

Միեւնույն ժամանակ, պետք է նշեմ, որ խորապես հիասթափված եւ զարմացած եմ ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կոմիտեի 43-րդ նստաշրջանի անցկացման նպատակով երկրի ընտրությամբ, որը տեղի ունեցավ 2019 թվականի հունիսի 30-ից մինչեւ հուլիսի 10-ը Ադրբեջանի Հանրապետությունում, Բաքվում: Նստաշրջանը քննարկում էր Համաշխարհային ժառանգության օբյեկտների պահպանության վիճակը եւ ընդգրկում նոր օբյեկտներ Համաշխարհային ժառանգության ցուցակում: Ես կասկածում եմ Ձեր աշխատակիցների իրազեկության վերաբերյալ, որոնք պետք է ուսումնասիրեին այն երկիրը, որտեղ նրանք պատրաստվում էին անցկացնել 43-րդ նստաշրջանը:

Ադրբեջանի Հանրապետությունը, պետություն է, որի կառավարությունը ավերել է եւ շարունակում է ոչնչացնել բազմաթիվ հին հուշարձաններ, եկեղեցիներ, հայ ժողովրդի մշակութային ժառանգությունը: Այս ամենի վերաբերյալ խոսուն օրինակ է Ադրբեջանի Հանրապետության, Արցախի եւ Նախիջեւանի տարածքում գտնվող 89 միջնադարյան հայկական եկեղեցիների, 5480 խաչքարերի եւ 22,700 գերեզմանների ոչնչացումը, այդ թվում՝ Ագուլիսում 400 խաչքարերի եւ 2005 թ. Նախիջեւանում Ջուղայի հազարավոր միջնադարյան բնօրինակ եւ հնագույն խաչքարերի ոչնչացումը:

Վերոնշյալի առնչությամբ անհասկանալի է ՅՈՒՆԵՍԿՕ-ի դիրքորոշումը նստաշրջան եւ այլ միջոցառումներ անցկացնել երկրներում, որոնց կառավարությունները չեն խոչընդոտում մշակութային հուշարձանների ոչնչացմանը: Դեռ բոլորովին վերջերս ամբողջ աշխարհը սգում էր Պալմիրան եւ այժմ ամբողջ աշխարհը վերականգնում է այն, ինչ դեռեւս հնարավոր է վերականգնել բարբարոսական գործողություններից հետո:

Ցավոք, մեր հուշարձանները վերականգման ենթակա չեն: Նրանք ոչնչացվում են, ջնջվում են, փոշու վերածվում: Բազմաթիվ պատմաբաններ եւ լրագրողներ հաստատում են այն եզրակացությունը, որ Ադրբեջանում տարբեր գործիչներ զբաղված են մեկ ուրիշի պատմական եւ մշակութային ժառանգության յուրացման եւ կեղծման մեջ՝ լինեն դրանք խորհրդանշաններ, երաժշտություն, խոհանոց, կիրառական արվեստ, ճարտարապետություն... եւ պատմություն: Ադրբեջանի Հանրապետության կառավարության կողմից այս խախտումների եւ հանցագործությունների նկատմամբ պատշաճ իրավական գնահատական եւ հակադարձում չկա: Դեռեւս չկա եւ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից:

Տիկին Ազուլէ, Դուք կոչ եք անում հարգել Համաշխարհային ժառանգության մասին կոնվենցիաների ոգին, որպես միասնության շարժիչ ուժ, բայց Ադրբեջանի Հանրապետության ղեկավարությունը անտեսում է դրանք: Այլ կերպ ինչպե՞ս բացատրել այդպիսի անհերքելի հակաքաղաքակրթական վերաբերմունքը այլ երկրների եւ ժողովուրդների մշակութային ժառանգության նկատմամբ: Ոչ այլ կերպ, քան ջգտում ջնջելու հիշողությունը մի ժողովրդի վերաբերյալ, որն ապրել ու ստեղծագործել է այս հողում: Եվ, կարծես, ՅՈՒՆԵՍԿՕ-ի աշխատակիցները դրա մասին չգիտեն:

Ես ուզում եմ հիշեցնել Ձեր խոսքերը, որոնք հնչել են նստաշրջանի բացմանը, որ ժառանգությունը երբեք չպետք է գործածվի հասարակությունը բաժանելու կամ մեկ խմբի հիշատակը մյուս խմբի դեմ օգտագործելու նպատակին: Ընտրելով մի երկիր, որը ոչնչացնում է մեկ այլ ժողովրդի մշակութային ժառանգությունը, դուք ինքներդ հակասում եք Ձեզ:

Որպես մշակույթի եւ արվեստի ներկայացուցիչ, ես համոզված եմ, որ մեր ազնիվ, ճշմարիտ եւ անկաշառ ու բարձր առաքելությունից է կախված նաեւ, ինչպես երկրների վարած քաղաքականությունը, այնպես էլ ժողովուրդների միջեւ հարաբերությունների կարգավորումը եւ համաշխարհային մշակութային ժառանգության պահպանումը՝ հաջորդ սերունդների համար:

Ձեր խոսքում հիշեցրիք վստահության մասին. «Համաշխարհային ժառանգության մասին» Կոնվենցիան համընդհանուր բարիքի շուրջ երկխոսության համար նախատեսված մի քանի ֆորումներից մեկն է, որ դրա իրականացումը ղեկավարվում է գիտական փորձով, որն ապահովում է վստահությունը նրա նկատմամբ»:

Կարծում եմ խելամիտ կլինի Ձեր ուշադրությունը հրավիրել այն բանի վրա, որ մի երկրի ընտրությունը եւ հանդիպումներ ու նիստաշրջան այդ երկրում անցկացնելու փաստը, որտեղ դե ֆակտո էթնիկ հայերի համար մուտքն արգելված է, անկախ նրանց

քաղաքացիությունից, եւ դա կարող է հանգեցնել քրեական հետապնդման եւ բանտարկության՝ լրագրողներին, գիտնականներին, հասարակական գործիչներին եւ շարքային մարդկանց, ովքեր ծագումով հայ են, զրկում է նման միջոցառումներին մասնակցելու հնարավորությունից:

Նման տարօրինակ եւ վատ մտածված ընտրությունը հանդիսանում է իրավունքների շատ ակնհայտ ու անմիջական սահմանափակում եւ անթույլատրելի է, ինչպես իրավական, այնպես էլ էթիկական տեսանկյունից:

Հուսով եմ, որ Դուք եւ Ձեր գործընկերները կքննարկեք ներկայացված բոլոր փաստարկները եւ հիմնավորված ու ողջամիտ որոշում կկայացնեք, որպեսզի հետագայում ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանու ներքո կազմակերպված նստաշրջաններն ու միջոցառումները չկատարվեն այնպիսի երկրներում, որտեղ խախտվում են ՅՈՒՆԵՍԿՕ-ի եւ «Համաշխարհային ժառանգության մասին» Կոնվենցիայի հիմնական սկզբունքները, որտեղ մարդկության մշակութային ժառանգության պահպանման փոխարեն, դրանք պաշտպանված չեն ինչպես հարկն է եւ նույնիսկ ոչնչացվում են:

Խնդրում եմ Ձեզ ստուգումներ անցկացնել կապված Ադրբեջանի Հանրապետության եւ այլ երկրների ընտրության վավերականության հետ, որոնք բացառում են այլ ազգությունների ներկայացուցիչների մասնակցությունը միջոցառումներին:

Հարգանքներով,

Յուլիա Գյուլոյան,
Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան) Մշակույթի նախարար

22.07.2019 թ.

ԴԻՄՈՒՄ

Միացյալ Ազգերի Կազմակերպության Անվտանգության Խորհրդի անդամ-պետություններին, Եվրոպական Խորհրդարանին, Եվրոպայի Խորհրդի անդամ-պետություններին,

հույն, հայ եւ ասորի ժողովրդներին, նրանց հոգեւոր ու ազգային առաջնորդներին, ինչպես նաեւ Մեծ Մերձավոր Արեւելքի եւ Բալկանների ժողովրդներին, ում պատմական իրավունքները ոտնահարված էին Թուրքիայի պետության եւ կառավարությունների կողմից

(Կիպրոսի Հանրապետության հյուսիսային մասի՝ Թուրքիայի Հանրապետության կողմից բռնազավթման 45-ամյակի առթիվ)

Մենք՝ ներքոստորագրյալներս, կոչ ենք անում հույն, հայ եւ ասորի, ինչպես նաեւ Մեծ Մերձավոր Արեւելքի եւ Բալկանների մյուս ժողովրդներին ռազմավարական համագործակցություն հաստատել պատմական արդարության եւ միջազգային իրավունքի հիման վրա: Մենք մեր պարտքն ենք համարում վերջապես իրականացնել մեր ազգերի այն իրավունքները, որոնք արտոնված էին մեզ եւ նշված էին միջազգային պայմանագրերում եւ կոնվենցիաներում, սակայն կյանքի չէին կոչվել:

Այս դիմումը հենվում է կոնկրետ պատմական փաստերի վրա, որոնք արձանագրված են միջազգային փաստաթղթերում: Դրանք են.

- ՄԱԿ-ի թիվ 541 и 550 որոշումները, ուղղված աշխարհի պետություններին՝ **1974** թվին Թուրքիայի Հանրապետության կողմից բռնազավթված Կիպրոսի Հանրապետության հյուսիսային մասը որպես Հյուսիսային Կիպրոս պետական ձեւավորում չճանաչելուն: Փաստորեն մենք այսօր նշում ենք Թուրքիայի Հանրապետության կողմից Կիպրոսի Հանրապետության հյուսիսային մասի բռնազավթման 45-ամյակը:
- Թուրքիայի Հանրապետության կողմից Արեւմտյան Հայաստանի եւ Կիլիկիայի բռնազավթման 99-ամյակը:
- Անհրաժեշտ ենք համարում հիշեցնել, որ Առաջինաշխարհամարտի արդյունքները որոշված էին 1919-1920 թթ. Միջազգային պայմանագրերի Վերսալյան համակարգով: Թուրքիայի պարտավորությունները Մեծ Մերձավոր Արեւելքի, Բալկանների, Միջերկրածովյան եւ Սեւծովյան ավազանների երկրների առջեւ ամրագրված էին 1920 թ. Սեւրի հաշտության պայմանագրով, որը Միջազգային պայմանագրերի Վերսալյան համակարգի հիմնարար եւ հանգուցային պայմանագրերից մեկն է:
- 1918 թ. հունվարի 11-ի՝ Ռուսաստանի Կառավարության Դեկրետը (Ռուսաստանի Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի) «Թուրքահայաստանի մասին» («Արեւմտյան Հայաստանի մասին»):
- Ազգերի Լիգայի հանձնարարությամբ ԱՄՆ 28-րդ նախագահ Վուդրո Վիլսոնի 1920 թ. նոյեմբերի 22-ի Իրավարար վճիռը (Լրիվ անվանումը՝ «Ամերիկայի Միացյալ Նահանգների Նախագահ Վուդրո Վիլսոնի որոշումը Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ պետական սահմանի հաստատման, Հայաստանի՝ դեպի ծով ելքի եւ հայկական սահմանին հարակից թուրքական տարածքների ապառազմականացման վերաբերյալ»)
- Սեւրի հաշտության պայմանագիրը՝ Քրդստանի ինքնավարության վերաբերյալ եւ հետագայում դրա կողմից անկախություն ձեռքբերելու հավանականության մասով (համապատասխան 62, 63, 64 հոդվածների դրույթների):

Հարկ ենք համարում նաեւ արձանագրել, որ թուրքական պետությունը՝ իրար հաջորդող կառավարություններով ավելի քան հարյուր տարի է շարունակում է ցեղասպանության եւ պետական ահաբեկչության քաղաքականությունը պետության՝ հույն, հայ եւ ասորի քաղաքացիների հանդեպ, որոնք տարածաշրջանի բնիկ ժողովրդներին են պատկանում: 1920-ական թթ. վերջից նույն քաղաքականությունն է վարվում նաեւ քրդերի եւ եզդիների հանդեպ:

Այսպիսով թուրքական պետությունը շարունակում է բնիկ ժողովրդների նկատմամբ իր՝ հալածանքի, կոտորածի եւ տեղահանության ցեղասպան քաղաքականությունը, ստիպելով նրանց լքելու իրենց բնակության վայրերը:

Տեղին ենք համարում մեկ անգամ եւս թվարկել թուրք պետության այն հանցագործությունները, որոնք Մեծ Բրիտանիայի, Ռուսական Կայսրության եւ Ֆրանսիայի Հանրապետության 1915 թ. մայիսի 24-ի համատեղ հայտարարության մեջ որակվել են որպես «Թուրքիայի նոր ոճիրները մարդկության եւ քաղաքակրթության դեմ»:

- Պանթյուրքիզմի եւ նորօսմանիզմի քողի ներքո այլատյացության (քսենոֆոբիայի), ռասիզմի, ազգային առավելության գաղափարախոսության քարոզ՝ թյուրքալեզու ժողովուրդների շջանում:
- Հայ ժողովրդի ցեղասպանությունը եւ տեղահանությունը 1894-1923 թթ. իրար հաջորդող թուրքական՝ սուլթանական, երիտթուրքական եւ քեմալիստական կառավարությունների կողմից:
- Հույն ժողովրդի ցեղասպանությունը եւ տեղահանությունը1915-1923 թթ.:
- Ասորի ժողովրդի ցեղասպանությունը եւ տեղահանությունը1915-1923 թթ.:
- Հայերի ցեղասպանությունը Բաքվում 1918 թ.:
- Հայերի եւ ալեւիների ջարդերն ու ցեղասպանությունը Դերսիմում (Թունջելի) 1937-1938 թթ.:
- Հույների եւ հայերի ջարդերը Կոստանդնոպոլսում, Անկարայում եւ Իզմիրում, 1955 թ. սեպտեմբերի 6-7:
- Հույների, հայերի, ասորիների եւ այլ բնիկ ազգերի պատմական, հոգեւոր, մշակութային եւ նյութական հուշարձանների փչացումը, սեփականացումը կամ ոչնչացումը 1894-1923 թթ., որ շարունակվում է մինչեւ օրս:
- Թուրքիայի պատմագրության կեղծարարություն հույների, հայերի, ասորիների եւ տարածաշրջանի այլ բնիկ ժողովրդների պատմության հաշվին:
  Քեմալ Աթաթուրքի հրամանով 1931 թ. ստեղծվել է «Թուրքական պատմական ընկերությունը»: Այդ ընկերության կազմում ընդգրկվել են թուրք եւ արտասահմանցի վարձու պատմաբաններ, ում հանձնարարված էր մաքրել արխիվները, կեղծել օսմանյան սրի տակ ապրած ազգերի հին պատմությունը եւ հորինել նորը: Արխիվներն, իհարկե, մաքրել կարելի է, բայց ինչպե՞ս է կարելի բացատրել միլիոնավոր հույների, հայերի, ասորիների անհետանալը Օսմանյան կայսրության տարածքից:
- Հույների, հայերի, ասորիների ցեղասպանության փաստի ու պատմական իրողությունների մերժում, որը դուրս է բերում Թուրքիայի Հանրապետության կառավարությանը ցեղասպանության հանցագործության կանխարգելման եւ դրա համար պատժի մասին միջազգային հանրության ընդունած համաձայնությունից:

Սա Թուրքիայի իրար հաջորդող կառավարությունների հանցագործությունների ոչ լրիվ ցուցակն է. հանցագործությունների, որ կատարվել են Մեծ Մերձավոր Արեւելքի, Բալկանների, Միջերկրածովյան եւ Սեւծովյան ավազանների հույն, հայ, ասորի եւ այլազգերի նկատմամբ, մարդկության եւ քաղաքակրթության դեմ վերջին 100 տարում եւ որոնք շարունակվում են մինչեւ օրս:

Թուրքիայի Հանրապետության կառավարությունը չպատժվեց 1974 թ. Կիպրոսի Հանրապետության հյուսիսային մասի բռնազավթման համար: Ուստի լկտիացած Թուրքիայի Հանրապետության այսօրվա իշխանությունը շարունակում է կոպտորեն խախտել միջազգային իրավունքի բոլոր նորմերը:

Ահա թե ինչու ենք մենք այսօր դիմում տարածաշրջանի հույն, հայ, ասորի եւ մյուս ազգերին, նրանց ազգային եւ հոգեւոր առաջնորդներին՝ պատմականորեն անպատիժ մնացած բռնազավթիչին դիմակայելու միասնական մարտավարություն եւռազմավարություն մշակելու համար իրենց ուժերը միավորելու առաջարկով: Մենք անհրաժեշտ ենք համարում հետամուտ լինել բռնազավթված տարածքների վերադարձման եւ մեր ազգերի ոտնահարված իրավունքների վերականգման գործին:

Միայն այդպիսի համատեղ, միացյալ ուժերով եւ ջանքերով մենք կկանողանանք վերջ դնել Թուրքիայի Հանրապետության՝ Մեծ Մերձավոր Արեւելքի, Բալկանների, Միջերկրածովյան եւ Սեւծովյան ավազանների ժողովրդների եւ պետությունների դեմ ուղղված պետական ահաբեկչությանը:

Մենք բոլորս ականատես ենք այն վայրագություններին, որ Թուրքիայի Հանրապետությունն այսօր իրականացնում է Մերձավոր Արեւելքում եւ Միջերկրածովայքում, անուղղելի վնաս հասցնելով Սիրիայի, Իրաքի, Կիպրոսի պետականությանն ու ինքիշխանությանը եւ, որ ամենակարեւորն է, այդ տարածաշրջանում ապրող ժողովրդների կյանքին ու բարեկեցությանը: Թուրքական այդ անօրինություններին պետք է վերջ դնել:

Մենք համոզված ենք, որ միջազգային հանրությունը՝ հանձինս Միացյալ Ազգերի Կազմակերպության, պարտավոր է առավելագույն ջանքներ դնել տարածաշրջանի ժողովրդների ապրելու, զարգանալու եւ ապագա ունենալու հիմնարար իրավունքներն ապահովելու համար:

Միաժամանակ, այդ նպատակներին հասնելու եւ բռնազավթիչին սանձելու համար մենք դիմում ենք տարածաշրջանի բոլոր ուժերին՝ միավորվելու կոչով: Հուսով ենք, որ մեր դիմումն ընկալվելու է ըմբռնումով եւ կառուցողական արձագանք է գտնելու:

Էդուարդ Պոլատիդիս (Փոլատով)
Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) պատգամավոր,
Հայաստանի եւ Արցախի հույների «Պատրիդա» կազմակերպության նախագահ,
Արցախյան պատերազմի վետերանների «Թալիշ. Սահմանամերձ բնակավայրեր» հայրենասիրական կազմակերպության նախագահ

Դավիթ Խինոեւ
Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) պատգամավոր,
Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) բնիկ ժողովուրդների եւ ազգային փոքրամասնությունների հարցերով մշտական հանձնաժողովի նախագահ,

Ռուսաստանյան «Ասիրիա» հայրենասիրականշարժման նախագահ

Մարտիկ Գասպարյան
Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) պատգամավոր,
Վերականգման ու փոխհատուցման հարցերի միջազգային անկախ փորձագիտական-իրավական կենտրոնի նախագահ,
Աշխարհի ազգերի հոգեւոր միասնության միջազգային ակադեմիայի փոխնախագահ,
Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի գիտական խորհրդի անդամ, Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, տնտեսական գիտությունների դոկտոր պրոֆեսոր

24 հոկտեմբեր 2019 թ.

ՀԱՎԵԼՎԱԾ

Արեւմտյան Հայաստանի Հանրապետության ինքնության եւ քաղաքացիության դիմում
Application form for getting the citizenship of the Republic of Western Armenia

	Հայերեն	In English
Անուն Name / Имя		
Ազգանուն Surname / Фамилия		
Հայրանուն Middle name/ Отчество		
Մօր անունը եւ ազգանունը Mother's first and last names / Фамилия и имя матери		
Ծննդեան տարեթիւ DateofBirth / Дата рождения	(Օրը, ամիսը, տարին) / (День, месяц, год)	(Day, month, year)
Ծննդավայր Date of birth / Место рождения	(Երկիրը, քաղաքը) / (Страна, город)	(Country, city)
Արմատը Roots / Корни		
Ազգութիւն Nationality / Национальность		
Քաղաքացիութիւն Citizenship/ Гражданство		
Ներկայի բնակութեան հասցեն Homeaddress/ Адрес проживания	(Փոստային համարը, երկիրը, քաղաքը, փողոցը, շենքը, բնակարանը) / (Почтовый индекс, страна, город, улица, дом, квартира)	(ZIP-code, country, city, street, house, apartmen
Անձնագիր Passport / Паспорт	(Անուանումը, թիւը, ստանալուամսաթիւը, վաւերականէմինչեւ) / Наименование, номер, дата выдачи, срок действия)	(Name, number, date of issue, expiry date)
Էլ. Հասցե E-mail		
Հեռախօս Telephone / Телефон		
Skype Скайп		
Լուսանկար Photo / Фото		
Ստորագրութիւն Signature / Подпись		
Ամսաթիւ Date / Дата		

ԻՆՉՊԵՍ ՍՏԱՆԱԼ
Արեւմտյան Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն

Համաձայն ՄԱԿ-ի 1948 թուականի դեկտեմբերի 10-ի Մարդու Իրավունքների Համընդհանուր Հռչակագրի 21-րդ հոդվածի եւ 2007 թվականի սեպտեմբերի 13-ի «Բնիկ ժողովուրդների իրավունքների մասին» Հռչակագրի՝ ստեղծված է Արեւմտյան Հայաստանի հայերի ազգային ինքնության եւ քաղաքացիության համակարգ, որի վրա կառուցված է Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան պետություն) պետական կառույցների իրավական - քաղաքական հիմքերը, այդ թվում՝ Արեւմտյան Հայաստանի հայերի իրավունքների պաշտպանության եւ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության քաղաքացիության շնորհման այս ամբողջ գործընթացը:

Արեւմտյան Հայաստանի Հանրապետության քաղաքացի կարող է դառնալ յուրաքանչյուրը, ում նախնիներից մէկը արմատներով Արեւմտյան Հայաստանից է եւ կամ ցեղասպանությունից վերապրած:

Արեւմտյան Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու համար անհրաժեշտ է դիմել Արեւմտյան Հայաստանի Հանրապետության իրավասու մարմին, լրացնել սույն դիմումնագիրը, դրան կցել պահանջված փաստաթղթերը եւ ուղարկել հետեւյալ էլ. հասցեով՝
citizenshipwesternarmenia@gmail.com:

Քաղաքացիություն ստանալու համար պահանջվող փաստաթղթերը՝
- Քաղաքացիություն ստանալու դիմում
- Անձը հաստատող փաստաթղթի պատճեն
- Լուսանկար անձնագրի (ID CARD) համար

Դիմումը կարելի է լրացնել Արեւմտյան Հայաստանի Հանրապետության պաշտոնական կայքերում՝ www.western-armenia.info, www.parliament-wa.info, www.gov-wa.info, www.wa.nt.am կամ www.citizenship-western-armenia.info, պատասխանելով այնտեղ նշված հարցերին՝ հաստատելով, որ ընդունում եք Արեւմտյան Հայաստանի հայերի քաղաքացիական եւ քաղաքական իրավունքները եւ «Արեւմտյան Հայաստանի հայերի եւ Արեւմտյան Հայաստանի իրավունքների պաշտպանության իրավական-քաղաքական միասնական փաթեթ»-ի հիմնադրույթներն ու սկզբունքները, ապա սեղմելով ուղարկելու կոճակը:

Արեւմտյան Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալը անվճար է

Ձեր դիմումին որպես պատասխան՝ կը ստանաք գրանցումն ու քաղաքացիությունը հաստատող էլեկտրոնային նամակ: Այդ գրանցումը հաստատող նամակը Ձեզ իրավունք է տալիս, որպես Արեւմտյան Հայաստանի քաղաքացի՝ մասնակցելու Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) պատգամավորների ընտրություններին,

հանրաքվեներին, ընտրելու եւ ընտրվելու, ինչպես նաեւ լիարժեք մասնակցելու Արեւմտյան Հայաստանի Հանրապետության պետական համակարգի աշխատանքներին:

Եթէ ցանկանում եք ստանալ նաեւ քաղաքացիությունը հաստատող անձնագիր (ID CARD) եւ վկայական, ապա դրա համար պէտք է վերը նշված պաշտոնական կայքերում՝ www.western-armenia.info, www.parliament-wa.info, www.gov-wa.info, www.wa.nt.am կամ www.citizenship-western-armenia.info, ընտրել համապասխան լեզվով դիմումի օրինակը, լրացնել այն եւ վճարել 30 եվրո: Այդ գումարը նախատեսված է անձնագրի (ID CARD) եւ վկայականի պատրաստման, փոստային առաքումների ծախսերի համար: Լրացված դիմումը պէտք է ուղարկել հետեւյալ էլ. հասցեով՝ citizenshipwesternarmenia@gmail.com, սեղմելով ուղարկելու կոճակը:

Վճարումը կարելի է կատարել կանխիկ կամ բանկային փոխանցման միջոցով: Անձնագրի (ID CARD) եւ վկայականի պատրաստության ժամանակամիջոցը մինչեւ 6 ամիս է:

Հավելյալ տեղեկությունների համար դիմել հետեւյալ էլ. հասցեով՝
citizenshipwesternarmenia@gmail.com:

Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Ներքին գործերի նախարարության անձնագրային բաժին:

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ ԵՎ ՔԱՐՏԵԶՆԵՐ

Հայկական պահանջների քարտեզը

1919–ի սկզբին Փարիզում հրավիրվեց Հայ ազգային համագումար: Համագումարի կարեւոր ձեռնարկներից մեկը եղավ «Ամբողջական Հայաստանի պատվիրակության» ընտրությունը Պողոս Նուբարի ու Ավետիս Ահարոնյանի համանախագահությամբ եւ նախապես պատրաստված ու 1919–ի փետրվարի 12–ին Փարիզի հաշտության կոնֆերանսին ներկայացված հայկական պահանջների համատեղ հուշագրի վավերացումը, որը հիմնավորում էր հայկական անկախ պետության ստեղծման անհրաժեշտությունը եւ ճշտում նրա տարածքը Արեւմտյան Հայաստանի յոթ վիլայեթների (ներառյալ Տրապիզոնը), Հայաստանի Հանրապետության եւ Կիլիկիայի միացմամբ:

Միացյալ պատվիրակությունը փետրվարի 26–ին ներկայացավ Տասի խորհրդի նիստին՝ կրկնելով հուշագրի հիմնական պահանջները: Պատվիրակությանն ընդունեց (1919–ի ապրիլի 17–ին) նաեւ ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնը եւ հավաստիացրեց, որ հնարավոր ամեն ինչ կանի հայերի տարածքային պահանջները պաշտպանելու համար: 1920–ի հունվարի 19–ին Փարիզի կոնֆերանսը դե ֆակտո ճանաչեց Հայաստան պետության անկախությունը:

Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհրդի Նախագահ Պողոս Նուբար Փաշա

Մեւրի Խաղաղության պայմանագրի մասնակիցները

Զորավար Անդրանիկ



Սեւրի Խաղաղության պայմանագրի տակ
իր ստորագրությունն է դնում թուրքական պատվիրակությունը

ԱՄՆ 28-րդ Նախագահ Վուդրո Վիլսոնի
կայացրած Իրավարար վճռի քարտեզը, 22 նոյեմբեր, 1920 թ.

ԱՄՆ 28–րդ նախագահ Վուդրո Վիլսոնի կայացրած Իրավարար վճռի ամբողջական անվանումն է՝ «Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահի որոշումը Թուրքիո եւ Հայաստանի միջեւ սահմանի, Հայաստանի դեպի ծով ելքի եւ հայկական սահմանին հարակից թուրքական տարածքի ապառազմականացման վերաբերյալ»:



Կիլիկիայի քարտեզը

L'indépendance de l'Arménie

Les représentants de l'Arménie, Boghos Nubar pacha et M. Aharonian, ont reçu communication de la résolution par laquelle le conseil suprême des alliés a décidé que le gouvernement de l'Etat arménien est reconnu comme gouvernement de fait, sans que cette reconnaissance préjuge la question des frontières de l'Etat arménien.

Պողոս Նուբար Փաշան եւ Ավետիս Ահարոնյանը տեղեկացվում են Հայկական պետության ճանաչման մասին



- 3 -

тенъ милліоновъ трудящагося населенія въ Азіи, въ колоніяхъ, вообще, и въ малыхъ странахъ.

6. III Съѣздъ Совѣтовъ привѣтствуетъ политику Совѣта Народныхъ Комиссаровъ, провозгласившую полную независимость Финляндіи, начавшаго выводъ войскъ изъ Персіи, объявившаго свободу самоопредѣленія Арменіи.

Глава четвертая.

7. III Всероссійскій Съѣздъ Совѣтовъ Р., С. и Кр. Депутатовъ полагаетъ, что теперь, въ моментъ рѣшительной борьбы пролетаріата съ его эксплоататорами, эксплоататорамъ не можетъ быть мѣста ни въ одномъ изъ органовъ власти. Власть должна принадлежать цѣликомъ и исключительно трудящимся массамъ и ихъ полномочному представительству, -Совѣтамъ Рабочихъ, Солдатскихъ и Крестьянскихъ Депутатовъ.

8. Вмѣстѣ съ тѣмъ, стремясь создать дѣйствительно свободный и добровольный, а слѣдовательно, тѣмъ болѣе полный и прочный, союзъ трудящихся классовъ всѣхъ націй Россіи, III Съѣздъ Совѣтовъ ограничивается установленіемъ коренныхъ началъ федераціи совѣтскихъ республикъ Россіи, предоставляя рабочимъ и крестьянамъ каждой націи принять самостоятельное рѣшеніе на своемъ собственномъ полномочномъ совѣтскомъ съѣздѣ: желаетъ ли они и на какихъ основаніяхъ участвовать въ федеральномъ правительствѣ и въ остальныхъ федеральныхъ Совѣтскихъ учрежденіяхъ.

Разѣлъ второй.

ОБЩІЯ ПОЛОЖЕНІЯ КОНСТИТУЦІИ РОССІЙСКОЙ СОЦІАЛИСТИЧЕСКОЙ ФЕДЕРАТИВНОЙ СОВѢТСКОЙ РЕСПУБЛИКИ.

Глава пятая.

9. Основная задача, разсчитанной на настоящій переходный моментъ конституціи Россійской Соціалистической Федеративной Совѣтской Республики заключается въ установленіи диктатуры городского и сельскаго пролетаріата и бѣднѣйшаго крестьянства въ видѣ мощной Всероссійской Совѣтской власти въ цѣляхъ полнаго подавленія буржуазіи, уничтоженіе эксплоатаціи человѣка человѣкомъ и водворенія соціализма, при которомъ не будетъ ни дѣленія на классы, ни государственной власти.

10. Россійская Республика есть свободное соціалистическое общество всѣхъ трудящихся Россіи. Вся власть въ предѣлахъ Россійской Соціалистической Федеративной Совѣтской Республики принадлежитъ всему рабочему

1918 թ. հունվարի 11–ին ընդունվեց դեկրետ «Թուրքահայաստանի մասին» (Արեւմտյան Հայաստանի մասին), որտեղ «Ռուսաստանը հռչակում է Հայաստանի ինքնավարությունը. Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը հայտնում է հայ ժողովրդին, որ Ռուսաստանի բանվորագյուղացիական կառավարությունը Ռուսաստանի կողմից պաշտպանում է՝ բռնազավթված «Թուրքահայաստանի» հայերի իրավունքը ազատորեն ինքնորոշվելու, ներառյալ նույնիսկ նրանց անկախության իրավունքը»: Հետագայում այս դրույթը զետեղվեց 1918 թ. հուլիսի 10–ի ԽՍՀՄ Սահմանադրության 6–րդ հոդվածում:

Հայաստանի էթնոգրաֆիական քարտեզը

Արեւմտյան Հայաստանի Հանրապետություն
(Հայաստան)

Արեւմտյան Հայաստանի հայերի եւ
Արեւմտյան Հայաստանի իրավունքների
պաշտպանության իրավական–քաղաքական
միասնական փաթեթ

2019 թ.

«Նոյյան Տապան Հոլդինգի» հրատարակչություն
Խմբագիր՝ Գայանե Առաքելյան
Համակարգչային ձեւավորումը՝ Դիանա Գրիգորյանի
Տպագրությունը՝ օֆսեթ, չափսը՝ 14.8X21, թուղթը՝ օֆսեթ, 70գ.,
ծավալը՝ 5 մամուլ:

«Նոյյան Տապան» տպագրատուն
ՀՀ, Երեւան 0009, Իսահակյան 28
Հեռ.՝ (+374 60) 27 64 62
Էլ. փոստ՝ contact@nt.am,

URL: www.nt.am